

«ԱՐԱՐԱՏ»-Ի ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ա

ԽԱԶԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՏԵԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2007

Armenian Church Library
<http://hygradaran.weebly.com>

ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկեմաստիթյամբ՝

**«ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ» ԱՆՎԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

Armenian Church Library
<http://hygradaran.weebly.com>

THE HERITAGE OF THE JOURNAL "ARARAT"

I

KHACHIK VARDAPET DATYAN

THE COLLECTED WORKS

ST. ETCHMIADZIN - 2007

НАСЛЕДСТВО ЖУРНАЛА "АРАРАТ"

I

АРХИМАНДРИТ ХАЧИК ДАТЯН

СБОРНИК СОЧИНЕНИЙ

СВ. ЭЧМИАДЗИН - 2007

By order

of His Holiness KAREKIN II

Supreme Patriarch and
Catholicos of All Armenians

По благословению

Его Святейшества ГАРЕГИНА II

Верховного Патриарха и
Католикоса Всех Армян

Printed by donations of
Medical University “Mkhitar Heratsi”
(Yerevan, Armenia)

Спонсор издания
Медицинский Университет
имени Мхитара Гераци
(Ереван, Армения)

ՀՏԴ 01:902/904:39:941(479.25)
ԳՄԴ 91.9:63+63.4+63.5+63.3(2Հ)
Խ 287

ԽԱՉԻԿ Ծ. ՎՐԴ. ՂԱՏԵԱՆ

Խ - 287 Երկերի ժողովածու: Կազմեց՝ Նարինե Պետրոսյանը: Էջմիա-
ծին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006, 208 էջ:

ԳՄԴ 91.9:63+63.4+
63.5+63.3(2Հ)

ISBN 99930-75-41-8

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

Armenian Church Library
<http://hygradaran.weebly.com>

ԱՌԱՋԱԲԱՆ

ԽԱՉԻԿ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԳԱՊԵՏ ԴԱԴՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ – ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Խաչիկ ծ. վրդ. Դադյանը (Վահան Գրիգորի Տեր-Գրիգորյանը) ծնվել է Արցախի Վարանդա գավառի (այժմ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջան) Վերին Թաղավարդ գյուղում 1863 թ. տոհմական հոգևորականի ընտանիքում: 1881 թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը: 1881–1888 թթ. իբրև ուսուցիչ աշխատել է Շուշիի և Խանքենի (այժմ՝ Ստեփանակերտ) ավանի հայոց ծխական դպրոցներում, վարել է Շուշիի առաջնորդարանի տպարանի վարիչի պաշտոնը: Խաչիկ Դադյանը ավագ եղբոր՝ Սմբատ Դադյանի հետ 1887 թ. Շուշիում բացել է կազմատուն, գրախանութ, որին կից՝ ընթերցարան-գրադարան: Նրա ջանքերը՝ մասնավոր դպրոց հիմնելու, ամսագիր հրատարակելու, անցել են ապարդյուն, պաշտոնական իշխանությունները մերժել են նրա առաջարկ-դիմումները¹:

1889 թ. ապրիլի 30-ին Խաչիկ ծ. վրդ. Դադյանը Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ: 1889–1894 թթ. իբրև վանահայր պաշտոնավարել է Արցախի՝ նշանավոր Ամարասի, Մեծարանից Ս. Հակոբա և Դադի վանքերում²: 1894 թ. Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Մ. Խրիմյանը հրավիրել է Խաչիկ ծ. վրդ. Դադյանին Էջմիածին: Նույն թվականի սեպտեմբերի 11-ին Էջմիածնի մայր տաճարում Կոմիտաս, Կարապետ, Տիրայր, Հուսիկ, Եզնիկ, Բենիկ սարկավագների հետ Դադյանը ձեռնադրվում է աբեղա և անվանակոչվում Խաչիկ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով Խաչիկ ծ. վրդ. Դադյանը իբրև այցելու հովիվ՝ շրջագայել է Մակվա ու Խոյի հայկա-

¹ Կենսագրական տվյալները քաղված են Խ. Դադյանի ինքնակենսագրությունից ու ծառայողական ցուցակից, որոնք գտնվում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) Խ. Դադյանի ֆոնդում՝ ֆ. 319, գգ. 167, 179, 277, 287:

² Վաերագրեր հայ եկեղեցու պատմության, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2001, էջ 359, 361, 365, 378:

կան բնակավայրերում: 1895 թ. ապրիլին Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցում ստանում է վարդապետական աստիճան¹: Վերադառնալով Մայր Աթոռ՝ նա վարել է նախ՝ իբրև Եղվարդի վանքապատկան կավվածքի, ապա՝ վանքի տպարանի կառավարչի պաշտոնները: 1898–1899 թթ. Խաչիկ վարդապետը կրկին այցելում է Պարսկաստան, այս անգամ՝ իբրև առաջնորդական փոխանորդ: 1899 թ. սեպտեմբերի 12-ին Սալմաստի Ս. Գևորգ եկեղեցում ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան²: Բուռն գործունեություն է ծավալում Սալմաստի, Ուրմիո, Խոյի հայկական բնակավայրերում՝ նպատակ ունենալով բարելավել էջմիածնահպատակ կրոնական, կրթական հաստատությունների ու իրավագուրկ հայ բնակչության վիճակը: Կաթողիկոսի կոնդակով 1899 թ. նշանակվում է նորահաստատ թանգարանի թանգարանապետ, մի պաշտոն, որը նա վարել է մինչև 1920 թ. :

1907 թ. Խաչիկ Ծ. վրդ. Գաղյանը ցմահ նշանակվում է իր իսկ աշխատությամբ վեր հանած Զվարթնոցի Ս. Գրիգոր եկեղեցու վանահայր: 1916 թ. Հայոց ազգագրական ընկերությունը նրան ընտրում է իր խմբագրական մասնաժողովի անդամ³: 1911 թ. իբրև Պանտրմայի ներկայացուցիչ մասնակցել է Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը⁴:

Կյանքի վերջին տարիներին Խաչիկ Ծ. վրդ. Գաղյանը գրեթե չի աշխատել. այս պարագայում որոշակի դեր է խաղացել ոչ միայն առողջական վիճակը, այլ նաև պաշտոնական ու բարոյական անբարյացակամ միջավայրը: Նյութական անապահով վիճակը, օրեցօր վատթարացող առողջությունը հարկադրել են նրան վաճառել իր հարուստ գրադարանը: Անվանի գիտնական Ն. Մառի միջնորդությամբ Խորհրդային Հայաստանի կառավարությունը նրան հողամաս-այգի է հատկացրել, որի արդյունքով նա մի կերպ գոյատևել է⁵: Խաչիկ Գաղյանը վախճանվել է 1936 թ. և, ըստ բանավոր վկայությունների, թաղվել Ս. Գալանե վանքի հին գերեզմանատանը:

Խաչիկ Ծ. վրդ. Գաղյանի գործունեությունը կարելի է բնորոշել ընդհանուր առմամբ իբրև հայագիտական (հնագիտություն և վիճագրութ-

¹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 287, թ. 2:

² ՀԱԱ, ֆ. 319, գ. 277, թ. 1:

³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 239, թ. 8:

⁴ ՀԱԱ, ֆ. 319, գ. 208, թ. 5:

⁵ ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, գ. 287, թթ. 1-2:

յուն, պատմություն, տոհմագրություն, ժողովրդագիտություն՝ լայն առումով):

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը տակավին պատանի, եղբոր՝ Սմբատ Դադյանի հետ, տարվելով «Մշակի» գաղափարներով, Շուշի քաղաքում հիմնում է կազմատուն, գրախանութ, ընթերցարան, մասնակցում քաղաքի հասարակական-մշակութային միջոցառումներին: Ստանձնելով հոգևոր կոչում՝ պաշտոններ վարելով Արցախի վանքերում, իսկ 1894 թ.-ից հետո նաև՝ Էջմիածնում, Պարսկաստանի հայաբնակ գավառներում, նա հնարավորություն է ստանում՝ ավելի մոտիկից շփվելու մայր ժողովրդի հետ, ծանոթանալու նրա հոգևոր ու նյութական մշակույթի գանձերին, հետամուտ է լինում ու հավաքում դրանց բազմաթիվ նմուշներ՝ հայերեն և այլ լեզուներով ձեռագիր մատյաններ, վավերագրեր, փաստաթղթեր, հնագիտական նյութեր: Խրիմյան Հայրիկի առաջարկությամբ, երբ Արցախից Էջմիածին է գալիս, իր իսկ արտահայտությամբ բերում է «ուղիղ մեկ ֆուրգոն», իսկ Պարսկաստանից՝ «երկու ֆուրգոն հնություններ», որոնց հիմքի վրա կազմակերպվում է Էջմիածնի թանգարանը¹:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը իր գործունեության սկզբնական շրջանում նպատակադրվում է զբաղվել ժողովրդագիտությամբ: Դատելով նրա ֆոնդում պահպանված գրառումներից, կազմած ծրագրերի ձեռագրերից՝ նա ծանոթ է եղել ժամանակի ժողովրդագիտական հրատարակություններին: Հասարակական այն մթնոլորտը, ուր ապրում էր Խաչիկ Դադյանը, շնչում էր հայ ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքները փրկելու մտահոգությամբ: 1889 թ. Շուշիում լույս է տեսնում Մ. Աբեղյանի գրի առած հայոց ազգային վեպի՝ «Սասնա ծռերի» երկրորդ պատումը, որի վերաբերյալ Շուշիի հասարակությունը նախապես դասախոսություններ էր լսել: Պատահական չէր «Ազգագրական հանդեսի»՝ հայոց ժողովրդագիտական առաջին պարբերականի հիմնադրումը Շուշիում: Ե. Լավայանից առաջ նման մի հանդեսի բացման ծրագիր է ունեցել Շուշիի հայոց թեմական դպրոցի տեսուչ Եղիշե Մադաթյանը²: Ինքը՝ Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը ևս փորձել է մի պարբերական հիմնել «Ար-

¹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 239, թ. 8:

² Եղիշե Մադաթյանի և Գր. Խալաթյանի նամակագրությունից, հրատ. Գ. Մադոյանի, «Լրաբեր» հաս. գիտ., 1973, № 6, էջ 48:

ցախ» անունով, որի ծրագրում մեծ տեղ է հատկացրել ժողովրդագիտական նյութերին¹:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը կազմում է մի ծրագիր, ըստ որի՝ պետք է ժողովրդագիտական աշխատություն գրեր Ուտիք-Աղվանք-Սյունիք ազգագրական շրջանների մասին: Նա պատմաաշխարհագրական նյութեր է քաղում տպագիր աղբյուրներից, զուգահեռաբար ժողովրդից հավաքում ու գրի է առնում բնակլիմայական, վիճակագրական, ազգագրական տեղեկություններ ու բանահյուսական նյութեր, ճանապարհորդում Արցախում: Նրա արխիվում պահվում է մի անավարտ աշխատության ձեռագիր, որը վերաբերում է Արցախին՝ շարադրված Գր. Խալաթյանի «ծրագրի» սկզբունքով²:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը ամսագիր հրատարակելու իր մտադրությունը իրագործել չի կարողանում, սակայն, թեև պակաս եռանդով, բայց շարունակում է հավաքչական գործունեությունը նաև հետագայում:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի ամենավաղ գրառումները արված են 1878 թ., հավանաբար հայրենի Թաղավարդում³: Հավաքած նյութերի գերակշիռ մասը վերաբերում է անցյալ դարի 80–90 -ական թվականներին, բայց արխիվում կան հատուկ նյութեր՝ թվագրված 20-րդ դարի 20-ական թվականներով: Բավականին ընդարձակ են գրառումների աշխարհագրական շրջանակները. Արցախ (Դիզակի, Վարանդայի, Խաչենի շեներ, Շուշի քաղաք), Պարսկահայք, Վասպուրական, մասամբ՝ Այրարատ (Եղվարդ): Հայ մշակույթի շատ գործիչների նման Դադյանն էլ հարգանքով է վերաբերվել հարևան ժողովուրդների՝ մասնավորապես քրդերի ազգագրությանն ու հոգևոր մշակույթին: Նրա ձեռագիր ժառանգության մեջ պահվում են հարևան ժողովուրդների բանահյուսության նմուշներ, ազգագրական, ժողովրդագրական հավաստի ու արժեքավոր տեղեկություններ⁴:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի հավաքած ժողովրդագիտական նյութերը հիմնականում գտնվում են ձեռագիր վիճակում, որոնց մի մասը դասակարգված է իր՝ Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի կողմից՝ ըստ Գր. Խալաթյանի ծրագրի: Հաջորդաբար ներկայացված են մարդկային կյանքի երեք կա-

¹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 273, թթ. 1-2:

² ՀԱԱ, ֆ. 319, գ. 66, թթ. 1-17, գ. 87, թթ. 1- 6, գ. 92:

³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 70, թ. 82:

⁴ ՀԱԱ, ֆ. 319, գ. 7, թթ. 31-40, գ. 87, թ. 24:

րևորագույն փուլերի՝ ծննդի, ամուսնության ու մահվան վերաբերյալ նյութերը: Մեծ քանակությամբ տեղեկություններ պահվում են առանձին-առանձին գրառումների ձևով: Դադյանն ազգագրական իրողությունները ներկայացնում է համակողմանի, տալիս դրանց հետ առնչվող այլ տեղեկություններ, բերում զուգահեռաբար օգտագործվող բանահյուսական նմուշներ: Ծննդաբերության, ծննդկանի, նորածնի մասին նրա հաղորդման մեջ ներկայացված են մի շարք հավատալիքներ, սովորություններ¹: Հարսանեկան ծեսը ևս Խաչիկ ծ. վրդ. Դադյանի կողմից նկարագրված է մանրամասն, իբրև ամբողջական համակարգ: Ուշագրավ են հատկապես փեսացուին ու պելուն (քավորին) առնչվող տեղեկությունները՝ գրի առնված Արցախի տարբեր գյուղերում²: Հարսանեկան արարողությունների ժամանակ գործ են ածվել «գլխացեկ», «լյուս», «հղե կտրել», «մեծարք», «թաքավորավերս», «ղորմաթաս», «պելի», «թաքավոր», «թաքուհի» և այլ կայուն արտահայտություններ, որոնցից յուրաքանչյուրը արտահայտել է ծեսի այս կամ այն փուլն ու նրան վերաբերող իրողությունները:

Վարաբաղի հայության աշխատանքային գործունեության, զբաղմունքների մասին նյութերը վերաբերում են գերազանցապես Դիզակին ու Խաչենին: Մասնավորապես Դիզակից 1889 թ. արժեքավոր տեղեկություններ է հավաքել երկրագործական աշխատանքների՝ հացահատիկի մշակման, այգեգործության, զինեգործության, շերամապահության ու արհեստների՝ դարբնության, նվագածուների, երաժշտական գործիքների, որսորդության և այլնի մասին³: Ըստ որում, տեղեկություններ են հաղորդվում գործիքների, բույսերի, կենդանիների, հագուստի, ուտեստի, փոխօգնության ձևերի, աշխատանքային գործունեությանն առնչվող իրողությունների վերաբերյալ, բարբառային բառերի բացատրությամբ հանդերձ. վար ու վարի տեսակներ՝ ըշունքավար, կյարունքավար ցանքս, քաղիան, հունձ ու հնձի հետ առնչվող չափեր՝ չանկ, կյուտակ, խորթնը, փենջակ և այլն: Դիզակում երկուշաբթի օրը վար չեն անում: Վարը սկսելու առաջին օրը կորկոտ են ուտում, նախքան սերմը հողին պահ տալը, հետը «ճղոպոր» (ընկույզ) են խառնում և այլն⁴: Ար-

¹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 7, թթ. 1, 21-27:

² ՀԱԱ, ֆ. 319, գ. 14, թ. 25:

³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 14, թթ. 9-15, 31-51, գ. 76, թթ. 50-54, գ. 92:

⁴ ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, թթ. 29-36, գ. 87, թ. 39, գ. 92, թ. 8:

Ժեքավոր տեղեկություններ կան Դադյանի ձեռագրերում արցախահայոց բնակելի տան՝ դարադամի շինարարության վերաբերյալ (տան, գյուղի հիմնադրման համար տեղի ընտրության, շինարարության համար գործածվող նյութերից պատրաստված տան մասեր, դրանց անվանումներ, տան առանձին հարկաբաժիններ, դրանց նշանակությունն ու անվանումները, համայնքի մասնակցությունը շինարարությանը, դրա հետ կապված սովորությունները):

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանն անձամբ և ուրիշների միջոցով նյութեր է հավաքել կախարդության ու գուշակության ձևերի, կախարդների ու գուշակների մասին: Ըստ նրա գրառումների՝ Արցախում գործադրվել են գուշակության հետևյալ ձևերը՝ «կոռնը չափել», «վախը եր քաղիլ», «սրտամնա պոնել», «ջամի մեջ ջուր լցնել» և այլն: Նա կազմել է Շուշի քաղաքի և այլ բնակավայրերի հայ և այլազգի «փալչիների», «չոփչիների», հեքիմների, սուրբ համարվող «օճախների» ցուցակները¹:

1895 թ. «Արարատ» ամսագրի դեկտեմբերյան համարում լույս է տեսնում Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի հավաքած ավետիսների մի փունջ՝ «Լարաբաղի ջրօրհնեսաց երգերից» խորագրով, օժտված հակիրճ ազգագրական բնույթի տեղեկություններով²: Ավելի վաղ «Արարատի» նույն տարվա № 11 և № 12-ում տպագրվել էր Թադևոս առաքյալի վանքում (Պարսկահայք) Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի գրի առած հայոց ազգային հերոսավեպի մի պատումը՝ «Տղայ Դաթի և աղջիկ Խանդուքի հեքիաթը» վերնագրով, վանեցոց բարբառով, բանասեր Ն. Քարամյանի առաջաբանով³: Նա չորրորդն է մեզանում վեպը գրառող-հրատարակողների շարքում (Գ. Սրվանձոյան, Մ. Աբեղյան, Գ. Հովսեփյան): Իսկ «Արարատի» 1895 թ. № 8-ում հրապարակվում է «Հայն ու իր դրացի ազգերը» հաղորդումը, որում զետեղված են քրդերեն ու թուրքերեն բանահյուսության նմուշներ՝ հայերեն թարգմանությամբ, գրի առնված հայ ասացողներից⁴: Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը եղբոր՝ Ս. Դադյանի հետ տպագրում է «Վարանդայի ժողովրդական գրականութիւնից» խորագրի ներքո վիճակի երգերի շարքեր՝ կից ներկայացնելով բարբառային բա-

¹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 14, թթ. 9-15, 31-51, գ. 76, թթ. 50-54, գ. 92:

² «Արարատ», 1895, դեկտեմբեր, էջ 469-471:

³ «Արարատ», 1895, նոյեմբեր, էջ 431-438, դեկտեմբեր, էջ 477-480:

⁴ «Արարատ», օգոստոս, էջ 305:

ռերի հմուտ ու հավաստի բացատրություններ¹: Հրատարակիչները գրում են, որ երգերը գրի են առնված 1890–1900 թթ. Վարանդայի գյուղերում²:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի բանահավաքչական գործունեության պատկերը ամբողջացնելու համար նշենք, որ նա գրառել է հեքիաթներ, ավանդություններ, զվարճախոսություններ, աշխատանքային, սգո, օրորոցային, հարսանեկան, մանկական, ծիսական, վիճակի երգեր (այդ թվում՝ Վարանդայի հորովելի բնագիրը, որ ցարդ կատարվում է), խաղերգեր, ծաղրերգեր, հաշվերգեր, հանելուկներ, կենաց-բարեմաղթություններ, շուտասելուկներ, վիպական մանր ժանրի ստեղծագործություններ՝ ահա թերևս ոչ լրիվ թվարկումը այն ժանրերի, որոնց նմուշները պահպանված են նրա արխիվում: Ըստ որում, նյութերի զգալի մասն ունեն համապատասխան ծանոթագրություններ՝ տեղի, ասացողի, գրառման ժամանակի և այլնի մասին:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը արժեքավոր տեղեկություններ է հավաքել Արցախի, ինչպես նաև պարսկահայոց ժողովրդական երգիչների, աշուղների կենսագրության, ստեղծագործությունների մասին. Նաբի, Բարա (Պապե), Լալա, Շուջի (տողեցի), Գյուշկյուն Քասապար (թաղասեռցի), Արթյուն, Առստամ (թաղլարեցի), Չարկյար օղի (ծաղրութեցի), Դաշխուն (թաղլարեցի), Գյուշան (խանձաձորցի), Փարի (թուրք, կին), Բուշան (թաղասեռցի), Միսկին Տոնի (զյուլստանցի), Թաթոս (բանագուրցի), Գըլ Թաթոս, Միքայել (մարաղեցի), Ադամօղլի³: Դադյանը գրի է առել հիշյալ աշուղներից մի քանիսի հայատառ թուրքերեն և հայերեն խաղերը (Գարաբաղի բարբառով): Նրա ֆոնդում պահվում է թաղլարեցի աշուղ Առստամի երգերի մատյանը:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի ֆոնդում եղած ժողովրդագիտական նյութերը դուրս են մնացել գիտական շրջանառությունից: Մինչդեռ դրանք կարող են իբրև սկզբնաղբյուր ծառայել պատմաագագրական ու բանագիտական և, ինչու չէ, նաև լեզվաբանական հետազոտությունների համար:

¹ «Ազգագրական հանդէս», գգ. 17-19, Թիֆլիս, 1908-1910:

² «Ազգագրական հանդէս», գ. 17, էջ 37-39:

³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 8, թթ. 29-54:

Ժողովրդագիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի հավաքած ու գրի առած ժողովրդական բժշկության վերաբերյալ նյութերը, որոնցում տեղեկություններ կան բուժման թե՛ ֆիզիկական, թե՛ կախարդական-հմայական եղանակների մասին (բուժում օձի կծածից, գլխացավի ժամանակ արյուն առնել, մահլամներ պատրաստել և այլն)¹: Անուրանալի հետաքրքրություն է ներկայացնում «Անանուն բժշկարան ոմն իմաստասերի» ձեռագիրը, որը կազմված է 19 -րդ դարում²: Ձեռագիրը պարունակում է դեղամիջոցների պատրաստման ու գործածության եղանակների նկարագրություններ, վերջում կցված է բառարան՝ նյութերի հայերեն ու լատիներեն անվանումներով:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի բանահավաքչական գործունեության մեջ նշանակալից է վիճակագրական, տեղագրական-աշխարհագրական նյութերի բաժինը, որը վերաբերում է ինչպես Արցախին, այնպես էլ Պարսկահայքին: Ուշագրավ տեղեկություններ կան Արցախի շեների, բնակավայրերի, գավառների, բնակչության թվի, ազգային կազմի, սրբավայրերի, եկեղեցիների, բնական միջավայրի՝ լեռների, գետերի, աղբյուրների, տարվա եղանակների մասին: Նա կազմել է Վարանդայի ձեռագիր քարտեզը, գյուղերի ցուցակը (թվով 64)՝ նշելով բնակչության թիվն ու էթնիկ կազմը: Իր շրջագայությունների ընթացքում նա, համեմատելով հայկական և թուրքական գյուղերը, դրանց բնակչության թիվը, հանգել է այն եզրակացության, որ առաջինները բազմամարդ են՝ բաղկացած 150, 200, 400 -ի հասնող տներից, մինչդեռ երկրորդները ղշլաղներ են՝ ձմեռանոցներ, 6–15, ամենաշատը՝ 50 տնից բաղկացած³:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը գիտեր Շուշին, որտեղ ապրել էր մինչև 1894 թ.: Այսօր հատկապես արժեքավոր են նրա գրի առած ու պահպանված տեղեկությունները քաղաքի մասին: Նա նկարագրել է քաղաքի հայկական ու թուրքական թաղամասերը (մհալները), կազմել քաղաքում հաստատված տոհմերի ցուցակը՝ նշելով, թե որ տոհմը որտեղից է գաղթել և մի անգամ ևս հավաստել քաղաքի հայկական լինելը: Քաղաքի ճշմարտացի պատմությունը շարադրելուն կարող են նպաստել

¹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 25, թ. 39, գ. 92, թ. 9:

² ՀԱԱ, ֆ. 319, գ. 103:

³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 91, թ. 20:

Գաղյանի ֆոնդում պահպանված Շուշի քաղաքի արհեստավորների, զինվորականների, բժիշկների, գրողների, երգիչ-աշուղների, ուսուցիչների, դաշաղների ցուցակները, ինչպես նաև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական բանակում կամավոր ծառայելու պայմանների, վիրավորներին և ունեգուրկ բնակչությանը օգնություն ցույց տալու համար կազմակերպված հանգանակության և նման այլ միջոցառումներին վերաբերող փաստաթղթերն ու տեղեկությունները¹:

*

* *

Խաչիկ ծ. վրդ. Գաղյանի անվան հետ է կապվում Ջվարթնոց Ներսեսաշեն շքեղաշուք տաճարի բացումը ի տես աշխարհի: Ջվարթնոցը նա պեղել է սեփական նախաձեռնությամբ, առանց որոշակի դրամական միջոցների, մասնավոր նվիրատվություններով ու հոգևոր ծառայություններից ստացած եկամուտներով: Հաղթահարելով հսկայածավալ աշխատանքի ֆիզիկական, բարոյական, նյութական դժվարությունները՝ Խաչիկ ծ. վրդ. Գաղյանը կարողացավ հաստ հողածածկույթից մաքրել ու բացել հրաշակերտ տաճարի ավերակները:

1900 թ. մայիսի 29 -ին Խաչիկ ծ. վրդ. Գաղյանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Սկրտիչ Առաջինի օրհնությամբ ու կոնդակով, նախապես ստանալով Ս. Պետերբուրգի Կայսերական հնագիտական հանձնաժողովի պաշտոնական թույլտվությունը², ձեռնարկում է Առապարի Ս. Գրիգոր եկեղեցու պեղումները: Եկեղեցու ավերակները մի վիթխարի հողածածկ բլուր էր՝ Վաղարշապատից 3 կմ հեռավորության վրա և իբրև արոտատեղի էր ծառայում շրջակայքի գյուղերի անասունների համար: Մինչ պեղումներ ձեռնարկելը նա հնարավորինս ուսումնասիրել էր, ծանոթացել եկեղեցու վերաբերյալ պատմագրական աղբյուրներին³, որը հայտնի էր նաև Ջվարթնոց անվամբ:

Խաչիկ ծ. վրդ. Գաղյանն արդեն ուներ պեղումներ անելու որոշ փորձ ու հմտություն: Շուշիի ռեալական դպրոցի գերմաներենի ուսուցիչ Է. Ռեոպերի հետ համատեղ պեղումներ էր արել Խաչենի Առաջածոր, Քոլատակ, Կիչան, Տնջրհող գյուղերի կուրգաններում, Մաղավուզ և այլ

¹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, թթ. 1-28, 31-35, գ. 91, թթ. 26-28 և այլն:

² ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, գ. 352, թթ. 15, 56:

³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, գ. 287, թ. 3:

գյուղերի մերձակայքում, Սաղսաղանաբերդում, որոնց մասին հաղորդագրություններ են տպվել մամուլում¹: Պեղումներից հայտնաբերված նյութերը մանրամասն ներկայացված են Հ. Թաշճյանի ցուցակներում²:

Զվարթնոցի պեղումների առաջին տարվա արդյունքները գերազանցեցին բոլոր սպասելիքները: Գ-տաժոնները տեղափոխվեցին Էջմիածին³: Մամուլում եղան դրվատալից հաղորդումներ: Առաջին տարում հողածածկույթից ազատվեց եկեղեցու մի մասը միայն, բայց այն, ինչ երևում էր, պատկառանք էր ներշնչում: Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը 1902 թ. գրում է հաշվետվություն «Հնագիտական պեղումները Վաղարշապատում»⁴: Առաջին տարվա հաջողությունը պայմանավորված էր նաև պեղումների ժամանակ, հուլիսի 11-ին, ուրարտական սեպագիր արձանագրության հայտնաբերումով⁵, որի լուսանկարը ծանոթագրություններով տպագրվում է «Արարատում»⁶: Հարկ է նշել, որ սեպագիր արձանագրության հայտնաբերումը մեծ հետաքրքրություն է հարուցում արևելագետների շրջանում: 1900 թ. դեկտեմբերին Էջմիածնում գտնվող հայագետ Կ. Բասմաճյանը Փարիզ է տանում արձանագրության էստամպաժը և ֆրանսերեն հրատարակում վերծանությամբ հանդերձ⁷: Տպագրվում է նաև ալբոմ եկեղեցու ավերակների պատկերներով⁸: Հաջորդ տարիներին պեղումները որոշ ընդհատումներով շարունակվում են և տևում մինչև 1919 թ.⁹: Պեղումների վերաբերյալ Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը պարբերաբար զեկուցագրեր է ներկայացնում Կալսերական հնագիտական հանձնաժողովին¹⁰: Պեղումների մասին մի շարք հոդ-

¹ «Տարագ», 1893, սեպտեմբերի 12:

² Յակոբ Թաշճեան, Յուցակ ձեռագրաց, Խաչիկ վարդապետ Դատեան, ժողոված 1878-1898, մ. Ա, Վաղարշապատ, 1898, էջ 63, նույնի Յուցակ ժողովածուաց Խաչիկ վարդապետ Դատեան, 1878-1898, մ. Բ, Վաղարշապատ, 1900, էջ 63-78:

³ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 287, թ. 1:

⁴ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 15:

⁵ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 228, ց. 1, թթ. 1-3:

⁶ «Արարատ», 1900, օգոստոս-սեպտեմբեր, էջ 389-391:

⁷ La Stelle de Zvartnotz, par K. Basmadj'ian, Recueil de travaux relatifs á la Philologie et á l'Archéologie égyptiennes et assyriennes, vol XXIII:

⁸ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 248, թ. 1:

⁹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 252, թ. 11:

¹⁰ О. Балакян, Дж. Оганесян, Докладные записки Х. Дадяна о раскопках Звартноца, Вестник общественных наук АН Арм. ССР, 1984, № 5, сс. 78-87.

վածներ են տպագրվում մամուլում¹, Մոսկվայում 1903 թ. լույս է տեսնում փոստային բացիկ Ջվարթնոցի տեսարաններով², Ջվարթնոցը դառնում է ցանկալի ուխտավայր Հայաստան այցելած հայ և օտարագրի հյուրերի, գիտնականների, պետական և մշակույթի գործիչների համար:

Տաճարին նվիրված անդրանիկ ուսումնասիրությունը պատկանում է Թ. Թորամանյանի գրչին³, երկրորդը՝ ավելի ընդարձակ, մանրամասն, հիմնված Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի զեկուցագրերի, չափագրությունների վրա՝ Մ. վրդ. Տեր-Մովսիսյանին (մագիստրոս)⁴: Այն համառոտ լույս էր տեսել ռուսերեն⁵: Ջվարթնոցն իր ճարտարապետական հորինվածքով դառնում է վեճերի առարկա, որոնք չեն դադարել առ այսօր: Ինքը Խաչիկ Ծ. վրդ. Դադյանն առաջ է քաշում մի տեսակետ, ըստ որի՝ Ջվարթնոցում է ամփոփված Գրիգոր Լուսավորչի աճյունն, ու սկսում որոնումները: Այդ տեսակետը նրա դեմ է հանում որոշ հոգևորականների ու ազգային պահպանողական հոսանքի ներկայացուցիչների: Նրան մեղադրում են ազգային ավանդությունների ու սրբությունների դեմ մեղանշելու մեջ, բանը հասնում է անձնական պարսավանքի ու վիրավորանքների⁶:

Ջվարթնոցի ճարտարապետությունն ու կառույցի սկզբունքները համակողմանի ուսումնասիրել է Թ. Թորամանյանը: Նա թեև պարբերաբար չի մասնակցել պեղումներին, բայց ուշի-ուշով հետևել է աշխատանքներին, մասնագիտական որոշ խորհուրդներ տվել Դադյանին: Անիի Մ. Գրիգոր եկեղեցուց հայտնաբերած մանրակերտի, Բանակի (Տայք, Թուրքիա) զվարթնոցատիպ այլ հուշարձանների հայտնաբերումը նրան հնարավորություն ընձեռեց ավելի խորացնելու ու ամբողջացնելու հայոց ազգային ճարտարապետության համար անկյունաքարա-

¹ «Արարատ», 1900, № 8-9, էջ 380-381, «Մշակ», 1900, № 246, 1903, № 59, 1904, № 109, «Մուրճ», 1901, № 7 և այլն:

² ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 292, թ. 1:

³ Թ. Թորամանյան, Ջուարթնոց եկեղեցին, «Մուրճ» ամսագիր, 1905, № 5, էջ 185-197:

⁴ Մ. Տեր-Մովսիսյան, Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիներ, Ազգագրական հանդես, գ. 15, Թիֆլիս, 1907, էջ 85-127:

⁵ М. Тер-Мовсисян, Раскопки церкви св. Григория близ Эчмиадзина, Известия Императорской археологической комиссии, вып. VII, Санкт-Петербург, 1903, сс. 1-48.

⁶ «Նոր-Դար», 1902, №№ 187, 188, 189, 190:

յին նշանակություն ունեցող Ջվարթնոցի կառույցի վերաբերյալ իր տեսությունը:

Տաճարի ավերակների բացումը, նրա մասին ստեղծված գրականությունը, հայկական ճարտարապետության տեսության ու պատմության հարցերի մշակումը դարասկզբի հայ հասարակական-մշակութային կյանքի նշանավոր երևույթներից էին և, անկասկած, նպաստեցին ազգային ինքնագիտակցության ու ինքնահաստատման գաղափարների վերելքին, ինչպես նաև հայ մշակույթի դերի ու նշանակության բարձրացմանը համաշխարհային գիտական-հասարակական շրջաններում:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը հետախուզական մասնակի պեղումներ է արել Արևելյան Հայաստանի մի շարք բնակավայրերում, Գառնիում, Արմավիրում, Դվինում, Եղվարդում և այլ վայրերում: 1906 թ. մայիսին Արմավիրում նա հայտնաբերում է երկրորդ սեպագիր արձանագրությունը¹: Դվինում նրա պեղումների արդյունքները խոստումնալից էին, բայց Հայոց աշխարհի նախկին մայրաքաղաքի շուրջը գտնվող թուրք և հայ գյուղացիները քաղաքի տարածքն ու հնագիտական արժեքավոր գտածոները դարձրել էին առևտրի՝ շահույթի աղբյուր և ավերում ու թալանում էին բոլորը²: Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի հարուցած դատական գործը երկու տարի ձգձգվելուց հետո, ի վերջո, 1911 թ. սեպտեմբերի 29 - ին ավարտվում է անհետևանք³:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը նշանակալից վաստակ ունի վիճագիր արձանագրությունները հավաքելու, հրատարակելու ասպարեզում: Քարեղեն հուշարձաններից նրա ընդօրինակած վիճագրերի որոշ մասը այժմ գոյություն չունի: Նրա ժառանգությունը հիմնականում ընգրկում է Արցախական աշխարհը⁴, բայց պահպանվել են և մասամբ տպագրվել մի ամբողջ շարք արձանագրություններ Պարսկահայքից⁵: Արխիվում պահպանվել են նաև նվիրատվությունների արձանագրություններ, տա-

¹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 352, թ. 34:

² ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 201, թթ. 10-17:

³ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 201, թ. 22:

⁴ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 9, թթ. 1-55, Գատեան Խ. Ծ. վրդ., Մեծարանց որ և Ս. Յակոբայ վանից արձանագրութիւնները, «Բանասէր», Պարիս, 1901, հատ. 3, սյր. Բ, Գ., էջ 135-147:

⁵ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 9, թթ. 1-55, Գատեան Խ. Ծ. վրդ., Մեծարանց որ է Ս. Յակոբայ վանից արձանագրութիւնները, «Բանասէր», Պարիս, 1901, հատ. 3, սյր. Բ, Գ., էջ 135-147:

պանագրեր՝ գրի առած Գեղարդի եկեղեցու պատերից, Գառնիից¹: Նշվեցին միայն հիմնական հավաքածուները: Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը հընթացս ընդօրինակել է տարբեր վայրերում հատուկեմտ, բայց արժեքավոր վիմագրերի նմուշներ, ինչպես օրինակ, Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցու պատի արձանագրությունները²:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի ձեռագիր ժառանգության մեջ ուրույն, արժեքավոր բաժին են կազմում ֆերմաններ, կալվածագրեր, Ղարաբաղի մելիքների իշխանական տոհմերի պատմությանը վերաբերող վավերագրեր, որոնց հետազոտությունը կարող է նպաստել նրանց պատմության որոշ հարցերի լուսաբանմանը³:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի գրչին են պատկանում ինքնուրույն պատմագիտական ուսումնասիրություններ, պատմագիտական բնույթի բնագրերի հրատարակություններ, որոնք պարբերաբար լույս են տեսել «Արարատ» ամսագրի էջերում: Անուրանալի արժեք ունեն նրա հեղինակած «Առան երկիր կամ աշխարհ»⁴, «Համառօտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի»⁵, «Պարսկահայք. համառօտ նկարագիր Շաարշան գաւառի Ս. Թադէոս Առաքելոյ վանքի»⁶, «Նիւթեր ուսումնասիրութեան Ադուանից պատմութեան»⁷, «Թարրխով Աքրադ կամ Շարաֆ մամա, քրդերի պատմութիւն կամ Փառաց մատեան»⁸ և հատկապես Մ. Կադանկատվացու «Ադուանից պատմութեան»՝ բանասերների ուշադրությունից դուրս մնացած մի կարևոր՝ Սահլ Սմբատյանի նվիրված հատվածի հայտնաբերումը⁹:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը Էջմիածնի Հայրիկյան թանգարանի հիմնադիրն է ու Սկրտիչ Կաթողիկոսի կողմից 1899 թ. նոյեմբերի 19-ի հատուկ կոնդակով նշանակված թանգարանապետը: Թանգարանի պահ-

¹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 30:

² «Արարատ», 1896, յունուար, էջ 81, Ա. Յակոբեան, Գ-տչավանքի շինարարական արձանագրութիւնը և Հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, «Հանդէս ամսօրեայ», 1999, № 1-12, էջ 248:

³ ՀԱԱ, ֆ. 319, գգ. 34-64, 157, 287, թթ. 1-2,:

⁴ «Արարատ», 1896, մայիս, էջ 233-234:

⁵ «Արարատ», 1896, մայիս, էջ 233-234:

⁶ «Արարատ», 1898, յունուար, էջ 38-40, փետրուար, էջ 89-91:

⁷ «Արարատ», 1896, յունուար, էջ 22-26:

⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 894, թ. 2:

⁹ «Արարատ», 1895, №№ 7, 9-11, 1896, №№ 1-4, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 18-19:

պանության մտահոգությունից դրդված՝ Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը Ամենայն Հայոց կաթողիկոսին 1909 թ. նոյեմբերի 19-ին ուղղված հայտարարության մեջ գրում է. «Հարուստ ժողովածուս՝ բաղկացած երեք պահարան ձեռագրերից (թուով 600 հեղինակ...) և ինն պահարան զանազան հնութիւններից (թուով 2000 կտոր), դրած են ի գարդ Հայրիկեան թանգարանի և մատենադարանի Մայր աթոռոյս...»¹: Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի հավաքած ձեռագրերը, այլևայլ վավերագրերն ու հնագիտական գտածոներն ամփոփված ու նկարագրված են Հակոբ Թաշճյանի հրատարակած երկու մասից բաղկացած գրքում²: «Արձագանք» թերթում 1885 թ. անվանի պատմաբան Լեոն հանդես է գալիս թղթակցությամբ, որով հայտնում է, թե թաղավարդցի քահանա տեր Գրիգորը կտակել է իր որդիներին՝ Ս. և Վ. Դադյաններին Էջմիածնի մատենադարանին հանձնել ընտանիքում պահվող 33 հայերեն ձեռագիր մատյանները³: Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը ոչ միայն ընտանեկան ձեռագրերն է հանձնում, այլև անխոնջ եռանդով հավաքում ու մատենադարանին է հանձնում պատկառելի մի քանակով ձեռագրեր, վավերագրեր՝ ամբողջական ու պատահիկներ⁴: Նրա ջանքերի շնորհիվ Մատենադարանը հարստացել է առնվազն 263 հայերեն և 30 արաբատառ ձեռագրերով: Ոչ մի հավաքածու չի ունեցել այնքան վավերագրեր ու պատահիկներ, որքան Խաչիկ Ծ. վրդ. Դադյանին: Նրա հավաքածուի մեծ մասը վերաբերում է Հայոց Արևելից Կողմանց⁵:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը նամակագրություն է ունեցել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի բազմաթիվ հասարակական գործիչների, մտավորականների, հայագետների հետ: Նրա բազմակողմանի գործունեությունը, հատկապես Չվարթնոցի պեղումները հետաքրքրել են շատերին, նամակագիրները դիմել են նրան գերազանցապես նյութ, տեղե-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 894, թ. 1:

² Յակոբ Թաշճեան, Յուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դատեան, ժողոված 1878-1898, մ. Ա, Վաղարշապատ, Յուցակ ժողովածուաց Խաչիկ վարդապետ Դատեան, 1878-1898, մ. Բ, Վաղարշապատ, 1900:

³ «Արձագանք», 1885, № 9, էջ 121-123:

⁴ Օ. Եզանյան, Թաղավարդցի Գրիգոր քհ., Դադյանի ձեռագրերի հավաքածուն, «Էջմիածին» ամսագիր, 1969, № 7-8, էջ 65-66:

⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1984, էջ 29:

կություն ստանալու ակնկալիքով: Նրա ֆունդում պահպանված նամակների մի մասն է միայն տպագրվել¹:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի հնագիտական գործունեությունը քննադատողները, որոնք օգտագործել են նաև նրա պեղումների արդյունքները, կարծում ենք, անաչառ չեն իրենց գնահատականներում: Նախ՝ նկատի չեն ունեցել գիտության մակարդակը այն ժամանակաշրջանում, որում գործել է Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը: Երկրորդը՝ ֆինանսական միջոցների բացակայությունը: Մի բան է ժամանակի և տարածության հեռվից խորհուրդներ ու գնահատականներ տալը, մի այլ՝ անձնական մասնակցությունը: Թերևս այդ առումով բացառություն է կազմում Մ. վրդ. Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս) իր հարցապնդումներով ու որոշակի առաջարկություններով²: Ինքը՝ Դադյանն զգացել է մասնագետ խորհրդատուի կարիք: Կայսերական հնագիտական ընկերությանն ուղղված զեկուցագրերում նա ուղղակի գրում է, որ հետևելու և աջակցելու համար փորձառու գիտական խորհրդատուի կարիք ունի³: Զննադատողները նույնիսկ ծանոթ չեն եղել նրա արխիվում պահվող վավերագրերին, այլապես նրան չէին մեղադրի Դ-վինի Ս. Գրիգոր եկեղեցու մոզաիկը փչացնելու մեջ:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանը ապրել է հախտուն կյանքով: Նրան ավելի շատ ուղեկցել են ձախորդություններն ու անհաջողությունները, քան հաջողությունն ու փառքը: 1904 թ. ցարական իշխանությունները քաղաքական մեղադրանքով նրան արքայի են Տամբովի նահանգ: Նրան մեղադրել են Ջվարթնոցում «Մահ կամ ազատություն» նշանաբանով դրոշակ օծելու և Արևմտյան Հայաստան՝ գորավար Անդրանիկին ուղարկելու համար⁴: Հաջորդ անգամ՝ 1917 թ. նրան բանտարկել են ցարական իշխանություններին համագործակցելու մեղադրանքով: Առաջին անգամ նա ազատվել է 1905 թ. բարենորոգումների շնորհիվ, երկրորդ ան-

¹ Խ. Դադյանին ուղղված նամակներ, հրատ. Ա. Ղազիյանի, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 5, էջ 84-93, Թորոս Թորամանյանի նամակները Խաչիկ Դադյանին (1907-1919 թթ.), հրատ. Ա. Ղազիյանի, «Բանբեր Հայաստանի արխիվների» 1987, № 3, էջ 65-74, Հ. Դ. Լազարյանի նամակները Առաքել Կոստանյանին, հրատ. Ա. Ղազիյանի, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1988, № 2, էջ 38-41 և այլն:

² ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 256, թթ. 1-2:

³ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 352, թ. 21:

⁴ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 280, թթ. 1-7:

գամ նրան ազատ են արձակել մեղադրանքը չհաստատվելու պատճառով¹: Երրորդ անգամ նրան բանտարկում են 1927 թ.՝ Ս. Հռիփսիմեն եկեղեցու շուրջ անօրինական և սխալ պեղումներ անելու համար: Այս անգամ Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի պաշտպանությամբ հանդես է գալիս Էջմիածնի հասարակությունը, որը մոտ 350 ստորագրությամբ հանրագիր է ուղարկում Հայաստանի կենտրոնականին: Նրան կալանքից ազատում են և մեկ տարով աքտորում Երևան՝ Ս. Սարգիս եկեղեցում ծառայելու²:

Խաչիկ Ծ. վրդ. Դադյանի մահվանից անցել է ավելի քան յոթ տասնամյակ, սակայն նրա վաստակն, ըստ էության, արժանվույն չի գնահատվել: Մինչդեռ նրա՝ շուրջ 40-ամյա բազմաբնույթ հայագիտական գործունեությունը նպաստել է հայ մշակույթի առաջընթացին, նրա ժողոված նյութական ու հոգևոր արժեքները զգալի չափով հարստացրել են հայ մշակույթի գանձարանը³:

Ա. ԳԱԶԻՅԱՆ

¹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 285, թթ. 1-4:

² ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գգ. 223, 285, թ. 4, գգ. 290, 291, 375, թթ. 1-2:

□ Խաչիկ Ծ. վարդապետ Դադյանի (Դատեան) «Արարատ» ամսագրում տպագրված գրական ժառանգությունն ամփոփող այս գիրքը ընթերցողին ներկայացվում է դասական ուղղագրությամբ և ժամանակակից գրական արևելահայերենի կետադրությամբ: Ուղղագրության մեջ փոխված են մեծատառի անհարկի և ոչ միօրինակ գրությունը (օրինակ՝ հայ, քուրդ, քրդական, լատին, հայերեն, արաբերեն, այրումցի, ավէքսանդրապոլցի, տաճար, սիւնեաց, աղուանից և այլն), որոշ բառերի գրաբարյան հոգնակիի (ուղիղ և հոլովված) ձևերը՝ այսօրվա ձևերով (օր.՝ եկեղեցիք-եկեղեցիներ, հայք-հայեր, ռուսք-ռուսներ, հարց-հայրերի և այլն), ցուցական դերանունների ուղիղ և հոլովված ձևերը՝ ժամանակակից ձևերով (օր.՝ սորա-սրա, դորա-դրա, նոցա-նրանց և այլն): Տողադարձի դեպքում, նաև դյուրընթեռնելիության համար, որոշ բառերում փոխված և միօրինակության են բերված ու-ն և-ով փոխված գրության ձևեր (օր.՝ Դունայ-Դունայ, գտնուում է-գտնում է, անուանում է-անուան-ում է և այլն):

Խաչիկ Ծ. վարդապետի՝ «Արարատ» ամսագրում տպագրված նյութերում կան տպագրական վրիպակներ՝ տառերի ետուառաջություն, անճշտություն, բացակայություն, երկձև գրություն (օր.՝ հիմնարե-հիմնաեր, Թորոմանեան-Թորամանեան, Գալիթ-Գալիթ, բուբլի-ռուբլի, դեսիատին-դեսեսատին և այլն), սպրդած ուղղագրական սխալներ (օր.՝ մանրագնից-մանրագնից), բառերի ոչ միօրինակ գրության ձևեր, հատկապես՝ անձնանունների և տեղանունների (օր.՝ փահլավան-փահլաան, Ջաբրայել-Ջաբրրայել, Ջուանչիր-Ջուանչիր, Խանդուղ-Խանդութ և այլն), որոնք ուղղված են ներկա հրատարակության մեջ:

Առանց փոփոխության (սխալներով հանդերձ) տպագրված են մեջբերված արձանագրություններն ու վավերագրերը, «Պատմութիւն Աղուանից Մ. Կաղանկ. և Գիրք թղթոց Անանիայի կաթողիկոսի»-ի համեմատական տախտակը, որոնց մեջ եղած սխալների և գրության ոչ միօրինակության մասին գրում է նաև հեղինակը (տես էջ 139-ի առաջին հղումը, էջ 176-ի վերջը): (*Ծնթ.-ը՝ հրատարակչության*):

ՀԱՂԻՏԱԿԱՆ

ԱՌԱՆ ԵՐԿԻՐ ԿԱՄ ԱՇԽԱՐՀ*

Այն երկիրը, որը գտնվում է Կուր եւ Երասխ գետերի եւ Սեւան լճի մէջ տեղը, Պարսից¹, Արաբաց² եւ Վրաց³ պատմագիրներից անուանւում է «Արանգամի»՝ Առանի երկիր: Հայ պատմագիրներից⁴ եւ յիշատակագիրներից⁵ ոմանք գործ էին ածում աշխարհ, երկիր Ռանայ, Ըռանայ կամ Առանայ, իսկ սոյն երկրում իշխողներից շատերին կոչում են Առան Շահիկ կամ Եռանշահիկ⁶ Տէր:

Մատենագիրներից յետոյ միակ արձանագրութիւնը, որ յիշատակում է իւր մէջ Ըռան կամ Առան անունը եւ որ առաջին անգամ հանդիպել է ինձ, Խաչենու Առաջածոր գիւղի ծապին ձորի

* Արարատ, 1896, էջ 233-234:

¹ История Религии древняго Мира, Персія, СПб, 1883, т. III, 148. «Ормуздъ – первый создалъ слъ дующія шестнадцать областеи, надъ леныя разными благами: 1) Эриена Веедио» (Арань, часть Арменіи съ благороствореннь ышамъ климатомъ):

Պարսից Զրադաշտական օրինագրքի՝ «Աեստայի» «Վենդիդատ-սադէ»՝ «Պատմութիւն ստեղծագործութեան» բաժնի մէջ Որմզդին վերագրում է տասն եւ վեց զանազան երկրների ստեղծագործութիւնը՝ ամէն մի բարիքներով հանդերձ: Միայն յիշեալ ստեղծագործութեան անդրանիկ տեղը բռնում է «Էերիենա Վէդիո»՝ Առանի երկիրը իւր բարեխառնագոյն կլիմայով: Թերեւս մեր նախահայրերը «Էերիենա Վէդիո»-ն բարեխառնագոյն թարգմանելու տեղ Ադուանք=Ադու=բաղցր (բաղցր բնութիւն ունեցող երկիր) լինեն անուանած յիշեալ երկիրը կամ աշխարհը: Պարսից «Ջաննաթիխութ» պատմութեան մէջ Կուր եւ Երասխ գետերի խառնուրդին մօտ մի հին քաղաքի մասին յիշատակութիւն է անում «Փայթախտարան»՝ Առանի աթոռանիստ կամ Առանի նստոցը: Գուցէ Առանի երկրի սահմանակից Հայոց Փայտակարան նահանգի անունը «Փայթախտարան» անուան աղաւաղումն լինի:

Բառարան Պարսկերէն, Պոլիս, 1826, եր. 102: «Էրրան է անուն ընդարձակ գաւառի միոջ, յորում են յաղաքն՝ Պէրսէ, Կէնճէ, Շէմքիուր եւ Պէլլէգան, եւ ընդ մէջ այսր գաւառի եւ Ազերպայճանի հոսեալ՝ անցանէ գետն Երասխ»:

² Մորթման, հատուածք Պատմութեան Հայաստանի, քաղեալք յԱրաբացի Պատմագրաց, թարգմ. Իսթիճեան, Պոլիս, 1874:

³ Համառօտ պատմութիւն վրաց՝ ընծայեալ Ջուանշէրի պատմչի, Վենետիկ, 1884, երես 29, 73, 75:

⁴ Ս. Օրբելեան, Պատմութիւն Սիւնեաց, Մոսկվա, 1860, երես 234: Վարդան պատմագիր, Վենետիկ, 1862, երես 103 եւլն, եւլն:

⁵ Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, երես 74:

⁶ Մ. Կաղանկատուացոյ Պատմութիւն Ադուանից, Մոսկվա, 1860, երես 71, 136, 258 եւլն: Արցախ, երես 188-189:

քարաժայռի արձանագրութիւնն է: Տարաբաղդաբար, Գեր. Մակար Եպիսկոպոսի «Արցախ» աշխատասիրութեան մէջ միանգամայն աղաւաղուած է:(Տե՛ս Արցախ, երես 288-289):

Ջաւանշիր գաւառի Առաջաձոր (Դովչանլու) գիւղի արեւելեան ձապին ձորի քարաժայռի արձանագրութիւնը:

Տեղեկութիւնք. Քարաժայռի բարձրութիւնն է 2 սաժէն 10 վերչոկ: Ժայռի հիւսիս-արեւմտեան, հարաւ-արեւմտեան եւ հարաւ-արեւելեան ճակատները ծածկուած են արձանագրութեամբ եւ քանդակած խաչերով:

Հիւսիս-արեւմտեան ճակատի քանդակներն են երեք զանազանակերպ խաչեր եւ մի ծածկագրութիւն ունեցող խաչանման քանդակ, չորս տող արձանագրութիւն, որից երկու տողը՝ իսպառ եղծուած:

Հարաւ-արեւմտեան ճակատի քանդակներն են քսան եւ մէկ մեծ եւ փոքր խաչեր եւ տասներկու տող արձանագրութիւն, երկուսը՝ կիսակողմ:

Իսկ հարաւ-արեւելեան ճակատին՝ եօթն քանդակած խաչեր եւ տասը տող արձանագրութիւն. արձանագրութեան տասներկու տողը երկար՝ 1 սաժէն 4 վերչ., երկու տողը միջակ՝ 1 արչ. 10 վերչ. եւ եօթը տողը կարճ՝ 14 վերչոկ: Գրութիւնը՝ փակագիր երկաթագիր, տառերը՝ ՅՃ6 սմ:

Քարաժայռի հիւսիս-արեւմտեան գրութիւնն է.

1. «Յորժամ նկարեցան
2. Հզարահանքս¹ թիւն .ՈՂԸ. էր: Տր Խաչինոյ² Ջալալ:
3.
4.»

Հարաւ-արեւմտեան գրութիւնն է.

1. «Գրեցան նկարեցան կատարեալը³ (ք) Առաքել էջս⁴ յանուն սուրբ Երրոր⁵....

¹ հզար հանքս:
² Եւ տէր խաչի Նոյջալայ: Ջալալ անուան տակ մի շատ գեղեցիկ խոյրածածկ խաչ է քանդակած:
³ Կատարեցաք:
⁴ առաք. եւ էջս:
⁵ յանող սորա մեր որդի:

2. Սուրբ տնաւրէնութեամբն¹ Քի. ի բարեխաւս հոգոյ² եւ մարմնոյ³ եւ ի պարծ⁴....
3. Տէր Եղիայ⁵ շինեց զսուրբ անապատս եւ Իսմայէլ օծէի. սմայ.⁶ թշն
4. ամին կործանած է⁷ սորայ⁸ Քբլէ կասեն սմայ.⁹ սայ¹⁰ բարեխաւսէ նոցա.
5. Որք միաբանեն. սոցայ¹¹ բարին քո տէր առատ խաղաղութեամբ կեցցէ¹²
6. եւ¹³ մնասցէ նոցայ¹⁴ այժմոյս¹⁵ ահա եւ հանթերծեալսն.¹⁶
7. որ առ աջիլ¹⁷ այլ աւրհնեալ եղիցին միաբան:
8. Մայր Տեառն ողորմեայ¹⁸ մաւրն իմ յու-
9. սացեալ ի միածինդ քո¹⁹ լոս²⁰
10. աւորեայ ընդ սուրբ²¹ ոգոյ»:
- Հարաւ-արեւելեան ճակատի գրութիւնը.
1. Որս²² յարքայ²³ ջալալայ²⁴ դաւլայ եւ աթաբակ որդի նորայ²⁵ իշխան խաչինոյ²⁶

¹ տնաւրէնութեամբ նա:

² հոգոց:

³ մարմնոց:

⁴ զարծանս...:5 եւ 9 ծանօթ. կրող բառերի շարունակութիւնը երկու տող կիսա-

եղծ, անընթեռնելի են:

⁵ Եղիա:

⁶ եւ ի յեծէ, ի սմայ:

⁷ կործանեցէ:

⁸ սորա:

⁹ այլք բարեկամ են սմայ:

¹⁰ Սա:

¹¹ սոցա:

¹² ... ցէ:

¹³ պակասի:

¹⁴ նմա:

¹⁵ այժմս:

¹⁶ ընդերծեալսն:

¹⁷ ոչ միայն ի մի աջեալ:

¹⁸ միամաւր իմ:

¹⁹ քոյ:

²⁰ լուսաւորեա:

²¹ ընդ սուրբս քո:

²² որ Աստուծոյ:

²³ արքայ:

²⁴ ջալալ:

²⁵ որդին որ Աստուծոյ:

²⁶ Խաչենոյ:

2. Եւ Ըռանայ ուքան մանուկն Հասանայ սաղար ? գողած¹ ու մեծ
փաթշայ ասլան² պարոն հա
3. յր Մամքանայ³ սիրով⁴ ի սմայ⁵ այլ⁶ մեծամեծ իշխանք եւ
զաւրք նոցա⁷ միայ-
4. Համուռ⁸ Համակից միմեանց աւրհնեալ եւ զաւրացեալ եղիցին
ի կամս Աստուծոյ Հաւր եւ
5. նմայ⁹ փառք յաւիտեանս ամէն. տունկս բարի ծառս ամենի
պտուղն
6. եփիր¹⁰ Հազար բարի ով փափագի աստ վայելի¹¹ կենաց յուսոյն
7. նայ¹² Հասանի. Ողորմի Աստուած միաբանելոցս ի սմայ¹³ սիրով
եւ արդեամբք
8. եւ ամենայն¹⁴ բարեպաշտ իշխանաց մեր
9. ոց տացէ Աստուած զբարեմտութիւն
10. հոգոյ¹⁵ եւ մարմնոյ¹⁶ իրայն¹⁷»:

¹ սաղար գոլ Աստուած:

² փաթշայան:

³ շահ տէր միքան Աստուծոյ:

⁴ սիրով:

⁵ ի սմա:

⁶ միաբան նաց:

⁷ Յլ: (330) 39. զարքն Ռ-Յ. (1300)աց:

⁸ միահամուռ:

⁹ նմա:

¹⁰ իբր

¹¹ վայելի:

¹² նա:

¹³ սմա:

¹⁴ յամենայն:

¹⁵ հոգոց:

¹⁶ մարմնոց:

¹⁷ մերոց. ամէն:

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՐՑԱԽԻ (ՂԱՐԱԲԱՂԻ) ԹԵՄԻ ՎԱՆՔԵՐԻ*

Կովկասի 1892 թուականի վարչական բաժանման համաձայն՝ Ղարաբաղի թեմը բաղկանում է Գանձակի (Ելիսաբետպոլի) նահանգի՝ Զաբրայէլի, Զաւանչիրի, Շուշիի, մասամբ Զանգազուրի եւ մասամբ էլ Գանձակի գաւառներից¹: Թեմիս վանքերը գտնւում են Զաւանչիրի, Շուշիի եւ Զաբրայէլի գաւառներում, որոնք բաժանւում են այսպէս.

1. Թաղէի-Խօթայ, որ եւ Չարէքտարի,
2. Գանձասարի սուր[բ] Յովհաննու Մկրտչի,
3. Մեծարանց սուրբ Յակոբայ,
4. Սուրբ Եղիշայ Առաքելոյ եւ
5. Երից մանկանց վանքերը Զաւանչիրում
6. Պտկի սուրբ Գէորգայ,
7. Ամարասի սուրբ Գրիգորիսի,
8. Քթիշայ « » եւ
9. Սուրբ Ղեւոնդեանց վանքերը Շուշիում եւ
10. Սպիտակ Խաչի վանքը Զաբրայէլում:

ՁԱԽԱՆՇԻՐԻ ՎԱՆՔԵՐԸ

1. Թաղէի-Խօթայ՝ որ եւ Չարէքտարի, վանքը գտնւում է Ղարաբաղի ամենամեծ գետի՝ Թարթառի ափին՝ մի վերստաչափ հեռաւորութեամբ: Այս վանքը յայտնի է իբր հանգստարան Հաթերքի՝ որ եւ Վերին Խաչենի հայկազուն իշխանազուներին: Ներկայումս կանգուն կաթողիկէն հիմնարկուած է հայազգի Քուրդ իշ-

* Արարատ, 1896, էջ 42-45:

¹ Իսկ Ղարաբաղի թեմի՝ Նուխիի յաջորդութիւնը՝ Նուխիի եւ Արաշի գաւառներից:

խանի դուստր եւ Հաթերքի Վախտանգ թագաւորացնի ամուսին Արգու խաթուն տիկնոջ ձեռքով Հայոց ՈԿԳ (663=1214) թուակա- նին իւր ամուսնի եւ որդոց յիշատակին:

Վանքիս ներկայ դրութիւնը խիստ աննախանձելի է՝ չորս կողմը աւեր եւ ամայացած, կաթուղիկէի կտուրը՝ ճաքճքոտած, շրջապատուած կիսաւեր գաւթով եւ ժամատնով, քայքայուած պարսպով, քարաչէն կամարակապ բնակարաններով ու շինու- թիւններով:

Վանքը իւր շրջակայ շինութիւններով նմանուած է մարդա- շատ քաղաքի մի հարուստ թաղի, որտեղ միայն մարդկանց ներ- կայութիւնն է շունչ եւ կենդանութիւն տալիս:

Թաղէի ուխտը՝ իբրեւ առաջնորդարան եւ բազմամարդ վանք, զանազան ժամանակներում ստացել է թէ՛ այցելու ուխտաւորնե- րից եւ թէ՛ իւր հովանաւորող հոգեւոր եւ մարմնաւոր իշխանա- ւորներից այլ եւ այլ ընծայաբերութիւններ եւ նուէր՝ է՛, որ ան- շարժ կալուածներով եւ է՛, որ եկեղեցական զարդ ու զարդա- րանքներով:

Սուրբ ուխտիս շարժական բոլոր անօթ-զգեստները ժամանա- կի աւերիչ ձեռքերից ցիր ու ցան է եղած, փչացած եւ անյայտու- թեան մատնուած: Միայն վանքիս նուիրած սուրբ Աւետարաննե- րից մի քանիսը այժմ գտնուում են զանազան վանքերում եւ եկե- ղեցիներում: Ինչպէս օրինակ՝ Վերին Խաչենի իշխող Դօփեան Գրիգոր իշխանի նուիրած երկաթագիր աւետարանը, որը նուիր- րուած է վանքիս իւր ամուսին Սիւնեաց Օրբելեան Տարսայիճ իշ- խանի դստեր՝ Ասփայ տիկնոջ յիշատակին, ՉԿԱ (761=1361) թուականին, այժմ գտնուում է Գանձակի Սուրբ Թարգմանչաց վանքում: Նոյն Դօփեան Վահրամ իշխանի որդի Սարգիս իշխա- նից նուիրուած Հինաւորաց ՉԿԳ (763=1215) թուականի զանգակը գտնուում է Գեղարքունիքի (Գեօզչայի) Թուսկիւլու հայաբնակ գիւղում: Նմանապէս Շուշի քաղաքի Ղազանչեցւոց սուրբ Ամե- նափրկիչ եկեղեցւոյ աւետարանը եւ Չարաբերդի Մեծ Շէն գիւղի աւետարանը ժամանակով վանքիս սեփականութիւնն է եղել: Բա- ցի վանքիս շարժական սեփականութիւնից՝ ներկայումս վանքը ունի անշարժ կալուածք՝ աւելի քան 98.438 դեսեատին տարա-

ծուլթեամբ, որից յիսուն հազարը անվէճ վանքի սեփականութիւնն է կազմում: Իսկ մնացեալ 48 հազարը վիճելի է: Վանքիս կալուածներում ապրում են աւելի քան քսան երկու թուրք ղչլաղներ, որոնք այդ անասան տարածութիւնից օգտուելու համար վճարում են ընդամէնը 396 ուրբլի:

Ներկայումս խղճալի դրութեան մէջ են գտնուում վանքիս կալուածները: Միայն այսքանս կասեմ, որ ամբողջ Գեղարքունեաց մեծատարած վիճակի ազգաբնակչութիւնը իւր բոլոր շինութեանց համար հարկաւոր փայտը տանում է Խօթայ կալուածների անտառներից՝ մեծաւ մասամբ գողուցի եւ մասամբ էլ չորացած եւ անկեալ ծառերի անուամբ: Այս մասին հաւաստիանալու համար բաւական է միայն Ռումբասար լեռնաշղթայի անցքերում մի երեք օր կանգնել եւ տեսնել, թէ ինչպէս կարաւան կարաւանի ետեւից շինութեանց համար գերաններ եւ այլ տեսակ փայտեր են անցկացնում:

Բայց վանքի գիւղացիները այլ կերպ են վարում անտառների հետ. իւրաքանչիւր ղչլաղի ժողովուրդը իւր համար ազատ կոտորած է անում անտառում՝ նոր-նոր խմահատներ բանալով եւ շինութեանց համար անհաշիւ ծառեր կոտորելով: Գիւղացիները իւրաքանչիւր ձմեռ անհամար ծառեր են ճղակոտոր անում, բոխբոխտած կոկոններով ընտանի անասուններին կերակրում եւ գարնանը կրակի ճարակ տալիս անտառին, որպէս զի մի քանի չափ հացահատիկ ցանեն:

Այժմ անցնենք վանքի գովանի ամարանոցների եւ ձմերանոցների արօտատեղիներին. թէ ինչպէս են պահպանուում վանքապատկան արօտատեղիները, ես միայն կը վկայեմ իմ աչքով տեսածների մասին: Ամենայն տարի արքունի եւ զանազան բէկերի պատկանող թուրք գիւղացիներ անարգել մտնում են վանքապատկան կալուածները եւ իրանց համար ազատ կերպով վրաններ ցցում վանքական արօտատեղիներում եւ իւրեանց ընտանի անասունները արածացնելով հանդերձ՝ ազգի ազգի նեղութիւններ են հասցնում եւ վանքական թուրք ազգաբնակչեան, նրանց արտերը եւ արօտատեղիները փչացնում եւ այլ նեղութիւններ տալիս: Ինչպէս օրինակ՝ վերջին ժամանակներս Ղլիջլու

Թուրքերը ինքնագլուխ մտել են վանքական կալուածները եւ վարուցանքս են սկսել վանքական Դամուրչիդամլու Թուրքերի կալուածներում: Եթէ այսպէս շարունակուի, շատ մօտիկ ապագայում վանքական կալուածները հեշտութեամբ կօտարանան, եւ վանքին մեծամեծ վնասներ կը հասնի: Պէտք է միջոցներ ձեռք առնել այսպիսի յարձակումների դէմ, որպէս զի վանքի կալուածները չօտարանան:

Սրանից շատ տարիներ առաջ Շուշուայ կոնսիստորիան Խօթայ վանքի լայնածաւալ յիսուն հազար դեսեատին անվէճ կալուածը պայմանագրով յանձնել է վանքական այրումցի Թուրք ազգաբնակիցներէն տարեկան չորս հարիւր ռուբլի կապալադրամով, որի ժամանակամիջոցը վաղուց ի վեր է լրացել, բայց մինչեւ ցայսօր չեն կարողացել պայմանագիրը նորոգել կամ փոփոխել: Թուրքերը յիշեալ պայմանաթղթի հիման վրայ խնդրագրով դիմած են հաշտարար միջնորդին, որպէս զի Խօթայ վանքի կալուածներում այրումցիների վրայ հողաբաժանութիւն կատարուի: Ինչպէս հաւատացնում էր հաշտարար միջնորդը, 1895 թուականին հողաբաժանութիւնը պիտի տեղի ունենար այրումցիների համար: Ահա թէ ո՛րպիսի վերահաս վտանգների հետ պիտի մրցել. անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել, որպէս զի վանքն այսպիսի հանգամանքներում զրկանքներ չկրի: Այժմ վանքական 150 տուն Թուրք ազգաբնակիցները ցրուած է ապրում վանքի կալուածներում. ամէն մի ձորամիջում երկու-երեք տուն, մի-մի զշլաղ կազմելով՝ ձգտում են՝ հողաբաժանութեան ժամանակ հազարաւոր դեսեատին կալուածներ հողաբաժին ստանալու: Առաջիկայ հողաբաժանութեան ժամանակ շատ մեծ եւ զգուշաւոր ուշադրութիւն պիտի դարձնել, որպէս զի վանքը բազմակողմանի իրաւունքներ վերապահի դէպի իւր հպատակ ազգաբնակիցները: Վերջացնելով խօսքս Խօթայ վանքի մասին՝ այսքանս կարող եմ ասել, որ վերոյիշեալ լայնածաւալ կալուածներից եւ անտառներից կարելի կը լինի հազարաւոր ռուբլի եկամուտ ստանալ, եթէ միայն փոխուի այդ կալուածի կառավարութեան եղանակը. բաւական է միայն Ռումբասար լեռնաշղթայի անցքերից մինում դրասենեակ ունենալ եւ անցքերի վրայ հաւատարիմ պահապան-

ներ նշանակել, որպէս զի, առանց գրասենեակից տոմսակ վերցնելու, Գեղարքունեաց ազգաբնակիւթիւնը չկարողանայ ինքնագլուխ եւ գողունի կերպով փայտեր անցկացնել: Նոյնը եւ կարելի է անել այն արքունի եւ բէկական թուրքերի վերաբերութեամբ, որոնք ինքնագլուխ մտնում են վանքական կալուածները եւ ճրիաբար օգտուում՝ անխտիր պահանջելով բոլորից օրինական տոմսակներ եւ ապա թոյլատրել օգտուելու:

Խօթայ վանքի կառավարութեան դժուարութիւններից մինն էլ այն է, որ այնքան կալուածներում ոչ մի հայաբնակ գիւղ չըկայ:

2. Գանձասարի սուրբ Յովհաննու Մկրտչի վանքը գտնւում է Խաչենայ գետի վրայ՝ երկու վերստ հեռաւորութեամբ դէպ հիւսիս: Այս վանքը Ներքին Խաչենի իշխանագունների հանգստեան տեղն է կանգնած: Իշխաններից Հասան Ջալալ Դովլայ ականաւոր մեծ մարդը կառուցեց այս վանքը ՈԶԸ (688=1239) թուականին իւրեանց տոհմային հանգստարանում: Թագէի Խօթայ վանքից յետոյ ամբողջ Ղարաբաղի վանքերի մէջ առաջին տեղը կարող է բռնել Գանձասարը թէ՛ իւր ճարտարապետական կերտուածքով եւ թէ՛ վանական կալուածական հարստութեամբ:

Ներկայումս վանքը շատ անմխիթար դրութեան մէջ է գտնւում: Կաթուղիկէն՝ ճաքճքոտած, տանիքը՝ խախուտ եւ բուսականութեամբ ծածկուած, խցերը եւ կացարանները՝ քայքայուած, խանգարուած այնպէս, որ հազիւ կարելի լինի Աղուանից վերջին կաթուղիկոսարանում մի սենեակ գտնել՝ մի քանի օր գիշերելու: Շրջապատի պարսպի փլած անցքերն անգամ չեն կարկատուած: Վանքի մէջ, բացի վանահօրից, ոչ մի միաբան չկայ: Այս վանքում անհրաժեշտ էր մի ընծայարան բանալ, որպէս զի շրջակայ բազմաթիւ հայաբնակ ժողովրդականաց համար եկեղեցականներ պատրաստուին: Չնայելով, որ վանքն այժմ ամայի է եւ աւերակ, բայց եւ այնպէս Գանձասարն ունի բաւական անվէճ կալուած թէ՛ իւր շրջակայքում, թէ՛ Շուշու եւ թէ՛ Ջաւանշիրի գաւառների զանազան կողմերում: Շուշու գաւառում ունի Քարագլուխ գիւղի մօտ 676 դեսեատին ամենագովական վարելահող եւ անտառ, այգիներ եւ այգետեղիներ: Այս կալուածքը, որ

3-Խաչիկ Ծ. վրդ. Դատեան

կոչւում է Աշմանա, Գանձասարի ամենաարդիւնաշատ կալուածքը կարելի է համարել, նամանականդ, որ այս կալուածքի հարեւանութեամբ ապրող հայաբնակ գիւղերը փայտի կողմից մեծ կարօտութեան մէջ են եւ համարեա այս կալուածքի անտառներով են կառավարւում: Այս կալուածքը Գանձասարից 20–25 վերստ հեռաւորութիւն ունի եւ համարեա՝ կից է Պտկի սուրբ Գէորգայ վանքի կալուածներին: Բացի սրանից՝ Գանձասարն ունի վանքից 15–20 վերստ հեռաւորութեամբ հայաբնակ Կիչան (Բալլուղայեաց) գիւղը եւ գիւղի կալուածներին կից՝ Գիւզլակ (կամ Գիւլլութլայ) եւ Ալնջատափ վարելահողերը: Այս բոլորը միասին առած՝ վանքն ունի մօտաւորապէս 3.000 դեքատին վարելահող եւ անտառ: Իսկ Թարթառի Հաթերք գիւղում՝ Գանձասարից 25–30 վերստ հեռու, գտնւում է Հաթերքի Ծաղկոց անուամբ կալուածքը՝ զուտ վարելահող՝ 300 դեքատին տարածութեամբ: Իսկ վանքից 10 վերստ հեռաւորութեամբ գտնւում է վանական Կճողուտ (Եայլի) հայաբնակ գիւղը, որ նմանապէս ունի երեք հազար դեքատին վարելահող եւ անտառ: Բացի այս բոլորից՝ Գանձասարի շրջակայքում գտնւում է վանական ամենամեծ կալուածքը՝ Վանք կոչուած գիւղը՝ Հիւնահող եւ Գոմակալ գիւղաբաժանումներով, որոնց տարածութիւնն է մօտ վեց հազար դեքատին: Այս կալուածքումն է գտնւում եւ Գանձասարի անսպառ եկամտի աղբիւր երկանաքարի հանքը, որ միակն է ամբողջ Ղարաբաղում. այս հանքը գտնւում է վանքից երկու վերստ հեռու: Ընդամենայն Գանձասարի կալուածքները հասնում են 12.600 դեքատինի, որից հոգեւոր իշխանութիւնը եկամուտ է ստանում 795 ու. 43 կ., նոյնքան էլ ծախսում է վանքի եւ կալուածների պահպանութեան վրայ:

Անցեալ տարի Գանձասարի վանական գիւղացիների մէջ կատարուեց հաշտարար միջնորդի ձեռքով հողաբաժանութիւն, որով որոշուեց վանքի եւ ժողովրդականաց յարաբերութիւնները՝ մեծ մասամբ յօգուտ վանքի: Այնպէս որ, այսուհետեւ կարելի կը լինի վանքի եկամուտները հասցնել երեք հազար ուրբուց աւելի, որով կարելի կը լինի ե՛ւ վանքը պայծառացնել, ե՛ւ կալուածները յափշտակութիւններից ազատ պահպանել:

3. **Մեծարանց սրբոյն Յակորայ վանքը** գտնւում է Խաչենայ գետի հարաւային կողմը՝ գետից երեք վերստ հեռաւորութեամբ:

Այս վանքը վերստին նորոգուած է Հասան Զալալ Դովլայի մօր՝ Խորիշահ տիկնոջ ձեռքով ՈԿԱ (661=1212) թուականին իւր հանգուցեալ ամուսին Վախտանգ իշխանի յիշատակին: Վանքը նման է մի խարխուլ, խանգարուած, ճաքճքած, հասարակ մի գոյգ եկեղեցեաց կամ մատուռների՝ շինած բոլորովին հասարակ քարերից: Այս վանքումն էին նստում Աղուանից կաթողիկոսներից շատերը, որոնց դամբարանները շարուած կան վանքի գաւթում: Սկզբում այստեղ էր պահւում Արցախի աւագ սուրբ Նշանը, որին, անյայտանալուց յետոյ, փոխարինում է սրբոյն Յակորայ աջը, որ ներկայումս մեծ յարգ ունի ամբողջ Ղարաբաղում: Վանքն ունի ընդամենայն 452 դեսեատին կալուածք, անտառ, վարելահող եւ մի ջրաղաց Քոլատակի գետի վրայ, որ Խաչենայ գետի մեծ վտակն է համարուում: Տարեկան եկամուտ ունի 158 ո. 58 կ., նոյնքան էլ ծախսուում է վանքի պահպանութեան համար:

4. **Սուրբ Եղիշայ առաքելոյ վանքը** գտնւում է Թարթառ գետի հիւսիսային կողմում՝ Թարթառի մէջ թափուող Եղիշ առաքել անուամբ ջրի վրայ: Վերանորոգուած է ՈԼԳ (633=1284) թուականին ոմն Սերաբ Սարկաւագի ձեռամբ: Վաչագանեան տոհմի շիրմատունը եւ Ղարաբաղի ամենահին վանքերից մինն է համարուում: Վանքը խարխուլ եւ աւերակ մատուռների մի կոյտի է նման, ունի ընդամենն 22 դեսեատին անտառ եւ վարելահող, տարեկան եկամուտ՝ 20 ո. 78 կ., որքան ստացուում է, նոյնքան էլ ծախսուում է վանքի պահպանութեան վրայ:

5. **Սուրբ Երից մանկանց վանքը** Թարթառ գետի աւագ վտակի՝ Թրղիի վրայ է գտնւում՝ Թարթառից 10 վերստ հեռու: Շինուած է ՌՃԽ (1140=1691) թուականին Աղուանից հակաթոռ Սիմէօն կաթողիկոսի ձեռամբ, բաւական հոյակապ կաթողիկէ ունի, որ միայն մի քանի տեղից վնասուած է, շուրջը կան բազմաթիւ քարաշէն բնակարաններ միաբանից եւ ուխտաւորաց համար: Վանքն ունի ընդամենն 25 դեսեատին վարելահող, անտառ եւ այգիք, եկամուտն է 86 ո. 35 կ., նոյնքան էլ՝ ծախք: Այսպէս՝

Ջալանշիրու հինգ վանքերն ունին անվէճ 60.856 դեսեատին, իսկ վիճելի՝ յիսուն հազար:

II. ՇՈՒՇՈՒ ԳԱԻԱՌԻ ՎԱՆՔԵՐԸ

6. Պտկի սուրբ Գէորգայ վանքը գտնուում է համանուն լեռնաշղթայի ամենաբարձր գագաթան վրայ: Այս շղթան է բաժանում միմեանցից Ղարաբաղի երկու պատմական գետերը՝ Խաչենն եւ Գարգարը: Վանքը շինուած է ՌՃՂԴ (1194=1745) թուականին ոմն Յովհաննէս վարդապետի ձեռամբ: Այժմ սա մի կիսաւեր եւ ամայի շինութիւն է: Վանքի մօտ կան մի քանի կիսով չափ փուլ եկած խցեր: Ընդամենայն ունի կալուած՝ մօտ 300 դեսեատին անտառ եւ վարելահող: Տարեկան եկամուտ է բերում 110 ու. 35 կ., նոյնքան էլ ծախսուում է վանքի վրայ: (Այս վանքի կալուածներին կից է Գանձասարի Քարագլխի մօտ Աշմանա կոչուած կալուածքը՝ 776 դեսեատին:)

7. Ամարասի ս. Գրիգորիսի վանքը համարուում է Ղարաբաղի ամենահին ուխտատեղին, գտնուում է Ամարաս գետի վրայ (Քէօչուղ), ըստ պատմչաց՝ հիմնարկուած է 332 թուականին սուրբ Լուսաւորչից: Իսկ 530 թուականին նորոգուած է Վաչագան Աղուանից արքայի ձեռամբ, եւ վերջին նորոգ շինութիւնը՝ 1858 թուականին՝ Վեհապետեան Գէորգ արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ: Միակ վանքն է Ղարաբաղում, որ շինուած է դաշտավայր տեղում՝ շրջապատուած քար ու կիր քառաբուրգ պարբսպով, կամարակապ բնակարաններով եւ խուցերով: Ներկայումս վանքի կտուրը բաւական վնասուած է, կրածածքը՝ փչացած, միայն խցերի մեծ մասը վերանորոգած եւ պայծառացրած են: Այս վանքն ունի մօտ 500 դեսեատին ազատ կալուածք, վարելահող, այգիներ եւ այգետեղ եւ մի ջրաղաց: Տարեկան եկամուտն է 400 ու., նոյնքան էլ ծախք ունի: Այս վանքի կալուածներից կարելի է աւելի շատ արդիւնք ստանալ:

8. Քթիչայ ս. Գրիգորիսի վանքը՝ համանուն լեռան լանջի վրայ: Շինուած է Ամարասու Սարգիս եւ Վարդան եպիսկոպոսնե-

րի ձեռքով ՈՂ (690=124[1]) թուականին՝ Ամարասն ամայանալուց յետոյ: Այս վանքն իսպառ քայքայման է ենթարկուել, ունի 65 դեսեատին անտառ եւ վարելահող: Ոչ մի արդիւնք չէ տալիս, եւ վանահայր էլ չունի:

9. Ս. Ղեւոնդեանց անապատը շինուած է Քեօնդալան գետի Շորաջուր վտակի վրայ՝ 3 վերստ հեռաւորութեամբ: Վանքը մի հին դպրոց ու[ն]ի: Արձանագրութիւնները իսպառ եղծուած են: Շրջապատած է կիսաւեր քարաշէն պարսպով եւ խարխուլ կացարաններով: Ունի մօտաւորապէս 50 դեսեատին անտառ եւ վարելահող: Եկամուտն է 57 ու. 84 կ., նոյնքան էլ՝ ծախք:

Շուշու գաւառի չորս վանքերն ունին կալուածք՝ 1666 դեսեատին, սրա մէջն է եւ Գանձասարի Քարագլխի մօտի Աշմանա կալուածքը՝ 776 դես.:

III. ՋԱԲՐԱՅԷԼԻ ՎԱՆՔԵՐԸ

10. Սպիտակ Խաչի վանքը գտնուած է Հազրութ գետի վրայ (Ղօզլուչայ)՝ գետի հարաւային կողմը մի վերստ հեռաւորութեամբ: Ժողովրդական ականդութիւնը պատմում է, իբր թէ Աղուանից առաջին կաթողիկոս սրբոյն Գրիգորի նահատակութիւնից յետոյ նրա հայրապետական գաւազանը եւ լանջական բիւրեղեայ խաչը պահուում էր Ամարասում, որտեղ ամփոփուած են նրա նշխարները: Ամարասն ամայանալուց յետոյ յիշեալ սրբութիւնները պահուեցան Քթիչայ վանքում, իսկ վերջինիս անշքանալուց յետոյ Սպիտակ Խաչի վանքումն էր պահուում բիւրեղեայ սպիտակ խաչը, որ, ինչպէս ասում են, վերջին ժամանակներումս է անյայտացել: Այս վանքի շինութեան բուն թուականը յայտնի չէ: Կարկատանի խաչքարերի արձանագրութիւններից երեւում է, որ երեքտասաներորդ դարում պիտի լինի շինուած, բայց վերջին նորոգութիւնը եղած է ՌՃԶԴ (1184=1735) թուականին ձեռամբ Սուրապի որդի Յովհաննէս եպիսկոպոսի: Վանքի ներկայ շինութիւնը բաւական մաքուր եւ ամուր շինութիւն է: Ունի չորս կտոր վարելահող՝ մօտ 25 դեսեատին, եկամուտն է 20 ուրբի: Զարբա-

յէլի գաւառում ունինք միայն մի վանք, որի կալուածն է 25 դե-
սեատին:

Այսպէս ուրեմն, Ղարաբաղի թեմում գտնւում է ընդամէնը 10
վանք, որոնցից միայն երկուսի մէջ կան վանահայրեր՝ Ամարա-
սում եւ Գանձասարում: Խօթում նստում է մի քահանայ, որ ա-
նունով միայն վանահայր է: Իսկ մնացեալ վանքերում ո՛չ վանա-
հայրեր, ո՛չ պահապաններ կան: Այս տասը վանքերի կա-
լուածները հասնում են 112.540 դեսեատինի, որից անվէճ է
62.540 դեսեատին, իսկ վիճելի՝ 50 հազար: Ընդամէնը եկամուտ է
եղել յընթացս 1892 ամի 2.060 ո. եւ ծախք՝ 2.060 ո.:

ՅՈՒՅԱԿ
ԱՐՑԱՆԻ ԹԵՍԻ ՎԱՆՔԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ

Թիւ		Որքանութիւն կալուածոց՝ դեսեատինով	Եկամուտ 1892 թ.		Ծախք 1892 թ.		Վանահայր
	Ա. Զաւանչիրու գաւառում						
1.	Թաղէի (նօթայ), որ եւ Զարեքտարի վանք	98.438	396	–	396	–	Անունով միայն
2.	Գանձասարի ս. Յովհաննու Մկրտչի վանք	12.600	795	43	795	43	ունի
3.	Մեծարանց ս. Յակովբայ վանք	452	158	58	158	58	չունի
4.	Եղիշայ Առաքելոյ վանք	25	20	78	20	78	չունի
5.	Երից մանկանց վանք	25	86	35	86	35	չունի
	Բ. Շուշու գաւառում						
6.	Պակի ս. Գէորգայ վանք	300	120	35	120	35	չունի
7.	Ամարասու ս. Գրիգորիսի վանք	500	400	–	400	–	ունի
8.	Քթիշայ վանք	65	–	–	–	–	չունի
9.	Ս. Ղեւոնդեանց անապատը	50	57	84	57	84	չունի
	Գ. Զաբրայէլու գաւառում						
10.	Սպիտակ Խաչի վանքը	25	25	–	20	–	չունի
	Ընդամենայն վիճելի	112.540	2060	–	2060	–	5 վանքում՝ վանահայր, 7 վան. վանահայր չկայ
	Անվէճ սեպհականութիւն	50.000					
		62.540					

ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳԻՐ
ՇԱԽԱՐՇԱՆ-ԱՐՏԱԶ ԳԱԽԱՌԻ Ս. ԹԱԴԷՈՍ
ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԻ*

Սուրբ Թադէի վանքը գտնուում է Մակուայ խանութեան մէջ՝ Ղարաքիլիսա հայաբնակ գիւղի հիւսիսային կողմում՝ միայն հարիւր քայլ հեռու նրանից: Կառուցուած է նա պատմական Սանատրուկ դաշտի արեւմտեան մասը կազմող լեռնամէջ տափարակի եւ ձորաբերան հարթութեան վերայ: Արեւելեան եւ հիւսիսային կողմով հոսում է Սանդուխտեան աղբերակը: Շրջակայ գիւղերի հետ վանքը հաղորդակցութիւն է պահպանում սայլագնաց ճանապարհներով: Ղարաքիլիսան՝ վանքի գիւղը, բաղկացած է երեսուն տնից՝ մեծ մասամբ գաղթած Տաճկահայաստանի զանազան կողմերից՝ Մուշի, Վանի եւ Ալաշկերտի՝ Հայուձոր, Խառակոնիս, Հախորկ եւ Կործոտ գիւղերից, ոմանք էլ Մակուից են եւ Գարայնից (ս. Թադէի վիճակից):

Բացի Ղարաքիլիսայ գիւղը՝ մնացեալ շրջակայ բոլոր գիւղերը թրքաբնակ եւ քրդաբնակ են: Ռուս-պարսկական պատերազմից յետոյ աւելի քան երեսուն գիւղեր վանքի շրջակայքից եւ վիճակից գաղթել են Ռուսաց բաժինը: Ղարաքիլիսեցիք (վանքցիք) չունին սեփական գիւղական եկեղեցի, այլ վանքումն են կատարում իւրեանց բոլոր օրինակատարութիւնները: Գիւղի ծխական քահանան կանոնաւորապէս ժամ է ասում այստեղ: Մահմեդական շրջակայքում միակ վանքն է սա, որ վայելում է զանգահարութեան դարաւոր իրաւունքը: Շրջակայ թուրքերը եւ քրդերը մեծ ակնածութեամբ են վերաբերում դէպի սուրբ Թադէի վանքը, իբրեւ մի մեծ ուխտատեղի (Ղարաքիլիսայ օջաղի):

Շրջակայ ժողովրդեան մէջ ես ոչ մի աւանդութիւն չգտայ վանքի գոյութեան եւ շինութեան վերաբերեալ: Այլ եւ նախնի

* Արարատ, 1898, Յունուար, էջ 38-40:

մատենագրութեան մէջ *ս. Թաղէի վանքի հիմնարկութեան մասին* ոչ մի յիշատակութիւն չյաջողուեցաւ գտնել:

*Ս. Թաղէի՝ իբրեւ Հայոց աշխարհի առաջին Լուսաւորչի, նըրա՝ Ուռհայից Շաւարշան-Արտազ գալու եւ Սանդուխտ կոյսի դարձի, նրա քարոզութեան եւ նահատակութեան եւ նրա նշխարների գիւտի մասին եղած աւանդութիւնները զանազան ժամանակներում են խմբագրուել եւ նորանոր ձեւակերպութիւններն ստացել, այնպէս որ նրանից եւս որոշ եզրակացութիւն վանքի շինութեան համար չենք կարող հանել: Սակայն առհասարակ Հայոց վանքերի եւ ուխտատեղիների պատմութիւնից գիտենք, որ ամէն մի նոր վկայարան, մատուռ, ուխտատեղի եւ վանք կառուցանելու մեծաւ մասամբ սկզբնապատճառ եղել է սրբոց մասունքների կամ նշխարների գիւտը, ուստի մենք եւս կարող էինք *ս. Թաղէի վանքի նախնական հիմնարկութիւնը կապել նրա նշխարների մի գիւտի հետ, քանի որ հակառակ պատմական ոչ մի ապացոյց չունինք:**

Ս. Թաղէի նշխարների գիւտի համար կրկին պատմութիւններ կան: Առաջին պատմութեան համաձայն՝ այդ գիւտը տեղի ունեցած է համարուում Հինգերորդ դարի վերջին քառորդին՝ Յովհան Մանգակունի կաթողիկոսի եւ Վահան Մամիկոնեան մարզպանի օրով (485–486)¹, իսկ երկրորդ պատմութեան համաձայն՝ ութերորդ դարի առաջին քառորդում՝ Յովհան Օձնեցի կաթողիկոսի ժամանակ² (721–723):

*Սրանից դուրս մեզ ոչինչ յայտնի չէ *ս. Թաղէի* հռչակաւոր վանքի անցեալի մասին մինչեւ ԺԳ դարը: Միայն ԺԳ դարից այս կողմ ունինք ձեռքի տակ ե՛լ մատենագրական տեղեկութիւնք, ե՛լ յիշատակարանք, արձանագրութիւնք, կալուածագիրք, կոնդակք եւ զանազան այլ թղթեան³, որոնցից կարելի կլինի արդէն*

¹ Սոփերք Ը, 1853, Վեց., երես 58, 96-97: Չամչեան Ա., երես 584-85-86: Ասողիկ, Պետեր., 58 թ., երես 81-82:

² Յայսմաւորք, Պօլիս ,1732, երես 592-594: Յուցակք Վեցնայի ձեռագրաց, 95 թ., երես 87 (թ. 10, Յայսմաւորք) ելւն:

³ Մեր ձեռք բերած պատմական հարուստ նիւթերը, յուսով ենք, որ միջոց կունենանք հրատարակելու հետզհետեւ «Արարատի» մէջ, իբրեւ հում նիւթ *ս. Թաղէի* վանքի պատմութեան համար:

մակաբերել, թէ այս վերջին վեց դարու ընթացքում ինչ անցքեր են տեղի ունեցել այս վանքի շուրջը եւ նպաստել նրա ծաղկման եւ բարգաւաճման:

Ս. Թադէի վանքը բաղկացած է այժմ կրկնակի տաճարներից, որոնց չորս կողմը միաբանների կացարաններ են եւ այլ կարեւոր շէնքեր՝ շրջապատուած բուրգաւոր պարիսպներով: Տաճարի հին բաժինը 1329 թուականին է շինած Զաքարիա արհի եպիսկոպոսի ձեռնտուութեամբ՝ կապտագոյն սրբատաշ քարից, աւազախառն կրաշաղախով եւ խաչաձեւ յատակագծով: Սոյն շինութեան քարը բերուած է երկու ժամ հեռաւորութեան վերայ՝ Գարաբուլաղ անուամբ Գարայնի գիւղի մօտ գտնուող քարահանքից: Խաչաձեւ կաթուղիկէի մեծութիւնն է միջին տրամագծերով 4 3/4 սաժ. x 4 3/4 սաժ.: Նա ունի մի խորան, երկու սեղան, հինգ լուսամուտ, իսկ գմբէթը՝ չորս լուսամուտ: Հարաւային խորանի վերելի մասում գաղտնի պահեստի տեղ կայ: Անսիւն է այս տաճարը եւ հաստատուած կամարների վերայ: Սեղանի վերայ բարձրանում է քարաշէն, քանդակագարդ, գմբէթագարդ խաչկալը՝ դռներով ու կամարներով: Սեղանի առաջի մասը զարդարած է գեղանի խորաքանդակ նկարներով եւ արձանագրութեամբ: Հարաւային խորանում ամփոփած կան երկու վարդապետաց մարմիններ՝ Զաքարիա եւ Եսայի անուններով ՝1643 եւ ՝1751 թուեր կրող մարմար շիրիմների տակ: Խորանների դռները զարդարած են սաղափի զարդաքանդակներով: Ներսի հիւսիսային որմի վերայ քանդակած է շինութեան հանգամանքները պատմող խոշորագիր արձանագրութիւնը. եկեղեցւոյ շինուածքը շարժից բաւականին վնասուել է, խաչի ձեւով ճաքճաքել: Նա մի քանի անգամ զանազան ժամանակներում, զանազան մարդկանց ձեռնտուութեամբ նորոգուած է: Կաթուղիկէիս դրսի մեծութիւնն է 5 ս. x 5 ս. x 5 ս.՝ երկարութիւն, լայնութիւն եւ բարձրութիւն: Դրսի պատուհանների շրջանակը գոյնզգոյն քարերով զարդարած է: Եկեղեցւոյ տանիքը սալայատակած է, որ տեղ-տեղ խանգարուել է եւ բուսականութեամբ ծածկուել: Նոյն վիճակի մէջ են նաեւ պատերը:

Այս հին շէնքին կից կանգնած է նոր փարթամաշէն, զարդարուն եւ գեղեցկաքանդակ տաճարը, որի հիմնարկութիւնն եղել է

դարուս սկզբներում երջանկայիշատակ Բզնունի Սիմէօն արքեպիսկոպոսի հոգածութեամբ: Նոր տաճարը միանգամայն նման է ձեւով եւ կերտուածքով ս. Էջմիածնի տաճարին, այդպէս եւ մեծութեամբ: Միայն ս. Թաղէի տաճարը կիսաւարտ է, անշուք եւ մերկ ներսից, մինչ դրսից միանգամայն հրաշալի է: Ամբողջ տաճարը գօտիաձեւ, ժապաւէնանման քանդակներով զարդարած է, ինչպէս, օր., Մայր Աթոռի զանգակատունը: Շինութիւնն ամբողջովին սպիտակ, պանրագոյն քարից է, որ բերուած է մի ժամ հեռաւորութեան վերայ գտնուող Գրխբուլաղ (Շաւարշան) գիւղի մօտից: Տաճարն ունի տասն եւ մէկ լուսամուտ, երեք դուռ եւ երկու սեղան՝ հիւսիս, հարաւ, գմբէթը՝ ութ լուսամուտ: Նա բարձրանում է չորս հսկայական սիւների վերայ: Մեծութիւնն է միջին տրամագծերով 8 x 8 ս.: Պատերի բարձրութիւնն է 5 սաժէն: Զանգակատունը կիսակործան է եւ կիսատ: Տաճարի կտրան սալայատակը թերակատար է եւ բուսականութեամբ ծածկուած, ուստի միշտ կաթում է անձրեւներից եւ ձիւնից յետոյ: Այս տաճարն եւս երկրաշարժից խախտուած է, միայն թեթեւ կերպով: Արեւմտեան դռան ճակատը զարդարած է հիանալի քանդակներով: Դռան գլխին ամրացրած է մի մարմարեայ պարսկերէն արձանագրութիւն՝ նուիրուած Պարսից Աբբաս Միրզայի յիշատակին: Հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային պատերը զարդարած են զանազան կենդանիների եւ բոյսերի նկարաքանդակներով եւ բազմաթիւ արձանագրութիւններով: Արձանագրութիւններ կան նոյնպէս տաճարի ներսը՝ սիւների ճակատներին: Հին կաթողիկէն նորի համար ծառայում է իբրեւ սեղան եւ երգիչների տեղ: Հնի արեւմտեան պատը վերցրած է եւ նոր տաճարը՝ կցած հնի հետ:

Վանքի արեւմտեան կողմում՝ պարսպից դուրս, առանձին շրջապատի մէջ է գտնուում տնտեսական պիտոյքների բակը, ձիթհանքը, գոմանոցը եւլն: Շրջապատի բոլոր շինութիւնները կառուցուած են կաւաքարից, հասարակ շաղախով: Խցերի մեծ մասը թաղակապ է: Արեւելեան բուրգերն եռայարկ են եւ կամարակապ: Շրջապարիսպը նմանապէս շինուած է հասարակ շաղախով եւ քարով:

Վանքի շինուածքին եւ շրջակայ բնակարաններին նայողը անշուշտ կգայ այն համոզման, որ այս Աթոռը ժամանակով մեծ հարստութիւն է ունեցել, լայնածաւալ, ընդարձակ կալուածներ: Իրօք այդպէս էլ եղել է մինչեւ վերջին Ռուս-պարսկական պատերազմը, իսկ այնուհետեւ վանքը օրըստօրէ անշքացել եւ հասել է ներկայ խղճալի դրութեանը: Պարսկահայ գաղթականութիւնից յետոյ վանքը, զրկուելով ժողովրդից, զրկուել է եւ կալուածներից ու եկամուտից: Վանքապատկան գիւղերի ամայանալուց յետոյ երկրի խաները բնակեցրել են նրանց թուրքերով եւ քրդերով: Այս տեսնելով՝ վանքի մէջ նստող առաջնորդները իւրեանց աթոռը յիսունական թուականներին փոխադրել են Թավրէզ քաղաքը, որով եւ վանքին վերջին հարուածն է հասել:

Այդ օրից ի վեր վանքում նստում են հասարակ վանահայրեր, որոնք, չկարողանալով նոյն իսկ եղած կալուածները ձեռքում պահել, վերջին ժամանակներս նրանցից եւս զրկում են: Ս. Թադէի վանքի լայնատարած կալուածներից ներկայումս վանքի ձեռքին մնացել են միայն մի քանի վարելահողեր, որպիսիք են՝ Խամեր, Քշաքչէն, Գեօլի ականջ, Քարխանքի դէմ՝ երկու Կառնուտ, Կալղանոց, Հրեշտակապետ, Սեւահող, Կալղրում եւ Զաբէկ, ընդամէնը՝ 25–30 խալվար սերման տեղ: Ինչպէս լսում ենք, վերջերս վարելահողերի վերջին երեք մասերը եւս անցել են խանի ձեռքը:

Այսքանը՝ վանքի անշարժ հարստութեան մասին, իսկ շարժական հարստութիւններն են մի քանի հասարակ տնտեսական պարագաներ, մի ձեռք գութանի գոմէջ եւ եզն, մի քանի կով, հորթ եւ մի աւանակ:

Եկեղեցական հարստութիւնը կազմում են մի քանի մասունք սրբոց, մի քանի գրչագիր կիսափուտ մատեաններ, եկեղեցական անօթներ եւ զգեստներ, որոնց մանրամասն ցուցակը յառաջիկայում կհրատարակենք վանքի պատմական նիւթերի հետ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՀԻՆ ՏԱՃԱՐԻ ^{*1}

1. «Այս տաճար լուսակիր եւ երկնանման առկայացել հաստատ
2. ագոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ շիրմի սուրբ առաքելոյս
3. Թաղէտսի որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն հառ
4. Ի շարժէ. Իսկ ես նուաստ սպասաւոր մին Զաքարիայ եպ. որդի պ
5. արոն Մանվէլայ կարողութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգ-
6. ութեան առաւել քան զառաջինն ի ժամանակի սաստ
7. իկ նեղութեան եւ հալածանաց Քրիստոնէից որ եւ բազ
8. ում եկեղեցիք քակտին վասն որոյ արձանագրեցաք զ
9. յիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի
10. մեծին Աստուծոյն եւ անարիւն զենման զառինն Աստուծոյ հանդ
11. երձ ծնողօք եւ զարմիւք եւ զաջորդն մեր աղբ
12. աւր որդին զտէր Տիրացուն այլ եւ զհարազա
13. տ եղբարս մեր զՊետրոս եւ զՍարգիս որք ըստ կարու
14. թեան նպաստաւորք եղեն ընչիւք կատարումն
15. Թ.վ. ԶՀԸ. » (=1329):

Տեղեկութիւնք: Արձանագրութիւնս գտնուում է հիւսիսային որմի վերայ՝ լուսամուտի տակ, բաղկացած է տասն եւ հինգ տողից՝ խոշոր երկաթագիր, տեղ-տեղ փակագիր, կրճատ պատուագիր: Բռնած տարածութիւնն է 2 արշ. 15 վերշ. x 2 արշ. 8 վերշ., տողերի երկարութիւնը՝ 2 արշ. 13 վերշ., տառեր՝ 5 x 10 սմ:

* ԱՐԱՐԱՏ, 1898, էջ 89-91:

¹ Տե՛ս ԱՐԱՐԱՏ, 1898 յունւար: Նոյն վանքի մի համառօտ նկարագիր յառաջ է բերել պատուր Ֆիշեր “Der Christliche Orient” թերթի 1897 թ. նոյեմբեր հ.-ում: Խմբ.:

*«Շնորհիւն Աստուծոյ եւ կարողութեամբ նորին
կանգնեցաւ գեղեցկայարմար եւ գ
եղեցկափայլ խաչակալս ի յաջորդու
թեան ժամանակի Գէորգ վարդապետին արդ որք նուն
որք հանգիպիք տուք զողորմին եղեւ
կատար շինար նորին ի մերս թուոջ
ՌՄԽԲ-ին» (=1793):*

Տեղեկութիւնք: Գտնուում է սեղանի քարեայ խաչկալի վերայ՝ խորհրդանոցի մուտքի ճակատին. խաչկալի պաճուճագեղ քանդակները սքանչելի են: Սպիտակ խաս մարմարիոնի նման քարից շինուած կաթողիկէն երկու մուտք ունի՝ կողքերի սիւնակները քանդակներով զարդարուն: Բեմ-քարի գլխի կաթողիկէն փլած է, եւ միայն նեցուկ սիւներն են կանգուն:

Սեղանի խաչկալի մուտքի դռները ներկայացնում են կտաւի վերայ նկարած աջ կողմում՝ Սուրբ Թադէոս Առաքելոյ կենդանագիրը՝ մի երիտասարդ՝ Գեղարզը՝ ձախ եւ դաշոյնը աջ ձեռին, Դաստառակն էլ մատների ծայրով բռնած, իսկ ձախ կողմում՝ Սուրբ Բարդուղիմէոս՝ ալէխառն Աստուածամօր պատկերը ձեռքին.

Գրութիւնն է.

Սուրբ Թադէոսի՝ «Յիշատակ է Սիմէօնի արքեպիսկոպոսի եւ յաջորդ»:

Սուրբ Բարդուղիմէոսի՝ «Սրբոյ տաճարիս սրբազան առաքելոյն Թադէոսի»:

Թվ. ՌՄԿԵ (=1816):

Պատկերի բարձրութիւնը՝ 1 սաժէն 2 վերջ., լայնութիւնը՝ 1 արշ. 5 վերջ.:

Բեմ-քարի վերայի պատկերը ներկայացնում է Աստուածածինը՝ Յիսուս գրկած, թագապսակ մի գոյգ հրեշտակներ՝ թագը բռնած գլխին, թագի վերան էլ՝ Հօր՝ Աստուծոյ պատկերը: Աստուածածինն աթոռի վերայ նստած է, աջակողմը՝ Ս. Թադէոս՝ Գեղարզը եւ Դաստառակը ձեռին, իսկ ձախ կողմում՝ Ս. Բարդուղիմէոսը՝ Աստուածամօր պատկերը բռնած եւ կանգնած. բաւականին մաքուր եւ գեղեցիկ եւ իւր ժամանակի համար գեղարուեստական մի գործ կարելի է համարել այս պատկերը:

Մեծութիւնը բարձրութեան՝ 2 արշ. 6. վերջ., լայնութեան՝ 1. արշ. 13 վերջ.:

Պատկերի վերայի գրութիւնն է.

«Թուին Փրկչի ՌՊԺԱ (1811) եւ առաջնորդութեամբ Սուրբ ուխտիս տեառն Սիմէօն արքեպիսկոպոսին տէր Բրդն. Խչ. Տր. Նկչ. Այս սուրբ պատկերս ի վանս սրբոյ առաքելոյն Թաղէոսի մաքուր շիրմի Կարնեցի Քօսեանց մահտեսի Յարութիւնէ յիշատակ վասն իւր վասն կենակցւոյն մահտեսի Խանուսին եւ որդւոյն մահտեսի Յակոբին մահտեսի Սիմէօնին եւ տիրացու Գէորգին եւ այլ ամենայն կենդան.»

Նօտրագիր եւ բոլորը՝ մի տողի մէջ:

Սեղանում պահուած խաչվառը, ինչպէս արձանագրութիւնից երեւում է, վանքի նոր տաճարի շինող սոյն երջանկայիշատակ Սիմէօն արքեպիսկոպոսն է նկարել իւր ձեռքով եւ յիշատակել տանս:

Խաչվառի առաջին երեսին գիրն է.

«Ի նորոգման սրբոյ Աթոռոյս նկարեցաւ խաչ վառս ձեռամբ Սիմէօն Սրբազան արքեպիսկոպոսի ետ յիշատակ նորակերտ սրբոյ տաճարիս»:

Երկրորդ երեսի գրութիւնը.

«Յիշատակ է Սրբազան Առաքելոյն Թաղէոսի

Աթոռոյս առաջնորդ Սիմէօն Արքեպիսկոպոսիս ծնողացս, քերցս...: եղծ...»

Մեծութիւն խաչվառիս՝ 1 արշ. 8 վերջ. x 1 ար. 2 վ.:

Հարաւային խորանի միջի մարմարեայ տապանաքարերի արձանագրութիւնը.

Առաջին՝

«Այս է տապան տեառն մեծի

Զաքարիաս վարդապետի

Սուրբ Աթոռոյս սա բա.....րի

Որ յաջորդեց Թ տարի

էր սա երկրաւ Ղափանեցի

Հայր էր սա անարժանիս

ՌՃՂԲ» (=1743):

Երկրորդ՝

«Տապանս սայ է Եղկելի
Մինաս անուն վարդապետի
Որ յաջորդեց տանս մեծի
Ներգբաղմանց ժամանակի
Ծառայ էր սա տեառն մեծի
Զաքարիաս վարդապետի:

ՌՄ» (=1751):

Մարմարիոնի մեծութիւնն է երկարութիւնն՝ 1 արշ. 9 վերշ., լայնութիւն՝ 11 վերշ., հաստ՝ 3 վերշ.:

Հին կաթողիկէի հիւսիս-արեւմտեան կամարասեան որմի ձեփի վրայի գրութիւնը.

«Ես Վանեցի
Ջրպաշ Թու
մենց լուսա
հոգի մահտեսի
Գասպարի որդի
Փիրիջանս եկի»:

Կից սորան՝

«Ես Վանեցի Ջրպաշ Թումենց
լուսահոգի մահտեսի Գաս
պարի որդի մահտեսի
Փիրիջանս եկի սուրբ
առաքելոյդ Թաթէոսի
գերեզմանն համբու
րեցի ով ոք հանդ
պի զայս գիրս կարդայ
հայր մեղայիւ յիշեսցէ:

Կից սորան՝

Ես Վանեցի Գասպարի
որդի Ախիճանս
յեկի սուրբ ուխտս
տվի. ՌՄԻԵ ապրելի
ԻԸ 1255» (=1776):

Նոյն որմի վերայ՝ վերոյիշեալ գրութեանց տակ՝ բոլորագրով.
 «Ես Արապկերցի մեղա
 պարտ գրիչ Ղուկաս
 դըպիրըս գրէցի հայ
 թվին ՌՄԼԴ ին» (=1785):

Կից սորան՝

«Ի ուխտ եւ յերկրպա
 գութիւն սրբոյ աթոռ
 ոյս եկի ես Վանցի
 մահտեսի Գասպարի որդի
 Մահտեսի Փիրիջանս
 Ի ՌՄԾԵ 1255
 մայիս ԺԵ» (=1806):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐ ՏԱՃԱՐԻ

«Յիշատակէ սունս վերանրգիչ սրբոյ
Աթոռոյս առաջնորդ Սիմէօն
Արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ
եւ ծնողաց նորին Մու
րատին եւ Գայեանին.

ԹՎին ՌՄԾԹ» (=1810):

Տեղեկութիւնք: Արձանագրութիւնս քանդակուած է հիւսիս-արեւելք. որման կից սիւնի արեւմտեան ճակատին՝ սպիտակ քարի վերայ, եւ հագցրած կապոյտ քարերի մէջ: Մեծութիւն՝ 8x12 վերջ., 6 տողից՝ կէս երկաթագիր եւ պատուագիր:

«Յիշատակէ սունս սրբոյ
Աթոռոյս առաջնորդ Սիմէօն
Արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ
եղբօր Խաչատրին եւ քեռն
.....րին եւ ամենայն զարմիցն
ԹՎ. ՌՄԾԹ-ին» (=1810):

Հար. արեւելք. որմասեան արեւելեան ճակատին: Մեծութիւնը՝ 13x9 վերջ., 6 տող:

«Այլ եւ յիշատակ է Բայազեղցի մահ
տեսի Ափրիկի որդի
մահտեսի Բարսեղին եւ Պետրոսինն եւ
ծնողացն Շահգատին մահտեսի Լալէի
որդի Աւետիսին եւ մահտեսի Բարսեղի
կողակցի Մարթաին:

ՌՄԿԳ» (=1814):

Աւագանի զարդերի ներքեւ. տողի երկարութիւնն է 1 արջ. 2 վերջ., գրութիւնը՝ 4 տողից:

«Յիշատակ է սուրբ ավագանս Բայազեղցի
մահտեսի Գօրօի

որդի մահտեսի Մընացականին ՌՄԿԴ-ին
յուլիս է» (=1815):

Աւագանի քարի վերայ՝ երկու տող՝ 1 արշ. 5 վերջ. երկարու-
թեամբ:

«Սուրբ խաչս բա
րեխօս էլօին
եւ կնոջն Շամա
մին եւ որդուն
Պետրոսին»:

Աւագանից բարձր՝ որմի մէջ՝ դէպի արեւելք, իսկ դէպի արեւ-
մուտք՝

«Յիշատակ է աւագանս Սեդու
կեցի հանգուցեալ մահտեսի
Գերոմի որդիսն մահտեսի:
Յիսուս Քրիստոս.
Ղորղանէցի Դաւիթ
կաթողիկոսի եղբայր Մէլի
քեան Բարսեղին Երէվան
ցո եւ կողակցոյն յիւրոյ եւ
որդոցն Զօհրաբին Ռուստամ
ին եւ Մկուտրչին եւ տըստերա
ցն եւ հանգուցեալ ծընող
ացն եւ համայն կենդանեաց
եւ նընջեցելոցն ամէն
թվին ՌՄԿԴ» (=1813):

Տեղեկութիւնք: Գտնուում է հիւս. արեւել. սեան արեւմտեան ե-
րեսին՝ քանդակազարդ, մատուցարանաձեւ, եզերքը՝ նկարէն, քանդակ-
ները՝ ներկած կարմիր գոյնով. մեծութիւն՝ 1 արշ. 2 վերջ. x 1 արշ., ան-
կիւններում գրած է.

Տր. Ած. Յս. Քս.:
«Յիշատակ է Սիւնս մէլիք Ներ
սէսի որդի մլիք Նավասարդ մլիք
Մօսէս մլիք Բալասան մլիք Ստե
փան եւ մլիք Աղաջան երեքին

եղբարք նորոգեցաք վասն հոգոց
 նախնեաց մերոց արձերու
 նի Սենեքերիմ Դաւիթ Բե
 կեան. թվին ՌԿ-ին» ?(=1611)? (Թեբեւս
 ՌՄԿ=1811):

Տեղեկութիւնք: Գտնուում է հար. արեւել. սեան արեւմտեան երե-
 սին, մեծութիւնն է 9 x 11 վերջ., 8 տողից գրութիւն:

Սոյն սեան տակի պատուանդանի կոտրած հանգստարանի խոշոր
 երկաթագիր գիրն է.

«Կ. դամբար. անանուն կոչի»:

Ինչպէս երեւում է խորանի մարմարեայ եւ սեան տակերի շիրիմ
 քարերից, հանգուցեալ Սիմէօն արքեպիսկոպոսը բաւականին տապա-
 նաքարեր է անհետացրել նոր տաճարի շինութեան ժամանակ որման
 հիմերի եւ սեան տակերի շինութեանց մէջ:

«Հոգածութեամբ յառաջնորդ Սիմէօն արքեպիսկոպոսի
 եւ պատրիարգութեան սուրբ Սաղիմայ Թէոդորոս եպիս-
 կոպոսին

յիշատակ է Սիւնս սուրբ Սաղիմայ իմդաղչի
 եւ նվիրակ տեառն Ստեփան վրդպտին եւ ծնո
 դացն մահտեսի Մելքոնին Հռիփսիմին
 եւ եղբրցն մահտեսի Սարգսին եւ տիրացու
 Յարութիւնին եւ Յակոբին եւ ամեն
 այն զարմից նորին թվ. ՌՄԿԳ» (=1815):

Տեղեկութիւնք: Գտնուում է հիւսիս-արեւմտեան սեան արեւմտեան
 ճակատին, մեծութիւնը՝ 9 x 15 վերջ., 8 տող:

Սոյն արձանագրութիւնը ցարդ փորագրած չէ, այլ միայն մատի-
 տով գրած է փորագրութեան համար.

«Ոգածութեամբ յաջորդ Սի
 մէօն բազմաշխատ եպիսկոպոսին
 յիշատակ է սիւնս Մարդեցի
 տէր Խաչատուրին եւ կողկ
 ցուն. նա եւ Ղարաբախեցի
 տէր Պետրոսին եւ կողկցուն նա

*եւ Չլաղառ Պարոն Աստուածատուր
ին եւ կողակցուն ՌՄ.» ...եղծ:*

*Տեղեկութիւնք: Գտնուում է Հար.-արեւմտեան սեան արեւմտեան ե-
րեսին, մեծութիւն՝ $10 \frac{1}{2} \times 9 \frac{1}{3}$ վերջ., 8 տող գրութեամբ:*

Սոյն սեան պատուանդանի տապանաքարի գիրը.

«ԹՎ. ՉԽԷ այս է Հանգիստ....»

Մնացեալը կոտրած է եւ սեան տակ մնացած:

[ՆԱՍԱԿ «ԱՐԱՐԱՏԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ]*

«Արարատ»-ի յունիսի տետրակի մէջ տեղեկութիւն էինք տուել, որ Հ. Խաչիկ վարդապետը, Պետերբուրգի հնագիտական ընկերութեան տուած իրաւունքի համեմատ, իւր պեղումներն այս տարի պէտք է սկսէր Դուինի ս. Գրիգորի եկեղեցուց: Այժմ աւետել կարող ենք, որ հէնց գործի սկզբում յաջողութեան է հանդիպել նա յունիսի Ծ-ին՝ հիւսիսային կողմի բեմի վրայ բանալով մօտ երկու արշին հողի խորութեան մէջ մոզայիկի մնացորդ: Լուսանկարից երեւում է, որ ամբողջ է մնացել հաւանաբար Աստուածածնի դէմքի կէս մասը եւ աջ աչքն ամբողջապէս, աջ այտի կէսը, ճակատը՝ մագերի հիւսուածքով եւ նիմբուսը: Ձախ կողմից նկատուում են բացուած ծաղիկներ: Լուսանկարիչ պ. Դատեանի տուած տեղեկութիւնների համեմատ՝ մոզայիկը կազմուած է գոյնզգոյն քարերից եւ ոչ ապակիներից, ինչպէս Զուարթնոց եկեղեցու խաչն էր, որոնցից մեծերը՝ մօտաւորապէս տասը կոպէկանոցի մեծութեամբ: Նրբութիւն արտայայտող մասերի, ինչպէս աչքի եւ այտի քարերը աւելի մանր են: Նիմբուսը կազմուած է սեւ քարերից, մագերի հիւսուածքը՝ բաց, աչքը՝ մուգ շագանակագոյն, կոպերը, ինչպէս եւ բիբը, աւելի սեւ գոյներից: Գեղեցիկ մոզայիկներ են գտնուած հայ արձանագրութեամբ Երուսաղէմում՝ մօտաւորապէս ԺԱ դարու գործ: Գրերին նայելով՝ ներկայ գիւտը Զուարթնոց եկեղեցու խաչի հետ ցոյց է տալիս, թէ բուն Հայաստանում եւս այդ արուեստը պէտք է մուտք գործած լինի աւելի վաղ ժամանակներից: Հայոց արուեստի պատմութեան համար ուշադրութեան արժանի է այս գիւտը: Մենք հետզհետէ տեղեկութիւն կտանք Հ. Խաչիկի պեղումների մասին:

* ԱՐԱՐԱՏ, 1907, էջ 658-661:

ՅՈՒՐԻՍ 20/907 ԴՈՒԽՆ

Ազգիս Վեհափառ Հայրիկի օրհնութեամբ եւ Ս. Պետերբուրգի Կայսերական հնագիտական յանձնաժողովի թոյլատուութեամբը երկրորդ ամիսն է, որ ձեռնարկած եմ Դընայ սուրբ Գրիգոր կաթողիկէ եկեղեցւոյ եւ սուրբ Սարգիս (Սերգիա) եկեղեցւոյ աւերակների պեղմանը:

Առ այժմ բացուած է սուրբ Գրիգորի ամբողջ յատակագիծը նման Թալինի մեծ Կաթողիկէի յատակագծին: Խաչածեւ է տաճարի կազմութիւնը. հինգ սեղան, հինգ դուռն, երկարութիւնը սեղանով հանդերձ՝ 55 1/2 արշին մէջմէջ, պատերի լայնութիւնը՝ 3 արշ., տաճարի լայնութիւնը՝ մէջմէջ 25 1/2 արշ.: Արեւելեան, հարաւային եւ հիւսիսային մեծ սեղանները՝ լայնութեամբ 10 արշ., հարաւայինի եւ հիւսիսայինի խորութիւնը՝ անյայտ: Սեղանների կազմուածքը՝ ներսից կլոր, դրսից՝ հինգ անկիւնով: Դռների լայնութիւնը՝ 2 1/2 արշ., լուսամուտների թիւը՝ անյայտ:

Դընայ կաթողիկէի թէ՛ յատակը եւ թէ՛ առաստաղը մոզայիկներով զարդարած է եղել. հիւսիս-արեւելեան փոքր սեղանի յատակի վերայ մնացել է, բազլի բերմամբ, Դընայ Աստուածամօր գլուխը. ձախ աչքի մոզայիկները՝ թափուած. երեսի բերանի մասը՝ նոյնպէս: Յատակի վերայ, արեւմտեան եւ հարաւային դռների կողմից, բաւական տարածութեամբ մոզայիկ յատակ՝ զանազան գոյնգոյն քարերով, գորգածեւ բռնուածքով: Տաճարի պատերի ծեփերը՝ նոյնպէս զանազան գոյներով ներկած, ինչպէս Զուարթնոց եկեղեցում: Թէ՛ յատակի եւ թէ՛ առաստաղի մոզայիկներից նոյնպէս եւ պատերի ծեփերի ներկած կտորներից բաւական քանակութեամբ ժողովածու ունեմ՝ ապակէածածկ դարակներում դասաւորած. ապակեայ կանթեղների կտորտանք, կաւեայ ամանների մասեր, երկաթեայ բեւեռներ և այլն, գործիքների մասեր, գերեզմաններից հանած կերպասեայ հանդերձների կտորտանք, ժապաւէնածեւ ասեղնագործ սուրբ բանուածքի մնացորդ եւն: Սուրբ Սարգիս եկեղեցու աւերակներում գտնուել է առայժմ մի սիւնախարիսիս եւ երկու խոյակ՝ նման Զուարթնոցի խոյակներին: Հռնձի պատճառով ընդհատեցի պեղումներս երկու շաբաթով:

Շոգերի պատճառով ամսոյս 9–14-ը պեղումներ կատարեցի Գառնիի Տրդատաշէն սարահարթում: Մի շաբաթուայ ընթացքում հազիւ կարողացայ 130 շինութեան քարեր աւերակից զատել: Քարերից նշանաւոր են չորս հատ նուրբ քանդակներով սիւնախոյակներ: Իմ գտած խոյակներից չորսը գտնուում է Երեւանում՝ երկուսը՝ հին գիմնազիայի բակում (պ. Թադէոս Քալանթարի տանը), երկուսը՝ նահանգապետի բակում: Երեքը՝ Աղջաղչլաղ գիւղի եկեղեցում (շինած 1851) եւ երեքն էլ՝ Զոհրաբլու գիւղի եկեղեցում (շինած 1880)՝ Ազատ գետի մօտ: Ըստ վկայութեան Սիմէոն Աբարանցոյ՝ Գառնիի սիւները բաղկացած են եղել 24–ից: Առ այժմ յայտնի են 14–ը: Սոյն խոյակները ամրացրած են եղել սիւների վերայ պղնձեայ գամերով, արծիճեայ հալոցքով, իսկ շինութեան քարերը իրար հետ կապած են եղել երկաթեայ կապերով, նոյնպէս արծիճով ամրացրած՝ ըստ վկայութեան Խորենացոյ: Գտնուած են քիւփերի (կառնէզների) վերայ առիւծների բարձրաքանդակներ եւն հրաշալի կերտուածքներ:

Շինութեան ներքեւի յարկը լիովին կանգուն է, իսկ վրայ երկուսը հիմնաւեր փլատակների կոյտեր եւ զանգուածներ են ձեւացնում: Հիւսիսային կողմից ինն աստիճաններով բարձրանալիս են եղել վերնայարկը. գտնուած է առաստաղի եւ խոյակների վերայի զարդաքարերը: Լիայոյս եմ, որ հմուտ ճարտարապետ Թորոս Թորամանեանի ջանքերով կարելի լինի վերակազմել:

Հաւատքս մեծ է, որ մեր ազգի կարողաւոր մարդիկ ուշադրութիւն կդարձնեն ձեռնարկածս պեղումների վերայ եւ իրենց լուծման չեն խնայի ազգային եւ եկեղեցական պատմութիւնը ճոխացնելու հնազիտական լայնածաւալ պեղումներով եւ հնութիւններով:

Թանգարանապետ Հայրիկեան նորակառոյց Թանգարանի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի.

Խաչիկ Մ. վարդապետ. Զուարթնոց:

Մայր Աթոռի «Արարատ» ամսագրի խմբագրություն*

Բարձրապատիւ Տ. Մեսրոպ վարդապետը իւր «Էջմիածին եւ Հայոց Հնագոյն եկեղեցիներ» աշխատութեան մէջ («Ազգ. Հանդէս» XV եւ XVI) Զուարթնոց եկեղեցւոյ մասին խօսելիս յայտնում է, որ մանրագնին յատակագիծն գլխաւոր եկեղեցւոյ կազմել է Քրիստոսափոր Տէր Սարգսեանը, իսկ ընդհանուր յատակագիծը՝ ճարտարապետ Թորամանեանը: Այս տեղեկութեան հիման վերայ Հ. Գարեգին վարդ. Յովսէփեանը Մառի «О раскопках АНУ, 1906 г.» աշխատութեան քննադատութեան մէջ («Արարատ», 1908, մարտ) յիշում է, թէ Զուարթնոց եկեղեցւոյ վերակազմութեան երկու նախագէտեր են կատարուած: Այս կէտը առիթ է տուել ուսուցչապետ Մառին իւր «Անւոյ շարք», № 2, երես III, ծանօթութեան մէջ տարակոյս յայտնել, թէ ինչով պէտք է բացատրել այն Հանգամանքը, որ 1905 թ. «Մուրճի» մայիս Համարում պ. Թորամանեանը Զուարթնոցի յատակագիծը՝ հրատարակել է հինգ դռնով, իսկ Մեսրոպ վարդ. նոյն թուին «Էջմիածին եւ Հնագոյն եկեղեցիներ» գրքոյկի մէջ՝ Տէր Սարգսեանի յատակագիծն՝ երեք դռնով. մինչդեռ «Հանդէս Ազգ.» մէջ նկատուում են յատակագծի վրայ կլիշէում քերուած երկու նոր դռների տեղ՝ Թորամանեանի յատակագծի համաձայն:

Ես, իբրեւ Զուարթնոց եկեղեցւոյ պեղումները կատարող եւ գործին լաւ տեղեակ, պարտք եմ համարում յանուն ճշմարտութեան յայտնել, որ պ. Թորամանեանն է առաջին անգամ ոչ միայն լրիւ յատակագիծ կազմողը, այլ եւ ամբողջ շինութեան արտաքին եւ ներքին մանրագնին վերակազմողը 1904 թ. մարտ-յունիս ամիսներում:

Խաչիկ Մ. վ., Զուարթնոց,
1908, սեպտ. 10-ին:

* ԱՐԱՐԱՏ, 1908, էջ 889:

1907 Թ. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ¹

I

Արմաւիր (Թափաղիբի)

Մեր պատմական Արմաւիրը այն լայնատարած աւերակներն են, որ գտնուում են Թափաղիբի, Մոլլաբայազիտ եւ Շահրիար² գիւղերի մէջտեղը: Աւերակները երկուսի են բաժանուում. արեւելեանը՝ բերդը, շուրջը լայն խրամով՝ պարկէն փոսիով, պատած. իսկ արեւմտեանը՝ երկարաճիգ առապարը՝ քաղաքը, բաւականին ընդարձակ տարածութեամբ աւերակների կոյտեր է ներկայացնում: Քաղաքի բարձրաւանդակը երեք բերդանման թաղերից է բաղկանում՝ լայն պարիսպներով, վիթխարի քարերով եւ ցեխիկաւի շաղախով: Պարիսպների եւ շինութեանց հետքերը տեղ-տեղ մաքուր նշմարուում են, միայն դէպի Շահրիար եւ դէպի Մոլլաբայազիտ գիւղերը նայող փեշերի աւերակները հազիւ նշմարելի են դարձել: Շրջակայ գիւղացիները անարգել կերպով օգտուում են աւերակների քարերով. է, որ գերեզմանների տապանաքարերի համար եւ է, որ շինութեանց եւ այլ պէտքերի գործածութեանց:

Վաթսունական թուականներից սկսած՝ կատարուած բոլոր հնագիտական որոնումները տեղի են ունեցել մեծ բերդի վերայ եւ շրջակայքում: Յարդ գտնուած են մօտ տասներեք արմաւիրեան բեւեռագիր արձանագրութիւններ: Մեծաւ մասամբ շնորհիւ բազմաշխատ եւ Մայրավանուց միաբան բարձր գերապատիւ Մեսրոպ արքեպիսկոպոսի: Գտնուած բեւեռագրերը բոլորն էլ վերծանուած են:

1907-ի որոնումների ժամանակ իսկական քաղաքի միջնաբերդ թաղի արեւելեան պարսպի մօտ գտնուած բեւեռագիր ար-

¹ ԱՐԱՐԱՏ, 1909, էջ 169-180:

² Եթէ չեն սխալուում, Շահրիարի անունը Շիարերի (քաղաքատեղի) անուան աղաւթումն պիտի համարել:

ձանագրութիւնը ցարդ վերծանուած չէ: Թէեւ անցեալ թուականի մարտ 14-ին եմ ուղարկել արձանագրութեան ընդօրինակութիւնը (Экстаппаж) Ս. Պետերբուրգի Կայսերական Հնագիտական մասնաժողովին՝ վերծանելու, բայց ցարդ եւ ոչ մի պատասխան չունեմ: Արձանագրութիւնը բաղկացած է 28 տողից, հաստութիւնը՝ 7 վերջով, լայնութիւնը՝ 18 վերջ., բարձրութիւնը՝ 26 վերջով: Որձաքարից (Базальт) արձանագրութիւնը անմիջապէս փոխադրած եմ Մայր Աթոռի Հայրիկեան թանգարանը:

Հաւատացած եմ, որ եթէ արմաւիրեան աւերակները լաւ եւ խնամքով ուսումնասիրուեն, մեծ արդիւնք կտան Հնագիտութեան եւ պատմութեան: Բացի գտնուած արձանագրութիւնից՝ գտնուած են եւ մի քանի բրոնզեայ զարդարանքներ՝ ճակատակալ, գինդ, գօտիի մասեր, նետեր եւլն: Եթէ Աստուած յաջողէ, այս տարի թէ՛ բերդի եւ թէ՛ քաղաքի մանրամասն յատակագիծը կհրատարակենք:

II

Արտաշատ (Վաղարշապատ)

Արտաշատ-Վաղարշապատի¹ պեղումները բաւականին նորութիւններ տուին: Ս. Զուարթնոց տաճարի արեւմտեան եւ հիւսիսային բլուրները վերացան՝ պեղուեցին: Գտնուած են հիւսիս-արեւմտեան մուտքի դրսի զարդաքանդակը՝ հրաշալի պաճուճանքներով զարդարուն եւ եզերուած: Զորս արձաններ-մարդկանց պատկեր, բոլորի էլ երեսները՝ մուրճով եղծած: Պատկերներից մէկի ձեռքին նշմարուում է բահ, միւսի ձեռքին՝ բանալի, միւս երկուսը եղծուած են իսպառ: Գլխների եւ միրուքի մագերը նկատելի են քանդակից: Ճարտարապետ պ. Թորամանեանի 1904-ի վերակազմութեան մէջ տաճարի արտաքին մուտքերի կողքի զոյգ

¹ Սի անանուն պատմիչ գրում է այսպէս.

«Ոչ հեռի յԱրտաշատայ, որ Վաղարշապատ եւս երբեմն կոչի.» «Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ, 1884 թ., երես 141:

սիւների խարխիսները եւ խոյակները չկան, քանի որ նիւթեր չկային: Նոր պեղումների ժամանակ գտնուեցան ե՛լ խոյակները, ե՛լ խարխիսները. այնպէս որ, վերակազմութեան մուտքերը զգալի կերպով փոփոխութեանց կենթարկուեն: Նշանաւոր գիւտերից առաջինը համարուում է Ներսէսաշէն ջրհորը՝ քսան սաժէն խորութեամբ, սրբատաշ քարերով մինչեւ ջրհորի յատակը շարած քար ու կրով: Զրհորը 42 արշին լցուած էր աւերակների բեկորներով, քար ու կրի զանգուածներով եւ կղմինտրի կտորներով: Զրին մօտենալու ժամանակ դուրս եկաւ մի գերեզմանի տապանաքարի կտոր, մի երեսը՝ կամարազարդ քանդակներով, միւսը՝ ծաղիկներով: Երեւում է, որ տապանաքարի երեսը հագցրած է եղել մարմարից արձանագրութիւն: Նախկին պեղումներիս ժամանակ գտած էի մի կտոր մարմարեայ արձանագրութիւն՝ եզերուած գեղեցիկ ժապաւէնաձեւ սքանչելի մանրաքանդակներով եւ գրութեամբ: Անխիղճ մարդիկ, օգտուելով իմ բացակայութիւնից՝ աքսորից, գողացել են յիշեալ մարմարը: Տապանի քարի տակ՝ ջրհորից խառնիխուռն հանուեցին եւ մարդկային կմախքի մասեր:

Եթէ չեմ սխալուում, թէ՛ յիշեալ տապանաքարը եւ թէ՛ ոսկորները Ներսէս Շինող հայրապետինը պիտի լինեն. քանի որ, ըստ վկայութեան Յովհաննու Պատմագիր Կաթողիկոսի, Շինողի գերեզմանը՝ «իւրով իսկ ձեռամբ շինեալ դամբարանի» տաճարի հիւսիսային կողմն է ընկնում:

Թովմա Արծրունուց գիտենք, որ երբ Դըւնայ կաթողիկէն եւ կաթողիկոսարանը երկրաշարժից կործանեցան, Գէորգ Գառնեցի Կաթողիկոսը իւր գահը փոխադրեց Ներսէսաշէն Զուարթնոց ս. Գրիգորը: Գէորգից յետոյ ե՛լ ս. Մաշտոց Եղվարդեցին, եւ պատմագիր Յովհաննէս Դրասխանակերտցին գահակալեցին Արտաշատի Ս. Գրիգորում: Պատմիչ հայրապետի կենդանի արտասուլիսառն նկարագիրը, թէ ինչպէս Դըւնայ Իւսուֆ ոստիկանը, առաջնորդ ունենալով հայազգի Գագիկ Արծրունի թագաւորին եւ նրա եղբօր Գուրգէնին, Սմբատ թագաւորի դէմ կռուելով Ապարանում, նրա Մուշեղ որդուն գերելուց յետոյ, շրջապատում են Կաթողիկէ եկեղեցին, մուրճով եւ տապարով եղծանում տաճարի հրաշալի քանդակները եւ դռները եւլն, եւլն:

Պատմիչ հայրապետի խօսքերը միանգամայն արդարանում են հնագիտական պեղումներով: Գտնուած բոլոր մարդկային պատկերները մուրճով եղծած են: Անշուշտ, այդ իսկ ժամանակ էլ Շինողի տապանը՝ շիրիմը, պղծած եւ ջրհորի մէջ լցրած կլինեն, քանի որ բոլոր միաբաններին սրի են քաշում եւ տաճարի սրբութիւնները այրում: Ջրհորը բոլորովին մաքրած չենք. ջուրը բարձրացաւ եւ արգելք եղաւ աշխատանքներին: Երբ ջուրը իջնի ցածրանայ, յուսով եմ, որ մաքրուի, եւ բաւականին բաներ գտնուին: Ջրհորը գտնուած է տաճարի արեւմտեան մուտքից չորս քայլ դէպ հիւսիս: Ջրհորի ուղիղ կէսում նշմարուած է դռնակի տեղ՝ դէպի տաճարը, եւ երբ մուրճով զարկում ես ջրհորի պատերին, լսում ես, որ պարապ է շարապատի ետեւը: Ներկայումս մնացել են պեղելու Զուարթնոցի արեւելեան երեք բլուրները: Աստուծով երբ այն եւս պեղուեց, այն ժամանակ կարելի կլինի ասել, որ տաճարի թէ՛ ներսը եւ թէ՛ դուրսը աւարտուեց պեղումից: Տաճարի թէ՛ դրսի եւ թէ՛ ներսի սալաշատակի վերայ տեղ-տեղ երեւում են խորհրդաւոր իջուածքներ, այնպէս որ, անհրաժեշտ կլինի որոնումներ անելու եւ սալաշատակների տակ:

Զուարթնոցը դեռ եւս մի երեք տարի էլ կխլէ ինձանից դրսի եւ ներսի պեղումների եւ որոնումների համար: Իսկ քաղաքի աւերակների եւ հեռու ընկած բլուրների համար ոչ թէ տասնեակ տարիներ, այլ եւ տասնեակ մարդկանց կեանք, անկարող կլինեն՝ քաղաքի շրջապատի բլուրները պեղելու:

Արտաշատի աւերակների տարածութիւնը այնքան ընդարձակ է, որ բռնում է ամբողջ Երասխի, Մօրին մեծի (Սեւ ջուր) եւ Մեծամօրի (Զանկի) միջավայրի դաշտավայրը եւ բարձրաւանդակը: Այս գետերի միջավայրի երեք դաստակերտները՝ Կաւակերտ, Արտաշատ եւ Հոռոմոց մարգ, արուարձանները կազմել են անցեալ մեծին հայոց մայրաքաղաքը:

Հռովմայեցիք 163-ին Արտաշատը կրկին կործանեցին եւ ոչ հեռու շինեցին Կայնոպօլիս նոր քաղաքը, որը կոչուեց եւ Հոռոմոց մարգ՝ նրանց գառնիզոնի բնակելու համար: Իսկ արաբացւոց օրօք էլ Արտաշատը յափշտակուեց: Եթէ չեմ սխալոււմ, Կաւակերտը այսօրուայ Զաֆարաբատի մօտ է. Հոռոմոց մարգն էլ այ-

սօրուայ Վաղարշապատն է, Իսկ Արտաշատն էլ՝ Զուարթնոցի շրջակայքը:

III

Դուրին (Թօփրագ գալա)

1904-ի եւ 1907-ի հնագիտական որոնումներս հիմնովին ապացուցեցին, որ այն յատակագիծը, ինչ որ հրատարակած էր բազմաշխատ երջանկայիշատակ Ալիշանը իւր Այրարատ գլուխ գործոցի մէջ իբրեւ Արտաշատի յատակագիծ, որից առած կրկնել է եւ բնաշխարհիկի խմբագիր հայր Էփրիկեանը, ոչ թէ Արտաշատի, այլ Դրենայ յատակագիծն է:

Դուրինը Արտաշատի հետ նոյնացնողների թիւը անչափ է, ըստ իս՝ այդ շփոթումը յառաջացել է նրանից, երբ ըստ Խորենացու ասութեան՝ Դուրինի հիմնարկութիւնից յետոյ խիստ երաշտային տարիներ են լինում, որի պատճառով Արտաշատի (Վաղարշապատ) ազգաբնակչութեան մի մասը տեղափոխուում է Դուրին, բնակութիւն հաստատում. եւ այսպիսով Դրենայ այն թաղը, ուր բնակութիւն են հաստատում արտաշատցիք, կոչուում է Արտաշատ կամ Արտաշար՝ ըստ այժմուայ կոչման: Իսկ մի դար սրանից առաջ երբ նոյն աղէտը՝ երաշտային տարին, կրկնուում է Դուրինում՝ Արտաշատում, այնտեղի ազգաբնակչութիւնից մի մաս տեղափոխուում է, Մօրին մեծի (Սեւ ջրի) ակունքի մօտ բնակութիւն հաստատում՝ վերապահելով իրանց նախկին անունը՝ Արտաշար:

Ինչպէս Երասխ գետը պատմական Արմաւրի նկատմամբ, իւր հին հունը թողնելով Արմաւրի մօտ, այսօր հեռացած է մօտ չորս վերստ տարածութեամբ, այնպէս էլ Ազատ գետը, Դրենայ նկատմամբ հին հունը թողնելով, հեռացել է մօտ երկու վերստաչափ: Ազատ գետի (Գառնի-չայ) միակ պատմական կամուրջի խելը այսօր երեւում է Նովրոզլուի, Գեօտակլուի առուների բաժանման վայրում՝ Հախվերտեանների ջրաղացի մօտ: Մեծամօրի (Զանկի) գետի վրայ Երեւանեան այգիների սպառումից մինչեւ ի Զանկուի եւ Երասխի խառնուրդը չորս հատ կամուրջի տեղեր եմ տեսել իրանց խելերով հանդերձ: Այնպէս որ, Արտաշատ-Վաղարշապատ

տից Դուին-Արտաշար գնալու համար հնումը գործ են ածել Մեծամորի չորս կամուրջը, իսկ Ագատի՝ միակ կամուրջը: Յիշեալ չորս կամուրջներից մէկը կոչուել է Տափերական, միւսները՝ Արտաշատի, Վաղարշապատի եւ Մեծամորի: Այս չորս կամուրջներից միայն մէկն է գործածութեան մէջ, այն էլ քարուկրեայ խելերի վրայ փայտաշէն կամուրջ, Քալարէ կամ Քալալէյ հայ գիւղիներ՝ Ջաֆարաբատի (Կաւակերտի) եւ այլն գիւղերի հետ հաղորդակցութեան համար: Բայց թէ պատմական չորս անուններից որ անունն է յատկացել սոյն կամուրջին, դժուարին է որոշակի մատնանշել:

Դրւնայ պաշտօնական պեղումը առաջին անգամ 1892-ին կատարել է բամաշխատ Պ. պրօֆեսոր Մառը: Նա որոնումներ է կատարել միջնաբերդի արեւմտեան պարսպի վերայ: Իսկ իմ պեղումները սկսած եմ Դրւնայ սուրբ Գրիգոր Կաթողիկէ եկեղեցւոյ եւ սուրբ Սարգիս եկեղեցւոյ աւերակներից: Դրւնայ սուրբ Գրիգորը ծառայում էր նախ քան պեղելս Թօփրագ գալա թուրք գիւղացոց համար իբրեւ բասմատեղի-կոյանոց: Տաճարի հիւսիսարեւմտեան անկիւնը ծառայում էր իբրեւ ապականութեանց վայր-աղբանոց: Թօփրագգալացի թուրքերն երեսուն տարուց աւելի է ինչ, որ սկսել են անպաշտօն պեղումներով առեւտուր անել: Շրջակայ հայ գիւղացիների շնորհիւ թուրքերը իւրաքանչիւր հասարակ լեռ քարի գինը բարձրացրել են հինգ կոպէկի, իսկ քաւանկ-աւազաքար կոչուած (տուֆ) քարի գինը՝ յիսուն կոպէկի. իրանք՝ հայերը, փող են տալիս թուրքերին, թէ՛ մեր պապերի յիշատակը քակեցէք եւ մեզ վրայ ծախեցէք: Թուրքերը այն աստիճան են կապտել կողոպտել Դրւնայ սուրբ Գրիգորի աւերակները եւ բերդը, որ համարեա թէ մնացել է տաճարի հիմքի կրաշաղախը առանց արտաքին եւ ներքին սրբատաշ քարերի: Հարաւարեւմտեան անկեան մի քանի սրբատաշ քարերը կարող են ապացոյց ծառայել շինութեան ճարտարապետութեան: Տաճարի շուրջը բոլոր մահարձանների սրբատաշ քարերը՝ կապտած կողոպտած, անգամ գերեզմանների սալերը, աղիւսները բոլորն էլ քակում եւ վաճառում են: Այս քանս դեռ եւս բաւական չհամարելով՝ թուրքերը աւերակների հողը իբրեւ պարարտացման միակ

աղբիւր արտերի, բամբակների եւ բօստանների-բանջարանոցների համար հողը վաճառում են հայերին, իւրաքանչիւր սայլը՝ տասը կոպէկով: Այնպէս որ, ամէն տարի դարնանը եւ աշնանը թէ՛ իրանք՝ թօփրագգալացի թուրքերը եւ թէ՛ շրջակայ հայ գիւղացիները Դըւնայ աւերակների թէ՛ քար, թէ՛ հող կրում տանում են իրանց գործածութեան համար. քարով տներ շինում, իսկ հողով գետինը պարարտացնում: Երկաթուղու կայարանի շինութեան համար այս վերջին տարիներս աւելի եւս կրկնապատկուեցին թուրքերի պեղումները, ամէն մի թուրք որոնումներ է անում իւր այգու, արտի, բանջարանոցի մէջ, ստորերկրեայ շէնքերի պատերի քարերը, աղիւսները քակում եւ վաճառում է անարգել կերպով: Բողոքում եւ իշխանութեանը, պատասխանում են, թէ իրանց նաֆարապատկան հողերը մշակում են, իրաւունք ունին պեղումներ անելու: Թօփրագ գալացի գիւղը պատկանում է երեւանցի Պ. Գրիգոր Թարխանեանցին. մօտ 40 տուն թուրք ազգաբնակիւթիւն ունեցող գիւղը տնօրինում է ըստ անձնիւր կամաց Դըւնայ աւերակների վիճակը: Երկու թուրք, համարեա թէ, տիրացել են բերդին եւ անարգել կերպով շահագործում են այն մեծ պատմական հարստութիւնը: Սուրբ Գրիգորի կաթողիկէն շրջապատուած է թուրքերի այգիներով: Գիւղատէրը ունի իւր իրաւանց տակ մօտ քսան դեսեատին ախշա հող: Միակ հնարը բերդի եւ եկեղեցեաց աւերակներին տիրանալու համար այն է՝ գնել կալուածատիրոջ սեպհական հողերը եւ փոխարինել այն թուրքերի հետ, որոնք բերդին եւ եկեղեցիներին կից հողամասեր ունին: Ահա միայն այս միջոցով կարելի կլինի Դուինում հնագիտական պեղումներ կատարել: Դուինում կատարած պեղումներս թօփրագգալացի թուրքերը ոչնչացրին: 1907-ի հոկտեմբերեան աղէտը՝ անսպասելի ճիւղը եւ հայոց Հայրիկի մահը, արգելք եղան գտածս հնութիւնները տեղափոխելու՝ դասաւորած լինելով ապակիածածկ դարակներում եւ պահարաններում մի հայ եւ մի թուրք պահապանի հսկողութեան տակ: Թուրքերը, օգտուելով բացակայութիւնիցս, անհաւատարիմ պահապանների շնորհիւ, ջարդուփշուր են անում պահարան-դարակներս եւ միջի հնութիւնները ոչնչացնում. է՛, որ յափշտակում, է՛, որ կոտորում-ոչնչացնում: Բերդից եւ շրջակա-

ներից ժողոված դրամներս գողանում են: Խեցեղէն ամանները՝ կոտրատում, իսկ տաճարի միջի հարաւ-արեւմտեան անկիւններում աղիւսով թաղակապ շիրիմների միջից հանած հայրապետական զգեստների ժողովածուն ոչնչացնում են՝ կտոր-կտոր անելով: Հիւսիս-արեւելեան կողմնակի Սեղանի յատակի վրայի մոզայիկ Աստուածամօր գլուխը ոչնչացնում են, ժամանակաւոր թանգարանի փայտեղէն նիւթերը, ծածկը եւ պարագաները յափշտակում: Այս բոլոր զրկանքների մասին անցեալ տարի մայիս 17-ին բողոքած եմ եւ արձանագրութիւն կազմել տուած Պ. Կալիւնովսկիյ պրիստաւի ձեռամբ՝ մի հազար հինգ հարիւր ռուբլի վնասի: Ո՛հ, մահմետական խաւարամտութիւն եւ անմիտ վրէժխնդրութիւն: Պեղումներիս առաջին իսկ օրուանից գիւղի թուրքերը միաբան, տունը՝ մի մարդ, գնում են Երեւան՝ Պ. նահանգապետին բողոքում են պեղումներս արգելելու համար: Պ. նահանգապետը նախ խաղաղարար կոմիսիայի անդամներից երկուսին մի հայ եւ մի թուրք ուղարկում է պեղման վայրը իրազեկ լինելու թուրքերի բողոքի մասին: Ականատես լինելով թուրքերի անարդար պահանջների եւ պատճառաբանութեանց՝ կոմիսիայի անդամները վերադառնում են Երեւան: Միւս օրը ես եւ Պ. պրիստաւը գնում ենք՝ նահանգապետին ներկայանում: Որտեղ Պ. նահանգապետը առաջարկում է ինձ յետաձգել պեղումները մինչեւ հունձի վերջանալը: Առարկեցի Պ. նահանգապետին, որ թուրքերի փորացաւը հունձը չէ, այլ նրանք կամենում են իսպառ խափանել գործողութիւններս: Համոզուելով պատճառաբանութիւններիս հետ՝ թուրքերին հասկացրեց, թէ՛ քանի որ վարդապետը բարձրագոյն հրաման ունի, ես արգելել անկարող եմ, դուք էլ դիմեցէք իշխանութեանը. երբ բարձրից իրաւունք տրուի, ես կարգելեմ վերստին:

Թուրքերը, յաղթահարուած լինելով, հաշտութեան ձեռք մեկնեցին, եւ միասին վերադարձանք՝ շարունակելու պեղումներս: Խաղաղ կերպով զբաղմունքներս առաջ տարայ՝ թուրքերին սիրաշահելով, գործում բանացնելով եւլն, եւլն: Անգամ պահապաններից մէկը թուրք վարձեցի, մինը՝ հայ: Հաւատացած էի, որ ամէն անբաւականութիւն վերացած է: Յանկարծ լուր առի, որ թուրքերը ամէն ինչ տակն ու վերայ են արել: Գնալով պեղման

վայրը՝ ամէն կողմից թափուեցան ինձ մօտ, խնդրեցին ներել, վերագրեցին իրանց երեխաներին բոլոր տեղի ունեցած սրբապղծութիւնները: Պրիստաւը նկատեց, որ թէ՛ վարդապետը ներելու լինի, ես անկարող եմ, քանի որ տանուտէրի տունը խուզարկելու ժամանակ գտանք քարէ կաթսայածեւ ջրամանը՝ պեղումների վայրից գողացած, նոյն եւ պեղած քարերս եւ այլն հնութիւններ: Յաւում եմ, որ ցարդ եւ ոչ մի տնօրէնութիւն տեղի չունեցաւ, թէեւ այս մասին դիմած եմ եւ նահանգապետին անցեալ նոյեմբեր 20-ով, ցարդ եւ ոչ մի պատասխան:

Դրենայ կաթողիկէն հիմնարկել է 607 թուականին փրկչական Աբրահամ Ռշտունեաց կաթողիկոսի օրօք՝ Սմբատ Վրկան իշխանը: Շինութիւնը աւարտել է Կոմիտաս կաթողիկոսը: Ուրեմն 607-618 թուականին:

Պեղումներից երեւաց, որ սոյն եկեղեցւոյ տեղում հնումը աղիւսաչէն փոքր եկեղեցի է եղել: Միանգամայն հաւանական է դառնում այն աւանդութիւնը, որ Աբրահամ Խոստովանողից անցել է Յովհաննէս պատմագիր կաթողիկոսին եւ Թովմա Արծրունի Պատմիչ վարդապետին, որ Դուին կրակարանի-ատրուչանի տեղում Վարդան Մամիկոնեանը եկեղեցի է շինել՝ աղիւսաչէն, փայտածածք:

Դրենայ սուրբ Սարգիս եկեղեցին վերստին նորոգած է Ներսէս Շինող հայրապետը 640-ական թուականներին եւ արաբացւոց կոտորածներին էլ ամփոփել սուրբ Սարգսի տեղում: Մինչդեռ սուրբ Գրիգորի տաճարը պեղելիս անթիւ եւ անհամար կմախքներ երեւացին: Դրենայ կաթողիկէն շարժից կործանեցաւ 893/4-ին, այնուհետեւ աթոռը փոխադրուեցաւ Արտաշատի-Վաղարշապատի սուրբ Գրիգորը՝ այսօրուայ Զուարթնոցը:

Դրենայ կաթողիկէն կանգուն մնացել է 607-894-ը ընդամենայն՝ 287 տարի, մօտ երեք դար:

IV

Գառնի (Բաշ-Գառնի)

Այս պատմական բերդը միակն է ամբողջ Հայաստանում իւր ճարտարապետական կերտուածքով: Սոյն բերդի յատակագիծը, նոյնպէս եւրոպացի ճանապարհորդներից առնելով, հրատարակել են մերոնք: «Այրարատում» եւ «Բնաշխարհիկում» հրատարակած յատակագիծներում Գառնիի բուրգերը՝ աշտարակները, կլոր-կիսաբոլորակ է նշանակած, մինչդեռ իրապէս եւ ոչ մի կիսաբոլորակ աշտարակ չունի Գառնին, այլ ատամնաւոր, քառակուսի եւ դուրս ընկած բուրգեր են արեւելեան, հիւսիսային եւ արեւմտեան պարսպի վրայ: Վիթխարի եւ խոշոր քարերով, երկաթակապ արծիճով ամրացրած ուղիղ պայտածեւ է բերդի յիշեալ երեք կողմի պարիսպը, իսկ հարաւայինը՝ ժայռից:

Մեր մատենագիրները, Խորենացուց առնելով, Գառնիի շինութիւնը վերագրել են Տրդատ քրիստոնէին երրորդ դարում՝ զկնի Քրիստոսի:

Մինչդեռ հնագիտական պեղումները հաստատեցին, որ բերդը՝ այն կազմութեամբ, ինչպէս մեր ձեռքն է հասել, առաջին դարու գործ է Տրդատ-Արտաշէսի, որը 66 թուականին Հռովմում Ներոն կայսրից թագ ստացաւ եւ վերադարձին հռովմայեցի ճարտարապետներ բերեց՝ աւերուած մայրաքաղաքը նորոգելու: Ահա այս իսկ ճարտարապետների գործ եմ համարում Գառնիի արքունի սարաւոյթը: Կարծր, բազալտ կոչուած քարից, տեղական քարահանքից երկու սաժէնից մինչեւ 1 1/2 արշին երկարութեամբ եւ զանազան հաստութեամբ քարերի վերայ, այնպիսի խորաքանդակներ է փորագրած, որ մարդկանց զարմացնում եւ հիացնում է:

Գառնիի առիւծները իրանց ճարտարապետութեամբ կարող են գերազանցել Ս. Զուարթնոց արծիւներից: Զարդաքանդակները աննման են: Սիւնախոյակները՝ սքանչելի: Անցեալ 1907-ին «Արարատի» յուլիս-օգոստոս համարում գրած եմ Դուինի եւ Գառնիի գիւտերիս մասին. միայն այս անգամ աւելացնեմ եւ այն, որ բերդի միջի սարաւոյթի ապարանքի արեւմտեան կողմը գտնուե-

ցաւ մի մեծ եկեղեցւոյ յատակագիծ, որի սեղանը վիթխարի փլատակների տակ է՝ նման Զուարթնոցի զանգուածներին, իսկ տաճարի մնացորդ մասը բերդատիրոջ այգիի ծառերով եւ առւոյտով ծածկուած է: Սոյն եկեղեցւոյ սեղանի ուղիղ հիւսիսային կողմը եւ սարաւոյթի արեւմտեան կողմը գտնուեցաւ մի մատուռ, որի մէջ՝ երկու, իսկ դուրսը՝ արեւմտեան կողմը, բազմաթիւ գերեզմաններ՝ իրանց տապանաքարերով հանդերձ:

Մատրան միջի տապանաքարերից մինը միայն՝ արձանագրութեամբ, որ է այսպէս. «ՅԽԶ ԹՎ. Ի Քս փխց Տր ՄՇԴ», նոյն է՝ Հայոց 346=897 փրկչական թուականին ի Քրիստոս փոխեցաւ Տէր Մաշտոց: Ս. Մաշտոց հայրապետի դամբարանը՝ Տրդատեան սարաւոյթի մօտ Գառնիում: Քարը՝ տափակ, կարծր բազալտ, երկարութիւնը՝ 8 1/2 թիզ, լայնութիւնը՝ 2 1/2 թիզ, հաստութիւնը՝ 8 1/2 թիզ:

Հայոց հայրապետական Մայր Աթոռը Վաղարշապատի Ս. Գրիգոր փոխադրուելուց յետոյ, Զուարթնոցի առաջին հայրապետի դամբարանը գկնի Ներսէս Շինողի գտանք Գառնիում: Այս մասին մեր մատենագիրներից Ասողիկը գրում է «մերձ», իսկ Սիմէօն Ապարանցին՝ «հուպ» ի սարաւոյթն Տրդատայ ամփոփեցին Ս. Մաշտոցին: Իսկ աթոռը Ս. Գրիգոր փոխադրող Գէորգ Բ. Գառնեցին եւ Ս. Մաշտոցի փոխանորդ եւ ազգակից պատմագիր Յովհաննէս Դրասխանակերտցին թաղուած են Վասպուրականի Զորոյ վանքում: Այսպիսով արաբացւոց բռնակալութեան երեսից աթոռը մի առ ժամանակ փոխադրեցին Վասպուրական, այնտեղից էլ՝ Շիրակ-Արգինա եւ Անի:

Ինչպէս Դրենայ աւերակները շահագործում են տեղացի թուրքերը, այնպէս էլ Գառնիի աւերակները ոչնչացնում են տեղացի հայերը: Գառնիի բերդը պատկանում է ոմն Գայլ Վարդան Քօչարեանցին, որին եւ ես յանձնեցի ի պահ պեղումից հանուած արձանագրութիւնները եւ քանդակները: Առհասարակ բազգեառնեցիք շահագործել են բերդի եւ ապարանքի քարերը: Նրանց գերեզմանատան եւ եկեղեցւոյ բակում թափուած կան յիշեալ շինութեանց քարերից: Անգամ ինքը՝ բերդի տէրը իւր եւ իւր որդոց համար կառուցել է երեք բնակարան յիշեալ բերդի եւ

ապարանքի քարերից: Նոյն իսկ իրան պահ տուած արձանագրութիւնների մեծ մասը պահասուած է: Քանիցս անգամ նկատողութիւն եմ արել մարդուն եւ որդոցը, եթէ ուղղուին՝ լաւ, եթէ ոչ՝ բերդից պիտի հեռացնել:

Գառնին Հայաստանի ճարտարապետութեան դպրոցն է: Այնտեղից անցել է Դուին եւ Դուինից Արտաշատ-Վաղարշապատ եւ այստեղից էլ՝ Անի:

ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԱՉԱՎՐՈՒԹԻՒՆ

ՏՂԱՅ ԴԱԻԹԻ ԵՒ ԱՂՁԻԿ ԽԱՆԴՈՒԹԻ
ՀԷՔԻԱԹԸ*

Ա.

Մարայ Մհէր թաքեաւէր,
Շատ զօռբա թաքեաւէր կըլնի.
Ըտոր էրկու կնիկ կըլնի.
Օրերէն մեկ օր կեթայ տենայ՝
Պատի կնկան մօտ մէ մարդ մէ քընէ.
Կասի՝ հա՛յ-հա՛յ, ես Մհէր թաքեաւէր ըլնեմ,
Իմ կնիկ էսա բանի տէրն ըլնի.
Հակեար մկայ մէ թափիկ զարկեմ,
էրկուսն էլ քեառասուն գեազ կէթան գետնի տակ,
էսիկ իմ անուան լաւ չի,
Վաքիլ, վազիր կասեն՝ թէ պատի կնիկ ի՞նչիս էլաւ.
Ձըլնի մէյ բան տեսաւ, պատի կնկան զայ արաւ:
Քուրքը հանաւ, թալաւ վրէներ, ընցաւ գնաց:
Մնաց. կնիկ օյանմիշ էլաւ.
Օյանմիշ էլաւ, տեսաւ, որ իրար չեն գալի.
Ասաւ՝ վայ, տանիսն ա փլէ, թէ ի՞նչ ա էլէ:
էդա կնիկ մարդ իրար տուեց,
Գլօխ հանեց տեղից, տեսաւ թաքեաւէրի քուրք.
Ասաւ՝ քեօ տունը չաւրի, էլ մեզի պրծում չըկայ.
Ասաւ՝ չէ, էլ մի վախի, որ զայ ընէր, մեզի մէ թափուկ կը
զարկէր.
Հիմայ զայ ը՛նելու չեղեր.
Կինը փոշմնեց, թողկեց եկաւ.
Թէ՛ էլ էսենց բան չեմ բռնէ.
Սիրողն էլ փախաւ գնաց.
Կնիկը էրէխով մնաց:

* ԱՐԱՐԱՏ, 1895, նոյեմբեր, էջ 431-438, 484-487:

Բ.

Թաքեաւէրի ճոչ կնիկն էլ էրէխով էր.
 Մնաց, ժամանակ որ լցուաւ,
 էտա պստիկ կնիկ պառկաւ էրէխայ բերեց.
 էկան մուշտուլուղ բերեցին Մհէր թաքեաւէրին.
 Թէ՛ թաքեաւէր քեզիկ մէ տղայ էլաւ:
 էտիկ մուշտուլուղ ցրուեց.
 Քեաղաք էր ուրախութէն արէցին.
 Ջրաղվան արէցին, թէ մեր թաքեաւէրին տղայ մ' էլէ.
 Ժողուրտվան վաքիլ, վազիր, թէ՛ թաքեաւէրն ապրած կենայ,
 Բե տենանք տղայի անունն ի՞նչ պտի դնենք.
 Ասաւ՝ Շունն Մէլիք:
 – Թաքեաւէրն ապրած կենայ, –
 Ասին, – Շունն Մէլիք անունն կըլնի՞:
 – Վազիր, վաքիլ, իմ տղէն չէ՞. Անունն էն ա:
 Ջունքի թաքեաւէր խորխուրդ գիտէր,
 Վաքիլ, վազիր չէր գիտէին,
 Բերեց վէր ըտոր թեւին գրեց:

Գ.

Տվեց ըտոր ճոչ կնիկն էլ պառկաւ, էրէխայ բերեց:
 էլի մուշտուլուղ բերեցին.
 Մուշտուլուղ որ բերեցին,
 Եօթն օր եօթ գիշեր էտա քաղաք չըաղվան էլաւ.
 Մուշտուլուղ ցրուեց.
 Ժողվրտվան թէ՛ թաքեաւէրն ապրած կենայ, ըստոր անունն
 ի՞նչ դնենք:
 Ասաւ՝ գնացէք էրէխեն բերէք, մէ տենամ:
 Բերեցին, տեսաւ էրէխի աջ ձեռը խուփ ա.
 Բերեց զինքը ձեռք տուեց, ինչ զգար արաւ,
 Ջրկրցաւ որ էրէխի ձեռք բանայ.
 Կանչեց ասաւ՝ փահլաւաններ թող դան:
 Եօթ փահլաւան ունէր.
 Եօթն փահլաւաններն էլ էկան,

Մէկ, մէկ կտա տղի ձեռք ճխտին որ բանան, չըկրցան բանան.
 Ասաւ՝ էլ ձեռք մի տուէք, տարէք, գացէք.
 Տարան գնացին էրէխէն.
 Բերեց կլաւ ևն Շունն Մէլիքը.
 Ըտոր թեւին գրեց,
 Թէ՛ Շունն Մէլիք, Դաւիթ քեօ պստի ախպէր,
 Դու ընտոր ճոչ ախպէր,
 Դաւիթ քեզի ծառայ:

Դ.

Մնաց, էնիկ տարան, տուին ուսումարան,
 Դաւիթն էլ տարան դրին ուսումարան:
 Էն ինչ Մէլիքն էր՝ ճոչացաւ, խեղքը բան կըկտրէր.
 Էն ինչ Դաւիթն էր, էրէխայ էր, տղայ էր:
 Մէկ օր Մէլիք Մհէր թաքեաւէր քնել էր.
 Գիշեր մէկն էկաւ կանչեց՝ Մհէ՛ր, Մհէ՛ր.
 Վեր թռաւ ասաւ՝ ո՞րն էք.
 Ծէն չըտուեցին, մէկ էլ քնաւ.
 Էլի կանչեցին՝ Մհէ՛ր, Մհէ՛ր.
 Էլաւ ասաւ՝ ո՞րն էք.
 Էլի ծէն չտուեցին, պառկաւ քնաւ.
 Մէկ էլ քնաւ էլի կանչին՝ Մհէ՛ր, Մհէ՛ր.
 Ասաւ՝ դուք ո՞րն էք.
 Ասին՝ մենք Գաբրիէլ խրէշտակն ինք՝
 Ասին՝ թաղարիք տես, որ խոզիդ պտի առնենք:
 Էլաւ ասաւ՝ ամա՛ն, Գաբրիէլ խրէշտակ,
 Դու ըլնիս քու Աստուած,
 Ընծի մէ քեառասուն օր մօհլաթ տու, շատ մեղք եմ արէ,
 Շատ վիզ գարկուծէն եմ արէ. թաքաւոր եմ,
 Իմ մեղաց դառնամ, էնով էն եան կամքը քեօնն ա.
 Եկ քեօ ամանաթը տար: Մնաց:
 Մինչի քեառասուն օր քասիբի քուսուբի ցրուեց, օղորմութէն
 տուեց.
 Բերեց ուրան մալ, ուրան կին, ուրան թուրն իկէծակէն
 Ղրկեց Դաւիթի քէռիքի տունն ի Սասում.

Քի ուրան այան էր:

էսա Շուն Մէլիք կըլնի թաքեաւէր՝ Դաւթին կըզրկի,
 Թող էնիկ մերն վերցնի գնայ քեռիքի մօտ գլօխը պախի:
 Խիվնդցաւ՝ Գաբրիէլ խրէշտակ էկաւ խօքին աւանդեց:
 Տարան ըտոր վերցեցին, վաքիլ, վազիր տարան խորեցին:

Ե.

Բերեցին Շուն Մէլիք, արին թաքեաւէր՝ դրին թախտ.
 Որ դրին թախտ, էտ շուն Մէլիք թամբխեց Դաւթին խաց տա
 նողներին,
 Թէ՛ Դաւթին որ խաց կըտանէք,
 Միս կըլնի՝ օսկոռ խանէք,
 Ձիր կըլնի՝ կոճ խանէք:
 Մէկ օր ըստրա խաց տանողին քեօրլուղ տուեցին.
 Ասաւ՝ դու կայնի, էսօր Դաւթին խաց տանելու՝ միս կը տա
 նեմ, օսկոռ չեմ խանի.
 Թող ուտի խեղտուի.
 Ձեզիկ կասէ կըսպանէ, որ ընձիկ քեօրլուղ տուեցիք:
 էտա խացը վերցեց,
 Իրիկուն առաւօտ տարաւ տուեց Դաւթին.
 Դաւիթ խաց կերաւ, միս թալաւ ատամներ.
 Տեսաւ, որ միս փլաւ, օսկոռը ատամներ չըկտրաւ,
 Վերցեց զարկեց լուսամուտին,
 Փլեց, շողն ընկաւ գետին.
 Ասաւ՝ էս ի՞նչ ա, որ ընկաւ մէջ իմ օթաղին.
 էլաւ ընկաւ խետ էս շողին, ընկաւ ի գետին.
 էլաւ ընկաւ խետ էս շողին, ընկաւ ի գետին.
 էնէնց էլաւ, որ քրտինք էս եանէն, էն եանէն թափաւ:
 Ըտոր էն վարպետն, որ ըտոր դաս կըտէր,
 Դռնով մտաւ՝ տեսաւ, որ Դաւիթ
 էլնում տփլում ա ի գետին.
 Ասաւ՝ Դաւիթ, քեզիկ դուրբան,
 Ընչի էդ դար կըտփես գետին.
 Ասաւ՝ էսիկ շող մտեր ա իմ օթաղ, չելներ դուս:

Ասաւ՝ մէկ աչքերդ խփիր.

Աչքեր որ խփաւ,

Դասմալով բռնաւ էն շողի ծակ կալաւ, շող կտրաւ:

Ասաւ՝ եա, էս օր առաւտնէ ես չալշմիշ կելնեմ, չեմ կանայ էն
շող խանէ դուս:

Ասաւ՝ ընձնէ զօքբա՞նէյիր, դուն ի՞նչիս խանեցիր դուս:

Ասաւ՝ ղուրբան, հէյրան, էնիկ մարդ չէր,

էնիկ արեւի շողն էր:

Ասաւ՝ բա արեւը որ կայ, բա ընչի՞ էք ընձի նստացրել էս
պատը.

Ասաւ՝ ղու՛րբան, հէ՛յրան, արեւ էլ կայ, օր էլ կայ, գիշեր էլ
կայ:

Ասաւ՝ բա ընչի՞ չէք ընձի խանում դուս.

Ասաւ՝ ղուրբան, կեցի կեթամ թաքեաւէրին ասեմ:

Գնաց ասաւ թաքեաւէրին թէ՛ միս տանող էսպէս միս տարել
ա, օսկոռ չէ խանել.

էն էլ միս կերել ա, օսկոռ թալել լուսմուտ փլել,

Շողը ընկել ա մէջ Դաւթի օթաղին.

էն էլ էլեր տփուեր ա մէջ օթաղին.

Իսիկ գացի չարչարանքից ազատեցի:

Թաքեաւորն ասաւ՝ գնա խան դուս պտցցրու:

Զ.

էկաւ Դաւթի թեւէն բռնեց, խանեց դուս,

Տարաւ քուչով առաւ գնաց.

Ինչ ըռաստ էկաւ խարցրաւ, տաւար, գոմէշ, ձի,

Ըմէն ինչ կրխարցնէր, էսիկ ինչիս ա, էնիկ ինչիս ա.

Վարպետն պատասխան կտէր՝ էսիկ էս ա, էնիկ էն ա:

Քեաղաքից էլան դուս.

Ըրիշկաց տեսաւ, քեաղաքի ծէր մարդիկ կոլոնուած են.

Ասաւ՝ արի էթանք էն տեղ.

Ասաւ՝ ղուրբան, էնի տեղ գատ չի կայ, ար էթանք էս եան.

Ասաւ՝ չէ, ընձիկ տար էն տեղ.

Ասաւ՝ ախր էն տեղ ի՞նչ կայ որ էթանք.

Ասաւ՝ չէ, տանում ես տար, չես տանում, –
 Ասաւ թէ չէ, ձեռք թալաւ վեր վարպետի անկաջ, որ պոկի.
 Վարպետն ասաւ՝ քելի էթանք,
 Տարաւ, գնաց ըտոր մէյդանի գլօխ.
 Տեսաւ, մէկ ջրինդ էկաւ էտոր մօտ, ջրինդ էին թալում.
 Դաւիթ խասաւ էտոր ջրինդ վերցրեց,
 Թալաւ գնաց տաս գեազ ընցցրեց:
 Էն Շուն Մէլիք ըսաւ՝ հա՛յ հա՛յ, էս ո՞ր փահլաւանն էր, որ
 իմ ջրինդ ընցցրաւ:
 Գնացին տեսան, էկան ասին՝ թաքաւէրն ապրած կենայ,
 Դաւիթն է:
 Ասաւ՝ գնացէք, ընդրա գլօխ խօրիմ, գնացէք, ընդոր բերէք,
 գլօխը կտրեմ:
 Վաքիլ, վազիր ընկան թաքեաւէրի ոտ ու ձեռք պաքեցին,
 Թէ՛ թաքեաւէրն ապրած կենայ, էնի էրէխայ ա, էն ի՞նչ ա, որ
 ընդոր գլօխ կտրես:
 Վազիր մէ մարդ ղրկեց վարպետի կուշտ
 Ասաւ՝ քեօ տուն քանդուի, էլ տեղ չկա՞յ, որ բերես, առ գնա՛
 ուրիշ եան պըտըցցրու:
 Վարպետ վերցրեց գնաց,
 Տարաւ ընդոր ուրան մանկզիլ.
 Էլի տարաւ ուրան օթաղ.
 Գիշեր էկաւ վրէն:
 Գիշեր Դաւիթ քունը չը տանէր,
 Քի ե՞րբ կըլնի լուս բացուի:
 Լուս բացուաւ, ըսաւ՝ վերի, էթանք.
 Էլաւ, վերցեց էլի քուչով գնաց.
 Տարաւ խանեց քեաղքից դուս,
 Էլ էն եան չըտարեց.
 Բռնեց ասաւ՝ ու՞ր ա երեկուայ տեղ:
 Ասաւ՝ դուրբան, էլ մարդ չը կայ, որ քեզիկ տանիմ էնտեղ:
 Բռնեց անկաջ, ասաւ՝ չէ՛, իլլահ տար ընծիկ էրեկուայ տեղ:
 Տարաւ, գնաց տեսաւ մարդիկ կոլոնուեր են, էլի ջրինդ կը
 խաղին.

էլի ջրինդ թալեցին.

էտի ջրինդ վերցեց, որ վերցեց թալեց՝

էն վախտ տասը գեազ ընցցրեց, մկա արաւ քսան գեազ:

Մէլիքն ասաւ՝ հա՛յ, մի տեսէք, էս ո՞ր փահլեվան էր,

էս ո՞ր իմ գուշման էր, էկաւ իմ ջրինդի դէմ:

Գնացին տեսան, էկան թաքեաւէրին ասին,

Թէ՛ թաքեաւէրն ապրած կենայ, Դաւիթն ա:

էլի ասաւ՝ գնաց՛էք բէրէ՛ք, գլօխը կտրեմ:

Վաքիլ, վազիր ընկան ձեռք-ոտ,

Ձթողկին, որ գլօխ կտրէր:

էկան վարպետին ասին, թէ՛ քու տունն չաւրուի, էլ մի՛ բեր էս-տեղ:

Վարպետն ասաւ՝ ձեր տունն չը քեանդուի, մայեար իմ խօշո՞վն եմ բերում,

Բռնում ա անկշէս քաշում,

Ջօռով ա բերել տալիս:

Ասին՝ ա՛ն գնա, ա՛ն գնա, ա՛ն գնա:

Բերեց էլի ուրան օթաղը, ուր մանգիլը:

Մնաց, էլի գիշերն էկաւ վրէն.

էլի գիշեր էղաւ, քունն չըտարեց.

Թէ ե՞րբ կընլի լուս կըբացուի:

Լուս բացուաւ վրէն, ասաւ՝ վե՛ր էթանք.

էլաւ վերցեց ուրիշ եան տարաւ:

Վարպետին հարցեց թէ՛ ու՞ր ա էրեկուան տեղ:

Վարպետն վերցեց թէ՛ ըմենն օր խօ չե՞ն կոլոնուե, խօ չե՞ն խաղայ:

Վերցեց՝ թէ չէ, հելէ էթանք էրեկուան տեղ:

էլի զօռ տուեց վարպետին.

Վարպետ տեսաւ, որ չտանի՝ կըսպանի, էլի տարաւ էն տեղ.

Տեսաւ, որ մարդիկ էլի կոլոնուեք են, կը խաղան:

էլի ջրինդ էկաւ,

Խասաւ էտա ջրինդ բռնեց թալեց,

Որ թալեց, երսուն գեազ ընցցրեց.

Ըմենն թալելուց տաս գեազ կընցցնէր.

Էլի Շուն Մէլիք մարդ զրկեց,
 Թէ՛ տեսէք Հա՛յ բիգադ, էս ո՞րն ա, որ իմ ջրինդ անցցրեց:
 Էկան տեսան, դարձին գացին,
 Թէ՛ թաքեաւէրն ապրած կենայ, էլի Դաւիթն էր:
 Ասաւ՝ վաքիլ, վազիր, դուք չէք թողկէր, որ վիզ կտրեմ,
 Գացէք բերէք Դաւիթ:
 Գացին Դաւիթ բերեցին էկան.
 Տեսան, որ Դաւիթ մէ պտտի էրէխայ էր.
 Ասաւ՝ ջանլաթ կանչէք, որ գայ ըսոր վիզը զարկէ:
 Վաքիլ, վազիր դաշամիչ էլան,
 Էտոր ձեռք-ոտք ընկան ասին.
 – Թաքեաւէրն ապրած կենայ, ի՞նչ կանես.
 Էտիկ էրէխայ է,
 Էտոր խելք բան չի կտրէ, էտիկ ի՞նչ ա, որ էտոր վիզ կտրես:
 Ասաւ՝ էտիկ էրէխայ է, որ էտիկ հօքմ կը բանցնի,
 Էտիկ որ մեծնայ, ի՛նչխ կըլնի, աշխարք կաւրի:
 Ասաւ՝ չէ՛, էտոր վիզ պտտի զարկեմ,
 Էտիկ որ մեծցաւ, աշխարք կաւրի:
 Ասին՝ թաքեաւէրն ապրած կենայ, բեր մէ բան արա.
 Բեր մէ բօլմի մէջ չամիչ լցիր,
 Մէ բօլմի մէջ կրակ լցիր,
 Բեր դիր դէմը, այս որ ձեռք պարզեց չամչին՝
 Գիտցիր, որ խելք կըկտրի, վիզ զարկիր, դուն գիտես.
 Այս չի, որ ձեռք պարզեց կրակին՝ գիտցիր,
 Որ էրէխայ է, խելք չի կտրեր, ազատ արա, որ էթայ:
 Բերեցին, մէ բօլմի մէջ՝ չամիչ,
 Մէ բօլմի մէջ կրակ լցրին, դրեցին դէմ Դաւիթին:
 Դաւիթ ձեռք պարզեց թեղ չամիչ,
 Աստծու խրամանքով խրեչտակ ձեռք վերցեց դրաւ կրակին.
 Ձեռք որ ճխտեց կրակի մէջ, ձեռք էրվաւ,
 Որ ձեռք էրվաւ՝ ճխտեց բերան, լացեց,
 Որ լացաւ՝ վաքիլ, վազիր կայնան,
 Թէ՛ թաքեաւէրն ապրած կենայ, տեսա՞ր,
 Որ էտիկ էրէխայ ա, խելքը չի կտրոււմ,

էսիկ ի՞նչ ա, որ գլօխը զարկես:
 Ասաւ՝ դէ՛, վերցէ՛ք, գացէ՛ք,
 Բաշխեցի ձեզի. տարէ՛ք, գացէ՛ք:
 Առան, գացին:

է.

էն վախտն էլ լաւ մէր կէր,
 Գացին մօր խաբար տուին՝
 Քի քո տղէն կը սպանէր Մէլիք,
 Վաքիլ, վազիր ազատեցին.
 Կանաս մէկ ճար արա,
 Չես կանայ, քեօ տղէն կը սպանին:
 Մէրն էլաւ գիշեր վերցեց տղուն,
 Թէ՛ կեթամ իմ խօր տուն:
 Վերցեց գիշեր գնաց ուր խօր տուն:
 Գնաց, լուս որ բացուաւ,
 Խաբար տուեցին Մէլիքին,
 Թէ՛ ի՞նչ կասիս, Դաւթի մէր վրցաւ իրա տղէն, գնաց ուր խօր
 տուն:
 Կանչեց, խինգ խատ լաւ փահլաւան ղրկեց
 Թէ՛ կեթաք, Դաւթի գլօխ կբերէք:
 Փահլաւաններն էլ գնացին տեսան՝ ճամբխի վրէն մէ կար-
 մունջ կէր.
 Տեսան, Դաւթ մօր խէտ խէսի կըկեայ,
 Տեսան, նստան վեր կարմունջին.
 Որ նստան վեր կարմունջին,
 էսոնք կանչեցին մօր.
 Ասին՝ արի՛, արի՛, Աստուած քեօ տուն քեանդի,
 Լաւ օյին խանեցիր մեր գլօխ:
 Ասին՝ էնտեղ էլ չէր վաքիլ, վազիր,
 Աղսաղկալ, գարասաղկալ կը ժողովրդէին,
 Իլթմաս կանէին կը պրծցնէին,
 Որ բերեցիր եկար,
 էկել ենք, որ Դաւթի գլօխ տանենք:

էսէնց ասելու ժամանակ, մօր կուգում կոտրաւ ընկաւ.
 Դաւիթն էլ քեարի խետ կը խաղէր, փէտի խէտ կը խաղէր,
 էկաւ խասաւ մօր, ասաւ՝ մէրիկ, դէ քէլի էթանք:
 Ասաւ՝ որդի, ու՞ր էթանք: Ասաւ՝ ընչի՞:
 Ասաւ՝ տենու՞մ ես էտա զալու՞մներ, էկեր են, որ քեօ գլուխ
 տանեն:
 Ասաւ՝ վե՛ր էթանք, մէրիկ, վե՛ր էթանք,
 էտոնք նաքարա են, որ իմ գլօխ տանեն,
 իմ գլօխ տանող հալա մօր փորից չէլէ, վե՛ր էթանք:
 Մէր տեսաւ չէ՛ էսիկ՝ էրէխայ, էնոնք՝ փահլաւաններ,
 Մօր կուտում կտրուկ նստուկ էր:
 էսիկ որքան արաւ, մէր չէլաւ վեր.
 Դաւիթ տեսաւ, որ մեր չէլաւ վեր,
 Ինքը առէչ ընցաւ, գնաց փահլէվաններին բռնաց.
 Ասաւ՝ փահլէվաններ, իս ձեր թաքեաւէրի խազնէ՞ն իմ բերի,
 դափնէ՞ն իմ բերի.
 Ասաւ՝ ձեր թաքեաւէրի թաքեաւէրութե՞նն եմ դաւա արեր,
 Որ ղրկեր ա իտեւ իմ գլխին,
 Վերցել եմ իմ մէր, կեթամ իմ քեռիքի տուն.
 Ի՞նչ ա տուել ընծիկ, որ չի կանա առնէ:
 Ասին՝ մեք ի՛նչ գիտինք, թաքեաւէրը մեզի ղրկեր ա քեօ
 գլխին՝ մեք ալ էկանք:
 Ասաւ՝ մկա դուք էկիրէք իմ գլօ՞խ տանէ՛ք:
 Ասին՝ խա՛:
 Թեւեր քշտեց Դաւիթ,
 Կանչեց՝ եա՛ խաց գինի, Տէր կենդանի, Մարութա պանցր Աս-
 տուածածին,
 Որ բազմացաւ վեր մեր թեւին:
 Խասաւ էտա փահլէվաններին, չորսն կապեց իրար, կախեց
 կարմունջէն,
 էն մէկին էլ անկաջ քաշեց, դուս մէկ էլ մէ ատամը,
 Բռնեց դրեց վեր ճակտին, կօմփով զարկեց՝ փարչիմ արեց.
 Ասաւ՝ դէ գնա քեօ թաքեաւէրին խաբար տուր.
 Զեռնէն ինչ կրկեայ, թող ասիրկամիչ չանի:

Մեր որ տեսաւ հտէնց ա,
 էլաւ գնաց ձեռք ձգեց տղի վիզ, ճակատը պաքեց.
 Ասից՝ Դաւիթ, ես չեմի գիտէր էտանկ հունար կէր քեօ մօտ:
 Ասաւ՝ մէրիկ, վեր էթանք, իմ գլօխ տանող հալամ մօր փորէն
 չէլիբ:

Ը.

Քելէ էթանք:
 էտօնք գնացին խասան Սասում.
 Մէ մարդի իմաց տուին,
 Թէ՛ գնա՛ իմ ախպերներին մուշտուլուղ տար, թէ՛ քեօ քիրն
 էկաւ:
 էտոր ախպերներն էլան վեր.
 էտոնք էլ Սասումա տէրերն էին,
 էտոնք էլ վերցեցին իրանց մարդիկ,
 էկան էտոնց տարան իրանց տուն:
 Ըստոնց քէռիքն մէկ ըսաւ՝ լաւ է, գառնարած չունինք,
 Դաւիթ կը գնենք գեառների դէմ:
 էտոնք էլ իրեք աղբէր էին.
 Ըստոնց անուններն՝
 Մէկինը՝ Ծէնով Յովան, մէկինը՝ Թեւաթորոս,
 Մէկեալինը՝ Յոան Վէղկէն:
 Բերին գեառները արին Դաւիթի դէմ, տարաւ արածցնի:
 Դաւիթն էր գեառներ կարածցներ,
 Տեսաւ, որ մէ լապստրակ գեառներու մէջէն դուս էլաւ փա-
 խաւ.
 Ասաւ՝ վա՛յ, բալուսու ուլ փախաւ:
 Ընկաւ իտեւ, կոռեց, բերեց ճխտեց մէջ գեառներին.
 էտի որ եան փախաւ, կոռեց ճխտեց մէջ գեառներին,
 Գեառները տուեց դէմ բերեց, կոխեց քիւմ.
 Խաց, որ կապեր էին մէջք գաստախանով,
 Բերեց թալեց տուն, պառկաւ վեր քեամկին:
 Քեռին՝ Ծէնով Յովան, էկաւ տեսաւ,
 Խաց, ինչ որ կապեր էին, ըսկի չի կերէ,

Ասաւ՝ Դաւիթ, զու՛րբան, խացը ընչի՞ չիս կերէ:
 Ասաւ՝ քէռի, ձեզի մէ բալասու ուլ կէր,
 Չթողկեց, որ ես դադրիմ խաց ուտեմ,
 Անջախ բերիմ շարիմ քիւմ:
 Ասաւ՝ Դաւիթ, զո՛ւրբան, մեզի բալուսու ուլ չունինք:
 Ասաւ՝ չէ, քէռի տու խաբար չես.
 Մկա ոչխար կըզայ, կը թողկեմ՝ կը տենաս:
 Մնաց. ոչխարն էկաւ կթեցին,
 Գեառներ թողկեց.
 Ասաւ՝ քեռի, կայնի ես գեառներ թողկեմ, բալուսու ուլ
 չփախչէ դիւս:
 Գեառներ որ թողկեց մօրերին,
 Լապստրակ թռաւ ոչխարի մէջէն էլաւ փախաւ,
 Դաւիթ էլաւ իտեւ.
 Քեռին տեսաւ՝ Դաւթի ոտքերու տկէն կրակ է թռնում.
 Կանչեց, ասաց՝ արի, այարի,
 Թող էթայ, մէզիկ պէտք չէ, էն ուլ թող էթայ:
 Ասաւ՝ տեսա՛ր, քէռի, որ կասէի հէսիյ մին բալուսու (ականջ-
 ները սրած) ուլ կէր, դու չէիր հաւտում:
 Ասաց՝ զուրբան, էնիկ ուլ չէ,
 Էնիկ սարի ջանաւար ա, լապստրակ ա, թող էթայ:
 Քեռին ասաց՝ էսօր բան չէ գեառնարածութէն,
 Էսօր խօր գեօրծ տանք էսօր ձեռք,
 Խոր նետ-անեղ տուր, թող էթայ պտտի:
 Բերեցին տուեցին խօր նետ-անեղ, թէ՛ գնա՛, սարեր պտտիր,
 իրիկուն եկ տուն.
 Դաւիթն էլ կեթար կը պտտէր,
 Իրիկնագէմ կէէր քեաղքին ճօերի խէտ ճան կը խաղէր,
 Արեւ որ կը մտնէր, կը թողկէր կեթար տուն:
 Էսիկ էստեղ մնայ, կեանք էն փահլաւաններից ասենք, որ
 խաբար զրկեց Շուն Մէլիքին:

Թ.

Մէլիքն ըրիշկաց տեսաւ, որ փահլէվաններէն մին ճակտին մի
բան ցցած էկաւ,

էկաւ տեսաւ՝ իւր փահլաւան ա,

Ատամը ճակտին ցցած, անկաջ պոկած.

Ասաց՝ էտ ի՞նչ բան ա:

Ասաց՝ էսիկ Դաւիթն ա, էս օյին խանեց մեր գլօխ:

Ասաց՝ տեսա՞ք, վաքիլ, վազիր, չը թողկէք, որ էնոր գլօխ
կտրեմ,

էլ էն զաւթի՞ կրկեայ, պրծա՛ւ գնաց:

Վաքիլ, վազիր ասին՝ թաքեաւէրն ապրած կենայ,

էնիկ քեօ խազինէն, դափինէն չի տարէ,

Քեզիկ մէ վնաս չի տուէ. գացեր է իր քեռիքի քով,

Քեզիկ ի՞նչ ա արել, որ գլօխը զարկես:

Ասաց՝ չի՛լնի, պիտի մարդ խրկեմ, որ էնոր գլօխ բերէն:

էլաւ մէ փահլաւան խրկեց,

էսիկ փահլաւան տասն խինգ գեազ էրկէն էր.

Ասաց՝ գնա ընդոր քէռիքին ասա՛

Կամ Դաւթին գլօխը տան,

Կամ քեառսուն կոլս աղջիկ դրկին Մսրը:

Ձէնի տայ, ասա՛ Սասումա խողը ջորը, ձիան տոպրակով կը
քաշեմ կրբերեմ Մսրը:

Ասաց՝ հմէնը կաւիրեմ:

էտա փահլաւանն էլ ընկաւ ճանպախ, գնաց Սասում:

Խաբար տուեցին քեռիքին, թէ՛ Մսրա Մէլիք մէ փահլաւան ա
խրկէ, ձեզի կը կանչէ:

Սասումա տէրեր տնէն տիւս ելան,

Փահլաւանն ասաց՝ Թեւաւ Թորոս, Մէնով Յովան,

Թաքեաւէրը կասէ՛ կամ Դաւթի գլօխ տուէք կամ քեառսուն
կոլս աղջիկ:

էտոնք գլօխ քաշեցին, դարձան էկան տուն.

Ասին՝ չելած բան է, մենք ի՞նչիւ կը տանք Դաւթի գլօխ.

Լաւն է քեառսուն աղջիկ ժողվրտենք տանք, Դաւթի գլօխ
չեթայ:

Մարդ դրեցին, ընկան տներ աղջիկներ ժողվան,
 Բերեցին կոխեցին մէ տուն,
 Մէ զարաւուլ տրեցին վրէն:
 Մէ խեղճ պառուի գինքն էր մէ աղջիկ,
 էն էլ ին բերէ, վեր աղջկեր տանին էթան:
 Իրիկուն էր. Դաւիթ սարէն իջաւ վեր քեաղաքին.
 էկաւ տեսաւ ի՛նչ, ինչ որ քեաղաքին վրէն խող կը մաղես.
 Ամէն օր, որ կըկէր, կը տեսներ՝ ասել, ծիծղալ, ուրախութէն,
 էս օր որ էկաւ, տեսաւ, որ քեաղաք ինչ լալ, կօռալ, մէր
 մանուկ ուրացել.
 Տեսաւ մէկ պառաւ, ձեռները դրած ծոցը կըլա,
 Կըմոմոայ, կէթայ, կը կեայ, կասէ.
 – Աւեր-աւերուիս,
 Սասում, մէկ աղջիկ ունի, էն լ գնաւ Մարայ ետիր:
 էտի ծէն ընկաւ Դաւիթի անկաջ,
 Դաւիթն էկաւ, ասաց՝ պառաւ, էտ ի՞նչխ ա,
 էտ ի՞նչ խաբար ա:
 Ասաց՝ դու չե՞ս գիտէր:
 – Չէ վալլահ, ետիկ բխաբար եմ:
 Ասաց, թէ՛ Մարայ Մէլիք մէ փահլաւան ա ղրկէր կուշտ քեօ
 քէուիքի,
 Եա Դաւիթի գլօխ, եա քեառսուն դանա կուս աղջիկ կուզի.
 Ասաց՝ քեօ քէուիքն քեօ գլօխ չը տուին,
 էն ապով քեառսուն աղջիկ ին ժողվէ,
 Իմ մինուճար աղջիկն էլ խէտ,
 Որ ես էի մէ հատիկ աղջիկ, առեր դացեր են, էն ապով կուլամ
 կը մղկտամ:
 Ասաց՝ ո՞ր տեղ են, պառաւ, ինձի նշանց տու.
 Ասաց՝ ես չեմ գանա գալ, վեր դուան մարդ են դրած, ինձիկ
 կըսպանեն:
 Ասաց՝ արի էթանք, զատանց դու նշանց տուր դարձիր:
 Գնացին տեսան. գնաց Դաւիթ, զարկեց դուռ կոտրեց.
 Ասաց՝ քուրեր, եկէք գնացէք ձեր տներ:

Կանչեց պառուին՝ պառիկ, արի տես, աղջիկդ կըճանչնաս,
առ, գնա քեօ տուն:

Էսիկ խաբար արեցին Դաւիթի քէռիքանց,
Թէ Դաւիթ դուռ կոտրեց աղջիկներ ցվրտեց.
Գնաց տուն, Դաւիթ տեսաւ՝ քէռիք ծռուել լալում են.
Ասաւ՝ քէ՛ռիք, ձեր տուն աւրի, ընչի՞ էք ծռուել լալիս,
Ես մէ մարդ եմ, իմիկ գլօխ կը տամ,
Քեառսուն կուս աղջկայ նամուս չէմի տայ,
Մէկիկ գլխի փոխնակ՝ քեառսուն գլօխ չէմի տայ:
Թողկեց գնաց, ջուղաբ տարան Մէլիքին,
Քի՛ քէռիքն ըսենց ժողուին, Դաւիթն ըսենց ցրուեց,
Ասաց՝ թող Մէլիքի ձեռքով ինչխ կըկեայ, ասրկեամիչ չանի:

Ժ.

Դաւիթը թողկեց գնաց սար՝ պտտելու.
Սարում մէ պառուի մէ կորի արտ կէր,
Մէջը լոր, ճնճուղ կը զարկեր,
Մէջ էտ արտին էնքան տրորեց,
Որ վար հողին հաւսըրեց էտիկ արտ:
Էտիկ արտատէր պառաւ եօթն աղջկանց տէր.
Եօթ էնքանն էլ տուած էր մարդի,
Եօթ էնքանն էլ որբեվերցեր են, էկել ին վեր մօր մօտ.
Մէրն ասաց՝ ա՛ղջիկներ, վե՛րէք էթանք,
Տենանք մեր կորէկ խասե՞ր ա, փիտենք բերէնք, կեանք:
Գնացին տեսան՝ ինչխ արտ, Դաւիթ կորէկ արեր ա խողին
խաւսար:

Պառաւ կանչեց ասաց՝ Դաւիթ, քեցիկ ի՞նչ ասեմ,
Լանդբաղ թաքեաւէրի նետանեղ քեօ սիրտ ըլնի,
Դու որ էս օյին խանիր մեր գլօխ.
Եօթ աղջկայ աչք, ումուտ էսա կորէկն էր:
Դաւիթն ասաց՝ պա՛ռաւ, Աստուած քեօ տունը քեանդի,
Քեօ բերան կոտրի, ինձի ընչի՞ անիծեցիր,
Արի՛, էս տեղ արի՛, ըս տեղ: Պառաւը մօտցաւ:
Դաւիթ ձեռք կոխեց ջեբ, մէ առաջ փող տուեց պառուին,

Ասաց՝ տար խացի տուր, ապրիր:
 Պառաւն ասաց՝ զուրբան, հէ՛յրան, էսիկ տեղ ինչ կայ, որ քէ-
 ուրքիդ մօտ կը մնաս էս սարեր.
 Գնա՛ կնա սար՝ քեօ խօր աւլաղ,
 Ավ կայ, ջին ջանաւար կայ, զարկիր սպանիր,
 Տեղեր տես, մարդեր տես, մարդ եղիր:
 Դաւիթ թող մնայ ուր խօր աւլատուն:

ԺԱ.

Գանք էն փահլաւանին, որ գնաց Մսրայ Մէլիքին խաբար
 արեց Դաւթի աղջիկներ ցվրտելը,
 Մէլիքին պակասաւոր խաբար խաւրելը...
 Էն փահլաւան, որ գնաց Մէլիքի մօտ, խաբարն ասեց,
 Հասկցուց Դաւթի գործ.
 Մէլիք կանչեց վաքիլ, վազիր,
 Զառ կանչեցին, որ զոչուն խաւքեն էթան վեր Սասումա.
 Մսրա Մէլիքի մէր քնել էր, էրագում տեսաւ մէ ճոչ աստղ
 Մսրա էլաւ,
 Մէ պստի աստղ էլ Սասումա էլաւ. էկան դբան իրար.
 Տեսաւ, որ էն պստի աստղը ճոչ աստղին ալթ արաւ:
 Մէրը օյանմիչ էլաւ, կանչեց Մէլիքին ասաց՝ որդի,
 Թէ դու ընծիկ անկաջ կը դնես, զօչունի թարկը տուր,
 Մի՛ գնա Սասում, կուիւ խէր չէլէ...
 Մէլիքն ասաց՝ չէ՛, մէրիկ, կեթամ.
 Ասաց՝ թէ դու զիմ ծծի կաթին անկաջ կանես՝ չե՛ս էթայ:
 Սասում զինք պստիկ ա՛՛ ամմա հօքմը շատ ա:
 Մէլիք վերցեց ասեց՝ մէրիկ, խազար-խազար լաք կը ժողուիմ,
 Որ բեխերի տեղ նոր կը մրայ:
 Մէրն էլի՛ որդի, դու եթէ իմ ծծի կաթին թաղաթ կէնես՝ չեսի
 էթայ:
 Էլ դարձաւ մօրն ասաց.
 – Մէ՛րիկ, խազար-խազար լեաք կը ժողուեմ, որ բեխերն կոլո-
 րայ:

Մէջըն ասաց՝ որդի, իմ ծծի կաթ քեզիկ խարամ կանեմ, մի գնա՛:

Տղէն ասաց՝ մէրիկ, խազար-խազար մարդ կը ժողուեմ, որ թուխ մօրուս կըլլայ:

Տղէն մօր անկաջ չարեց, ժողուեց ղօշուն թավիլ արեց, երիմիշ էլաւ դէպի Սասուն:

Գնաց Սասնա մօտ օրդուն զարկեց,
Խաբար ղրկեց քեռիքին, թէ՛ կռիւներս կռիւ աս.

Ես Դաւթի գլօխ տուէք, ես կռիւներս կռիւ աս,

Սասուն պտի աւրեմ:

Քեռիքն էլան իրանց վաքիլ, վազիր ժողվրտան, մասլահաթ արին.

Դաւիթ տուեց սարից իջաւ,

Տեսաւ, որ քեաղաք մենմենաւ է ընկել, մէր մանուկ ուրացեր.

Խարցրեց՝ թէ ջանմ էս ի՞նչ բաս աս, էս ի՞նչ խաբար աս.

Ասացին, թէ՛ չըգիտե՞ս, Մսրայ Մէլիք ղոշունով եկել աս, որ կամ

քեօ գլօխ տանի կամ քէռիքիդ քեաղաքն աւրի դափ անի:

Դաւիթ գնաց քեռիքի կուշտ,

Տեսաւ, որ քէռիք, մռութնին կախած, մալիւր միւշկիւն նստած են.

Ասաց՝ քեռիք, ինչու՞ էք մռութ մալուր.

Մէ մարդի ապով մէ քեաղաք կը տան կաւրե՞ն,

Ընձիկ մէ ձի տուէք, ես էթամ, թող իմ գլօխ տանեն:

Քէռիքն ասին՝ ո՛րդի, ել գնա թովէն ըրշկիր,

Որ մէ ձին կը խաւնէս՝ առ գնա:

Դաւիթն գնաց թովէն, որ մէ ձին ձեռք դրաւ մէջքին, փոր դբաւ գետնին.

Վերջ էկաւ թառի տակ, որ մէ քուռակ կապեր էին,

Ձեռք դրաւ վեր մէջքին,

Մէ ջուխտ թափուկ զարկեց Դաւթի վեր դօշին,

Դաւիթ ուշաթափ ընկաւ գետին,

Մէքիչ ջուր թալեցին, Դաւիթ օյանմիշ էլաւ,

Ասաց՝ մէհտար, էսիկ քուռակ քաշիր դուրս:

Քաշեցին տարան, գնացին գետի մէջ.
 Դաւիթ թեւերը քշտեց, սկսեց քուռակ լուալ.
 Էտա քուռակ թամիզ լուաց, մէհտարին ասաց`
 Քեաշիր էթանք: Էլան էկան.
 Գետնէն որ էլաւ, ըրչկաց, որ վեր իր թեւին գիր,
 Տեսաւ, որ ուր մալ իսլահ ղրկեր էր քէռիքին ի պահ,
 Մէ առ մէ գրել էր վեր թեւին:
 Գնաց ասաց քեռիքին` բերէք իմ խորմալ իսլահ ինձ տուէք.
 Բերէք իմ խոր լբաս, բէրէք իմ խոր եարաղ, ասպաբ:
 Էկան բերեցին էտոր խոր եարաղ, ասպաբ, լբաս.
 Տուէցին, զարկեց ձիան մէջք, խէծաւ գնաց թեխ ղօշուն:
 Քէռիք տեսան, որ Դաւիթ գնաց,
 Ծէնով Յովանն էլ մէ ծառ պոկեց ղրեց վեր թեւին,
 Ընկաւ ետեւ Դաւիթին:
 Դաւիթ գնաց կայնաւ մէ գետի ափ.
 Տեսաւ, որ էն մի եանէն մէ պստի աղբիւր կէր,
 Աղբրի ջուր կէր, մեծ գետի ջուր կը կտրէր,
 Կանցնէր էս ղրաղ ու կըխառնուէր ի մէջ գետի ջրին.
 Դաւիթ կանչեց` ես` երկինք գետինք ստեղծող Աստուած,
 Ինչխ դու էտա աղբրի ջրին ղուաթ տուիրես, էսա գե-
 տէն կը կտրէ կանցնէ,
 Ընձիկ էլ ղուաթ տաս, Մսրայ Մէլիքի ղօշուն կտրեմ կընց-
 նեմ:
 Ասեց ու քշեց ձին, գետ ընցուց էն եան, աղբրի մօտ իջաւ.
 Քեռին էկաւ ձին բռնեց, տարեց խորիկեց.
 Խաց կերան, աղբրի ջրից մէ ղիլ խմեց, պառկաւ քնեցին:
 Դաւիթ տեսաւ, որ քնած տեղ սիրտն ուզում է պատուի,
 Գօտրկն արծկեց, քեօլօզ թալեց, ոտնամաններ ձգեց, քիչ մէ
 քնաւ,
 Զարթեց տեսաւ, որ ուր ձին էլ ուզում տուաքի,
 Գնաց ձիու գօլանն արցկեց,
 Նոր ի նոր քեռին էլաւ գօլանն շքեց,
 Դաւիթն էլ ուրան շորեր խաքեաւ, խեծաւ ձին,
 Քշեց թեխ տեղ ղօշուն.

Քէռին էլ իտեւէն ոտկոխուկ կէթար,
 Ըրչկաց տեսաւ, որ զօշուն շատ շատ է,
 էն մէ եանէն մէ խալուոր կըգէր,
 Ասաց՝ խալուոր, ի՞նչ կըսես, կանա՞մ էն զօշուն ցվրել:
 Խալուորն ասաց՝ քեօ տուն չաւրի, երկնքէն կրակ թափի, չի
 կանայ զօշուն ցվրել, դու կանա՞ս:
 Դաւիթն ասաց՝ քեաշվի դէն, խալուոր, քեաշվի, ձիան բերնի
 կրակ քեզի կերիցի:
 Քչեց գնաց զօշունի վրէն, թուրը խանեց, ընկաւ վեր զօշունի.
 Փրթեց ջարթեց զօշունին, քէռին էլ մէ եանէն կը կոտորէր,
 Խաբար արեցին Մէլիքին,
 Թէ՛ Մէլիք, Դաւիթ զօշնի կէս կոտորեց, փրթեց.
 Ասաց՝ գնացեք ասէք Դաւիթին,
 Թէ զօշունի խետ լաղա չունի, ասէք գայ ընծի խետ կռուի:
 Որ էկան ասին, Դաւիթ ձին քչեց թեխ Մէլիք.
 Մէլիք բողաց ասաց՝ արի, արի՛ քեօ կօտ խորեմ,
 Ի՞նչ լաղա ունէս խետ զօշունին, արի ես ու դու կռուենք:
 Դաւիթ ասաց՝ լաւ, կռուենք, ամմա կը վխնամ մուխանա-
 թութէն անես,
 էրթում կէր, որ չանես: էրթուեց:
 Որ էրթում կերաւ, ձիուց իջաւ, գացաւ նստաւ մօտ Մէլիքին.
 Սկսան խօսալ, Դաւիթ բաշլայեց.
 Ասաց՝ Մէլիք, ես քեօ ի՞նչն եմ տարել, որ ընծմէ ձեռք չես
 քեաշի.
 Ես քեօ թաքեաւէրութէ՞նն եմ ձեռքէդ առէ,
 Քեօ մալ ու խաղնէ՞ն եմ առէ տարէ:
 Մէլիքն ասաց՝ Հա՛, Հա՛, Հա՛, քեօ կօտ խորեմ, դու էլ գաւ-
 թի՞ կը կեսս.
 Ասաց՝ Մէլիք քեզիկ մէ կտրական ասիմ.
 Եսիկ պառկեմ, քեառասուն ջամգաք բեր դիր վեր ընծիկ,
 գարկ թրով,
 Այա սպանի՛ր, խօ սպանիր, այա չէ, դու պառկի, ես գարկեմ:
 Մէլիքն ասաց՝ էս լաւ էղաւ, էսիկ իրան-իրան պառկաւ, կը
 գարկեմ կը սպանեմ:

Դաւիթ պառկաւ, քեառասուն մարդի լէշ ջամդաք բերին
դրին վեր մէջքին.

Մէլիք զարկեց, եռեսուն մարդ կտրեց՝ տանումէկ մնաց.

Դաւիթ թռաւ կայնաւ ասաց՝ Մէլիք, նօբաթո՞վ ա, թէ՞ զօռով:

Ասացին՝ նօբաթով ա:

Ասաց՝ դէ դու պառկի, ես զարկեմ:

Քեառասուն մարդ էլ դրեցին վեր Մէլիքի մէջքին.

Դաւիթ մօտցաւ կայնաւ,

թուրը քեաշեց կանչեց՝

Եա՛ խաց գինի Տէր կենդանի,

Եա՛ Մարութայ բանցր Աստուածածին, որ բազմացաւ վեր մէջ
թեւին.

Կանչեց ու զարկեց թուր.

Որ զարկեց, մէ գեազ էլ գետնից կտրեց,

Մէլիքի վազիրներ թալեցին իրանց Դաւթի ոտների տակ.

Ասացին՝ Դաւիթ, վեր՝ Աստուած, ներքեւ՝ դուն, մեզիկ չը կո-
տորես:

Դաւիթն ասաց՝ ես իմիկ ռայեաթ չիմի կոտորի:

Բերեցին Մէլիքին շորեր խանեցին, որ տանեն խորեն,

Տեսան վեր թեւին գիր կայ.

Ըրչկաց՝ տեսաւ՝ խէր գիր է գրէ.

Էսիկ՝ Դաւթի ճոչ ախպէր, Դաւիթ՝ էսոր պստի ախպէր.

Գիր որ կարգաւ Դաւիթ, մէ քիչ լացաւ.

Վաքիլ, վազիր ժողվրտան, սիրտ տուին,

Ասացին՝ Դաւիթ, մենք էլ չէինք գիտէր:

Դաւիթ զօշունը տուեց վաքիլ-վազիրներուն, ասաց՝

Առէք գացէք Մսրը, մինչի ես դառնամ կեամ:

Դաւիթ դարձաւ Սասում, վերցեց մօր,

Քեռիքից Ծէնով Յովանի խէտ գնաց Մսր:

ՏՂԱՅ ԴԱԻԹԻ ԵՒ ԱՂՋԻԿ ԽԱՆԴՈՒԹԻ
ՀԷՔԻԱԹԸ

ԺԲ.

Գնաց Մսրը նստաւ, թաքեաւորութիւն արաւ,
Դաւթին թարիֆ գովք ըմէնու ականջ հսաւ,
Խաբարն հսաւ Քիլիսէ Խանդութ Խանումին,
Քի մէ հսէնց թաքեաւոր՝ հսէնց զօրբա, հսէնց գօչաղ,
Հսէնց խորոտ աշխարքիս մէջ չի եղերէ:
Խանդութ խանում ասաւ՝ ես ինչ անեմ,
Որ անոր պատկեր տեսնեմ, անոր բոյ-բուսաթ թամաշայ
անեմ:
Ես չեմ գանա, զինք էլ չի գայ, ահգ ու դիւակ եմ արէ,
Որ իմ բարերար մէ մարդ ճարեմ, առնեմ ինձիկ.
Հսիկ ինձի բարերար կըլի:
Կանչեց մէ աշուղի, ասաց՝ աշուղ, արի գնայ Մսրը,
Ինձիկ գովայ Դաւթի կուշտ. քեզիկ էս զգամ փող կըտամ,
Քելէ գովայ, բալքի էնիկ առնես կեաս:
Աշուղ վեր էլաւ, սագ թալեց թև, կապեց յուս, էլաւ ընկաւ
ճանպախ,
Օխտն օր, գիշեր-ցերեկ դամ արեց,
Խանդութ խանում գովաց, թարիփ արեց.
Դաւիթ վերցեց ասեց՝ աշըղ, էդ ի՞նչ զօրբա աղջիկ է,
Որ օխտն օր, օխտը գիշեր կը գովաս.
Աշըղ վերցեց ասաց՝ Դաւիթ թագաւոր, էսիկ աղջիկ
Շատ սիրուն, շատ գովական, շատ զօրբա աղջիկ է,
Եւ քեզիկ լայեաղ է, շատ աղէկ կըլի, որ մին երթաս
տեսնաս:
Աշըղը ասաց՝ ըմէն եանէն մարդ կուկեայ,
էնոր տեսուն թամաշա կենէ կերթայ.
Ինդի եսիկ կերթամ, թաքւորն ապրած կենայ,
Կուկեաս՝ լաւ, չէ՛սի կեայ՝ ձեր կամացն է:

Դաւիթ թաքեաւէրի սիրտ ցնծաց.
 Բերեց Մսրայ օխտ տարուայ խարջ խարաջ տուեց,
 Մէ աղլուխ գեօրծել տուեց, սրտում ինչ կէր չըկէր՝ վրէն
 Գրէլ երես, աղլուխն էլ խալաթ բարաթով ծաղկըցուց,
 Ճամպեց Քիլիսէ, ասեց, թէ՛ կերթաս աղլուխ կուտաս
 Խանդուլթ
 Խանումին,
 Կըսես, թէ՛ Դաւիթ էս ինչ օր, էս ինչ ամսին
 Ղօնաղ պիտ գայ քեզիկ, պատրաստ եղնիս:

ԺԳ.

Աչուղ գնաց, խաբար տարաւ Խանդուլթ Խանումին:
 Աղլուխ տուեց, ասաց՝ փլան ամսին քեզիկ Ղօնաղ է:
 Խանդուլթ Խանումն էլ էլաւ, ըմէն բան թամմեց,
 Տուն-տեղը սարքեց, նստեց փանջարի յառէջ.
 Դուլբուն դրաւ աչքերուն, ըրչկաց վեր ճամպան,
 Տեսաւ՝ թէ բալի հէսիկ Դաւիթն էկաւ.
 Դաւիթն էկաւ, ձին տարան կապեցին,
 Իջաւ օթաղ, խաց կերուլթէն արեցին,
 Նստան, ասին-խօսին, պրծան,
 Գիշերն էկաւ, պառկան քնան:
 Դաւիթ, ուր ձեռք պարզեց թէխ Խանդուլթ Խանումի եան,
 Խանդուլթ Խանումը բռնեց ձեռ, ասաց՝
 Դաւիթ, ջանըմ քեզիկ իզին է,
 Ամմա
 Ասաց՝ հա, ի՞նչ կայ,
 Ասաց՝ ղուրբան, օխտ փահլաւան,
 Եկած Նալբայթանի կեաղուկի վրէն նստած են,
 Ինձի ապով են էկած.
 Եսիկ, որ հսօր իմ եախէն տամ քեզիկ,
 Որ էկան, քեզիկ ալթ արեցին, ինձիկ առան,
 Չե՞ն ասի՝ գանջղ լաքեաթա,
 Մսրրայ մէկ գեաղա էկաւ, ղու ինչի՞

Շուտ տուեցիր քեօ եախէն անոր ձեռ:
 Դաւիթ հսիկ խօսք-խօրաթա
 Որ լսեց, էլաւ վեր, ասաց.
 – Շուտ իմ ձին քեաշեցէք դուռ,
 Խեծաւ ձին, ասաց՝ ո՛րտեղն է, ինձի, նշան տուեցէք.
 Էնիկ կեադուկ ձին որ քշեց,
 Քեռին էլ մի ծառ հուսեց, ընկաւ իտե, գնացին:
 Գացին տեսան՝ փահլաւաններ էնտեղ
 Նստած կեր ու խում կընէին:
 Կանչեց՝ է՛յ, փահլաւաններ, ինչի՞ էք նստել.
 Գիտեմ, որ Խանդուլ Խանումի ապով էք էկէ,
 Խեղճ է՛ք, դարձէ՛ք, գացէ՛ք.
 Խանդուլ Խանումին ես առայ,
 Որ եմ Մարայ տէր Դաւիթ տղայ.
 Շատ փահլաւաններ տեսայ,
 Հմենուն էլ ատէմ. ալէնջ, ձեռք-ոտք կռայ:
 Փահլաւաններ, որ լսան, թէ Խանդուլ Խանումին եսիկ
 առայ,
 Դիւտտան, հերստտան, ասացին՝ հը՛մ.
 Մարայ մե գեադայ տղայ կեայ, Խանդուլ Խաթուն առնի,
 Վերէք, էսոր էլ սպանենք:
 Տղերնին ելան թէ չէ, Դաւիթ խասաւ,
 Օխտն էլ կապեց, օխտին էլ քիթ-ականջներ կտրեց.
 Զարկեց մզրախի ծէր, դարձաւ, էկաւ թեզ Խանդուլ
 Խաթուն,
 Խանդուլ Խանում ըրչկաց տեսաւ,
 Մտքումն ասաւ՝ բաս, էսիկ չը կրցաւ
 Փահլաւաններու հախէն գալ, դարձաւ էկաւ:
 Էկաւ, ձիուց իջաւ, մզրախ թալեց
 Խանդուլ Խանումի յառէջ.
 Ասաց՝ էսիկ էր քեօ փահլաւաններ,
 Էլի էկան, օթաղ նստան, կերան, խման,
 Ուրախութէն արին, էլան պառկան, քնան:
 Էլի ձեռք էրնկցուց թեխ Խանդուլ Խանում,

էլի խանդուկ խանուճ ասաց.
 – Ձէ, որ ասի իզին աս,
 Դաւիթ ասաց՝ էլ ի՞նչ կայ.
 Խաթունն ասաց՝ հէյրան ասեմ, քեզիկ ինչ կայ.
 Լանդբադ թաքեաւէր էկած է Փէռա գեղ,
 Ինձիկ ապով, զօշուկով, մեծ սարք ու սագով,
 Եկած օրդուն նստցրած է գեղի կողմ:
 Խաթունը Դաւիթին էլի առաջուց խօսք խօրաթան ասաւ,
 Եսխէն ազատեց:
 Դաւիթ վեր թռաւ տեղէն, ասաւ.
 – Քեռի, ձին քեաշի տար, էթանք:
 Ձին որ հեծաւ, քչեցին դէպ յառէջ,
 Խանդուկ խանուճ տեսաւ,
 Որ շատ հաւէսով է երթում, մտմտաց ասեց՝
 Ափսոս է, էսիկ կը գնայ՝ չհաղթի, զայ կեղնի.
 Ասաց՝ Դաւիթ, որ կերթաս, գնա Կոնստանտնուպոլիս,
 Դաստադարի կեանքովի տակ մէ մեծ գեօզի ծառ կայ,
 Գնա քեօ թեւ, քեօ թուր էն գեօզի ծառի վրէն շոբի,
 Այա գեօզի ծառ կտրեց, գնա,
 Այա չէ, դարձիր, եկ, թողենք էթանք:

ԺԴ.

Դաւիթ գնաց Կոնստանտնուպոլիս,
 Ձիուց իջաւ, ծառի տակ կայնաւ,
 Քաշեց թուր, կանչեց՝ ես տէր Աստուած.
 Զարկեց գեօզի ծառին, պանրի պէս կիսեց,
 Անցաւ, ծառը չինկաւ, դարձաւ ուրան թուր անիծեց.
 Ասաց՝ քառսուն մարդի ջամդաք կը կտրես,
 Մէ գեօզի ծառ չես կտրի:
 Ասաց՝ քեռի, ձին բեր էթանք.
 Քեռին, որ ձին բերաւ, էկաւ, ասաց.
 – Ձեղաւ, չեղաւ, մէկէլ պիտ շոբեմ:
 Կանչեց Աստուած, մէկէլ զարկեց.
 Աստուծո չրամանով մէ քամի կայնաւ,

Գեօղի ծառ շրճուաւ, էտեղ իւր թևութուրն օխնեց.
 Խեծաւ ձին Դաստակարի կեադուկով անցաւ, գնացին
 Փեռա.

Տեսաւ, որ թաքեաւէրի ղօշուն ծառի պէս կայնած.
 Հարցրեց, թէ՛ Լանդբադ թաքեաւէր ո՞ր չադիրն է կենում,
 Ասին՝ Տրէն՝ կանաչ-կարմիր չադրի մէջ.

Նստած՝ գլուխը գնտել կը տայ,
 Որ էթայ Խանդութ Խանումն առնի:
 Էսիկ խօսքեր, որ ասին, տղայ Դաւիթ տւոտեց,
 Ձիուն էնենկ մտրակեց,

Կրակի պէս ղօշուն չադիր կոխոտեց.
 Դաւիթ բռնեց Լանդբադ թաքեաւէր,
 Ուր օխտ դալլաքներուն գլուխ գնտելիս,
 Հմենուն քիթ-ականջ կոտորեց.

Մզրախի ծեր զարկեց, մնացած ղօշուն ցրուեց.
 Ղօշունի ալան-թալան խաւաքեց, դարձաւ դէպ Խանդութ
 Խանում:

Կեանք Խանդութ Խանումից խաբար տանք.

Խանդութ Խանում, որ Դաւթին կը ճամպէ,

Շատ կափսոսայ, սիրտ կը մռմռայ,

Կասէ՛ էսիկ ջաւան էլ չեմի ճարի,

Հայրի մէնակ թողեցի, մէնակ ճամփեցի.

Շատ, որ կը մտմտայ, վերջ կը խեծնու ձին.

Կասէ՛ գնամ քեօմեկ անեմ Դաւթին,

Որ Լանդբադ թաքեաւէր ձեռ չիյնամ.

Տղայ Դաւիթ՝ էն եանեն, Խանդութ Խանում՝ էս եանէն,

Իրարմէ բէգիւման կը բարձրանան կեադուկ.

Իրար ռաստ կուկեան: Խանդութ Խանում ըրչկաց տեսաւ,

Հենէ գալիս է Դաւիթ մի կշկուռ ականջներ մզրախի ծեր
 ցըցած,

Կըսէ՛ ջանմ, էսիկ ինչ գոչաղ մարդ է,

Եսիկ մին սորան ջոբեմ, տեսնեմ՝ ինչպէ՞ս է,

Սորան քաջութիւն, գորութիւն,

Կանչեց, ասաց՝ է՛յ, է՛յ, տղայ Դաւիթ, կեցիր.

Սաւրել ես կեադա կիւղի, թաղբիրդ տես.
 Որ կռիւններս կռիւ է,
 Ասաց՝ տեսաք էն դանջղ լաքաթէն,
 էս ղդար մարդիկ կոտորեցի, բաւական չեղաւ,
 էսիկ էլ էն եանէն է ղրկէ յառէջս.
 Ջանմ գեօզում, գնա, էլ ինձիկ պետք չէ էն գանջղ,
 Գնա, թող քեզիկ լինի:
 Ասաց՝ խօ դու քեօ խօշին չես տալի.
 Խօ իմիկ թեխս գօռը կառնի.
 Տաս էլ՝ պիտ առնիմ, չտաս էլ՝ պիտ առնիմ.
 Խանդուլ խանում գեադա գիւղի եմ, խօրակ չի:
 էսիկ խօսք խօրաթէք Դաւթի սիրտ մոմոցուց.
 Ասեց՝ թաղբիրտ տես, որ գալիս եմ.
 Ասեց ու մէ գիւրզ թալեց դէպ կովանի եան,
 Որ թալեց, աղջիկ գուրզ բռնեց.
 Նօբաթ խասաւ աղջկան, աղջիկ թալեց,
 Դեօր չը դձաւ, որ դբցնի, թալեց էն եան,
 Գնաց մտաւ գետին, ի՞նչ ղդար գուրզով կովան,
 Չը կրցան իրար հախու գալ.
 – Ախր, Դաւիթ, – ասաց, – ձիուց իջիր, գուլաչ կպնենք:
 Իջան, գուլաչ կպան, Դաւիթ կանչեց.
 – Եա խաց գինի, տէր կենդանի, եա Մարութայ բանցր
 Աստուածածին, որ բազմեցաւ վեր մեր թեւին:
 Վերուց տնկեց գետին,
 Աղջիկ ձեռք թալեց՝ իւր կոճկներ արձկեց,
 Ծծեր էլան դուրս, քեռին խասաւ վրէն.
 Խասաւ, ըրչկաց, տեսաւ՝ Խանդուլ խանումն է.
 Դաւիթ ասաց՝ Աստուած էլ գինա,
 Որ քեզիկ մէ թուր պիտ գարկեմ, աւել չէ:
 Քեռին ընկաւ Դաւթի ձեռ ու ոտք, ասաւ՝ քեօ տուն
 չաւրուի,
 էս ղդար մարդիկ կոտորիւր.
 էս ղդար փահլաւան թաքեաւէր զայ արիւր,
 էսիկ աղջկայ ապով, ինդի էսիկ աղջիկ որ սպանես,

Բաս էլ մեր գալ-գնալ ինչի խամար էր.
 Ասաց՝ քեռի, չէ որ չէ, օրթում եմ կերէ,
 Որ չը սպանեմ, եսիկ կը մեռնեմ:
 Քեռին բերեց աղջկայ թուր զարկեց
 Դաւթի ձիան բերան կեամ երկթու տեղ,
 Գուրզն էլ կապեց ձիան պոչէն, աղջկան էլ խեծցուց,
 Ուր ձին փախցու, աղջիկ խեծաւ ձին.
 Զիու կեամ թողկեց, աղջիկ խանդուլթ պախաւ,
 Իտայ Դաւիթ ետեւ ընկաւ,
 Ընկաւ իտեւ, Դաւթի ձիի պոչէն կապած գուրզ,
 Գետին պարուելով, գնում է,
 Էնօրէն էսօր խանդուլթ խանուամի երկրի անուն
 Փոխեց՝ Սոքման աւան (ճեղքուած-քանդուած երկիր)
 Աղջիկ խանդուլթ փախաւ, տղայ Դաւիթ իտեւ ընկաւ.
 Աղջիկ՝ առջեւից, տղայ՝ ետեւից.
 Դաւիթ խասուխաս եր եղեր, խանդուլթ մտաւ ներս,
 Իւր խասեր, թուր թալեց, բերդի քար կիսեց,
 Օրթումը կոտրեց, իջաւ ձիուց, մտան ներս,
 Կերան, խման, պսական, քնան, ուրդախուլթէն արեցին.
 Ելան վերցրին, Մարը գնացին.
 Մարում օխտն օր, օխտ գիշեր խարսնիք էրեցին,
 Իրանց մուրազին խասասան.
 Եսիկ էլ էկայ, ձեզիկ խաբար բերեցի.
 Տղայ Դաւթի, աղջիկ խանդուլթի հէքիաթն արեցի:

«Ես ինքս՝ ուստա Դաւիթի, էսիկ խէքիաթ սորվեցի իմ խորից՝ ուստա Ալլախվէրտուց, իմ խէրն էլ՝ իմ պապ Վանցի Օհանէսից. Աստուած օղորմի նրանց խոգուն»:

Գրի առի Խ. Վ. Մակուայ Ս. Թադէոս Առաքելոյ վանից առաջնորդարանում, ներկայութեամբ վանահօր՝ Եսայի վարդապետի:

1895 ամի փետրուարի 26-27 օրերում:

Հէքիաթ ասող ուստա Դաւիթը մօտ 50 տարեկան միջահասակ և խելացի մարդ է, սրա պապ Յովհաննէս Վանից եկած է Սօհման աւանի Ղայնար գիւղը, դարուս սկզբներում, իսկ սրա որդի Ալլահվէրդին, Ս. Թադէոս Առաքելոյ վանքի գիւղը փոխադրուելով, ունեցել է ուստա Դաւիթին, որը ներկայումս ապրում է Ղարաքիլիսէ կամ Թադէոս Առաքելոյ գիւղում:

Որովհետև Ղարաքիլիսէ կամ Թադէոս Առաքելոյ գիւղի 28 տուն ժողովրդականք հաւաքածու են զանազան տեղերից, այն է հայուճորցի, ալաշկերտցի, կարնեցի, խառակոնիսցի, վանցի, նախորկցի, գուլասարցի, կործոտցի, մշեցի, մակուցի ևլն, որոնք, գտնուելով ինոյ և Մակու քաղաքների մէջտեղը, խօսուն բարբառները վերին աստիճանի խառնուած ու շփոթ են. ո՛չ պարսկահայի, ո՛չ վանայ, ո՛չ Մշոյ եւ ո՛չ էլ Ալաշկերտի, այլ այս բոլորից մի խառնուրդ, որով և հէքիաթիս լեզուն մի նմուշ կարող է համարուել, թէեւ մեծ մասամբ վանայ բարբառը հէքիաթի մէջ տիրողն է:

Շաւարշան՝ որեւ Արտազ գաւառի մի մասը, հնումն անուանուում էր Քիլիսէ, յետոյ փոխարկուել է Սոքման աւան կոչումով: Նալբայթան կեադուկը, իւանդութ-իւանում Գալասին, Դաստակեարի կեադուկը գտնուում են Սոքման աւան գաւառում, իսկ Փէրա գիւղը՝ Հեր-իւոյ գաւառում:

Սահմանակից Սոքման աւանի Քիլիսէ գիւղը, որի մօտ է եւ իւանդութ-իւանումի բերդը, ներկայումս բաղկացած է 20 տուն թուրք ազգաբնակութիւններից: Կոէսը բաղկացած է 30 տնից, թրքաբնակ է. Փերան գտնուում է իւոյից 2 1/2 ժամ հեռաւորութեան վերայ դէպի արեւմուտք, 800 տուն թուրք ազգաբնակութեամբ, միայն երկու տուն էլ հայ կայ: Ռուս-պարսկական պատերազմից առաջ բոլոր յիշատակեալ վայրերը բնակած են եղել հայեր, իսկ այժմ՝ աջամներ, պարսիկներ: Յայտնի քառասուն հազար գաղթականների մեծ մասը Մակուից և իւոյից են գաղթել (Շաւարշան և Հեր գաւառները Հայոց): Ներկայումս Շաւարշանի շատ թրքաբնակ գիւղերում գերեզմաններ, եկեղեցիներ, վանքեր կանգուն են մնացած: Մանրամասնութիւններ տեսնել «Տեղեկագիր Մակուայ Հայոց» աշխատութեան մէջ:

ԹԱՐԸԽՈՒԼ ԱՔՐԱԴ ԿԱՄ ՇԱՐԱՖ ՆԱՍՏ
ՔՐԴԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՓԱՌԱՅ ՄԱՏԵԱՆ*

Պարսկաստան եղած ժամանակս, Դավրէժ շահաստանում, յաջողուեց ինձ ձեռք բերել մի շատ հետաքրքիր ձեռագիր՝ քրդական ազգի պատմութիւնը, որը կարող է արեւելեան նոր ազգերի պատմութեան վերայ մեծ լոյս սփռել:

Սոյն գրքի մասին Դավրէժի հայոց վաճառականապետ Աղա Զաքարիա Նազարբէկեանցը պատմեց ինձ հետեւեալը. «Եղբայրս՝ հանգուցեալ աղա Արշակը, 1885-86 թուականներին Սավուշբուլաղում՝ Մուքրիի Մաջիդ խանի տանը, ոռուսերէն լեզուով մի քանի հատուածներ է թարգմանել «Թարըխուլ Աքրադ»-ից. թարգմանութիւնը կատարուած է Ռուսաց պ. հիւպատոսի թախանձանօք, Շէյխ Իբադուլլահի արշաւանքից յետոյ: Հանգուցելոյն թարգմանութեան գլխաւոր կէտերը կազմել են Շէյխ Իբադուլլահի, մանկուրների եւ Մուքրիի Մաջիդ խանի ծագման եւ ազգաբանութեանց պատմութիւնները, որոնք շուրջ 700 տարուայ հնութիւն ունին: Այս պատմական հատուածներին կցել էր նա քրդերի կալուածատիրական մի քանի սովորութիւններ եւս, այսինքն, թէ ինչպէս են կառավարուում հպատակ (ույեայ) քրդերը կալուածատէր աղաների հետ: Այս բոլորը ներկայացրած է Ռուսաց հիւպատոսարանին: Այն ձեռագրերը, որից կտորներ է թարգմանել հանգուցեալ եղբայրս, գրուած է եղել մագաղաթի վերայ եւ ունեցել է կարմիր կաշեկազմ:

Թէև հանգուցեալը շատ է աշխատել ձեռք բերելու այդ գիրքը, եւ թէպէտ նաեւ հիւպատոսարանի կողմից յանձնարարուած է եղել այս մասին, բայց եւ այնպէս չի յաջողուել: Մինչեւ անգամ Ռուսաց Տէր հիւպատոսի հետ Դավրէժի նախկին ընդհանուր նահանգապետ-դատաւոր Ամիր-Նիզամն եւս չի կարողացել ձեռք բերել, թէև երկար ժամանակ Քրդստանի դատաւորութիւնը վարած լինելով՝ ծանօթներ շատ ունէր քրդերից:

* ԱՐԱՐԱՏ, 1899, էջ 536-539:

Ձգիտեմ այս օրինակի՞ համար էր արդեօք, թէ՞ մի այլ օրինակի, Սավուշբուկաղում եղածս ժամանակ, Նագարբէկեանց տան կալուածոց տեսուչ պրն. Միրզա Յովնան Տէր Յովհաննէսեանցը պատմեց, թէ՛ «Սավուշբուկաղի շրջակայքում մի քուրդ շէյխի մօտ գտնուում է մի օրինակ քրդերի պատմութիւնից. որքան որ աշխատում ենք թէ՛ ես եւ թէ՛ Աղա Զաքարիան, ձեռք բերել չի յաջողուում»:

Դավրէժում եղած ժամանակս, երբ լսեցին, որ արաբերէն, պարսկերէն, հայերէն եւ թուրքերէն ձեռագրեր եմ ժողովում, շատերը եկան ինձ մօտ զանազան ծախու գրքերով եւ հնութիւններով. ի թիւս այլոց եւ Դավրիժեցի Խօշնուխ (գեղեցկագիր) Միրզա Շաֆին, որ յայտնեց, թէ «Թարըխուլ Աքրադ» անունով մի գիրք կայ, ծախում են, միայն 15 թումանից (30 ռուբլի) պակաս չեն տալիս: Երկար սակարկութիւնից յետոյ տասն թումանով կարողացայ գնել այդ գիրքը: Յետոյ ցոյց տուի այն Ատրպատականի Հայոց Առաջնորդարանի նախկին պարսիկ միրզային՝ գրագիր աղա Մամմադ Սարթիբին, որը, երբ տեսաւ գիրքը ինձ մօտ, շատ զարմացաւ եւ պատմեց հետեւեալը. «Այս գիրքը մի տարի առաջ Դավրէժի Նիզամ-Ուլաման բերել էր Ամիր-Նիզամի մօտ ցոյց տալու. սա շատ խնդրելուց յետոյ թոյլտուութիւն ստացաւ՝ երեք օր միայն թերթելու: Երբ երեք օրից յետոյ Նիզամ-Ուլաման եկաւ կրկին՝ գիրքը տանելու, Ամիր-Նիզամը խնդրեց, որ թոյլ տայ գրքից մի օրինակ արտագրել. Նիզամ-Ուլաման մերժեց, եւ այն օրուանից Ամիր-Նիզամը վրէժխնդրութեամբ լցուեց դէպի Նիզամ-Ուլամէն. մի քանի ժամանակ յետոյ խեղճի տունը տեղը հիմնայատակ անել տուաւ եւ ռամիկ ամբոխին թալանել տուաւ եղած չեղածը՝ առարկելով, թէ քաղաքի թանկութեան գլխաւոր պատճառը նա էր: Նիզամ-Ուլամայի տունը տեղը թալանելուց յետոյ՝ նա մարդիկ ձգեց քաղաքը՝ որոնելու, թէ՛ Ո՛վ որ Նիզամ-Ուլամայի գրքերից եւ գոյքերից տարել է, թող բերէ, արժէքը ստանայ Ամիր-Նիզամից եւ գնայ: Ի հարկ է, շատ շատերը վստահութիւն չունէին Ամիր-Նիզամի վերայ՝ մտածելով, թէ կիսաբէ, իրը կառնէ եւ գինը չի վճարի:

Գրքի առաջին եւ վերջին թերթերի շքիաստա գրուածները իմ ձեռքովս եմ գրել, որովհետեւ Նիզամ-Ուլամէն, չգիտեմ ինչո՞ւ, գրքի առաջին թերթի լուսանցքները եւ վերջին թերթը կտրել էր տուել, թերեւս, նախկին արտագրողի անունը, կնիքը եւ յիշատակը անյայտացնելու համար: Որքան մտաբերում եմ, այս գիրքը արտագրել է Սավուչբուլղում բանասէր Շահգադա մականուամբ մի անձնաւորութիւն, որը երկար ժամանակ քրդերի մէջ պաշտօն է վարել՝ պարսից կառավարութեան կողմից»:

Ինչպէս տեսանք ներկայումս բախտի բերմամբ իմ ձեռք հասած ձեռագիրը Նիզամ-Ուլամայի գրատան գրքերից է:

Գրքի վերջին՝ նորոգած թերթի վերայ թուականն է 1281 հիջրամի, որով սրանից 36 տարի առաջ ընդօրինակուած է երեւում: Նա բաղկացած է երկու մասից. առաջին մասը քրդական նախարարութեանց պատմութիւնն է բովանդակում, իսկ երկրորդ մասը՝ օսմանցոց, Իրանի եւ Թուրանի ժամանակակից ազգաց եւ թագաւորաց պատմութիւնն է՝ երկու մասն էլ միեւնոյն հեղինակից գրուած: Պատմութեան թելը հասնում է մինչեւ հիջրամի 1005 թուականը: Առայժմ ծանօթացնենք ընթերցողին այս հագուագիւտ պատմութեան բովանդակութեան հետ, իսկ ամբողջ գրքի թէ՛ թարգմանութիւնը եւ թէ՛ բնագիրը պէտք է աշխատենք շուտով լոյս ընծայել, որով հայ եւ օտարագրի բանասիրաց, յոյս ունենք, մի զգալի ծառայութիւն կմատուցուի*:

Ձեռագիրն է իմ ձեռագրաց ցուցակի մէջ՝ Թիւ 52.

Անուն՝ «Թարբխուլ Աքրագ կամ Շարաֆ Նամա» (Քրդերի պատմ. կամ փառաց մատեան):

Նիւթ՝ թղթեայ (սպիտակ, ողորկ թղթից):

Կազմ՝ սեւ կաշեկազմ՝ դրոշմածաղիկներով:

* Թարբխուլ Աքրագից օգտուել է նաեւ պարսկերէն «Նասրի-Թաւարիխ»-ի հեղինակը. այս աշխատութիւնը բաղկացած է, ինչպէս լսել ենք, 14 հատորից, որից առաջին ինը հատորները միայն տեսել ենք. առաջին հատորի սկզբում յիշատակուած է «Շարաֆնամա» անունը միայն, իսկ գլուխների ցանկին մէջ առանձին բաժին կայ քրդերի մասին, ուր յիշում են վերոյիշեալ վերնագրերից մի քանիսը, բայց մեր տեսած ինը հատորները դեռ քրդերի պատմութեանը չեն հասած:

Հանգամանք՝ *խնամքով պահուած:*

Մետրքին՝ *21x31x2 սմ:*

Գրութիւն՝ *միասիւն:* Թուղթք՝ *372 երես:*

Տողք՝ *23:* Վերնագիր՝ *կարմրագիր:*

Գիր՝ *Նասիս (Ղուրանի):*

Գրիչ՝ *Ոմն գրասէր Շահգաղա.՝ ըստ աւանդ.:*

Ժամանակ՝ *1281՝ հիջրամի:*

Տեղեկութիւնք՝ *գրքի սկզբի թերթից կտրուած են միայն վերնագիրը եւ լուսանցքները. բնագրի 17 տող գրութիւնը կպցրած է այլ թղթի վերայ: Երկրորդ թղթի առաջի լուսանցքն էլ է կտրած եւ տեղը այլ թուղթ կպցրած, իսկ վերջին թերթի թէ՛ գրչութիւնը եւ թէ՛ թուղթը բոլորովին տարբեր են գրքից:*

Յիշատակագրութիւնք՝ *առաջին թղթի՝ թղթից կպցրած ետքի երեսի վերայ եւ 217-223 երես:*

Բովանդակութիւն՝ *երես 4-5 «Յառաջաբան».* Քուրդ ցեղերի ազգաբանութեանց մասին, թէ որտեղի՞ց են յառաջ եկել, եւ այդ ազգի ընթացքի մասին բացատրութիւն, թէ ի՞նչ բանով անուանի եղան:

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Ա.

Յիշատակութիւն Քրդստանի վալիների¹ մասին, որոնք կառավարութեան գիտութիւնը բարձրացրին, եւ որոնց պատմաբանները թագաւորների հետ յիշած են, եւ որը ամփոփուած է հինգ մասերի մէջ:

Մաս 1. Յիշատակութիւն Տիգրանակերտի եւ Միջագետքի վալիների:

Մաս 2. Յիշ. Դինուրի եւ Շահրագուլի² վալիների, որոնք Հասնաւիա անունով հռչակուեցան:

Մաս 3. Յիշ. Նազլաւիայի վալիների, որոնք կոչւում են Լորրբ-գուրկ (մեծ Լորթ):

¹ Վալի – կուսակալ:

² Բառգիրք պարսից Գեորգ Դ-պրի: Պոլիս, 1826թ., էջ 352 ս/բ. «Շէրգուր է անուն քաղաքի միոջ ի սահմանս Բաբելոնի»:

Մաս 4. Յիշատակութիւն փոքր Լօր կոչուած վալիների:

Մաս 5. Յիշ. Եգիպտոսի եւ Դամասկոսի սուլթանների, որոնք յայտնի են Ալ Այյուբ (Այյուբի սերունդ) անունով:

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Բ.

Յիշատակութիւն Քրդստանի աւագանեաց (Մեծ Հաքիմների դատաւորներ), որոնք թէեւ թագաւորական անկախութիւն չեն ունեցած եւ չեն գահակալած, բայց երբեմն իրանց անուամբ դրամ են կտրել տուած եւ Խուլթրա (մաղթանք) կարդացրած, որը ամփոփուած է հինգ մասերում:

Մաս 1. Յիշատակութիւն Արդալանի Հաքիմների:

Մաս 2. Յիշ. Հաքթարիի Հաքիմների, որոնք յայտնի են Շնու ա- նուամբ:

Մաս 3. Յիշ. Ամադիայի Հաքիմների, որոնք յայտնի են Բահա եւ Բան անուամբ:

Մաս 4. Յիշ. Միջագետքի Հաքիմների, որոնք յայտնի են Հուսնի անուամբ եւ բաժանուում են երեք ճիւղի.

Գիւղ Ա. Յիշ. Միջագետքի Հաքիմների:

Գիւղ Բ. Յիշ. Գուրգիլի ամիրների:

Գիւղ Գ. Յիշ. Արգիլի ամիրների:

Մաս 5. Յիշ. Հանգիֆայի Հաքիմների, որոնք ծանօթ են Մալքան անուամբ:

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Գ.

Յիշատակութիւն Քրդստանի այլ Հաքիմների եւ ամիրների, որը երեք բաժանում ունի:

I. Առաջին բաժանումը ինն մաս ունի.

Մաս 1. Յիշ. Չմշկածագի Հաքիմների, որը երեք ճիւղ ունի.

Գիւղ Ա. Յիշ. Մահբանգարգի ամիրների:

Գիւղ Բ. Յիշ. Բերդակի Հաքիմների:

Գիւղ Գ. Յիշ. Սոկմանի ամիրների:

- Մաս 2. Յիշ. Մարրասիի հաքիմների, որը երեք ճիւղ ունի.
 Գիւղ Ա. Յիշ. Աքբալի հաքիմների:
 Գիւղ Բ. Յիշ. Փանոյի հաքիմների:
 Գիւղ Գ. Յիշ. Զերմուկի հաքիմների:
- Մաս 3. Յիշ. Սասունի հաքիմների, որոնք յետոյ Հազոյի հաքիմ-
 ներ կոչուեցան:
- Մաս 4. Յիշ. Զազանի հաքիմների, որը երեք ճիւղ ունի:
 Գիւղ Ա. Յիշ. Զազանի հաքիմների:
 Գիւղ Բ. Յիշ. Մոկսի ամիրների:
 Գիւղ Գ. Յիշ. Սաբաբերդի ամիրների:
- Մաս 5. Յիշ. Քիլիսի հաքիմների:
- Մաս 6. Յիշ. Շիրվանի ամիրների, որը երեք ճիւղ ունի.
 Գիւղ Ա. Յիշ. Քաֆրայի ամիրների:
 Գիւղ Բ. Յիշ. Երեւանի ամիրների:
 Գիւղ Գ. Յիշ. Գառնիի ամիրների:
- Մաս 7. Յիշ. Զոկի ամիրների, որը ունի չորս ճիւղ.
 (էջ հինգ)
 Գիւղ Ա. Դարգինի ամիրների:
 Գիւղ Բ. Գարդգանի ամիրների:
 Գիւղ Գ. Աթակի ամիրների:
 Գիւղ Դ. Թարջիլի ամիրների:
- Մաս 8. Յիշ. Սաւիդիի ամիրների:
- Մաս 9. Յիշ. Սուլէյմանի աշիրաթի ամիրների, որը երկու ճիւղ ու-
 նի.
 Գիւղ Ա. Յիշ. Կուղբի եւ Բաղմանի ամիրների:
 Գիւղ Բ. Յիշ. Մայակարկիների ամիրների:

II. Երկրորդ բաժանում, որ բովանդակում է տասն եւ մէկ մաս.

- Մաս 1. Յիշ. Սոհրանի հաքիմների:
 Մաս 2. Յիշ. Բաբանի հաքիմների:
 Մաս 3. Յիշ. Մուքրիի ամիրների:
 Մաս 4. Յիշ. Բրադօստի ամիրների, որը երկու ճիւղ ունի:
 Գիւղ Ա. Յիշ. Ուշնիի ամիրների:
 Գիւղ Բ. Յիշ. Սօմայի ամիրների:
 Մաս 5. Յիշ. Մահմուդիի ամիրների:

- Մաս 6. Յիշ. Դմբուլիի ամիրներին:
 Մաս 7. Յիշ. Ջազրայի ամիրներին:
 Մաս 8. Յիշ. Իստոնիի ամիրներին:
 Մաս 9. Յիշ. Թասպանիի ամիրներին:
 Մաս 10. Յիշ. Քահերուքուրանի ամիրներին. սրանք էլ երեք ճիւղ
 ունին:
 Գիւղ Ա. Յիշ. Փլանգանի հաքիմներին:
 Գիւղ Բ. Յիշ. Դարչաքի հաքիմներին:
 Գիւղ Գ. Յիշ. Մահիդաշտի հաքիմներին եւ ամիրներին:
 Մաս 11. Յիշ. Բանայի ամիրներին:
 Մաս 12. Յիշ. Ջարգայի ամիրներին¹:

III. Երրորդ բաժանում.

Յիշատակութիւն Իրանի քրդերի ամիրներին, որոնք կոչուում
 են Քորան եւ բաժանուում են չորս ճիւղի:

- Գիւղ Ա. Յիշ. Սիահմանսուրի ամիրներին:
 Գիւղ Բ. Յիշ. Չաքնիի ամիրներին:
 Գիւղ Գ. Յիշ. Չանգանայի ամիրներին:
 Գիւղ Դ. Յիշ. Փազուկի ամիրներին:

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Դ .

Յիշատակութիւն Բիթլիսի հաքիմներին եւ ամիրներին, որոնց
 ազգաբանութիւնը որդի ի հօրէ գրուած է, որը ունի մի գլուխ,
 չորս տուն եւ մի յաւելուած:

Վերջաբան². Տեղեկութիւն Բիթլիս քաղաքի մասին. ո՞վ է ե-
 դել նրա հիմնարկողը, շէնքերի, քաղաքի, բերդի շինութեան
 պատճառը:

¹ Թէեւ հեղինակը բաժանման գլխի մէջ 11 մաս է գրում, բայց գրածը 12 է.
 թերեւս մաս 7,12 «Ջազրայի» եւ «Ջարգայի» ամիրները նոյնը լինին: Արդէն
 պատմութեան թարգմանութեամբ կ'պարզուի:

² Հեղինակը խոստանում է մի գլուխ, բայց դրա տեղ ձեռագրում գտնում ենք
 վերջաբան. գուցէ օրինակողը «Ֆաթիհա» գրելու տեղ սխալմամբ «Խաթի-
 մա» է գրած:

ՏՈՒՆ Ա. Յիշատակութիւնն Բիթլիսի հաքիմների. որտե՞ղ են վերջացել նրանց նախահայրերը եւ թէ ինչպէ՞ս են ընկել Բիթլիս քաղաքը:

ՏՈՒՆ Բ. Տեղեկութիւնն Օզգի աշիրաթի մասին եւ այս անուանակոչութեան պատճառը:

ՏՈՒՆ Գ. Յիշատակութիւնն Բիթլիսի հաքիմների, «չաթրամի» եւ պատուի, թէ ի՞նչ յարաբերութիւն են ունեցել նախկին սուլթանները նրանց հետ, որը ունի չորս մաս.

Մաս 1. Յիշ. Մելիք Աշրաֆի մասին:

Մաս 2. Յիշ. Զիաէդդինի որդի՝ Հաջի Շարաֆի մասին:

Մաս 3. Յիշ. Հաջի Շարաֆի որդի՝ Ամիր Շամսէդդինի:

Մաս 4. Յիշ. Ամիր Շամսէդդինի որդի՝ Իբրահիմի:

ՏՈՒՆ Դ. Տեղեկութիւնն, թէ ինչի՞ց ստիպուած Բիթլիսի իշխանութիւնն իրենց ձեռքից գնաց, որը ունի չորս պատճառ.

Պատճառ Ա. Յիշ. Ամիր Շարաֆի եւ Ամիր Իբրահիմի կռիւների մասին:

Պատճառ Բ. Յիշ. Ամիր Շարաֆի՝ Ամիր Իբրահիմի փոխարէն Բիթլիսի իշխանութեան մէջ հաստատուելու:

Պատճառ Գ. Յիշ. Ամիր Շարաֆի՝ Բիթլիսի բերդը Ղզլբաշ ցեղից առնելու մասին:

Պատճառ Դ. Տեղեկութիւնն Ամիր Շարաֆի գործերից:

Յաւելուած. Սրտաբեկ նուաստ խեղճիս գործերի յիշատակութիւնը՝ ծնունդից սկսած մինչեւ հիջրաթի 1005 թիւը:

*Վերջաբան. Յիշ. Օսմանեան ցեղի վեհափառ սուլթանների եւ Իրանի ու Թուրանի փառիշահների, որոնք նրանց ժամանակակից էին:**

* Բովանդակութեան այս թարգմանութիւնը կատարեց երիտասարդ գիտնական Սեծ. պ. Հրաչեայ Աճառեանը:

ՀԱՅՆ ՈՒ ԻՒՐ
ՀԱՐԵՒԱՆ ԱԶԳԵՐԸ*

I.
ՔՐԴԻ ՀԱՇԻՒՆ

Մէջ հայ մէջ քրդի ճանաչ կեդնի: Էդ հային օխտը հատ էծ կլինի, կըտայ քրդին, կասէ՝ տար պահի: Քուրդն էծեր կը տանի, չուր տարին կը լմնայ: Հայն կերթայ քրդին տուն, կասէ՝ քուրդ, բէր իմ էծեր տուր, էծեր պիտ տանեմ: Քուրդը կասէ՝ հայ, նստի ասեմ քեզի՝ քու էծեր ինչխ եղեր ա.

Քրդերէն	Հայերէն
Մը բը հիստա մրանի մըեագդա խէյ-րանի,	Հսեցի, մեռել ես՝ մէկը տուի ժամահացի,
Մը բը հիստա սաղանի մըեագդա շքրանի,	Հսեցի, որ առողջ ես՝ մէկը մատաղ արեցի,
Բզնէ համզ գաթիէ նապրս,	Կարմրագոյն այծն ամենեկին մի հարցնի,
Բզնէ քօլ քէաթա գօլ,	Անեղջիւր այծն ընկաւ լիճը,
Բզնէ չալ քէաթա ճալ.	Նախշուն այծն ընկաւ հորի մէջ,
Բզնէ կաւար քէաթ բըն դէաւար,	Կապոյտ այծն ընկաւ կենդանիների ոտնատակ,
Բզնէ բալի բալանի սալէ ջօթակ կարանի,	Կարճականջ այծն երկու ուլ բերեց տարին,
Ռաբու սար խանի կոռան կրէն կուռանի,	Բարձրացաւ կտուր՝ տղերքը տղայու-թիւն արին,
Լէխստէն ճաւէ ոաստ դարանի,	Զարկեցին, աջ աչքը հանեցին,
Մանի շարթեկը գօշտ մախօր ճարմ՝ դա բը քիրակի գալանի:	Բերեցի մորթեցի, միսը կերայ, կաշին տուի կոթով դանակի.
Ղիզան կրէն ղիզանի քէր բըրըն փէն-ջար ունի:	

* ԱՐԱՐԱՏ, 1895, էջ 305:

<p>Քեր ոնդակըր կալան անի, կալան ա- լեթայ քոնջայ խանի:</p> <p>Դա տու աբայի խօ բըդայ հախկէ շվանի:</p> <p>Ազ տու բըբըն բրայէ ախըր գամանի:</p>	<p>Աղջկերքն աղջկութիւն արին, դանա- կը տարան՝ բանջար բերին.</p> <p>Դանակը կորցրին, կոթը բերին՝ տան անկիւնը ձգեցին.</p> <p>Այժմ դու տուր քո վերարկուն՝ վարձ մեր հովուին,</p> <p>Այսուհետե ես և դու կը լինինք եղ- բայր ցվերջ աշխարհի:</p>
--	--

II.
ԹՈՒՐՔԻ ՀԱՇԻԻԸ

Մէ հայ մի թուրքի հարիւր ոչխար կըտայ ի պահ: Հայի ոչխարնե-
րի ապուրը պակասած կեղնի: Հայը թուրքին կասէ՝ ոչխարներս տար
պահէ, ձմեռհան արա, ինչ որ քո վարձն է, կրկնակի ստացիր ինձմէ:
Թուրքը կըյօժարի, ոչխարները կառնու կըտանի: Սեւերես թուրքն, օրէն
մէ ոչխար մորթելով, ձմեռհան կեղնի: Վերջին ոչխարը մորթած, մոր-
թին տակը ձգած, մի գաւաթ մածուն առաջը դրած ուտելիս՝ հայը կը-
գնայ թեխ իւր ոչխարներ: Հայը կասէ՝ թուրք, բեր իմ ոչխարներ տուր,
որ տանեմ: Թուրքը կասէ՝ քիրվա (կնքահայր), նստիր ոչխարներուդ
հաշիւը տամ.

Թրքերէն	Հայերէն
Գեօգ գիււրադը, եր փաթլադը,.....	Երկինք որոտաց, գետինքը պատառուեց,
Դօխսանը բիրդան չաթլադի:	Իննսունը միանգամից տափը ծծեց:
Գա՞ջ թանա գալդը:	Քանի՞ հատ մնաց:
Օն թանա գալդը:	Տասը հատ մնաց:
Դաշտան դուշտը բաշ թողլը,	Քարից ընկաւ գլխաւոր ոչխարը,
Արխա սօրա բէշ թողլը:	Սրան հետեւեցին միւս հինգ ոչխարը:
Գա՞ջ թանա գալդը:	Քանի՞ հատ մնաց:
Դօրթ թանա գալդը:	Չորս հատ մնաց:
Իքիւր վերդըմ գասաբա:	Երկուսը տուի մսագործին:
Բիրը հէջ կեաթրմա հեսաբայ:	Մինը ամենեւին մի կցիր հաշուին:

Գալղը բիրըսը (տակի մորթին ցոյց Մնաց մին (տակի մորթին ցոյց տալով), տալով),

Բու դա բիրըսընըն դարըսը: Այս էլ մէկի մորթին.

Բույուր, վեր գօյընլարըն փարասը: Հրամայէ, տուր ոչխարների վարձագին:

Հայը, բարկանալով, մածնով գաւաթը կըտայ թուրքի գլխովը. թուրքը, երեսը եւ միրուքը մածնաթաթախ, կասէ՝ Ալլահամդուլլայ, քիրվամըզըն հէսաբը դրուստ վերդըք, ուզումըզ աղ չխտը (Փառք Աստուծոյ, մեր կնքահօր հաշիւը ուղիղ տուինք, երեսներս սպիտակ դուրս եկաւ):

Ծանօթ. Սոյն հաշուեցոյցի քրդական մասը գրի են առել Քուռունցի Առաքել վարդապետից, իսկ թրքական մասը՝ Փալղրվանցի Ստեփաննոս վարդապետից:

ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՋՐՕՐՀՆԵԱՅ ԵՐԳԵՐԻՑ*

Վարանդայ գաւառի Աւետարանոց գիւղի շրջակայքում

Ալէլուեա, Ալէլուեա.
էսա եկէնք էս կըտօրս. ալէլուեա.
Սառալ ա տըրէխներս. ալ.
էս կըտօրս չուրըք սըռէ չուրըք ոննէ. ալ.
Ծօծը գըլխէն ծալած դումաշ. ալ.
Ծօխը քընեց հէն բիւրիւշիւմ. ալ.
Թուրուկն ա կեարմուր եխծէ. ալ.
Պողերն ա վառուած աստղեր. ալ.
Կուտանան ա թառ երդօնէկ. ալ.
Հացերն ա կեօրծած խաչեր. ալ.
Ծըհանն ա ոսկէ շիշակ. ալ.
Տէփն ա աւիտարան. ալ.
Ծըկոտէչն ա քաշկու մաններ. ալ.
Հացթօխն ա փօնջ մընէչակ.
Քրիստուկո թինեց Դրախտինը. ալ.
Գլազանը խուրըցըրուց. ալ.
Կըթնախբիւրը փլխըցըրուց. ալ.
Աջի կըռան աւիտարան. ալ.
Ձախի կըռան սաղմոսարան. ալ.
Լալան եկը լըղըցըրուց. ալ.
Ալէլուիան ուրխուցըրուց. ալ.
Ձեր տոնը շէն, ձեր տոնը շէն. ալ.
Ձեր խուխոցը անումը հի՞նչ ա.
Հըլազին նման շըտանան,
Գետէն նման ըրկընան,

* ԱՐԱՐԱՏ, 1895, էջ 469-471:

Ծառէն նման ճեղնը տան.
 Քաշ կռակլաւ ձեր դիւշմանէն աչքը տիւս օնէ.
 Գիւլը ոննան փռնէ քաշ անէ.
 Ա՛ տնատար, փայլը բերէք, ալէլուան տանէ:

Վարանդայ գաւառի ձարտար գիւղի շրջակայքում

Ալէլուեա, Ալէլուեա.
 էսա եկէնք էս կըտօրս. ալ.
 Ձիր ու չամէնչ էս ճօտերս. ալ.
 էս տօնս ա չուրըք սրուէ չուրըք սիւնի. ալ.
 Չուրըքանուց ոննը սալին. ալ.
 Հազար հազար, բարով հազար. ալ.
 Չարը սրտէն չըրըկամէն. ալ.
 Որդին ապրէ բարիկամէն. ալ.
 Թուրունն ա կեարմիւր եխծէ. ալ.
 Հացերն ա կեօրծած խաչեր. ալ.
 Կուտանան ա թառ ըղօնէկ. ալ.
 Հացթօխն ա փօնջ մընէչակ. ալ.
 Ծըհաննա ոսկէ շըչակ. ալ.
 Ծոխը քինեց հում բիւրիւշիւմ. ալ.
 Ծօծը երբան ծալած ղումաչ. ալ.
 Պածերն ա վառուած աստղեր. ալ:
 Հըներակ քեզ ա՞, Պէլի վանէս. ալ.
 Որ դու Քրիստոս զօրեցէր. ալ.
 Քրիստոս քինից Դրախտինը. ալ.
 Գլազանը խուրըցրուց. ալ.
 Կըթնախբիւրը փլխըցրուց. ալ.
 Լալաւեկը լըղըցրուց. ալ.
 Լալավ, լալավ ճիւժկը հալաւ. ալ.
 Զէխէ ձեռքէն սաղմոսարան. ալ.
 Աջի ձեռքէն աւիտարան. ալ.

Տո՛նը շէն, տո՛նը շէն.
 Ձեր խոսխէցըն անուամը հի՞նչ ա.
 Ձեր խօխէքը հըլազու նման շըտանան.
 Գետու նման ըրկընանան.
 Ձեր գիւշմանը քըրըքար ընկնէ.
 Աչքը գըռակլաւ հանէ.
 Ոննան փըռնէ, գիւլ տանէ:

Վարանդում սոյն երգերը երգելիս այսպէս են անում. երեք հոգի վեր են բարձրանում կտուրը հերթին կանգնում, երկու հոգի պըկօ են ածում, իսկ մինը ճրագը ճուարանով կախ է անում եւ երգում: Երգից յետոյ բաժին ստանում. ձու, եղ, բրինձ, ալիւր, աղ, չիր եւ փող:

Խաչեն գաւառի Առաջածոր գիւղի շըջակայքում

Պարով-պարով էս տաճարով. ալէլուեա.
 էս տաճարով Նուրաշինի. ալ.
 Նուրաշինի չորք ընկիւնի. ալ.
 Սալը որտէն չարը կամէն. ալ.
 Որդին ապրէ բարըկամէն. ալ.
 Հրաս իկը մին ձիւաւոր. ալ.
 Աջի ձեռքէն աւիտարան ալ.
 Ձախի ձեռքէն կատիկարան. ալ.
 Դոնատակը դքտըմբերի. ալ.
 Դոնագլուխ սըլկէվըլի. ալ.
 Գերան-գերան կեր կերանի,
 Գըրըն տխպեր ումբըր վերի. ալ.
 Տըլակոճը մանտըր վերի. ալ.
 Ծօծը վերի ծալած դումաչ. ալ.
 Հողը վերի սուրբ մարգարա. ալ.
 Ծոխը վերի թառ բըրուշում. ալ.
 Թուրուլնն ա սուրբ եղեցէ, ալ.

Պողերն ա վառ-վառ աստղեր. ալ.
 Հացերն ա կեօրձած խաչեր. ալ.
 Կուտանան ա թառ ուղօնէկ. ալ.
 Ծըհանն ա ոսկէ շիշակ. ալ.
 Հացթոխն ա փունջ մնեշակ. ալ.
 Տունը շէն, տունը շէն.
 Զեր խուխոցը անումը հի՞նչ ա.
 Ըլազին նման շրտանան.
 Գետէն նման ըրնանան.
 Ծառէն նման ծաղկէն.
 Բար երօնին կռանան:

Դիզակ գաւառի Հաղբութ գիւղի շրջակայքում

Ալէյլիա.

Ասօր ծումա ծում ընդացէք. ալ.
 Ուրախացէք օր ցնձացէք.
 Պարաւ, պարաւ էս տաճարս. ալ.
 Հազար պարաւ էս տաճարս. ալ.
 Ասօր ծընունդ մեր Մէյրէմա. ալ.
 Մէրիամ քինաց ձեռնը ծումը. ալ.
 Ծըծխօկ բերաւ իւր խաչ որդին. ալ.
 Հընէրակ քեզ Հուռումսիմա. ալ.
 Քըրիստոծը պըտըտեց էր. ալ.
 Հընէրակ քեզ պէլի Վանէս. ալ.
 Քըրիստոծը խըտըտեցէր. ալ.
 Հընէրակ քեզ գետ Վարդանան. ալ.
 Քըրիստոծը մըկըրտեցէր. ալ.
 Ուղորմի քեզ Հուռումսիմա. ալ.
 Քըրիստոծը ուրուրեցէր. ալ.
 Տընօխնորը չըթըմամից. ալ.
 Մանուկըման խըսուցրէն. ալ.

Աջի ձեռին՝ աւիտարան. ալ.
 Զախի ձեռին՝ սաղմուսարան. ալ.
 Այիբբենը որ կիրեցան. ալ:
 Առաւ կարթից սաղմուսարան. ալ.
 Սաղմուսարան որ կիրեցան.
 Առաւ կարթից աւիտարան.
 Աւիտարան որ կիրեցան. ալ.
 Առաւ կարթից շար շարական. ալ.
 Մինաւ կըրար, մինաւ ճնջար. ալ.
 Ոննը փոխար ծաղէկ ցնծար. ալ.
 Իւրուրցօնէք իւրուրեկէն. ալ.
 Իւրուրեկէն կէյնիչըրէն. ալ.
 Ուհան մունթը քըրըհեցէն. ալ.
 Զուրու Մէյրամ ըղըրկեցէն. ալ.
 Մէյրամ եկաւ լալավ, լալավ. ալ.
 Լալավ, լալավ մըղկըտալավ. ալ.
 Ոննը փոխից արիւն հողաց. ալ.
 Փունջ մնէչակ հէտէն սողաց. ալ.
 Եկ տէրը տար քու խաչ սրտին.
 Էս անում չի մեզ մըրթէթին. ալ.
 Ես վար կանիւմ առանց հէթին. ալ.
 Հոգիդ կոչիւմ արքայութիւն. ալ.
 Եկ քեզ տանիւմ Երուսաղէմ. ալ.
 Երուսաղիւմ քաղաք շինիւմ. ալ.
 Շատ կաղ ու կուր ըպրըցընիւմ. ալ.
 Կըւազանը իւրըցընիւմ. ալ.
 Կթնախբիւրը փլխըցընիւմ. ալ.
 Տնատարը կուշտըցընիւմ. ալ.
 Շոռընք կիաս կըտըրներս. ալ.
 Սառալ ա տըրեխներս. ալ.
 Զիր ու չամիչ իմ ճօտերս. ալ.
 Եղեր մեղրեր իմ մոնթերս. ալ.
 Թուրունն ա հէն ըղեցէ. ալ.
 Ծոխըն ա հում բիւրիչիւմ. ալ.

Պածերն ա հէն աստղեր. ալ.
 Պողերն ա հէն լուսնընկեա. ալ.
 Հացերն ա կեօրծած խաչեր. ալ.
 Կուտանան ա թառըղօնէկ. ալ.
 Ծըհանն ա ոսկէ շըշակ. ալ.
 Հացթոխն ա փոնջ մնեչակ. ալ.
 Տուներ շէն, տուներ շէն.
 Ձեր տըղոցը անուժը հի՞նչ ա.
 Ծառ տան ծրանի.
 Ճեղնը տան տերեւ հանի.
 Գետէն նման ըրկնանան.
 Ըռաչքէն նման շըտանան.
 Քրիստօծէն գանձանակը
 Ձեր տղոցը չարը տանայ.
 Մին ման եղ, մին ման բրինձ.
 Մին վէլա, մին քօլա.
 Ձեր տղոցը չարը տանա:

Դիզակուժ հայերը՝ թուրքերի գիւղերուժ, թուրքերը՝ հայերի

Աբէլլուժայ.

Խաչաջիւրան կէջա սըղը. աբէլլուժայ.
 Աղամ գիւրն բաջասըղը. աբ.
 Կեօրըն աղամ աւդամըղը. աբ.
 Բդօվլարը բաղլըմըղը. աբ.
 Բդօվլարա նա եարաչըր. աբ.
 Մախմարդան չիւլար եարաչըր.
 Մախմար չիւլա նա եարաչըր. աբ.
 Գըզըլ երհարլար եարաչըր. աբ.
 Գըզըլ երհարա նա եարաչըր. աբ.
 Եախչի իգիթտար եարաչըր. աբ.

Իգիթտարա նա եարաչըր. աբ.
 Եախչի խանուժլար եարաչըր. աբ.
 Խանուժլարա նա եարաչըր. աբ.
 Եախչի ուշախլար եարաչըր. աբ.
 Գըզըլ քեաքիւլ օղլանլար եարաչըր.
 Ուշաղլարա նա եարաչըր. աբ.
 Եախչի բէշիկլար եարաչըր. աբ.
 Բէշիկլարա նա եարաչըր. աբ.
 Եախչի գարավաչլար եարաչըր. աբ.
 Գարավաչլարա նա եարաչըր. աբ.
 Եախչի չօբաննար եարաչըր. աբ.
 Չօբաննարա նա եարաչըր. աբ.
 Եախչի Գօյուննար եարաչըր. աբ.
 Գօյուննարա նա եարաչըր. աբ.
 Եախչի գուզուլար եարաչըր. աբ.
 Աղա օղլանլարըն աղը նաղը.
 Ալղուլի, Շահղուլի, Թարղուլի.
 Աթտարըն եկին օլսուն.
 Գլըճըն քեասկին օլսուն.
 Դօստը դօստ օլսուն.
 Դիւշմանի դա փուչ օլսուն.
 Հայիտի հուլիտի.
 Բըզըմքիտա բուլիտի.
 Չօխ վերան խանուժ օլսուն.
 Ազ վերան գօթուր օլսուն.
 Դոնաղլարը չօթուր օլսուն:
 Այ աղալար, այ խանուժլար.
 Ալլահ վերդղնան՝ բիր բաթման հաղ,
 Բիր բաթման դիւիւ,
 Բիր գայիզ ուն,
 Բիր բաթման փիլա:

*Ղարաբաղի ժողովրդական երգերը այնքան շատ են եւ բազմազան,
որ եթէ իւրաքանչիւր գիւղի հնարաւորութիւնները հաւաքեն, հատոր-
ներ կ'կազմուի: Առայժմ Ղարաբաղի իւրաքանչիւր գաւառից՝ մի-մի
նմուշ:*

ԱՍՏԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ –
ՉԵՌԱԿԱՆՍՈՒԹՅՈՒՆ

ՆԻՒԹԵՐ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ*

Վերջացնելով Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակների ցուցակի տեսութիւնը՝ իմացանք, որ բոլոր օրինակները բաժանուած են երկու խմբի, ուստի անհրաժեշտ է երկու խմբերի տարբեր ընթերցուածներն առաջ բերել: Նախ քան տարբերութիւններն յառաջ բերելը, հարկաւոր ենք համարում ընթերցողներին տալ մի շատ կարեւոր գրութիւն Աղուանից պատմութեան նախնական ձեւի եւ խմբագրութեան վերաբերութեամբ: Գրութեան վերնագիրն է՝

«Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն»:

Սոյն գրութիւնը հրատարակուած ենք Մայր Աթոռոյս մատենադարանի համար 58 եւ 100 ձեռագրերից, որոնք նոր եւ սխալաշատ գրչութիւններ են. առաջինը գրուած է էջմիածնում 1767 թուականին Ներսէս Շնորհալու ընդհանրական թղթերի հետ, իսկ երկրորդը՝ Պօլսում, անթուական, Անանիա վարդապետի հակաձառութեան թղթերի հետ: Երկուսն էլ կրճատ պատուագրութեամբ եւ մանր նօտրագրով արտագրութիւններ էին¹:

Համաձայն Սիւնեաց պատմիչ Ս. Օրբելեանի ասութեան՝ Անանիա կաթողիկոսը բաւական կարեւոր աշխատասիրութիւն է

* ԱՐԱՐԱՏ, 1896, յունուար, էջ 22-26:

¹ Սոյն գրութիւնը ի թիւս այլ գրութիւնների արտագրած ունէր հրատարակելու Մայր Աթոռոյս միաբան Գ.Տ.Մ., որ ամենայն յօժարութեամբ յանձնեց մեզ իւր արտագրածից եւ ծանօթութիւններից օգտուելու Աղուանից պատմութեան նկատմամբ, ուստի այս մասին խորին շնորհակալութիւն: Քանի որ սոյն գրութիւնը բաւական ընդարձակ գրութիւն է (մօտ 26 թերթ), ուստի եւ միայն հրատարակում եմ վեց թերթիկ՝ այն կտորը, որ լուսաբանում է Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան գործը, իսկ ամբողջը, լիայոյս եմք, որ Պ.Գ.Տ.Մ. շուտով հրատարակել կըտայ, որով եւ Օրբելեան պատմագրի բաց թողածը կը լրացուի: Այս մասին տես ԱՐԱՐԱՏ, 1894 թ., Հայկականք. Թ.:

ունեցել՝ ժողովելով ի մի իրանից առաջ եւ իւր ժամանակուայ կարեւոր թղթերը սոյն վերնագրով՝ «Գիր թղթոց կամ նամակ հաւատոյ»:¹ Այս գրութիւնը Անանիա կաթողիկոսի «Գիր թղթոց»-իցն է, որ հրատարակուած ենք, որից Սիւնեաց պատմիչը բաւական օգտուել է իւր պատմութիւնը գրելիս: Ցանկալի կը լինէր Անանիայի «Թղթոց»-ի ամբողջ օրինակը գտնել, թերեւս Պօլսոմ, Երուսաղէմում կամ Մխիթարեանց Հայրերի վանքերում գտնուին²: Ըստ Օրբելեանի՝ «Գիր թղթոց»-ը գործածութեան մէջ էր մինչեւ իւր ժամանակը՝ ԺԳ դարը: Գուցէ «Ընդհանրականը» եւ Մագիստրոսի թղթերը, գործածութեան մէջ մտնելով, բարձի թողի արած լինին «Գիր թղթոց»-ը: Մեր մատենադարանի համար 58 եւ 100 ձեռագրերի միջի թղթերից մի մասը կարելի է «Գիր թղթոց»-ին վերագրել, մինչեւ անգամ համար 100 ձեռագրի մի մասը «Գիր թղթոց»-ի աղճատուած օրինակն են կարծում:

Անանիա կաթողիկոսը 949 թ. Խաչեան գաւառում.

«ես, Անանիա, շնորհիւն Աստուծոյ Հայոց Մեծաց նուաստ պատրիարք» ելն, ելն:

Եւ ապա՝ «իբր ի խորոց սրտէ զայրագնեալ յիշեցաք զԲանն Տեառն առ աշակերտսն աւանդեալ, թէ հովիւ³ քաջ զանձն դնէ ի վերայ ոչխարաց, իսկ վարձկանն թողեալ զնա՝ ի բացուստ առնուցու նշմարել:⁴ Եւ ժողովեալ զբազմութիւն սուրբ եպիսկոպոսաց եւ սուրբ հարանց եւ գիտնաւոր⁵ վարդապետաց, որ էին յաշխարհիս մերում, դէմ եղեալ նոքօք գնացաք յաշխարհն Խաչենոյ՝ ընդառաջ եղեւ մեզ մեծ եւ փառաւոր, աստուածապահ եւ բարեպաշտ տէր Գրիգոր իշխան, հանդերձ սուրբ եպիսկոպոսօք եւ ձգնաւոր վանականօք եւ այլ անթիւ եկեղեցական կարգակցօք:

¹ Ս. Օրբելեան, Փարիզ, 1859, հատոր Բ, երես 28: Մոսկվա, 1861, երես 208: «Եւ կնքեալ զայս վճիռ իրեանց մատանեալ՝ ետուն ի ձեռս կաթողիկոսին գորս ատելորդ համարեցաք գրել, զի կան լիով գրեալքն ի գիրս թղթոցն, գոր ժողովեալ է սոյն Անանիա, որ հաւատոյ նամակ անուանի»:

² Այսպիսի ժողովածուի մի ընտիր եւ հաւանականօրէն լիակատար օրինակ տեսել եմ Կ. Պօլսի Անտօնեան Սիաբանութեան մատենադարանում: Կ. Վ.

³ ք. լուսանցքում՝ Յօհան 10,11:

⁴ ար. նշմարել եւ ժողովել...:

⁵ ք. գիտնական:

Եւ սիրով ընկալեալ գոհանայր «զՏեառնէ, որ առաքեաց ի խնդիր կորուսելոցս զսուրբ Լուսաւորչի աթոռակալացդ, լուսաւորել զբազմամեայ¹ խաւարն եւ բառնալ զխռովութիւն եկեղեցւոյ եւ միաբանել ի նոյն կարգ եւ ի կրօնս եւ ի հաւատ սրբոյ Լուսաւորչին. զի որպէս էին հարք մեր, լիցուք եւ մեք մինչեւ ցյաւիտեան:

Եւ նոյն ժամայն հրովարտակա գրէր յամենայն գլխաւորս աշխարհին՝ առնուլ հրաման առնել ժողով հանդերձ մեօք ի տան իւր ի Խաչեան գաւառի: Եւ ընկալեալ զհրամանս² իւրանման բնաւիցն, եւ ընկալեալ³ նմանապէս հանդերձ այն՝ աւետաւոր հրատարակել ուր առ բոլոր սուրբ ուխտս, որ էին յաշխարհին Աղուանից, եւ ի հրամանէ Աստուծոյ առ ժամայն ժողովեալ բազում հարք եւ սուրբ եպիսկոպոսունք եւ այլ⁴ գիտնական քահանայք, ըստ այնմ թէ ուր լուծումն մարմնոյ՝ անդ եւ արծուիք հաւաքին:⁵ Ընդորս էր՝ Ա. Գազիկ կարծեալ կաթուղիկոսն⁶,

Բ. Եւ Պետրոս՝ ի նմանէ ձեռնադրեալն էր Գարդմանայ եպիսկոպոս,

Գ. Եւ վանական էր որ յայնմ կողմանէ.⁷ Հայր Դաւիթ Փառիսոսայ վանական.

Դ. Հայր Պետրոս՝ Կովախեղզի վանական.

Ե. Հայր Մանաճիհր՝ Յուսէփոս⁸ վանից վանական.

Զ. Հայր Գրիգորէս՝ Նորավանից վանական.

Է. Հայր Սիմէովն⁹ Խանդոնկան վանից վանական.

Ը. Եւ Սամուէլ երէց¹⁰ Սենեքերիմայ¹¹ դրան քահանայ.

¹ ա. զբազմամեա:

² ա. գիրամանց:

³ ա. չիք «եւ ընկալեալ»:

⁴ բ. այլք:

⁵ բ. լուս. - Գուկ. 17, 37:

⁶ ա. կաթուղիկոս:

⁷ Ուղղելու է. «Եւ վանականք էր որ յայնմ կողմանէ», այսինքն՝ Սենեքերիմ իշխանի բաժնից այն է՝ Գարդման Փառիսոս եւլն:

⁸ բ. Յուսէփոս:

⁹ բ. Սիմէոն:

¹⁰ բ. երէց:

¹¹ ա. Սենեքերիմա:

Թ. Եւ Սուփան Յողջագուրայ սուրբ Անանիանց քահանայ:

Եւ Գրիգոր իշխանի կողմանէն.

Ա. Տէր Յովհաննէս՝ Աթախա(յ) եպիսկոպոս¹,

Բ. Եւ Տէր Յովհաննէս՝ Մաքենոցաց եպիսկոպոս,

Գ. Հայր Միսայէլ՝ Շիկաքարի վանական.

Դ. Հայր Սարգիս՝ Գանձասարու վանական.

Ե. Հայր Մանուչակ՝ Խաչինայ² վանական.

Զ. Հայր Պօղոս Խանդին վանից վանական.

Է. Հայր Գէորգ՝ Ոսկէ վանից³ վանական.

Ը. Հայր Արտաւազդ՝ Այծաքարայ վանական.

Թ. Եւ Սահակ քահանայ զիտնական, որ կոչի Դարբնորդի.

Ժ. Եւ Վարդան քահանայ.

ժԱ. ժԲ. ժԳ. Տիրանուն եւ Պետրոս եւ Պօղոս՝ զրան քահանայք.

ժԴ. Հայր Ստեփաննոս, որ կոչէր քերական:

Եւ այլ բազում գլխաւորք, զորոց աւելորդ համարեցաք յիշատակել զանուանան, մի՛ յագեցումն բանիցն զպատերազմն արասցէ լսողացն, զբանաստեղծութեան զհանդէս:

Եւ բաժամտաբար ոգորեալ ընդ մեզ զաւուրս բազումս այլ եւ այլ մասամբ, զի էին ոմանք ի թիկնածութիւն հաւանեալ Գագկայ, իսկ ոմանք զմերն եւ զմեզ յօժարէին իրաւահարկ սիրով պատուազրել: Իսկ այլք ոչ զԳագիկ եւ ոչ զՅունան, այլ այլոց ակն եղեալ՝ նշկահէին զերկոսեանն:

Իսկ իշխանն Գրիգոր աղաչէր, զի զԳագիկ երկրորդ անգամ ձեռնադրեալ⁴ թողումք⁵ նմա, օրինակ մեզ տալով օձ անհաւանութեան զարարեալ տեառն Գէորգայ հայոց կաթողիկոսի առ Յունան Աղուանից կաթողիկոս, ի ձեռն երանելոյ թագաւորին⁶ Հա-

¹ ք. պակասում է S.3.Ա.Ե:

² ա. Խաչինա:

³ ք. Ոսկէվանից:

⁴ ա. ձեռնադրեալ, ք. ձեռնադրել:

⁵ ա. թողութ:

⁶ ք. թագաւորի:

մամայ¹ բարեխօսութեան: Եւ իբրեւ ոչ գտանէաք Հնարս ելիցն վճարման իրացն կատարելս եւ տեսեալ զանմիաբանութիւն ժողովոյն, ապա յաղօթս ապաւինէաք. քանզի զՅունան յուրովք ի ժողովոյն անարժան կարգային եւ զԳագիկ վարիւք արժանաւոր:

Իսկ զի՞նչ ապա տարակուսիս այսորիկ ելս. զարատաւորն թողուլ չէ մարթ, եւ զի եւ Հաւանէին իսկ ոչ: Զի յորժամ այն ինչ, որ յԱստուծոյ իցէ՝ անդ չիցէ ինչ, որ իցէն² ինչ ոչ ինչ չիցէ: Եւ զերկրորդ ձեռնադրութիւն տալով ուղղափառին՝ ի սուրբ կանոնաց երկոքեան լուծման առնուաք հրաման: Եւ ընդունել ո՛չ իշխէաք՝ յաղագս հրահոսան եւ անբաւ սաստիկ նզովիցն, որ կարգեալ էր ի տանն Աղուանից յաղագս զառ ի նոցին եպիսկոպոսացն ձեռնադրել³ կաթողիկոսն ընդունել, զոր յայլում ժամու եւ պատճառսն ասացուք:

Այլ մեր զնովիմբ ածեալ զբանս, առ որ բանս է, զմիտս իրիս յարմարե ցուք:

Ապա հարկէաք զՅունանն՝ առ ի մէնջ ձեռնադրեալ եւ անարժան երեւեալ՝ լուծանել, եւ զԳագիկն՝ որ առանց Աստուծոյ էր կարգեալ եւ սուրբ կանոնաց՝ զնա եւ զայլս որք համեստագոյնք էին ի ժողովոյն ընդրեցաք, եւ առանձնացեալ դնէաք առաջի զկանոնական հրաման, արկանէաք զամօթ մարդկան, յիշեցուցանէաք⁴ եւ զահ հանդերձեալ ատենին: Իսկ նա իբր զգօնացեալ եւ զարթուցեալ ի քնոյ ասէր՝ մեղա՛յ եւ խոստովանէր լուել յայնմհետէ ի կարգէ կարծեալ կաթողիկոսութեանն: Եւ թէպէտեւ սիրտն բեկանէր եւ ի զղջումն հատանէր, այլ սակայն առ սնոտի փառամոլութեանն⁵ պատիւ(ի) սաղրելոյ չարասէր եւ կորստագմայլ գեհնաժառանգն Յակոբայ⁶ զոխորդս չարութեանն և⁷ զմահաշունչ դեղն ի սրտին գործարանի քողբորբէր⁸: Եւ սողաբայիկ բանիւք

¹ Համամա:

² ա. իցեն:

³ ար. ձեռնադրել:

⁴ բ. յիշեցուցանէ որ:

⁵ ա. փառամոլութեան:

⁶ բ. Յակոբ:

⁷ ար. չարութեանն եւ:

⁸ ա. քողաբորբեր:

աղաչէր զմեզ՝ հանդերձ իշխանօքն՝ դառնալ մեզ յաշխարհն մեր առ անգամ մի, մինչ զի խուզեալ քննեսցին զիւրաքանչիւր ոք ի ներանձնաւորիցն, որ կարիցէ բառնալ զկարգն Աստուծոյ՝ զտեսչութիւն ժողովոյն՝ եւ առաքեսցին ըստ օրինին, եւ ձեռնադրել ի սուրբն Գրիգոր, յիշխանութիւնն Տեառն Աբասայ Հայոց թագաւորի, որպէս եւ էր ի սկզբանէ լեալ եւ կարգեալ¹ ի պատմութեանն Աղուանից: Իսկ մեք հաւանէաք առ ի նոցանէ ասելոյն, յանձն առնուաք դառնալ եւ խնդրէաք ի նոցանէ զպատմութիւնն Աղուանից՝ ուսանել զսկիզբն լուսաւորութեան նոցա, թէ զի՞նչ պատճառաւ: Քանզի ոմանք այսր անդր արծարծէին ունել զլուսաւորութիւն տանն Աղուանից նախագոյ լեալ քան զհայոցս², որ ի սուրբ լուսաւորչէն է եւ ի ժամին³ Տրդատայ Հայոց թագաւորի: Եւ ոչ ետուն մեզ տեսանել, քանզի ցուցանէր գտուն Աղուանից՝ արքեպիսկոպոս եւ գտունս Հայոց՝ պատրիարգ, եւ զառ ինքեանս գիտելով զմասն խոնարհութեան՝ գրաւեալ գաղէին զպատմութիւնն⁴ Աղուանից:

Իսկ որ ըմբռնէ զիմաստունս ի խորագիտութեան⁵ ինքնին յայց ելեալ՝ արար մեզ իրաւունս, քանզի եկին բերին յեղակարծս գրքունս⁶ ինչ Յովհաննու Ոսկեբերանի⁷ կարգալով վասն զիշերոյն ժամու, եւ իբրեւ ի հոգւոյն շնորհաց գոյ ասել զեղեալսն, թէ մերոյ աշխատութեանն պատճառս հանգստեան տալով տեսուն՝ գրեալ ի նա զպատճառս լուսաւորութեանն զոր սիրէաք, որում եւ ցանգորդն էաք տեսութեան:

Եւ զկարդացեալ զպատճէնն⁸ վերասու եղեաք⁹ շարամանութեանն, զոր սիրէաք, որ ունէր զայս ձեւ օրինակի, թէ...»: Քանի որ Անանիա կաթողիկոսի կոնդակի շարունակութիւնը քա-

¹ Բ. ի կարգեալ:

² Բ. հայոց:

³ Եօթն եւ տասն ամին:

⁴ Բ. զպատմութիւն:

⁵ Բ. լուս. 1. կտորն 3. 10, Յօր. 5. 13:

⁶ ա. գրկունս:

⁷ ա. Ոսկեբերանի:

⁸ ա. զպատճէնն:

⁹ Բ. եղաք: Օրբելեան, Փարիզ, Բ հատոր, երես 21: Մոսկվա, երես 203:

ղուածք է 949 թուականին գոյութիւն ունեցող Աղուանից պատմութեան գրքից, իսկ Օրբելեանն էլ քաղուածք է արել սոյն կոնդակի գրութիւնից, ուստի հարկաւոր համարեցի սիւնակների մէջ դէմ առ դէմ շարել նախ՝ Աղուանից պատմութեան այն կտորները, որ մտած է Անանիայի կոնդակի մէջ, երկրորդ՝ բուն կոնդակի քաղուածքը՝ Աղուանից պատմութիւնից, եւ երրորդ՝ Օրբելեանի քաղուածքը՝ յիշեալ կոնդակի պատմութիւնից: Նախ քան սիւնակների միջոցով համեմատական գաղափար տալը, տեսնենք՝ մինչեւ ցարդ յառաջ բերած կոնդակի մասից ինչպէս է օգտուել Օրբելեանը. ահա Օրբելեանի պատմածը Անանիայի՝ Աղուանից աշխարհը գնալու եւ այն տեղի անցքերի մասին.

«Եւ դէմ եղեալ երթայր յԱղուանս.¹ եւ հասեալ ի գաւառն Խաչենոյ՝ ընդ առաջ ելանէ նմա իշխանն Գրիգոր եւ տարեալ իջուցանէ ի տան իւրում: Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհիս եւ զեպիսկոպոսունս եւ զվանականս ի տեղին, որ Աղախն² կոչի. գան եւ Գագիկ եւ Յովնան: Ապա խնդրէր³ կաթուղիկոսն Անանիա զպատմութիւնն Աղուանից, զի գիտասցեն զորպիսութիւնն Աղուանից Աթոռակալացն, եւ նոքա թագուցեալ ամենեւին ոչ ցուցանէին: Ապա ըստ վերին խնամոցն ի գիշերի պաշտամանն ընէ եկեղեցապանն Գանձասարու գիրք մի՝ որպէս թէ Յովհաննու Ոսկեբերանի է⁴, եւ մեծարեն զկաթուղիկոսն յընթեռնուլ, զոր եւ բացեալ եգիտ զոր խնդրէրն, զի էր պատմութիւնն Աղուանից»:

¹ [Ծնթ.-ը բնագրում չկայ]:

² Փարիզեան տպ.՝ Արղախն:

³ Փար.՝ խնդրէր ապա:

⁴ Մոսկ.՝ չիք:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ Մ. ԿԱՂ. ԵՒ ԳԻՐՔ ԹՂԹՈՑ
ԱՆԱՆԻԱՅԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ*

Ա.

«Յետ առաքելոցն¹ Բարդուղիմէոսի եւ Թադէոսի զկնի ՄԿԶ (266) ամի. է. եւ ի Ժ. (17) ամին Տրդատայ Հայոց թագաւորի եւ Ուռնայրի² Աղուանից թագաւորի ընծայի յաթոռ նոցին Առաքելոցն՝ Սուրեան Պահլաւ³ Արշակունին, յազգէ Տէր սուրբ Գրիգորի⁴ Լուսաւորչին Հայոց, ի կռապաշտութեանն զեռ գոլով Տրդատայ եւ Ուռնայրի Հայոց եւ Աղուանից թագաւորաց»:

Սոյն հատուածի մասին ո՛չ Աղուանից եւ ո՛չ էլ Սիւնեաց պատմիչները ոչինչ չեն յիշատակում: Աղուանից պատմութեան այն կտորները, որոնցից քաղուածքներ է արել Անանիա կաթողիկոսը, համեմատութեան համար զէմ առ զէմ եմ զնում Աղուանից պատմութեան երկու խմբերի թէ՛ տպագիր եւ թէ՛ գրչագիր օրինակներից քաղուածքներ՝ իւրեանց տարբեր ընթերցուածներով հանդերձ՝ միայն բնագիր ընդունելով ամենից հին ՁԼԸ (738=1289) թուականի երկաթագիր օրինակը, իսկ մնացեալները տարբերութեան համար թողնելով: Օրինակների համառօտագրութիւններն են՝ Ղուկիհանոս դպրի օրինակը՝ Ղ., Շահխաթունեանի օրինակը՝ Շ., Փարիզեան դպրագրութեան համար՝ Փ., Մոսկվայի՝ Մ., երկրորդ խմբի բոլորագիր օր.՝ Բ, նօտրագիր օր.՝ Ն:

* ԱՐԱՐԱՏ, 1896, էջ 25-26, 67-69, 125-128, 176-179:

¹ ար. (ա.՝ համար 100 ձեռ. ք.՝ համար 58 ձեռ.) - առաքելոյն:

² Ուռնայր ի Աղուանից:

³ ար. Պալիաւ:

⁴ ա. Գրիգոր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ

Բ. «Յայնժամ^{ա)} ազդեալ չարին ի միտս չար արբանեկացն, տարեալ ընկենուին զսուրբն Գրիգորիոս յանհնարին խոր վիրապին Արտաշատ քաղաքի. յորում զերեքտասան ամ¹ աւճախառն² բնակէր վայրի:... Եւն, եւն:

«Նորին իսկ Դեւքն զորս նուիրաւքն³ եւ զոհիւք⁴ մեծարէին: Իբրեւ⁵ ի վերայ թշնամեաց հասեալ տային⁶ մոլեգնեալ⁷, եւ ուտել զիւրեանց մարմինսն,⁸ այլ եւ ի նորին թագաւորին զկերպարանս ի խոզի դարձուցեալ զբնութիւնն⁹ յեղեգն¹⁰ լինել փախստեայ:

«Յայնժամ ահ եւ երկիւղ սաստիկ զամենեսեան ընոյր, մինչեւ մնացին կորստեան կենաց աշխարհին:

«Մինչդեռ¹¹ յայսմ ահի եւ ի դողման կային ի մեծամեծաց մինչեւ ի փոքունս,¹² երեւէր ի տեսլեան զիշերոյ, հրեշտակ ողորմութեան Աստուծոյ, կնոջ ումեմն Խոսրովիդուխտ անուն¹³ քեռ Տրդատայ Հայոց արքայի»:

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ

Բ. «Եւ այսահալած¹⁴ արտասուօք ի խորս թիւնաւորացն յամենելով եռահնգեայ¹⁵ ամովք աստանոր արտափայլեաց զԱսքանագեանս¹⁶ ազնի կուսպաշտութեանց զիւցախաւար ճենճերոց, անմահացեալ ի տանջանս եւ մահացուցեալ զիշխան աշխարհիս՝ զսատանայ եւ զկամարարս նորին, զարի եւ զմեծ հսկայն զզիւցազոհն Տրդատ Հայոց թագաւոր, անմաքրից գաղափարեալ կնճթակերպ խոզիցն վարսիւք:

«Որով եւ կրկին ընկալեալ եղեւ շնորհ ի շնորհաբաշխն Քրիստոսէ ի ձեռն երազոցն Խոսրովիդխոյ, ոչ այլ ազգ գտանել բուժել յախտիցն զիւրաբախութեանց, թէ ոչ աղաւաղելոցն ի խորս թիւնաւորացն սրբոյն Գրիգորի ձեռամբ:

^{ա)} ա. Պատմ. աղ., խումբ. ա, գլուխ ԺԳ(14):

¹ Ղ. Մ. ամս.:

² Ղ. օճախառն: Փ.Մ. յօճախառն:

³ Մ. Նուիրոք: ԵՓ. նուիրոքն:

⁴ Ղ. գոհիւքն:

⁵ Մ. պակասի իբրեւ:

⁶ Մ. յաւելու. տային նոցա:

⁷ Փ.Մ. մոլոգնել:

⁸ Մ. մարմինս:

⁹ Փ. բնութիւն: Մ. ի բնութիւն:

¹⁰ Փ.Մ. յեղէգն:

¹¹ Մ. մինչեւ:

¹² Ղ.Մ. ցփոքունս:

¹³ Ղ. յանուն:

¹⁴ աք. այսահալած:

¹⁵ ա. եռահնգեաց:

¹⁶ ա. զայսքնագեանս: բ. զայսք աշեանս:

«Անհնարին է ձեզ, ասէ, ի հարուածոյդ¹ գերծանել, բայց եթէ² ի ձեռն սրբոյն Գրիգորի, երթեալ հանէք զնա ի խոր վիրապէն: .ս... եւլն:

«Որոց ծուներ եղեալ մեծին սրբոյն³ Գրիգորի, արտասուաւք խնդրէր յամենողորմն⁴ Աստուծոյ զփրկութիւն թշուառացեալ ազգին:

«Եւ անդէն վաղվաղակի ընդունէին ի ձեռն սրբոյն աղաչանաց զբժշկութիւն մարմնական տանջանացն, ընդնմին եւ զհոգւոյն⁵ լուսաւորութիւն:.. եւն:

«Եւ ոչ կացեալ իւր իսկ ունել զաթոռ քահանայապետութեան, հրեշտակ⁶ Աստուծոյ եկեալ առ մեծն Գրիգորիոս⁷ ասէ ցնա. Ո՛չ հետեւ⁸ եւ համառեալ⁹ առ խոնարհութեան կարգին, այլ յայսմ քաջանալ եւ առնուլ կրկին զանանցական պատիւն որ վասն քահանայապետութեան շնորհի¹⁰ Աստուծոյ: ¹¹ ..» եւլն:

«Յաղագս որոյ¹² եւ զանյիշատակն ի թագաւորին խնամոցն պահեալ, փրկութիւն աղօթիւք նորին գործեաց¹³ թագաւորին:

«Որոյ ելեալ¹⁴ աղօթէր վասն նորին եւ բժշկեալ մկրտէր յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ¹⁵:

Ջոր եւ անդանօր նորին երանելոյն Տրդատայ թագաւորին գերապատուեալ զնա խորաշքեղ զարդիւք համգունակ Ահարոնի քահանայապետի, վակասակիր երկակի վեց ակամբ¹⁶ շարառութեամբ, բերեալ զօրինակ ապագայիցն զքահանայապետին Գրիգորիսի, շնորհեալ պատիւ իւրոյ Լուսաւորչին»:

¹ Մ. հարուածոյդ:

² Ղ.Շ.Փ.Մ. եթէ:

³ Մ. պակասի սրբոյն:

⁴ Ղ.Մ. յամեողորմէն:

⁵ Փ. զհոգւոյն:

⁶ Ղ.Շ.Մ.Փ. հրեշտակ:

⁷ Փ. Գորիգոր:

⁸ Փ. հետեւ:

⁹ Ղ.Մ.Փ. յամառել:

¹⁰ Փ. շնորհիւն:

¹¹ Ղ.Մ. յԱստուծոյ:

¹² ա. որո:

¹³ բ. գործէ:

¹⁴ Բ.Ն. եկեալ:

¹⁵ ա. պակասի. սրբոյ:

¹⁶ ար. Չ ակամբ:

Այս հատուածը Աղուանից պատմիչը քաղուածք է արել Ագաթանգեղոսից, որի համար երկրորդ խումբը զանցառութեան է տուել: Որ է՝

«Որ ինչ սակս երիցս երանելոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի պատմութիւն, Ագաթանգեղոս ուսուցէ: Իսկ զոր առ Աղուանս գործ ընդձեռն մանկանն Գրիգորի, գտանի յայսմ մատենի:

«Վասն զի մեծին Գրիգորի կամ էր¹ ոչ նստել յառաքելական յայն աթոռ², հրեշտակ Աստուծոյ եկեալ առ նա, ասէ, ո՛չ հաստել եւ արհամարհելով է յամառելդ ի խոնարհութեան կարգի, այլ քաջանալ եւ առնուլ զկրկնակի անանցականութեան պատիւն զոր վասն քահանայութեանն շնորհի յԱստուծոյ»:

¹Ն. կամիր:

²Ն. յԱթոռ:

Գ. «Զայս՞ լուեալ քաջին Ուռնայրի ոչ դլաց,¹ եւ² ոչ դադարեաց, եւ ոչ ի ձեռն ծառայական հրեշտակին³ այլ ինքնին մեծ թագաւորն մեծամեծաւք⁴ նախարարաւք եւ բազմագունդ⁵ զաւրաւք⁶ գայր⁷ հասանայր⁸ յաշխարհն հայոց, յանդիման լինէր սկայ ազաւր⁹ թագաւորին:¹⁰

«Իսկ նորա եղբայրաբար սիրով բարեկամութեամբ¹¹ ընկալեալ,¹² բոլոր զինքն¹³ առաջի առնէր նմա,¹⁴ զներքին եւ զարտաքին խորհուրդա¹⁵ մերկանայր. եւ դնէր առաջի նորա հանդերձ սրբովն Գրիգորիւ եւ ամենայն բազմութեամբ զաւրացն Հայոց, խոնարհէր թագաւորն ձեր¹⁶ անկանէր եւ պատէր զոտիւք¹⁷ եւ ձեռաւք¹⁸. պատմէր զամենայն մոլորութիւն հեթանոսաց, եւ ինքն խոստովան լինէր վասն

Ա.

Գ. «Վասն այսորիկ¹⁹ լուեալ զօրեղ եւ պատուական, արի եւ քաջ արքայն Աղոռանից Ուռնայր, հետեւէր ի տեսիլ սքանչելեացն եղելոց, զոր լուաւ, եւ եկեալ ետես զքահանայապետն Աստուծոյ. եւ զիրս սքանչելեացն եղեալ եւ զթագաւորն հաւատացեալ:

«Զահի հարեալ փառաւորէր զԱստուածն Տրդատայ, զարարիչն զերկնի եւ երկրի, եւ հաւատայր յամենասուրբ երրորդութիւնն, եւ մկրտէր ի ձեռաց սրբոյ Լուսաւորչին Գրիգորի Հայոց պատրիարքի երիցս երանելոյ, եւ խնդրէր Նորին սուրբ ձեռաց ձեռնադրութեամբ Հայրապէս ինքեան աշխարհին:

«Որում հաւանեալ ձեռնադրեաց պատրիարզն Հայոց սուրբն Գրիգորինս²⁰ գայր մի երանելի յեպիսկոպոսու-

^ա ա. Պատմ. Աղ. (ա. որ. խմբ.) գիրք. ա. գլ. ԺԱ. (11): Գլխո կաթողիկոսը Աղ. Վաչէ արքային:

¹ Մ. ոչ դլացաւ:

² Բ.Ն.Մ. պակասի. եւ:

³ Բ.Ն. Մ. հրեշտակի:

⁴ Բ.Ն. մեծամեծ:

⁵ Բ.Ն. բազմագումար:

⁶ Բ. զաւրովք: Մ. զօրաւք:

⁷ Ղ. գնայր:

⁸ Բ.Ն. Ղ.Մ.Փ. հասանէր:

⁹ Բ. հսկածեւ: Ն. սկայածեւ: Ղ.Մ. հսկայագօր, Շ.Փ. Սկայագօր:

¹⁰ Բ. արքային Տրդատայ: Ն. թագաւորին Տրդա[ա]տայ:

¹¹ Ղ.Մ. եւ բարեկամութեամբ:

¹² Բ.Ն. ընկալեալ բարեկամութեամբ:

¹³ Բ.Ն. զբոլորայնովքն: Մ. զբոլոր զինքն:

¹⁴ Ն. նմայ:

¹⁵ Բ.Ն. խորհուրդն:

¹⁶ Բ. ծեր:

¹⁷ Բ.Ն. զոտս[ո]վք:

¹⁸ Բ. զձեռովք:

¹⁹ Ա. Վայսակ:

²⁰ ար. Գրիգորիոս:

տգիտագործ մեղացն անցելոցն¹:... եւլն: «էջ² թագաւորն յամենասուրբ³ ջուրն, եւ ամենայն զաւրբն ընդ նմա⁴, եւ կատարեաց քահանայապետն⁵ ի⁶ վերստին ծնունդն⁷ ի⁸ յերկնաւոր երրորդութիւն⁹, ելին ամենեքեան¹⁰ հոգւովն¹¹ սրբով»:

«Ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի, ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն¹² ի Հռովմ¹³ քաղաքէ որ եկեալ էր¹⁴ ընդ Տրդատայ¹⁵ արքային¹⁶ այսու երկնաւոր բարուք¹⁷:

«Եկն Ուռնայր արքայ¹⁸ եմուտ յաշխարհն¹⁹ Աղուանից, ուսաւ²⁰ եւ կատարեաց գնոսա առաքելական կանոնաւք. ընկալան ամենեքեան²¹

թիւն ի Հռովմ²² քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքայի:

«Զոր առեալ դառնայր յաշխարհն իւր մեծաւ խնդութեամբ, իբրեւ գտեալ աւար²³ բազում հոգեւոր գանձուց:

«Եւ նոյնժամայն նախանձախնդիր եղեալ սրբոյն Տրդատայ Հայոց թագաւորի՝ սուրբ այրն Ուռնայր Աղուանից²⁴ թագաւոր, բառնայր զխաւար կռապաշտութեանց (յ) իւրոյ աշխարհէն եւ շինէր եկեղեցիս եւ հաստատէր քահանայս եւ դպրոցս Աստուածաշունչ ուսմանց:

«Եւ պատուէր կրկին կրկին²⁵ պատուով զարքեպիսկոպոսն իւր, գձեռնադրեալն ի սրբոյն Գրիգորէ՝ Հայոց պատրիարգէ:

¹ Ն.Ղ.Փ.Մ. անցելոց: Բ. յանցանաց:
² Ն. էր:
³ Բ. ամենասուրբ:
⁴ Ն. նմայ:
⁵ Ն. քահանապետն:
⁶ Բ.Ն. պակասի Ի:
⁷ Բ.Ն. ծնունդ:
⁸ Բ.Ն. չիք Ի:
⁹ Բ.Ն. որդեգրութիւն:Մ. յորդեգրութիւնն:
¹⁰ Բ.Ն. յաւելու. լցեալ:
¹¹ Բ.Ն. հոգովն:
¹² ա. Պատմ. Աղ. ա. խմբ. գիրք. ա. գլ. Թ (9):
¹³ Բ.Ն.Ղ.Շ.Մ.Փ. յեպիսկոպոսութիւն:
¹⁴ Բ.Ն.Փ. Հռոմ, Ղ. Հռոմ:
¹⁵ Բ.Ն. պակ. էր:
¹⁶ Բ. տրդատա:
¹⁷ Բ.Ն. արքայի:
¹⁸ Բ.Ն.Շ.Ղ.Մ. բարեօր:
¹⁹ Բ. արքայ:
²⁰ Բ. յաշխարհս: Ն. յաշխարհոյ:
²¹ Բ.Ն.Մ. ուսոյց:
²² Բ.Ն.Ղ.Շ.Մ. ամենեքեան: Փ. ամենեքին:
²³ ք. Հռոմ:
²⁴ ք. աւուր:
²⁵ ք. Աղւնիք:
ք. մի կրկին:

զղրոշմն¹ երկնաւոր² եւ գրեցան ի դպրութեան կենացն:³

«Իսկ⁴ զկնի սորա (Ուռայրի) մահուանն⁴ խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն⁵ իւրեանց:

«Զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորա⁶ Նորին սուրբ⁷ ձեռնադրութեամբն լինել եպիսկոպոս աշխարհին իւրոյ:

«Որք⁸ եւ այսու կանոնիւ կացին աշխարհս⁹ Հայոց եւ Աղուանից համակամ եղբայրութեամբ եւ անքակ ուխտիւ մինչեւ ցայսօր:»¹⁰

«Յազագս որոյ¹¹ եւ յայս լուսաւորութեան եկաց տեւեաց աշխարհս Հայոց եւ Աղուանից միակամ եղբայրութեամբ, որպէս եւ կարգեաց սուրբն Գրիգոր. - լեալ ձեռնադրութիւն տանն Աղուանից ի Հայոց Հայրապետէն, որ նստէր յաթոռ սրբոյն Գրիգորի¹² Լուսաւորչին. զամս չորեք ձմիւն. (440), ի ժամանակս ԻԵ (25) կաթողիկոսի մինչեւ ցտէր Աբրահամ Հայոց կաթողիկոս):»:

Որովհետեւ առաջին խմբին պատկանող թէ՛ գրչագիրը եւ թէ՛ տպագիր օրինակների հիմքը ՉԼԸ (738=1289) թուականի երկաթագիր օրինակն է եղած, ուստի եւ ինչ թերութիւն ունեցել է սա, նոյնը եւ անփոփոխ կրկնել են ե՛ւ ընդօրինակողները, ե՛ւ տպագրողները: Երկաթագիր օրինակում «Զի Ուռնայր... մինչեւ «ցայսուր» փակագծի մէջ ամփոփուած հատուածը քերած եւ նոր գրած է, ե՛ւ գրչութեամբ, ե՛ւ մելանով տարբերում է ձեռագրի գրչութիւնից: Մինչեւ անգամ շատ որոշ կերպով նկատելի է թերթի միւս երեսից, երբ լոյսի առաջ ես բռնում, քերուածքը պարզ ապացուցւում է, իսկ թէ ո՞վ է եղել կեղծողը, ո՞ր ժամանակից է, եւ ի՞նչ դիտաւորութեամբ են կեղծել, այս մասին՝ յետոյ: Ահա թէ

¹ Բ.Ն. զղրոշմ:
² Բ.Ն. յաւ. կենաց:
³ Բ. ի ժառանգութիւն երկնից: Ն. ժառանգութիւն երկնից:
⁴ Բ.Ն. մահու սորա: Գ.Մ. սորին մահուանն:
⁵ Բ.Ն.Գ.Մ. կաթողիկոսութիւն: Շ. կաթողիկոսութիւն: Փ. կաթողիկոսութիւն:
⁶ Գ.Շ.Փ. Գրիգորայ: Մ. Գրիգորէ:
⁷ Մ. պակ. սուրբ:
⁸ Մ. որ:
⁹ Մ. աշխարհն:
¹⁰ փակագծած հատուածը ա. խմբ. եղծուած է՝ քերած եւ նոր գրած է:
¹¹ ա. երո:
¹² ա. պակասի. Գրիգորի:

եղծուած հատուածը երկրորդ խմբի մէջ ինչպէս ենք գտնում: Պատմ. Աղ. Ա. գլ. Թ. (9). գրչագիր-բոլորագիր եւ նստրագիր օրինակներում.

«Ոչ թէ ի հարկէ ինչ, կամ թէ առաջ գոյ զՀայս քան զԱղուանս հաշուեցան:

«Այլ սակս մեծասքանչ զօրութեանն, որ կատարեցաւ ի Հայք, կամ եղեւ սոցա կամաւ Հնազանդել¹, արժանաժառանգ զարմի² սրբոյն Գրիգորի, կոչեցին եւ հաճեցան»:

Սոյն հատուածը նստրագիր օրինակում տողամէջ շղագրով գրած է այսպէս՝

«Ոչ թէ ի հարկէ՝ այսքանս զոր զնգնածեւեցաք, սուտ էր եւ յետոյ ներմուծեալ ի սնապարծից յօգուտ անձանց, զի ի յայլս պատմութիւնս ոչ գոյ բնաւ, թուի թէ յԱնանիայ կաթողիկոսէն յետոյ այսպէս արարին Աղուանից սեւագլուխքն»:

Շղագիր գրութիւնս պատկանում է Սիմէօն կաթողիկոսին, որ մեծ անհանգստութիւն կրեց Աղուանից հակաթող կաթողիկոսների երեսից: Թերեւս երջանկայիշատակ Սիմէօն կաթողիկոսը այդ անվերջ դահական կռիւների շնորհիւ լինի արտագրել տուած Մատենադարանիս համար 58 ձեռագիրը, որի մէջ է նաեւ Անանիայի գրութիւնը: Գրչագրի վերնագիրն է.

«Գիրք այսինքն Մատենան որ եւ կոչի թողութ ընդհանրական Տեառն Ներսէսի կաթողիկոսի Հայոց, առ համօրէն Հայասեռ ազինս, որոյ տեսչութիւն հաւատացաւ նմա ի տեառնէ: Եւ Հոսմ Կլայն. Ո. (600=1151) թուին: Եւ օրինակեցաւ ի Հայրապետութեան Տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց ի սուրբ էջմիածին. ՌՄԺԶ. (1216=1767) թուոջ մայիս է»³:

Ինչպէս տեսանք Սիւնեաց պատմիչ Օրբելեանը առաջին հատուածից ոչինչ չի օգտուել, նոյնպէս եւ երկրորդ հատուածից: Այլ միայն սկսում է իր քաղուածքը երրորդ հատուածից, որ է այսպէս՝ «Եւ էր ի նմա գրեալ ամենայն ճշգիւ, զի առաջին եպիսկոպոս յԱղուանս ի սրբոյն Գրիգորոյ Հայոց Լուսաւորէն լինէր

¹ Ն. հնագաղել:

² Ն. զարմին:

³ Մ. եպիսկոպոսն:

ձեռնադրեալ ի խնդրոյ Ուռնայրի արքային Աղուանից,¹ եւ կացեալ ի հնազանդութեան Հայոց աթոռակալացն զամս 440, ի Հայոց առին ձեռնադրութիւն Աղուանից կաթողիկոսքն, զի Հայոցն պատրիարք էր եւ Աղուանիցն արքեպիսկոպոս, եւ այս ի ժամանակս քսան եւ հինգ կաթողիկոսաց Հայոց մինչ ի տէր Աբրահամ»^մ:

Դ. «Ի ժամանակս»^մ Աբրահամու Հայոց կաթողիկոսի² բաժանեցան Վիրք ի Հայոց միաբանութենէ, ի ձեռն անիծելոյն³ Կիրոնի:⁴ Այլ եւ Յոյնք եւ յիտաղիա⁵ ընդ նոսա:⁶ «Իսկ⁷ Աղուանք ոչ քակտեցան յուղղափառութենէ եւ ի միաբանութենէ Հայոց, զորոյ⁸ շրջաբերական⁹ թղթին¹⁰ վասն Կիրենի¹¹ դիմադարձութեան¹² Աբրահամ զամբաստանականն¹³ վասն նորա¹⁴ յազգս¹⁵

Դ. «Աւաղ ապա աստանօր յիշատակիս, քանզի ի սորին ժամանակս ի բաց կացին վիրք ի միաբանութենէ Հայոց եւ կուրացան, շլացան կորոզնիք¹⁶ ի պատուիրանէն, եւ թիկունս¹⁷ դարձուցեալ ապաբանեցին հօրն հաւատոյ:

«Եւ ընտրեցան որպէս ապերախտք եւ անհնազանդք, եւ հաճեցան լինել¹⁸ կցորդ քաղկեդոնի. փոխեալ զսահման հարցն, թողեալ զուսումն մանկութեան եւ մոռացեալ զուխտն Աստուածեղէն»:

¹ Փ. Աղվանից: Հանգուցեալ Կարապետ վարդապետ Շահնագարեանը ե՛ւ Աղւանից, ե՛ւ Սիւնեաց պատմութեանց մէջ Աղուանք անունը միշտ «ու»-ի տեղ «վ» է գործածում. «Աղվանք»:

^մ ա. Օրբելեան. Փարիզ, հասոր Բ, գլ. ԾԲ (52), երես 22: Մոսկվա, ԾԱ. 51), երես 204:

^ա ա. Պատմ. աղ. գիրք Բ. գլ. ԽԸ. 47) երկոքին խումբ:

² Բ.Մ. կաթողիկոսի:

³ Ղ. անեծելոյն: Մ. պակ. անիծելոյն:

⁴ Բ.Ն. Կիրոնի:

⁵ Ղ. յիտաղիայ:Շ. յիտաղա: Ն.Մ.Փ. Իտալիա: Բ. Իտալիայ:

⁶ Ն. Մոսա:

⁷ Բ.Ն. Եւ:

⁸ Բ.Ն. գորոց:Փ. որ է: Մ. որոց:

⁹ Բ.Ն. ի շրջաբերական:

¹⁰ Մ. Թղթոյն: Մ. թղթով:Փ. թղթի:

¹¹ Բ.Ն.Ղ. կիրոնի: Փ.Մ. Կերիոնի:

¹² Բ.Ն.Մ. դիմադարձութեանն:

¹³ Բ.Ն.Շ.Փ. զամբաստանականս: Ղ. զամբարտա - կանսն: Մ. պակ. զամբաստանականսն:

¹⁴ Մ. պակ. վասն նորա:

¹⁵ Բ.Ն.Շ.Փ. յաւ. գրէ յազգս:

¹⁶ աք. նոյնպէս: Թերեւս գոռոզնիք` հպարտք:

¹⁷ ք. Ի թիկունս:

¹⁸ ք. լուսանցքում: առկ. Լ. 17:

ամենայն ի՛ բաց կտրելով՝² սրով հոգ-
ւոյն:³

«Ազգէ նախ յԱղուանս⁴ տայ զգի-
տութիւնս⁵ եւ գրէ այսպէս ի թղթին ե-
թէ⁶ յառաջագոյն քան զՀայոց աթո-
ռակալութիւն, ⁷ կացեալ աթոռակա-
լութիւնն⁸ Աղուանից ընդ⁹ մեզ համա-
ձայն գոլով¹⁰ նոցա եւ կամակցու-
թեամբ. նզովեցաք¹¹ ընկեցաք զկիւ-
րոն¹² ըստ հրամանի¹³ հարցն մեք եւ
Աղուանք»:

«Եւ՞ զՀայք,¹⁴ Պարսիկք,¹⁵ եւ Յոյնք
բաժանեալ էին, եւ տէր Մովսէս էր
յաթոռ¹⁶ սրբոյն Գրիգորի ի Դունի¹⁷:

«Եւ կողման¹⁸ Յունաց հակառակ ի¹⁹
նմա նստուցին զՈհան²⁰ ոմն մերձ առ
նա:... եւլն:

«Եւ ի ժԹ (19). ամին Աբրահամու
կաթողիկոսի զտէր Յոհանն ի Գոգա-
յովտէ, Մօրիկ կայսր Հռոմայեցւոց²¹
կացուցանէ կաթողիկոս Հայոց ի բաժ-
նի յունական կողմանն, ի ժամանակս
Աբրահամու:

«Իսկ Կիւրիոն²² Վրաց արքեպիսկո-
պոսն յաղագս զգոյզն պատճառի՝ ա-
ղագաւ փառամոլութեան բաժանեալ ի
Հայոց խոստովանէր զաղանդն քաղ-
կեդոնի:

Որ բազում անգամ գրեցաւ առ նա
տէր Աբրահամ Հայոց կաթողիկոսն՝
դառնալ նմա ի մոլար ճանապարհէն,
եւ ոչ կամեցաւ, զի յոյժ ներկեալ էր
աղանդովն²³ քաղկեդոնի:

¹ Ղ. յաղագս ամենայնի:Մ. եւ յաղագս ամենեւին: Ղ. պ. Ի.:

² Մ. կտրելոյն գնա:

³ Բ.Ն. հոգոյն:

⁴ Ն. Աղուանս:

⁵ Բ.Ն. պակ. տայ. ոգիտութիւն:

⁶ Բ.Ն. թէ: Ղ.Շ.Փ.Մ. եթէ:

⁷ Բ.Ն. աթոռակալութիւնս.Մ. աթոռակալութիւնն:

⁸ Բ.Ն. աթոռակալութեանս:

⁹ Մ. էւ ընդ:

¹⁰ Բ.Ն.Փ.Մ գոլով եւ նոցա:

¹¹ Ղ.Շ.Փ.Մ. նրոզովեցաք: Բ.Ն. նզովեալ արտաքս:

¹² Ղ.Շ.Փ.Մ. դԿիւրիոն:

¹³ Բ.Ն. Ըստ կանոնական հրամանի հարցն, զոր հատին ի վերայ Հռոմին կլ
կացցէ մինչեւ ցբուն մեք եւ Աղուանք:

¹⁴ Պատմ. Աղ. գիրք. Բ. գլ. ԽԸ (48) երկոքին խումբ:

¹⁵ Փ.Մ. զՀայս: Ն. Հայք:

¹⁶ Բ. եւ պարսիկք:

¹⁷ Մ. յաթոռն:

¹⁸ Բ.Ղ. Դընի: Փ. Դվի: Մ. Դուին:

¹⁹ Բ.Ն. կողմն: Փ. ի կողմն: Մ. կողմանք:

²⁰ Բ.Ն.Փ.Մ. Նմա:

²¹ Ն.Մ. զՅովհան: Բ.Փ. զՅոհան:

²² ա. հռոմայեցոց:

²³ ք. Կիւրոն:

²⁴ ար. յաղանդովն:

«Եւ սակս¹ ինն դասակարգութեան գլխաւորք² եկեղեցական³ անձնաճաճ կամաւ⁴ ըստ նպիրտ⁵ բարուց⁶ Հայաստանեայցն,⁷ կարգեն⁸ զԱբրահամ պատրիարք⁹ եւ զաղուանիցն արքեպիսկոպոս,¹⁰ եւ զՎրացն Նետրոպողիդ,¹¹ խեռացաւ¹² վրացն որում Կիւրոն¹³ կոչէին, եւ զհակառակութիւն բերէր¹⁴ վճիռ: ¹⁵

«Իսկ¹⁶ Հայրապետն Աբրահամ ասէր լինել¹⁷ յառաջաճաւատ քան զվիրս զԱղուանս: ¹⁸ Եւ նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն¹⁹ յայսմ²⁰ մաքառմանէ եւ ի խնդիր ուղղափառ²¹ հաւատոյ դարձան վիրք եւ եղեն քաղկէդոնիաք: ²²

«Եւ յերկփեղկել հայրապետութեանն Հայոց վաղճանէր մետրապօլիտն²³ Աղուանից, ձեռնադրեալն յԱբրահամայ Հայոց կաթողիկոսէ:

«Իսկ տանն Աղուանից նշկահեալ զանմիաբանութիւնն Հայոց, նախանձեալ ընդ Կիւրիոն²⁴ եւ ինքեանք ձեռնադրեցին ինքեանց կաթողիկոս, եւ շաղեցան սուղ ինչ ժամանակս՝ զամս ԻԸ [28] մինչեւ ի վաղճանելն²⁵ տեառն Աբրահամու եւ տեառն Յովհաննայ երկուս²⁶ միայն լեալ ի տանն Աղուանից անձամբ կաթողիկոս»:

¹ Մ. Ի սակս:
² Մ. գլխաւոր:
³ Ղ.Մ. եկեղեցականք:Բ. եկեղեցոյ:
⁴ Բ.Ն.Փ. կամօք: Շ. կամաք:
⁵ Բ.Ն. Նրպիրտ: Շ.Փ. քիրտ:
⁶ Բ. բարույն:
⁷ Բ. Հայաստանեաց: Ն.Ղ. Հայաստանեայցն:Մ. Հայաստանեայց:
⁸ Բ. կաեգէն:
⁹ Ն.Ղ.Փ. պատրիարք:
¹⁰ Բ.Ղ.Շ.Փ.Մ. արքեպիսկոպոս:
¹¹ Բ.Ն.Ղ.Փ. մետրապօլիտ: Մ. մետրապօլիտ:
¹² Բ.Ն.Ղ.Փ. խեռեցաւ:
¹³ Բ.Ն. Կիւրովն: Շ.Փ.Մ. Կիւրիոն:
¹⁴ Ն. բերեալ:
¹⁵ Բ.Ն.Ղ.Շ.Փ.Մ. վճիռ:
¹⁶ Ղ.Մ. յաւելուն. Սուրբ:
¹⁷ Ղ. լինիլ:
¹⁸ Ղ. զաղուանս:
¹⁹ Շ. եպիսկոպոսութիւն:
²⁰ Մ. յայսմ:
²¹ Բ.Ն. ուղղափառութեան:
²² Բ.Ն. քաղկեդոնիկ: Ղ.Շ.Փ.Մ. քաղկեդոնիաք:
²³ աք. Նետրապօլիտն:
²⁴ ք. Կիւրոն:
²⁵ ք. ի վախճանել:
²⁶ աք. բւս.:

« Իսկ գերկուանալն¹ Հայրապետութեան² խոտեցին տեարքն Սիւնեաց, եւ ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն,³ Հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինոյն⁴ Պետրոսի: Որ հասեալ ի վախճան⁵ պատուէր ետ վիճակին իւրոյ⁶ առնուլ ձեռնադրութիւն յԱղուանից:⁷ Եւ զմիւռոնն⁸ աւրհնութեան մինչեւ միասցի աթոռ սրբոյն Գրիգորի:

«Վասն այսորիկ⁹ ձեռնադրեցաւ Վրթանէս¹⁰ յէպիսկոպոսութիւն¹¹ Սիւնեաց, ի գաքարիայ¹² սուրբ¹³ Հայրապետէն Աղուանից: Ընդ նմին եւ զիւզն աւրհնութեան¹⁴ ամ յամէ¹⁵ առնուին¹⁶ սիւնիք¹⁷ յԱղուանից: Մինչեւ բարձաւ հակառակութիւնն, եւ միապետեաց Աբրահամ զՀայրապետական¹⁸ աթոռն»:

¹ Ն. գերկուանալ: Փ. յերկուանալն:

² Փ.Մ. Հայրապետութեան:

³ Ն. ի յերկուցն:

⁴ Ղ.Շ. Փ.Մ. առաքինվոյն:

⁵ Ն.Ղ.Փ.Մ. վախճան:

⁶ Բ.Ն.Մ. իւրում:

⁷ Բ.Ն. յԱղուանս:

⁸ Բ. զմիւռոնն:Ն. զմեռոնն: Մ. զմեռոնն:Ղ. մեռոնն:

⁹ Բ.Ն. այնորիկ:

¹⁰ Ղ.Փ.Մ. Վրդանէս:

¹¹ Բ.Ն.Ղ.Շ.Մ.Փ. յէպիսկոպոսութիւն:

¹² Փ. գաքարիայ: Բ. գաքարիտէ:Ն. գաքարիայէ:

¹³ Մ. պակասի սուրբ:

¹⁴ Ղ.Մ. ընդութեան: Փ. պակ. օրհնութեան: Բ. օմութեան:

¹⁵ Բ.Ն. առնուին ամ յամէ:

¹⁶ Ն. լուս. առնուին:

¹⁷ Ն. Սիւնիք. կրկնութիւն. առնուին սիւնիք ամ յամէ սիւնիք Աղուանից:

¹⁸ Բ.Ն. զհայրապետականն աթոռ:

Այս հատուածի մէջ այսքանս միայն նկատելի է, որ Աղուանից պատմիչը յունական բաժնի Յովհան Գ. կաթողիկոսին Մովսէս Բ. Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակն է դնում, իսկ Գիրք թղթոցի մէջ ինչպէս եւ մեր միւս պատմագրաց մէջ Յովհանը Աբրահամ կաթողիկոսի ժամանակն է հակաթող նստել:

Սոյն հատուածից Օրբելեանի քաղուածքն է.

«Ապա մինչ աղմուկ լինէր ի մէջ աշխարհիս, եւ Յովհան ոմն ի բաժին Յունաց հակառակաթող էր նստեալ, եւ վասն ինն դասուցն ի Յունաց խնդիր առ Հայս. եւ Կուրիոն Վրաց կաթողիկոս վասն փառամոլ ախտի ի բաց եկաց ի Հայոց եւ քաղկեդոնիկ եղել: Այնուհետեւ բաժանեալ ի բաց եկաց եւ Աղուանիցն պատճառելով եւ նա պատճառս ինչ»:

Ա.

Արդէն Անանիա կաթողիկոսի կոնդակից, որը քաղուածք է Աղուանից պատմութիւնից, չորս հատուած հրատարակեցինք, օրինակների բազմազան տարբեր ընթերցուածներով: Որպէսզի հետաքրքրուողները գաղափար կազմեն, թէ ինչպէս 1289 թուականի Աղուանից պատմ. հիմնական օրինակից ընդօրինակելով մինչեւ 1829 թուականը եւ այս թուականից էլ մինչեւ 1860-ական թուականները (Աղուանից պատմութեան տպագրութեան տարին) որքա՞ն փոփոխութիւններ եւ կամայականութիւններ են մտած բնագրի ընդօրինակութիւնների եւ տպագրութեանց մէջ, այս մասին գաղափար կազմելու համար բաւական ենք համարում հրատարակած հատուածների տարբեր ընթերցուածները ծանօթութեանց մէջ, իսկ այսուհետեւ միայն երկաթագիր օրինակի եւ երկրորդ խմբին պատկանող օրինակների տարբեր ընթերցուածները կը դնենք ծանօթութեան մէջ:

Անանիայի կոնդակի հետեւեալ Ե. հատուածի մասին Աղուանից պատմութեան մէջ յիշատակութիւն չկայ. թերեւս 949 թուականին գոյութիւն ունեցող Աղ. Պատմ. մէջ եղած լինի եւ յետոյ դուրս ձգուած ընդօրինակողներից, գիտութեամբ կամ անգիտութեամբ:

Ե. «Եւ յետ մահուանն¹ հայոց հայրապետացն՝ յաջորդէ զաթոռ սրբոյն Գրիգորի տէր Կոմիտաս յԱրագածոտնէ² եւ սա միապետեաց զբաժանեալ հայրապետութիւն տանս Հայոց: Սա շինեաց զվկայարան սրբոյն Հռիփսիմէի: Սա էր առաքինաջան վարուց յաւէտ հետեւող եւ յոյժ ազա՛ս աստուածային գրոց: Եւ աղաչէր զԱստուած զօր հանապազ ի տուէ եւ ի գիշերի միաբանել զանդամն որոշեալ (ի) սուրբ հայրենի գրկացն սրբոյն Լուսաւորչին, որ էառ իսկ զպտուղ աղօթիւն: Քանզի ի սորին երրորդ ամի աթոռակալութեան վաղճանէր ապստամբ հայրապետն Աղուանից,

¹ Ա. մահո՞ւնն. Բ.միւն:

² Բ. յարագածոտնէ:

եւ գոյ ասել, թէ՛ հոգւոյն շնորհ իբր ի թանձրամած թմբրից¹ գքոյ զարթոնցեալ զմիտս իշխանացն՝ ծանեան զինքեանց զփրկութիւնն եւ դարձեալ հաւանեալ խնդրեցին ի փրկութեանց կաթողիկոս ի ձեռնադրութենէ որ սրբոյ Լուսաւորչին աթոռակալէ՛ ի սրբոյն Կոմիտասայ:

Իսկ նա իբրեւ բազմագութ ոչ պահէր ոխս եւ ոչ ցանգ բարկանայր, այլ վաղվաղակի ձեռնադրէր եւ միապետէր եւ յորդորէր վարդապետական բանիւք եւ հաստատէր ի միաբանութիւն: Եւ եկաց տեւեաց² այսպէս ուղղափառ եւ սուրբ կարգադրութեամբ զամս 2Բ (82) եւ զժամանակս է (7) աթոռակալաց սրբոյ Լուսաւորչին՝ մինչեւ ցՏէր Եղիա Հայոց կաթողիկոս, որ էր ԼԴ. (34) երորդ ի սրբոյն³ Գրիգորէ»:

Սոյն հատուածից Օրբելեանի քաղուածքն այսպէս է. «Իսկ ի վախճանելն Աբրահամու եւ Յովհաննու նստի պատրիարք Հայոց Կոմիտաս, վախճանի եւ Աղուանիցն: Ապա դարձեալ հնազանդեն Աղուանք Հայոց եւ խնդրեն կաթողիկոս ի Կոմիտասայ, որ եւ ձեռնադրեացն իսկ յերկրորդ ամի հայրապետութեանն իւրոյ: Եւ այսպէս կացին ի հնազանդութեան զամս 85, ի ժամանակս եօթն կաթողիկոսաց Հայոց ի տէր Եղիա»:

.....

¹ Բ. թմբից:

² Բ. տեւեալ:

³ Ա. լղ. որդի սրբոյն Գրիգորի: Բ. լղ. ի սրբոյն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ

Ձ. «Քանզի¹ բազում եւ ազգի ազգի չարութեամբ որպէս սովոր է յամենայն ժամ բարիատեաց թշնամին մեր եւ հասարակաց փրկութեան հակառակորդն սատանայ որսալ զպարզամիտս ի մարդկանէ, եւ ընդդէմ մրցեալ մանկանց եկեղեցոյ ըստ իւրում բնածին բարուց, հնարել եւ յընտրեալսն կամեցեալ, ըստ բանին եթէ ոսոխն մեր սատանայ իբրեւ զառեւծ գոչէ եթէ զո կլանիցէ:

«Քանզի² սովորն է հասարակաց փրկութեան հակառակորդն սատանայ որսալ զպարզամիտս. եւ ընդդէմ մրցեալ³ մանկանց եկեղեցոյ ազգի ազգի չարութեամբ հնարել եւ ընտրեալսն.⁴ ըստ բանին թէ ոսոխն մեր սատանայ⁵ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի թէ զո⁶ կլանիցէ:» Եւլն:

«Վասն⁶ բակուրա⁷ ումեմն⁸ Ներսէս անուն եղեալ⁹ կաթողիկոս Աղուանից:

– Ի վաղճանելն¹⁰ Ղազարու Աղուանից կաթողիկոսի, ոմն յերկաբընակ աղանդոյն Քաղկեդոնի բակուր անուն, երբեմն եղեալ էպիսկոպոս գարգմանա, եւ Ներսէս յաջորդեալ:

Ձ. «Ապա սատանոր սկզբնաչարն սատանա, որ ի ձեռն կնոջն գաղտնապատիր եւ սուտակասպաս խաբկանօք զերանելին կազմած ընդվզեալ փաղաքշալուր Աստուածայոյսն կարծեօք՝ զնախագոյն բաղդատական տարամերժեալ պատիւ՝ զնա տիրեսցեն¹¹ քեզ՝ վճռաւորեաց, վատթարակի առեալ զասումն երկրաւոր նզովեալ ի քոյդ սղալանս, անհեշտաբար զնա ըմբոյշխնեսցես ի կատար խոցոմունք վիրաւորիչք ընծիւղեսցին քեզ. փոխանակ եռանգասեռն երփնեռացիկ ընդ ծաղկաւապատուութեանց¹² արքայականացն կայենիցն¹³ փափկութեանց՝ յերկս տաժանմանց կրիցես¹⁴ զստուգանսզ զսգուողանացդ զանասնաճարակն հարկեսցիս պարենաւորել. հանդերձան դիւրաթառամս եւ վաղահամուռս, մինչեւ ի ծոցաւորիլն քո անդէն:

Եւ ստեղծեալդ ի ստեղծողէն¹⁵ ընկալցիս զ(ը)միանմանն աղէտս, նոյն թիւնաբերան իժից խղխայթք:

¹ Պատմ. Աղ., գիրք Գ., գլ. Ը (երկաթ. օր):
² Նոյն. երկրորդ խումբ, բոլոր. օրինակ:Գիրք Գ, գլուխ Ը:
³ Ն. մրցել:
⁴ Ն. յընդրեալսն:
⁵ Ն. սատանա:
⁶ Պատմ. Աղ., գիրք Գ, գլ. Գ:
⁷ Երկրորդ խումբ, ԲՆ. բակուրի:
⁸ Բ.Ն. որում:
⁹ Ն. եղկելի:
¹⁰ Բ.Ն. ի վախճանել երանելոյն:
¹¹ Ա.Բ. պատիւզնա տիրեսցին քեզ:
¹² ԱԸ. ծաղկատուից: Բ. Ը ծաղկաւատուեց:
¹³ Բ. կայենից:
¹⁴ ԱԲ. կերեցես:
¹⁵ Ի ստեղծողէն:

Սա ուխտադրեալ ըսպրամա Աղուանից տիկնոջ¹, կնոջ Վարազ Տրդատա, որ էր ի նոյն կամօք աղանդ² հետեւեալ: Կնքէր³ դաշինս վասն փառամով տիրողութեանն, ասելով եթէ կամ էքո կոչել⁴ զիս ի հայրապետութիւն Աղուանից, ես⁵ արարից զամենայն Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի: Եւ ունկնդիր եղեալ նմա չարափառ կնոջն, խորհուրդ բերեալ ընդ եպիսկոպոս⁶ եւ ընդ մեծամեծս աշխարհին⁷ Աղուանից, եւ ոչ ոք իմացաւ զդաւաճանութիւնն:

«Յանձն առին առ հասարակ կատարել զխնդիրսն.⁸ իսկ ամենակալ⁹ հոգին սուրբ ազգեալ էպիսկոպոսին Մեծիրեանց¹⁰ Յովելայ,¹¹ առաջի մեծախումբ ժողովոյն, խնդրեաց ի ներսիսէ ձեռնարկ նզովել զժողովն քաղկեդոնի, եւ զտոմարն¹² Ղեւոնի,¹³ նորին մատանով:¹⁴ Եւ ընկալեալ զնամակն ի ժողովումն արեւելից ըստ կանոնական սահմանի¹⁵ ընկալեալ եղեւ, եւ¹⁶ նոյն ինքն Յովել էպիսկոպոս

Եւ աստանօր՝ ի վաղճանիլ հայրապետին Աղուանից շնչեաց ի տիկին մի Աղուանից աշխարհին եւ իբրեւ ի դիւական հոգւոյն բախեաց, գոյ ասել: Սիրեաց գոմն եպիսկոպոսաց աշխարհին Աղուանից եւ անձնիշխան¹⁷ կամօք՝ գունակ նախամօրն՝ սիրեաց ելանել ի դրախտէն եւ յաստուածաստեղծ Կայինից:

Նոյնպէս եւ կինս այս քակեաց զխրամ սրբոյ լուսաւորչին, որ էր տեւեալ ամս ՆՁԴ. (484) միով միակամութեամբ՝ ըստ կարգեցելոյ սրբոյն Գրիգորի տալ ի նորին աթոռոյ գձեռնադրութիւն տանն Աղուանից: Եւ առեալ զայրն զայն, զոր վերագոյնդ ասացաք, զԲակուր, տայր հրաման եպիսկոպոսաց զնա ձեռնադրել կաթողիկոս, առանց սրբոյն Գրիգորի աթոռակալին ձեռնադրութեանն:

«Ապա յետ այսր եղելոյ՝ ջահեցաւ այրն այն բակուր, որ եղեւ չկաթողիկոս, ներկեալ յաղանդն Նեստորի¹⁸ քաղկեդոնի, եւ առ սակաւ սպրդեալ

¹ Բ. տիկնոջն:
² Բ.Ն. աղանդն:
³ Բ.Ն. կնքէ:
⁴ Բ.Ն. կոչեա:
⁵ Բ.Ն. եւ ես:
⁶ Բ.Ն. եպիսկոպոսն:
⁷ Բ.Ն. պասի:
⁸ Բ.Ն. զխնդիրն:
⁹ Բ.Ն. ամենակար:
¹⁰ Բ.Ն. Մեծիրեանց:
¹¹ Բ.Ն. Յովելայ:
¹² Ն. տոմարն:
¹³ Բ.Ն. լեւոնի:
¹⁴ Բ.Ն. մատանով:
¹⁵ Բ.Ն. վերջակէտ եւ գլխագիր:
¹⁶ Բ.Ն. ի նոյն:
¹⁷ ԱԲ. անձն իշխան:
¹⁸ Բ. նստորի:

Հանդերձ այլ էպիսկոպոսաւք վերակոչեն զնա ի հայրապետական շնորհս սուրբ աթոռոյն Աղուանից: Եւ նոյն ժամայն Յովէլ էպիսկոպոս¹ առ ինքն առեալ զնզովից գիրն² զնէր ի պահեստի: Եւ յետ այնր կեցեալ³ ամս ԺԴ. փոխադրիւր ի Քրիստոս:⁴

Յայնժամ գտեալ տեղի Ներսիսի կատարել զկամս իւր, իսկոյն փութա⁵ ի գաւառն Մեծիրեանց, եւ գործակ⁶ իւր գտեալ զՋաքարիայ⁷ վանաց հայր, տայ նմա խորհուրդ առնել զնա էպիսկոպոս եւ շնորհել նմա գտերունի հասն. միայն եթէ⁸ տացէ զնորին ձեռնարկն զի այրեսցէ: Եւ նորա տեսեալ զսուրբ ուխտին գիրն առ նա, առ եւ անդէն ի տեղն հրկիզեաց:⁹ Եւ զՋաքարիայ¹⁰ ձեռնադրեաց էպիսկոպոս Մեծիրեանց, եւ կարեւոր բարեկամութիւն զնա ընկալեալ, դարձաւ ի հին փոխուածն¹¹ զոր ի ժամանակաց սպասէր. տիկնոջն Սպարամա¹² զնա ստիպեալ¹³: Եւ նորին աւգնութեամբ եւ այլոց նախարարաց, որոց զորոմն էր ընկալեալ, քակեալ¹⁴ աւերեաց զբազում սեղանս եկեղեցեաց¹⁵ որում յաղթողն եղեւ: Եւ զարժանաժառանգ

եմոյժ յեկեղեցիս զտօմարն Լեւոնի եւ հերձ զսուրբ հաւատս: Եւ բազումք գլխեցան ի սուրբ ուխտէն¹⁶ ի տօմարն Լեւոնի:

Եւ իբրեւ գիտացին որք ուղղափառք էին եւ անխառն մնացեալք ի քաղկեդոնականացն՝ զաղաղակ բարձին առ սուրբ լուսաւորչի աթոռակալն առ տէր Եղիա Հայոց կաթողիկոսն:

Իսկ ապա սուրբն այն եւ անօթն Աստուծոյ շարժեալ ի հոգւոյն սրբոյ՝ արիաբար ժողովեալ զուղղափառ եպիսկոպոսունս եւ զհօտս հայոց աշխարհիս՝ զնայր ի Շահաստանն Պարտաւոյ: Եւ անդ ժողով արարեալ՝ զիշխանն աղուանից աշխարհին եւ գեպիսկոպոսունս եւ զսուրբ կրօնաւորս որք ոչ էին երկրպագեալ պիղծ աղանդոյն քաղկեդոնի՝ կամօք եւ հաւանութեամբ նոցին եւ իսմայէլական բռնութեամբն կալեալ զբակուր, եւ զտիկին նորին ձեռնադրող կապեալ յիշոյ եւ ձաղանակ առնէր անդրադարձ հետեւանօք ընդ շահաստանն Պարտաւոյ: Եւ ինքն ձեռնադրէր նոցա հայրապետ եւ առնոյր գիր նզովից՝ մի

¹ Բ. էպիսկոպոսն:

² Բ. թուղթն:

³ Բ.Ն. կացեալ:

⁴ Բ. յաւելու, սքն. յովել:

⁵ Բ.Ն. փութաց:

⁶ Բ.Ն. գործակից:

⁷ Բ.Ն. զգաքարեա:

⁸ Բ.Ն. թէ:

⁹ Բ.Ն. հրակիզեաց:

¹⁰ Բ.Ն. գաքարիայն:

¹¹ Բ.Ն. փոխածն:

¹² Բ.Ն. Սպրամա:

¹³ Բ.Ն. ստիպելով:

¹⁴ Բ.Ն. քանդեաց:

¹⁵ Բ.Ն. եկեղեցեացն:

¹⁶ Բ. ոխտեն:

մանկունս եկեղեցոյ զուղղափառս հալածականս¹ արար տարաբնակս. նախ գերանելին Իէղ. (Իսրայէլ) նշանագործ էպիսկոպոս Մեծ կողմանց² հալածեաց, որ զբազում աշխարհս խազրաց եւ հոնաց դարձոյց ի քրիստոնէութիւն, ընդ (նմ)ին եւ զեղիազար³ դարդմանայ էպիսկոպոս:

Իսկ ոմանք յէպիսկոպոսաց նշկահեցին ի նմանէ⁴. յովաննէս կապաղակա էպիսկոպոս, Սահակ ամարասա էպիսկոպոս, սիմեոն հոշաչ⁵ էպիսկոպոս, Շերոյ մեծ իշխանն աղուանից հանդերձ իր⁶ ազատաւքն⁷, եւ բազմութեամբ ուխտից եկեղեցւոյ գումարել⁸ հանդէս ժողովոյ, նգովեցին զՆերսէս ընդ ամենայն հերձուածողս, «բն. յաւելու» եւ գրեցին ի հայք զանցս աղետիցն»:

եւս շեղիլ⁹ ի սրբոյն գրիգորէ եւ մի գոք ընդունիլ կաթողիկոս որ յեպիսկոպոսաց լինէր ձեռնադրած, բայց միայն որ ի սուրբ լուսաւորչի աթոռակալէն ձեռնադրէր: Եւ ինքն դառնայր յաշխարհս իւր»:

.....

Աղուանից պատմութեան մէջ մանրամասն գրուած է Հայոց Եղիա կաթողիկոսի Աղուանից աշխարհ գնալու, իսմայէլացւոց ուժով խռովութիւնը դադարեցնելու, Հայոց եւ Աղուանից միաբանական ձեռնարկ հաստատելու անցքերը: Սոյն հատուածից Օրբելեանի քաղուածքն է. «Ապա յաւուրս սորա էր կին մի ի տիկնութենէ Աղուանից Սպրամ անուն, որ առնէ իւր մերձաւոր եւ սիրող եպիսկոպոս մի՝ Բակուր անուն եւ խոստանայ նմա տալ

¹ Ն. հալածեալ տարաբնակ արար: Բ. պակասի հալածականս:

² Բ.Ն. Մեծկունէից:

³ Բ.Ն. գեղիա:

⁴ Բ.Ն. ի նմանէ:

⁵ Բ.Ն. հոշոյ:

⁶ Բ.Ն. իւր:

⁷ Բ.Ն. ազատովքն:

⁸ Բ.ն. գումարեալ:

⁹ Բ. շաղել:

պատիւ կաթողիկոսութեան, եւ ոչ իշխեաց առաքել ի Հայս, զի մի խոտեսցին այլ առնէ ժողով ի Պարտաւ եւ տայ ձեռնարկել զնա կաթողիկոս, որ եւ անուանեցաւ Ներսէս եւ ունէր ի ծածուկ զքաղկեդոնին: Վասն որոյ երթեալ Եղիայի կաթողիկոսի յԱղուանս արքունի հրամանաւ, եւ կալեալ զտիկինն եւ զԲակուրն՝ մերկացուցանէ եւ կապէ ընդ միմեանս, եւ հեծուցեալ յէջ՝ շրջեցուցանէ ընդ փողոցս Պարտաւոյ. վասն որոյ անսուաղ լեալ Բակուր ատուրս ութ մեռանի:

Իսկ կաթողիկոսն Եղիա ձեռնադրէ նոցա արքեպիսկոպոս, եւ առնու երդումն եւ դաշինս եւ ձեռնարկ զրոյ մեծամեծ նզովիւք իշխանաց եւ յեպիսկոպոսաց եւ ի գլխաւոր վանականաց եւ յաւագ տանուտէրաց աշխարհին Աղուանից, զի մի այլ եւս հետեսցին եւ յետս կացցեն յաթոռակալաց սրբոյն Գրիգորի, եւ ինքն գնաց յաշխարհն Հայոց»:

Ա.

է. «Իսկ¹ գալուստ տաճկին ի հայս եւ գրաւել² գաշխարհն³ ընդ լծով ծառայութեամբ⁴ հարկաց թուականն⁵ հայոց⁶ .ՅԽԲ. (342) լինէր: Յորոյ ձեռն ըմբռնեալ լինէր⁷ հայրապետն⁸ գէորգ⁹ ի կապանս երկաթի պարփակեալ ածաւ ի պարտաւ¹⁰»:

«Տէր Յունան Ը եւ կէս¹⁰ (ամ). Սա էր զիմա¹¹ եպիսկոպոս եւ առանց կամաց կաթողիկոսին գէորգայ գայ յԱղուանս. եւ աստէն ձեռնադրի. զոր նոյն ինքն գէորգ եւ գսա կրկին ձեռնադրէ¹²»:¹³

«Սրբասէր Քչիկ Ներ.- Մեր հի¹² վանաց տանտեր¹³ բոլոր ուխտիւ իւրով, որք անխառն յաղանդոյն պահեցան¹⁴: ըստ դասաւորութեան միաբանի:

.է. «Եւ եկաց տեւեաց այսպէս միով հաւանութեամբ գամս .ՃԼԷ. (137) գժամանակս .ԺԴ. (14) հայրապետի՝ մինչեւ ցտէր Գէորգ Հայոց կաթողիկոս:

– Իսկ ապա՝ զօրացեալ բռնութեանն իսմայէլացւոց՝ գերեցին զսուրբ կաթողիկոսն Հայոց:

– Իսկ ապա դրան եպիսկոպոսն գոլով նորին Յունան անուն¹⁵ փախեալ ապստամբողական կարգաւ, անկաւ յաշխարհն Աղուանից:

Ոչ գոյր հայրապետ Հայոց, որ յուսակնէին ըստ սովորութեան՝ առնուլ ձեռնադրութիւն:

Իբրեւ մեծահաւատութիւն իւրեանց համարեալ եւ նչիք¹⁶ զդրան եպիսկոպոս հայրապետին Հայոց՝ ժողովեալ

¹ Բ.Ն. պակասի իսկ»:

² Բ.Ն. գրաւելոյ:

³ Բ.Ն. գաշխարհս:

⁴ Բ.Ն. ծառայութեան:

⁵ Բ.Ն. դասաւորութեան .ԲԳ.ՃԽԲ. .Ն. ՅԽԲ. թուին լինէր:

⁶ Բ.Ն. պակասի հայոց:

⁷ Բ.Ն. եղել:

⁸ Բ.Ն. հայրապետն հայոց:

⁹ Բ.Ն. գրիգորիոս:

¹⁰ Սոյն հատուածը տե՛ս Պատմ. Աղ. գիրք գ. գլ. ԻԱ (91):

¹¹ Բ. Տէր յունան ամս Ը եւ կէս. Ն. օրինակում պակասի յիշատակութիւն յունան կաթողիկոսի մասին:

¹² Բ.Ն. Դըւնա եպիսկոպոս հայոց:

¹³ Բ. Սոյն հատուածը Պատմ. Աղ. գիրք.գ. գլ. ԻԳ. միայն սոյն գլուխը երկաթագիր օրինակում նորոգած եւ բոլորագիր թերթից է:

¹⁴ Բ.Ն. Ներսէմերիս:

¹⁵ Բ.Ն. Տանուտէր:

¹⁶ Պատմ. Աղ. գիրք.Գ. գլ. Ը.(8):

¹⁷ ա. նորին յունանուն: Բ. նորին Յունան անուն:

¹⁸ Բ. եւ նչիք: Հաւանական եմ կարծում Միաբանի կարծիքը, որ բառս Փշիկ կամ Քզիկ յատուկ անուան աղաւաղումն է: Տե՛ս Պատմ. Աղ. գիրք. Գ. գլ. Ը. «Սրբասէր Քչիկ Ներսէմերիի վանաց տանուտէր» երկրորդ խումբ. Բ.Ն. «Սրբասէր Քչիկ (բ. Քըշիկ) Ներսէմերիա՛ վանաց տանուտէր». Անունս «Ներսէմերիս» երկաթ. օր. Պատմ. Աղ. գիրք. Ա, գլ. Է. «Ներո միր հայ սուրբ ուխտն,

«Քչիկ ժողովեալ զեպիսկոպոսունս աշխարհին Աղուանից՝ իբրեւ մեծահաւատութիւն իւրեանց համարեալ՝ զդրան եպիսկոպոս հայրապետին հայոց կարգեցին ինքեանց կաթողիկոս»:

«Ապա բարեպաշտն Համամ որ եւ աղուանից եղեւ թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն¹ տանն² Աղուանից Համամ³ նորոգէ⁴ որպէս Աշոտ Բագրատունի⁵ զհայոց թագաւորութիւն:⁶ Այսք ի միում ժամանակի գործեցան. եւ նոյն ինքն համամ սակս առ Աստուած մեծապէս⁷ յանցանացն որ վասն սնտոի այս⁸ կենացս զպարտ արեան եղբաւրն⁹ ժողով—

(Երկաթազիրը վերջանում է եւ բոլորազիր կարկատանն է սկսվում)»

«եալ յանձինն¹⁰ իւրում մեծագործութիւնս առ եկեղեցիս եւ առ ամենայն կարօտեալս¹¹ եւ չքաւորս առատազարդ¹² անսպառ կատարէր. որ եւ զմեծ հայրապետն հայոց գէորգ յանօրէն Սաջկայ կապարանէն բազմաբաշխ գանձիւք տայր արձակել եւ

զեպիսկոպոսունս աշխարհին Աղուանից՝ կարգեցին զնա ինքեանց կաթողիկոս:

«Եւ իբրեւ շնորհեաց գերեզարձ Քրիստոս հայրապետին հայոց Տեառն Գէորգայ¹³ ի ձեռն գանձազուլթեան տեառն Համամայ¹⁴ Աղուանից արքայի:

Իսկ հայրապետն Աղուանից Յունան կոչեցեալն ընդ առաջ եղեւ տեառն Գէորգայ¹⁵ սիրալիր¹⁶ սրտիւ գերախտիսն յիշել Համամայ առ գերէփրկութեանն¹⁷ օճան. զոր տեսեալ հայոց հայրապետին տեառն Գէորգայ գեղեալսն զարմացաւ: Եւ նոյն ժամայն հրաման տայր կողոպտել զկարծեալ կրօնիցն:

Իսկ աստանօր յուշ արարեալ տեառն Համամայ գերախտիսն, համարեալ ապերախտ՝ եւ զպատճառն շնորհակալեացն օճան, անշնորհութեանն զայրանայր: Եւ զալիսս առաջի եղեալ

որ այժմ կոչի ջրվշտիկ. թոթոցի միջ աղաւաղ. Մեիր ներ հաս: Այս մասին ուրիշ անգամ:

¹ Բ. թագաւորութիւնս:

² Բ.Ն. տանս:

³ Բ.Ն. պակասի. համամ:

⁴ Բ.Ն. նորոգեաց:

⁵ Ն. բագրատունիս:

⁶ Բ.Ն. թագաւորութիւն:

⁷ Բ.Ն. մեծ:

⁸ Բ.Ն. պակասի:

⁹ Բ.Ն. դասաւորութիւն եղեւ պարտապան արեան եղբօրն:

¹⁰ Բ.Ն. յանձին:

¹¹ Բ.Ն. կարօտս:

¹² Բ.Ն. առատազուարթ:

¹³ Ա. գէորգեա:Բ. գէորգայ:

¹⁴ Ա. համամա:

¹⁵ Ա. գէորգա: Բ. գէորգայ:

¹⁶ Աք. սիրովիր:

¹⁷ Ա. գերէ փրկութեան: Բ. գերէ փրկութեան:

յոզնամեծար զնա արարեալ առողջ առ հայաստանս¹ առաքէր:

.Ը. «Տէր Սիմէոն ամս .ԻԱ. (21). Սա էր զբան եպիսկոպոս սուրբ Աթոռոյն, որ առաւել զարդարեաց սպասիւք զսուրբ² խաչն:

- Տէր Դաւիթ³ ամս .Զ. (6) յառաջ նորդութենէ Փառիսոսէ⁴ վանաց.

- Տէր Սահակ ամս .ԺԸ. (18) յեպիսկոպոսութենէն Մեծկունէից:⁵

- Տէր Գագիկ ամս .ԺԴ. (14) յեպիսկոպոսութենէն Գարդմանայ սորա⁶ չորրորդ ամին լցաւ թիւս հայոց.Ն.⁷ (400):

- Տէր Դաւիթ ամս .Է. (7) յեպիսկոպոսութենէն յապաղակայ:⁸

- Տէր Դաւիթ⁹ ամս .Զ. (6) սա առ¹⁰ ձեռնադրութիւն յԱնանիայէ հայոց կաթուղիկոսէ»:¹¹

հայրապետին հայոց աղաչէր զՅունանն, որ առանց նորին կամացն էր, նորին հրամանաւ վերստին ձեռնադրել¹¹ եւ խողով¹² (?)

Իսկ նա առ հարկի՝ իբրեւ մեծ իմն երախտիս համարեալ՝ կրկին զՅունանն ձեռնադրէր եւ տուեալ նոցա զայր յաշխարհ իւր: Եւ էր գործն արտաքոյ սուրբ զրոց. այլ սակայն կարիս վախկոտութեանն զայս առնել հաւանեցոյց. եւ ինքն դառնայր զայր հասանէր յաշխարհս իւր:

.Ը. «Եւ յետ վաղճանելոյ հայրապետին հայոց տեառն գէորգայ՝ սովորութիւն կալաւ եւ դիւրադարձ գեղեպսն՝ իբրեւ վաղճանէր Յունանն ձեռնադրէին նոյն սովորութեամբ զհարազատ նորին զոմն Սիմէոն, եւ ի նմանէ Դաւիթ, եւ ի նմանէ Սահակ, եւ ի նմանէ Գագիկն, առ որ¹³ այժմ բանս է, տեւեալ ապստամբութեամբ զամս .ԿԹ. (69) եւ զժամանակս հայ-

¹ Բ.Ն. հայաստանայսն:

² Բ. սուրբ: Ն. օրինակում միայն Տէր սիմէոն ամս .ԻԱ. (21):

³ Սոյն այս տէր Դաւիթը թերեւս շփոթուած լինի միւս Դաւիթի հետ, որը զկնի Գագիկից է գրուած. երկրորդ խմբի օրինակները մէկը միւսի տեղ են դասել. երկաթագիր օրինակի նորոգած թերթում այսպէս էր դասաւորուած. մինչդեռ երկրորդ խմբ. օր. նախ. տէր. Դաւիթ կապաղակայ. տէր Սահակ Մեծկունէից, տէր Գագիկ Գարդմանաց. Տէր Դաւիթ Փառիսոսայ վանաց որեւ ձեռնադրի յԱնանիայէ կաթուղիկոսէն Հայոց:

⁴ Բ. Փառիսոսայ: Ն. Փառիսոսայ:

⁵ Բ. Մեծկունէնից:

⁶ Բ. եւ սորա:

⁷ Բ. Դ. Ճ.:

⁸ Բն. կապաղակայ:

⁹ Բ.Ն. պակասի. այս մի Դաւիթը թերեւս կրկնութիւն լինի:

¹⁰ Ն. առնու:

¹¹ Պատմ. Աղ. գիրք Գ., գլ. ԻԳ, 23:

¹² Աբ. ձեռատրեալ:

¹³ աղճատմունքէ թերեւս իւղով:

¹⁴ Աբ. որ առ այժմ բանս է:

րապետաց հնգից¹ մինչեւ ի մեր
նրւաստութիւնս: Եւ զայսոսիկ
ճշտիւ,² եւ հաւաստի քննութեամբ
տեղեկացեալ ուրախ լինէաք:

Անանիայից ձեռնադրուող Դաւթից յետոյ Աղուանից պատմութեանց թէ՛ երկաթագիր եւ թէ՛ բոլորագիր օրինակում յիշատակում են միայն երկու կաթողիկոսներ. «Տէր Պենդաս³ ամս .ԺԸ. (18) յեպիսկոպոսութենէն Գարգմանայ:

Տէր Մովսէս ամս .Զ. (6) յառաջնորդութենէ Փառխոսայ վանաց»:⁴

Օրբելեանի քաղուածքը .է. հատուածից է. «Եւ այս այսպէս եկաց միաբանութեամբ զամս 137 յաւուրս չորեքտասան կաթողիկոսաց Հայոց մինչ ի Տէր Գէորգ գառնեցին: Ապա ի գալն Բուղայի ամիրայի ի Հայս, եւ ի գերելն զՏէր Գէորգ կաթողիկոս եղեւ դառն եւ ազգի ազգի պղտորումն յաշխարհիս Հայոց եւ Աղուանից. եւ փախեալ դրան եպիսկոպոսն Տեառն Գէորգայ եւ եկն յԱղուանս Յօնան անուն: Եւ եղեւ վախճանել արքեպիսկոպոսին Աղուանից եւ կաթողիկոսն էր ի գերութեան: Ապա միամտութիւն համարելով նմա՝ ժողովեալ ձեռնադրէին զգրան եպիսկոպոսն զՅօնան կաթողիկոս Աղուանից: Իսկ ի դարձին Գէորգայ ի գերութենէ ի ձեռն Համամայ՝ թագաւորի Աղուանից, տեսանէ զՅօնան՝ նոցին արքեպիսկոպոս, եւ հրամայէ կողոպտել ի բաց զզգեստ եւ զձեւ կաթողիկոսութեանն. վասն որոյ առաջի անկեալ Համամայ հայցէր զներումն: Լուեալ ապա նմա վասն մեծի երախտեացն, եւ կրկին ձեռնադրէ զՅօնանն արքեպիսկոպոս Աղուանից եւ թողեալ անդէն գնայ յիւր սեպհական աթոռն»:

Իսկ .Ը. հատուածից արած քաղուածքն է.

¹ Ա. հնկից:

² Ա. ճշդիւ:

³ Բ.Ն. տէր Պետրոս:

⁴ Երկաթագիր օրինակում սկիզբն է առնում գրչագրի յիշատակարանը, իսկ բոլորագրում՝ «վասն կոտորածին որ ի կողմանս Խաչենոյ եւ վասն բարեպաշտ իշխանին Ջալալիգ»:

«Իսկ ի վախճանելն Գէորգայ, վասն դառն եւ ազգի ազգի անցից աշխարհիս յիսմայելլականացն. ոչ կարացին հասանել առ Հայրապետքն Հայոց յԱղուանից. նմանապէս եւ անփոյթ լինէր ի Հայոց կաթողիկոսացն. զի ամենայն ոք միայն զանձին հնարս հայթայթէր զերծման յիսմայելլական սրոյն: Ձեռնադրեն ապա կաթողիկոս Աղուանից յետ Յօնանու զնորին հարազատն Սիմէօն անուն, ապա զԴաւիթ, ապա զՍահակ, ապա զԳագրիկս զայս, որ լիներ ամբ 60 ինքնաձեռն եւ անձնիշխան թերակատար օծման նոցա: Ահա զայս ամենայն ընթերցեալ եւ իմացեալ եւ ծանուցեալ կաթողիկոսին Անանիայի եւ այսու բանիւք սա լռեցուցեալ զզրաբան բերանս խոտորախօս արանց, եւ պապանձեցուցեալ զլեզու փառորսակ եւ անձնահաճ մարդկան՝ յամօթ արար զամենեսեան»:

Հրատարակելով Գիրք թղթոցի Անանիա կաթողիկոսի կոնդակի այն մասը, որը քաղուածք էր Աղուանից Պատմութիւնից, տեսանք, որ Անանիա կաթողիկոսը օգտուել է յիշեալ պատմութեան Առաջին գրքի՝ 9, 11 եւ 14, Բ. գրքի՝ 47 եւ 48 եւ Գ. գրքի 3, 4, 5, 6, 7, 8, 9, 21 եւ 23 գլուխներէից: Համեմատելով օգտուած աղբիւրները կոնդակի հատուածների հետ՝ նկատելի եղաւ, որ ներկայումս մեր ձեռքը հասած Աղուանից պատմութեան օրինակը Անանիայի ժամանակի 949 թուականի օրինակից շատ չի տարբերուում, այնպէս որ, այն ժամանակուայ խմբագրութիւնը համարեա թէ մեծ մասամբ հասել է մեզ անփոփոխ: Իսկ այն փոփոխութիւնները, յաւելուածները եւ տարբերութիւնները, որ նկատելի են երկու խմբերի մէջ, եւ այն աղբիւրները, որոնցից հիւսել է Աղուանից պատմիչը իւր պատմագրութիւնը, կը հրատարակենք առաջիկայ համարում:

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻՈՅ ԱՂՈՒԱՆԻՑ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ
ԳՏՆՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

(Առաջին խումբ)*

№ 1682

Հայոց ՉԼԸ=1289 Փրկչական թ.ից

Անուն՝ Պատմութիւն եկեղեցական Սոկրատայ և պատմութիւն Աղուանից: Նիւթ՝ թղթեայ: Կազմ՝ տախտակայ կաշիապատ, ներսից ներկած կտաւով պատած: Հանգամանք՝ լուսանցաթղթերից կտրտած, կարկատած, միջից և վերջից պակաս տեղերը նորոգած, լրացրած: Առանց մագաղաթեայ պահպանակի: Դատարկ՝ թ. 86 երկրորդ երես 1 սիւնեակի շատ կէսը և թ. 187 երկու երեսը: Սկզբից՝ չորս թուղթ պակաս, միջից մի՝ այն է 187թ.: Մեծութիւն՝ 33X48 սմ: Թուղթք՝ 377: Գրութիւն՝ 12X39, երկսիւն խոշոր բոլորագիր, նման երկաթագրի: Տողք՝ 31-32:

Վերնագիրք՝ խոշոր երկաթագրով, սկզբնատառք՝ նոնյպէս: Ոչ մանրանկարք, ոչ լուսանցքազարդք և ոչ էլ խորանագարդք ունի: Ստացող՝ Տէր Համազասպ եպիսկոպոս՝ առաջնորդ Յովհաննու վանաց: Գրիչ՝ անյայտ: Նորոգած թղթեր՝ 343, 351, 352, 374-377: Ժամանակ՝ ՉԼԷ-ՉԼԸ. 1288-1289 թ. տե՛ս թուղթ 306:

Կազմող և նորոգող՝ Աթանաս գրիչ ՌձԻԵ=1676 թ.-ին: Տեղ՝ Յովհաննու վանք Կարբու:

Կտրտած լուսանցքաթղթեր և նորից կարկատած թուղթք՝ 20, 22, 24, 25, 26, 29, 30, 31, 33, 45, 46, 56, 66, 68, 69, 84, 85, 89, 94, 95, 96, 97, 98, 104, 106, 108, 109, 110, 113, 118, 125, 128, 130, 142, 144, 145, 146, 158, 161, 163, 165, 166, 168, 169, 170, 171, 172, 173, 195, 198, 204, 214, 223, 226, 234, 275, 289, 301, 312, 313, 244, 349, 353, 363:

* ԱՐԱՐԱՏ, 1895, յուլիս, էջ 235-238:

Տեղեկութիւնք բովանդակութեան և յիշատակագրութիւնք մատենիս:

ԹՈՒՂԹ 1^ա.

«Ամենայն քաղաքաց վատթար ևս լինէր չարն...» Առաջին գրքից՝ հատուածից կամ հատորից, չորս թերթ պակասում է մինչև «ամենայն քաղաքաց» եւն, եւն:

ԹՈՒՂԹ 32^ա. սիւնեակ ^ա.

«Եւ ունին գիրքս ժամանակաց ԼԱ: Զստացող գրոցս յիշեսջիք ի Քրիստոս»:

Սիւնեակ ^բ: հատոր «բ»

«Ռուփինոս որ հռովմայեցւոց լեզուովն գրեաց «զեկեղեցականն պատմութիւն՝ առ ժամանակսն մոլորեցաւ»:

Թ. 72^ա. սիւնեակ ^ա.

«Եւ եկաց Կոստանդիոս ամս քառասուն և հինգ: Թագաւորեաց ամս Լ. և ութ: Ընդ հաւրն թագաւորեաց ամս Ժ. և Գ.: Իսկ յետ վախճանի նորա ամս ԻԵ: Որքանեաց աղագաւ և գիրքս ունին ժամանակ»:

Սիւնեակ ^բ: հատոր «գ».

«Կոստանդիոս թագաւոր. ի սահմանսն Կիւլիկոյ երիցն նոյեմբերի ամսոյ առ հիւպատոսաւքն տաւռոսիւ և փղոռնտիոսիւ կատարէր զվարսն»:

Թ. 74^բ.

Ռոլորագիր և այլ գրչով գրած. ներքեի լուսանցքագիրը զգրիգոր՝ «աշակերտ թոթկայ որ զգեմըս գրեցի յաղաւթս յիշեցէք նայ և դուք անմոռաց լիցիք առաջի Այ.»:

Թ. 97^ա.

Ներքեի լուսանցքագիրը «եղուկ քունս նեղեաց, և վիշտ յաւելուկ կամի»:

97^բ. սիւնեակ^բ.

«Ունին գիրքս ժամանակաց երկուց, եւ ամսոց երից և կիսոյ».

Նոյն սիւնեակ հատոր «դ»՝ «Թագաւորին յորհանոսի, ի դատաստանս որպէս ասացաք վաղճանեալ յիւրում հիւպատուջն, և բառիանու որդւոյ նորուն, տասն եւ եւթանն փետրուարի ամսոյ»:

Թ. 120^ա.

Ներքեւի լուսանցքագիրը՝ «Աւաղ դառն ցաւիս որ դիպայ և խափանեցաւ գիրսս, վասն զի ատամս ցաւեցաւ զաւուրս եւթն, նայ և գլուխս, այլ տէր կարողացոյց»:

Թ. 123^բ. սիւնեակ^ա.

«Ունին գիրքս ժամանակաց ժՁ: Զառաջնորդ գրոցս զսրբազան հպիսկոպոսն զտէր Համագասպ յիշեսջիք ի Քս.ն և զգրիգորէս կրանաւոր»:

Սիւնեակ^բ հատոր «ե».

«Նախ քան զսկսանել մեզ զպատմութիւնս հինգերորդի գրոցս՝ ասացուք առ հանդերձեալսն ընթեռնուլ զմեր ստորագրութիւն. մի մեղադրել մեզ եթէ նախկին եղեալ զեկեղեցական պատմութիւն նշանագրել՝ խառնեցաք ի նա եւ ըստ ժամանակին եղեալ պատերազմունսն»:

Թ. 131^բ.

Ներքեւի լուսանցքագիր. «Աւաղ քունս նեղեաց զիս»:

Թ. 149^ա. սիւնեակ^ա.

«Ունին գիրքս ժամանակաց ժՁ. եւ ամսոց ութ»:
«Աստանաւր յիշեսջիք զսրբազան հպիսկոպոսն զտէր Համագասպ, ընդ նմին եւ զգրիգորէս կրանաւոր. եւ զիս զանարժան գրչողս ի Քս»:

Սիւնեակ^բ.

(Նոր գլուխ) «Զհրամանդ քո քահանայդ Աստուծոյ այրդ թէոգորէ, ի հնգեսին առաջարկեալ գիրս, որպէս էր վարկանիլ,

խորհրդի վաստակեցաք, զոր ի կոստանտն ի ժամանակացն եկեղեցական պատմութիւնն շարագրեալք»:

Թ. 172^ա. սիւնեակ^ա.

«Իսկ թողեալ (Արկաղբիոսի) թագաւորելով զորդին Թէոդոսիոս Ը. ամեա հանդիպելով վաղճանեցաւ ի հեւպատոնջն բասսոսի, եւ փիլիպպոսի, յառաջնուն մայիս ամսոյ: Իսկ այս էր ամ երկրորդ, ՍՂԷ. Ողիմպիատուն. թագաւորեալ ընդ հարսն ամս ժԳ: Իսկ յետ վաղճանի հաւրն ամս ժԴ, կեցեալ ամս ԼԱ: Զառաջնորդ գրոց զսրբազան էպիսկոպոսն զտէր Համ'' եւ գրիգորէս կրանաւոր յիշեցէք ի Քս. եւ զմեղապարտ գրիչս, աղաչէմք»:

Սիւնեակ^բ.

(Նոր գլուխ) «Թագաւորին Արկաղբիոսի վաղճանեալ յառաջնուն մայիս ամսոյ` ի հիւպատոնջն բասսոսի և փիլիպպոսի, Ոնորիոս նորին եղբայրն զարեմտայինսն ուղղէր կողմունս»:

Թ. 205^բ. սիւնեակ^ա.

«Զեռն ի վերայ արկեալ Պրակղի, փոխանակ էպարքոսութեանն էպիսկոպոս Կէսարու յայտնեաց, այլ որ ինչ ըստ եկեղեցեացն, այսպէս յառաջադիմանայր յայնժամ»:

Թ. 205^բ. սիւնեակ^{ա-բ}.

«Բայց մեր աստանաւր ուրեք զպատմութիւնս դադարեցուցեալ` ի խաղաղութեան կեալ զորս ամենայն ուրեք եկեղեցիս եւ քաղաքս եւ ազգս աղաւթեսցուք, քանզի փրկչին մերոյ Տեառնն Յիսուսի Քրիստոսի խաղաղութեանն եղելոյ ոչ ունիցին պատճառք, որք պատմութիւնս գրել կամելով: Զի եւ մեք, ո՛վ քահանայքդ Աստուծոյ մարդդ Թէոդորէ, զհրամանդ քո յեւթնեսեան գիրսն արտատարածելով, ոչ արդեւք տարակուսեալ էաք պատճառոյ, եթէ սիրաւդքն զխռովութիւնս լուել յաւժարէին, եւ ոչ գործ շարամանեալ: Ունի .է. պատմութիւնս ժամանակաց ԼԲ: Իսկ ամենայն էւթ տոմիս պատճառս ունի ժամանակ ամաց ձՆ. սկսեալ յառաջին ճՂԱ. ողիմպիադացն, յորում յորջորջեցաւ թագաւոր Կոստանտինոս: Իսկ դադարեալ յերկրորդ ամի ՅԵ. ողիմ-

11-խաչիկ Ծ. վրդ. Դասեան

պիտանումն. յորում ժե հիւպատին թագաւորին թէոզոսի տուեալ լինէր:

Յիշեա Քրիստոս Աստուած զստացաւղ գրոցս եւ զառաջնորդ սորա և զգրչողս»:

Թ. 206^ա. սիւնեակ^ա.

«Յառաջ քան զութուտասն ամի թարգմանելոյ Փիլովնի զգիրսդ զայդ Սոսկրատայ զէկեղեցական պատմութիւն՝ թարգմանել էր Աբասուն Գրիգորի Զորոյփորեցոյ թարգմանի, ընդ փառաւորս յիշելոյ: Ներսէհի վրաց իշխանին փեսային կամսարականաց, զգիրս պատմութեան վարուց սրբոյն Սեղբեստրոսի էպիսկոպոսին հռովմայ, եւ կայր ի քարտիսի»: Այժմ պատշաճ համարեցաք առդմին գրոց գրել:

«Եւսէբիոս Պամփիղեայն զեկեղեցականն հոմագրելով զպատմութիւն, կրկնակ զայս եթող ստուգել, զորաւրինակ եւ յայդն հոմագրութիւն արտաճառեաց. ևլն»:

Թ. 211^բ.

Ներքևի լուսանցքում նօտրագրով՝ «Յիշեցէք զանարժան խաչիկս»:

Թ. 230^բ. սիւնեակ^բ.

«Յայսմ հետէ սկսաւ մեծանալ ի կողմանսն հռովմայեցոց առնուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հաւր և սուրբ հոգւոյն փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Յիշատակութիւն . . . Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոլով ի սուրբ մենաստանիս, ի վասն յովհաննու, ես տէր համագասպս բազում փափագանաւք ի խնդիր էի, զի յետ իմ մնասցէ ինձ ընձայ, ընդ մեծամեծս, ի սուրբս այս սիովն կաթողիկէի: Արդ աղաչեմ ըզձեզ մանգունք սուրբ առագաստի, հայցեալ ի Քրիստոսէ զթողութիւն յանցանաց մերոց, եւ ինձ եղկելի գրչիս»¹:

¹ Այստեղ վերջանում է Սոկրատի պատմութիւնը եւ տեղի է տալիս Աղուանից պատմութեան:

Թ. 231^ա. սիւնեակ^ա.

«Նախերգան պատմութեան Աղուանից Առաջին հատուածն գլուխք Լ»:

Թ. 235^բ. 236^ա.

Սոյն երեսները՝ դեղին ներկ քսած և 236^ա. սիւնեակ^բ՝ ինն տող կեղծած, տողերի տակից քերուածքը նկատելի է:

Թ. 250^ա.

Ներքեւի լուսանցքում՝ «վա՛յ քնոյս»:

Թ. 256^բ.

Տակի լուսանցքագիրը՝ «Սխալեցաւ միտքս զի նեղէին զմեզ այլակրաւնքս, թողութիւն արայ, աւա՛ղ ի վրացեա՛ցս. (նօտրագիր) ճշմարի՛տ»:

Թ. 264^բ.

Տակի լուսանցքում նօտրագիր՝ «՛ յիշեցէք զանարժան խաչիկս»:

Շուտով Սոկրատի պատմութեան մի գիտնական հրատարակութիւն կունենանք շնորհիւ Արժանապատիւ Մեսրոպ վարդապետ Տէր Մովսէսեանցի: Արդէն երկու տարի է ինչ, որ Հայր Մեսրոպը ուսումնասիրում է Սոկրատեան ձեռագրերը եւ ներկայումս տպագրում է Մայր Աթոռի տպարանում: Հրատարակութիւնից յետոյ գործի գիտնական արժէքը կգնահատուի, թէ որքան հմտութեամբ եւ բարեխղճութեամբ է կատարուած այն:

Որովհետեւ Հայր Մեսրոպի ուսումնասիրութեան առարկան եղած է Սոկրատը, ուստի եւ սոյն ձեռագրի մէջ միայն Սոկրատի երեսահամարներն էին մատիտով նշանակուած 1-458, իսկ ձեռագրի Աղուանից պատմութեան մասը բարձիթողի էր արուած: Մի թեթեւ նկատողութիւն: Ինչպէս երեւում է Հայր Մեսրոպը շատ թեթեւ է վերաբերուել դէպի այս ձեռագրի ուսումնասիրութիւնը, քանի որ Արաժանապատիւ Հայրը հագուագիւտ եւ թանգագին ձեռագիրը համարել է տասնեւեօթներորդ դարու վերջին քառորդի գործ, մինչդեռ տասներեքերորդ դարու վերջին քառորդին է պատկանում գրչութիւնը, իսկ նորոգութիւնը նրա համարած թուականին: Երեւի նորոգութիւն բառի վրայ նա ուշադրութիւն չի դարձրել: Եւ որովհետեւ Հայր Մեսրոպը ստանձնած ունի մի ծանր եւ պատասխանատու գործ, այն է՝ Մայր Աթոռի մատենադարանի ձեռագիրների ցուցակը կազմել, ուստի բարեկամական խորհուրդ կտամ նրան, զոնէ այսուհետեւ մեծ բարեխղճութեամբ վերաբերուել դէպի ձեռագիրների ուսումնասիրութեան լուրջ եւ խստապահանջ գործը:

Թ. 265^ա. սիւնեակ^բ:

«Աստանաւր յիշեսջիք զսրբազան էպիսկոպոսն զտէր Համազասպ, որ եղեւ ստացաւղ գրոցս, եւ զգրիգորէս կրաւնաւոր, թէ ճար կա և զմեղապարտ գրիչս»:

Թ. 273^ա. սիւնեակ^բ:

«Կատարեցան գիրք առաջին պատմութեանս աղուանից»:

«Զստացող գրոցս զերջանիկ էպիսկոպոսն զտէր Համազասպ, եւ զեղկելի գրիչս յիշեցէք ի Քրիստոս»:

Թ. 273^բ. սիւնեակ^ա:

«Երկրորդ պատմութիւն արեւելիցս Աղուանից նահանգիս»:

Թ. 306^բ.

Ներքեւի լուսանցքի յիշատակագրութիւնը՝ «Աւա՛ղ մեծի աղետիս և անմխիթար սգոյս, որ եհաս տանս վրաց և քրիստոնէից, զի սպանաւ թագաւորն դէմէտրէ յազգէն նետողաց, ոչինչ մահու պարտական, ի սահմի ամսոյ, և էր թիւն ՁԼԸ: Եւ ահայ ի մեծի վտանգի կանք, տէր փրկեա զմեզ նեղութեանց ամէն. (այս տողը կորած է միջից)»:

Թ. 318^բ. սիւնեակ^բ:

«Աստանաւր յիշեսջիք զստացաւղս գրոցս զսրբասնեալ գերջանիկ էպիսկոպոսն զտէր Համազ. ընդ նմին և զիս զողորմելիս»:

Թ. 322.

Այս թղթի երկու երեսի տողադարձութեան սխալները թանաքով սևացրել են և փորձել են ուղղել:

Թ. 335.

Միջից ճղուած և կարկատած, ինչպէս և 92 և 93 թերթերը:

Թ. 343.

Այս թերթի առաջին երեսի առաջին սիւնեակը բոլորազիր է, իսկ մնացեալ երեք սիւնեակները՝ նօտրազիր. պակասը լրացրել են:

Թ. 351 և 352.

Այս երկու թղթերի ութ սիւնեակներում բոլորագրով պակասը լրացրել են:

Թ. 353^ա. սիւնեակ^ա.

«Երկրորդ հատուած պատմութեան աղուանից»:

Թ. 359^բ. սիւնեակ^{ա և բ}.

Այս երեսում մի տող՝ առաջին սիւնեակից, եօթն տող երկրորդ սիւնեակից քերել են և տեղը ուրիշ բան գրել:

Թ. 362.

Այս թերթի մեջ Ֆս բոլորագրով պակասը լրացրել են:

Թ. 364^ա.

Ներքևի լուսանցքի գիրը՝ «Եղուկ ահա տրդեաց, խնայեա յարարածս, Քրիստոս աստուած, և մի ըստ գործոց մերոց հատուացես»:

Թ. 374, 375 և 376.

Այս թերթերի մէջ նմանապէս բոլորագրով պակասը լրացրել են. միայն 375 թ. երկրորդ երեսի բ սիւնեակում ութն տող քերած և կեղծած է:

Թ. 377^ա. սիւնեակ^{ա և բ}.

«Յիշատակագրութիւնք նորոգման գրոցս», որ են.

Բ. սիւնեակի բոլորագիր յիշատակարանը՝ «Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ և Սուրբ Հոգւոյն, եղև նորոգումն գրոցս, որ կոչի Սոկրատ և աղուանից պատմագիր. ի թուին (1676) ՌՃ և ԻԵ, յերկիրս Արարատու ի գաւառս Կարբու, ի գերահռչակ և հրաշափառ աստուածաբնակ սուրբ մենաստանս Յովհաննու վանից, ընդ հովանեալ սուրբ Կարապետիս, և սուրբ կաթողիկէիս, և այլ միայեղին սրբոցն. ի բռնակալութեան պարսից Շահ Սուլէմանին, և յիշխանութեան տանս Արարատեան Սաֆի-

դուլի խանին երկրորդի: Ի Կաթողիկոսութեան սուրբ Էջմիածնի Տեառն Յակոբայ, և առաջնորդութեան սուրբ մենաստանիս Յովհաննէս վարդապետի Կարբեցոյ, հոգաբարձութեամբ և օժանդակութեամբ նորուն եղև նորոգեալ ըզգիրքս և աւանդեցաւ ի դրունս սուրբ Կարապետիս. որք օգտիք ի սմանէ, յիշեցէք յաղօթս ձեր զառաջնորդ Յովհաննէս ըբունապետն և զաթոռակալ զԳրիգոր վարդապետն, և զխալիֆայ Զաքարայն, աշխատող հնացեալ գրոցս, և զիս անարժան Աթանաս գրիչս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. Ամէն»:

Ա. սրենեակի խոշոր նօտրագիր յիշատակարանն է՝ «(1733) թուին ՌՃՁԲ յուլիսի Ե, որն Եշպլի. մեր սուրբ անապատիս Հայր Ղկնազկաց Յովանէս վարդապետ բերինք ի սուրբ ուխտս ետինք սուրբ Կարապետի եկեղեցին. Եշպլի երեկոյի լոյս մեծ ձագեաց ի վերայ դակաղին, մինչև այլազգիքն ևս տեսին և երանեցին. ուրպաթի ի հող տապանի եղինք նոյն տեղին: Այս լոյսահոգի վարդապետս էր տեղեալ ակնցի, տարին բօլոր չոր պաս. շպլն Բշպլն Ա անգամ ճաշակեր ցամաք հաց, մինչև յետի տարիքն ամիսն կամ Խօրն ուտէր հաց. ուր է այնպէս բերան, որ սորա առաքինութիւնն պատմի: Ի կաթողիկոսութիւն սուրբ Էջմիածնի Տեառն Ապրահամու, և առաջնորդութեան սուրբ ուխտիս Յակոբ անարժան եպիսկոպոսի, որ է ի յերկրէն գոխտնեաց ի գեղջէն Յողնոյ»:

Բոլորագիր՝ «Յիշատակէ գիրքս այս սուրբ Էջմիածնայ: Ով ոք հանէ ի սուրբ Աթոռոյս, անիծեալ լիցի յԱստուծոյ»: Այլ գրչով՝ «յիշատակէ այս գիրքս սրբոյ Էջմիածնի»:

Այս եզակի և անփոխարինելի ձեռագրից ընդօրինակած Աղուանից պատմութեան ձեռագրերն են Ն՞.Ն՞ 632 և 250 և տպագրութիւնք՝ Փարիզ, 1860, Կ. Վ. Շահնազարեանցի և Մոսկվա, 1860, Մ. Էմինի հրատարակութեամբ:

(Առաջին խումբ)*

№ 632

ՌՄԺ=1761

ԱՆՈՒՆ՝ «Գիրք պատմութեան Աղուանից աշխարհին»։ Սիւթ՝ թղթեայ. կազմ՝ կաշեպատ տախտակեայ։ ՀԱՆԳԱՍԱՆՔ՝ կազմի կարերը՝ քանդուած, լուսանցքազարդերը՝ կտրտած, ինչպէս են թուղթ՝ 59, 45, 69, 173, 209, 257, 247, 295, 505: Խորանագարդերից՝ 95 եւ 269 թղթերը միանգամայն պոկած եւ տեղը շղագիր գրած եւ կպցրած: Դատարկ՝ Թ. 1-ա. կէսը, 3-բ. կէսը, 85-ա. կէսը եւ 83-բ. երեսը, 91-բ. երեսի կէսը, 263-բ., 263-ա. կէսը, 267-բ. երեսը՝ 331. բ. երեսի կէսը: ՍԵԾՈՒԹԻՒՆ՝ 27x19 սմ: ԹՈՒՂԹ՝ 166: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին 12x19. ԳԻՐ՝ նօտր: ՏՈՂՔ՝ 27. ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմրագիր: Սկզբնատառք՝ թռչնագիր, տեղ-տեղ եւս՝ կենդանագիր եւ ծաղկագիր: ԽՈՐԱՆԱԶԱՐԴ՝ 1 հատ, երես 5: ԼՈՒՍԱՆՑՔԱԶԱՐԴՔ՝ 76, թռչնազարդ եւ ծաղկազարդ (բացի կտրտածից): ԱՏԱՑՈՂ՝ Յակոբ Կաթուղիկոս Շամախեցի. գրիչ՝ Ղուկկիանոս դպիր: ՆՈՐՈԳԱԾ ԹԵՐԹՔ՝ 83 եւ 269: ԺԱՍԱՆԱԿ ՌՄԺ=1761: ՏԵՂ՝ Ս. Էջմիածին: ԾԱՂԿՈՂ՝ «Երեմիայ. Սրկկ»:

Տեղեկութիւնք և յիշատակագրութիւնք:

ԵՐԵՍ 1^ա.

«Օգնեա տկարիս, տէր, և զսկսեալս ի յաւարտ հասո՛ւ և կատարեա՛: Գիրք պատմութեան Աղուանից Աշխարհին, ի յերիս հատորս բաժանեալ. շարադրեցեալ ի Մօսիսէ գերիմաստ վարդապետէ Կաղանկատացւոյ, ի վաղնջոց ժամանակաց, ի փառս Ամենամեծին Աստուծոյ»:

Թ. ^ա.

Երկու կարմիր կնիք՝ «Գիրքս սբ. Էջմիածնի է»:

* ԱՐԱՐԱՏ, 1895, էջ 333-348:

Ե. 5^ա.

Սոյն երեսի գեղեցիկ ոսկենկար խորանագարդը շրջապատող գիրն է՝ «Ես Յակոբս, այրս մեղսախոց, եւ հայրապետս մեծաց Հայոց ետու գրել զայս յինձ յիշատակ. նաեւ դեղ հոգւոյս ցաւոց, թւն. ՈՍԺ=1761. Երեմեայ Ծղկղ»։ Մի կնիք էլ՝ խորանագարդի եռանկիւնու մէջ նոյն բովանդակութեամբ։

Ե. 85^ա.

«Ամէն. 1209: Կատարեցան գիրք առաջին պատմութեանս Աղուանից»։

Ե. 211^ա.

«Յիշեցէք ի քս. զՂունկիանոս Դպիրս, ո բարի ընթերցողք»։

Ե. 243^ա.

«Գրեցաւ յաւուրսն Տեառն Յակոբայ սրբասուն կաթողիկոսին ամենայն Հայոց և սրբոյ Էջմիածնի, հրամանաւ նորին և ձեռամբ Ղունկիանոսի անկատար Դպրի, յըսկզբան նոր տարւոյս ի ՈՍԺ. թուին և ի մուտն յունվարի մենաստան ժամու աւուրն 1210 երկուշաբթի»։

Երես 256.

Ներքևի կողմում՝ «Ո բարի ընթերցողք, յիշեսցիք ի Քրիստոս զգրիչս Ղունկիանոս, հանդերձ կրկնակի ծնողիւքս, և դուք ևս զողորմութիւն գտցիք ի նոյն բարերար Տեառնէն հանդերձ ծնողիւք ձերովք. ամէն»։

Ե. 259.

«Ո՛հ անբարի և տխրալի աւուրս դառնութեան, և ցաւաբեր պահուս, յորում կամք տխրասրտութեամբ ի մեծի պահոյս Աստուածայայտնութեան ի ՈՍԺ թուոջս և ի յունվարի Գ-ին ի Զ ժամու աւուրս: Զի գերերջանիկ Հայրս մեր և սրբակենցաղ հայրապետն ամենայն Հայոց և ծայրագոյն քահանայապետս սուրբ Յակոբոս կաթողիկոս վասն մերոցս մեղաց և առ ի պատ-

ժելոյ զմեզ Աստուծոյ. յանկարծակի ի խստագոյն և ի սաստիկ ցաւոյ ըմբռնեցաւ, որ էր Նուզլա. որով կարի վշտացաւ և ի մահիճս անկաւ և յոյժ նեղացաւ, մինչ զի զհամայն ծառայքս §§§-իս մերոյ միջաբեկ եղեալ ի խորս տրտմութեան ժամանեցաք, ապայ զԱստուած կարդացեալ զօգնութիւն և զբժշկութիւն ի նմանէ խնդրեցաք, և վերստին զմեզ ուրախ արար և փարատեաց զցաւն ի նմանէ: Սակս որոյ յօգնաթախիծ պաղատանօք հայցիմ հանդիպողացդ սմին խնդրիցէք յԱստուծոյ զի տացէ §§§-իս մերոյ զկատարեալ առողջութիւնս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, զկեանս երկարս և խաղաղականս ի պայծառագարդութիւն սրբոյ Աթոռոյս էջմիածնի և ի պարծանս խղճալի Ազիւնս մերոյ, և դուք ընկալլիք ի Քրիստոսէ զառողջութիւն հոգւոց և մարմնոց ձերոց. ամէն: Պաղատիմ և մի զինև զանց առնիցէք, այլ յիշեցէք ի Քրիստոս զՂունկիանոս սոսկ դպիրս, որ վասն տրտմութեանս պահու սրտադողութեամբ գրեցի ի յիշատակ ապառնեայցն»:

Ե. 263.

«1210 և ի յունվարի Դ-ին: Կատարեցաւ և զտեղի էառ երկրորդ հատոր Պատմութեանս Աղուանից»:

Ե. 283.

«Որք վասն մեր՝ զթողութիւնս բանիւք հայցեն նոքա, զնոյնս ի Քրիստոսէ արդեամբք առցեն»:

Ե. 319.

«Ո բարի ընթերցողք յիշեցէք ի Քրիստոս զՅակոբ երջանիկ կաթողիկոսն ամենայն Հայոց, զստացողն գրքոյս. նաև զմեղաւոր և անարժան գրիչս ի ՌՄԺ թուին և Յունուարի ԺԸ-ին: Ղ. Դ.»:

Ե. 328.

«Յաւարտ գրքոյս երկրպագցուք միոյ մեծին Աստուծոյ: Եւ գոհասցուք ըզ գըթութեանց նոյն կարողին միայնոյ»:

Ե. 329.

«Ձներքոյ գրեցեալսդ՝ ի Կիրակոս վարդապետի Պատմութեանէն առեալ եղաք աստ. Հայոց ՇՁԶ=1137 թուականին Աղուանից Գագիկ, որ և անուանեցաւ Գրիգորիս, Տէր Ստեփաննոս, Տէր Յովհաննէս և Տէր Ներսէս կաթողիկոսների մասին. վերջինս՝ ՈՁԴ=1235 թուականին ձեռնադրեալ»:

Երես 330.

«Փառատրութիւն Աստուծոյ և վերջաբանութիւն Պատմութեան Աղուանից աշխարհին զոր շարադրեալ է քաջ գիտնական և գերիմաստ վարդապետն Մովսէս Կաղանկատեցի, Ձոր հրամանաւ Տեառն իմոյ Յակոբայ մեծի վեհին, ես Ղունկիանոս մեղսալի և պարսաւակոծ դպիրս ի խրթնացեալ և յերկաթագիր օրինակէ պարգեալ գծագրեցի, ի ՌՄԺ թուին: Յիշատակարանը՝ Փառք և Պատիւ Ամենայնի Արարչին Աստուծոյ Հօր, որ տայ անխնայօրէն զխնդրելիս բարեխնդիր խնդրողաց: Օրհնութիւն և գովութիւն Ամենափրկչին Աստուծոյ Միածնի Որդւոյ, որ շնորհէ առատապէս զհայցելիս արժանահայց հայցողաց: Գոհութիւն և խոստովանութիւն Համախնամ Հոգւոյն Աստուծոյ, որ բանայ զգուռն ողորմութեան իւրոյ և բաշխէ լիալրաբար գծտելիս պատկանածտօղ և աներկբայ բաղխողաց: Պաշտօն և երկրպագութիւն վերոյիշեալ սրբոց անձանցն համաստեղծողաց Երից Համագոյի և Եզաբունի Աստուածութեան միոյ, որ առնէ զկամս երկիւղածաց իւրոց և կատարէ զխնդրուածս նոցա: Որպէս և այժմ՝ ետ զխնդրելին, շնորհեաց զհայցելին և բաշխեաց զգծտելին, հաւատով խնդրողի սիրով հայցողի, և աներկբայութեամբ բաղխողի Հողեծնի, սիրասնուցի և բարեխնամի հօրն իմոյ Տեառն Յակոբայ Սրբազանի Հայրապետին (ամենայն Հայոց և սրբոյ էջմիածնի մեծի ի Քրիստոսաիջի Աթոռոյս) և հասոյց զնա փափագանաց սրտին իւրոյ: Արար զկամս և կատարեաց զտենչումն նորա, և մանաւանդ՝ արգիւնացոյց զիւր Աստուածեան անսուտ պատուէր, թէ որ խնդրէ՝ առնու, որ հայցէ՝ գտանէ և որ բաղխէ՝ բացցի նմա: Վասն զի ի բազմաց ժամանակաց հետէ ցանկայր և փափագէր՝ սակս առաւելագունի գթասիրութեանն իւրոյ, զի ստասցի զայս պատմաբանութիւն Աղուա-

նաստանեայց (զոր արարեալ է Մովսէս վարդապետն գիտնական և կաղանկատացի) և ոչ կարէր ստանալ, զի վասն սակաւութեան գրքոյս այսորիկ, ոչ գտանիւր յամենայն ուրեք, բայց և զի միշտ որոնէր և հետեւէր առ ի գտանել և ստանալ զայս գիր բազմօք կարօտանօք: Վասնորոյ եգիտ զօրինակ մի ի վանքումն Յօհաննու, որ կայ մերձ Կարբի գեղջ, որ գրեցեալ էր ի բազմաց ամաց երկաթագրով դժուարակարգալեալ, և սխալագրողի գրչաւ և մեծադրիւ ձևով: Յայսմանէ օրինակէ խրթնացելոյ՝ հրամայեաց ինձ տկարամտի և անգիտի գրչիս Ղունկիանոսի Դպրի՝ ըստ հոգւոյ իւրումն որդեկի նախապատկանի, գրել զայս գիրքը պիտանի և ցանկալի, ի յիշատակ բարի անձին իւրոյ, և ի վայելումն համօրէն մանկանց սրբոյ Աթոռոյս էջմիածնի: Եւ զի այսպէս սխալ՝ խրթին և մթին էր օրինակն գրքոյս. վասնորոյ ես՝ անգէտս, ոչ կարէի թարց նպաստի պարզագրել և ի լոյս ածել: Ուստի բարեմիտ և գրասէր Հաւս իմ գտեղի իմն սահմանեաց մերձակայ ինքեան, վասն երկուց պատճառաց, նախ զի ինքն ևս օժանդակ լիցի տկարութեանս իմոյ, երկրորդ՝ զի փութով աւարտիցեմ զսա: Յորում նստեալ գրէի, նորինն օժանդակութեամբ և մշտավերահասութեամբ, մինչև յաւարտումն սորին: Եւ էր թուականս մեր ՌՄԺ. յըսկզբան ամսոյն Յունվարի, յորում սկսայ գրել, զոր և գրեալ բազմաւ ջանիւ և մեծաւ աշխատակրութեամբ և մանաւանդ՝ ցրտանալով ի նոյնում թուականիս և ի մարտի ամսոյ ժումն գրաւեցի յաջողութեամբն Աստուծոյ: Արդ զսա ետ գրել Հեզահոգի և խոնարհամիտ Ջտակենցաղ և բարեվար, Յոգնահանճար և գերիմաստ՝ սրբազան և Արժանապատիւ Հայրապետս մեր տէր Յակոբ ի վայելումն անձին իւրոյ ի կեանս իւրում, և յետ առ Քրիստոս վերափոխելոյն ի կենաց աստի սրբասնեցելոյ Հոգւոյն իւրոյ յիշատակ բարի: Նաև Հոգևոր և մարմնաւոր ծնողաց իւրոց, և այլոց ամենից արիւնակից մերձաւորաց իւրոց, առ մանկունս ուսումնասէրս սրբոյ և Միածնաիջի և լուսակերտի Աթոռոյս: Յորում մնասցի անկողողպտելի և անարտահանելի վասն անուան իւրոյ յիշատակ բարի: Վասնորոյ հայցեմ ի ձէնջ ո՛վ ուսումնասէր հարք իմ և եղբարք վերապատուելիք, զի յորժամ հանդիպիցիք սմա, և կամ ընթեռնուցուք, և կամ օրինակ արարեալ նորապէս

զայլս գրեցուցանիցէք, յայն ժամ յօժար կամօք և բարի մտօք խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, զի յայնմ աւուր ահեղին յորում դատեսցէ զազգ մարդկան զսրբազան և զեռամեծար զբազմաշխատ և գյուով վշտակիր Հայրապետն մեր՝ զտէր Յակոբ՝ իւրում քաղցր տեսոյն յաջակողման դասուն, երանական ձայնին, յարքայութեան հրաւիրման, բարեացն անեզրական, անանցն հանգստեան, փառացն անվախճան կենացն յաիւտեան՝ արժանացուցէ, ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր բնակեցուցէ. Ամէն»:

Ես ևս խնդրէմ ի ձէնջ՝ յիշել ի Քրիստոս զթարմատար և զբազմամեղ՝ զգանապատկան և զպատժապարտ և պարսաւապատեհ ծառայս նորին և ձեր ամենեցուն զԴպիր Ղուկիանոս զտաժանմամբ գծօղս սորա և մանաւանդ զծաղկօղս սորին զԵրեմիաս սարկաւազս զհարազատ պաշտօնեայս սոյն մեծի Հայրապետիս, նա և զկրկնակի ծնողսն մեր, ընդ որս զհոգևոր և զմարմնաւոր երախտունակսն մեր զՀարս զեղբարս և զընկերս: Ուստի յերեսս անկեալ յոգնաթախիծ պաղատանօք աղաչեմք զհանդիպօղսդ զօգտեցօղսդ, զվայելօղսդ և զշահեցօղսդ ի սմանէ յիշել ի յարժանաւոր և ի սուրբ աղօթսդ ձեր, և խնդրել զթողութիւն և զներումն վասն յանցանաց յիշելեացս յԱմէնողորմ և ի բազմագուրթ յԱրարչէն մերմէ, զի թերևս ըստ մեղաց և ըստ անօրէնութեանց մերոց ոչ հատուցանելով թողցէ մեզ զյանցանս մեր և եկական ձայնին իւրում արժանացուցէ, որ և բարեխօսութեամբք սուրբ Աստուածածնին և համօրէն սրբոցն իւրոց զձերն շնորհեսցէ ձեզ, և արքայութեան իւրում ժառանգորդս արասցէ հանդերձ ննջեցելովք ձերովք. Ամէն: Հայր մեր.» Եւն: Յիշատակարանիս վերջը վերոյիշեալ կարմրագիր կնիք դրած. Ս. գիրքս սուրբ Էջմիածնի է: Մոսկվայում Մ. Էմինի հրատարակած օրինակը համաձայն է Ղուկիանոսի օրինակի հետ: Ինչպիսի ուղղագրութեամբ սա արտագրել է, նա էլ հրատարակել է:

№ 250

ԱՆՈՒՆ՝ Պատմութիւն Աղուանից: ՆԻԻԹ՝ Թղթեայ: ԿԱԶՄ՝ Թղթեայ (տպագրած և ձեռագիր գրքերի թղթեր իրարից կպցրած

եւ ստուարաթղթի հաստութեամբ կազմ շինած): ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ պահուած: ԱՆԹԵՐԻ: ՂԱՏԱՐԿ՝ 44 երեսի մեծ մասը, 141 երեսի մեծ մասը, 171 երեսը՝ ամբողջ, 173, 176 երեսները կէսը:

ՍԵԾՈՒԹԻՒՆ՝ 33X24 սմ: ԹՈՒՂԹՔ՝ 98: ԳՐՈՒԹԻՒՆՔ՝ միասին՝ 20X30 սմ: ԳԻՐ՝ նօտրագիր, խառն ուղղագիր: ՏՈՂՔ՝ 40-56: ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ բոլորագիր սեւ թանաքով. սկզբնատառք՝ երկաթագրի ձեւով գրեր: ՍՏԱՅՈՂ ԵՒ ԳՐԻՉ՝ Յովհաննէս աբեղայ Գէորգեան Շահխաթունեանց Շահրիարցի: ՏԵՂԻ՝ Ս. Էջմիածին: ԺԱՄԱՆԱԿ՝ 1829:

Տեղեկութիւնք և յիշատակագրութիւնք:

Կազմի տակի թղթի առաջին երեսի վրայ ուսերէն գրած է՝

“Исторія происхожденія Агвановъ (жителеу русскихъ Мусулманскихъ Провинціу.) Мусея Кагандваці. Спущанная съ древней рукописи, хранящейся въ Эчмиадзинскоу Библіотекъ, Армянскомъ Архумандритомъ онпссомъ Шахатуновымъ”.

ԵՐԵՍ 1.

«Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսիսի Կաղանկատուացւոյ ի նոյն ազգէ և յաշխարհէ. սկիզբն առնէ ի Ծննդոցն Յաբեթի և հասուցանէ ցվախճան իններորդ դարուն շարակարգելով զպատմութիւն հայրենի աշխարհին, իշխանութեանն, քրիստոնէական լուսաւորութեանն, և յաջորդութեան հոգևոր իշխանութեամբ, և զայլ պարագայս վերաբերեալս ազգի և աշխարհի իւրոյ:

Այս մատեան բովանդակեալ յերիս հատորս գտանէր ի գրանոցի մեծի Աթոռոյս Կաթողիկէ Էջմիածնի հնագոյն գրչութեամբ եղելոյ ի վաղ ժամանակս ի մենաստանին Յովհաննա վանաց, որ մերձ ի Կարբի ի վերայ Քասաղ գետոյ յարևմտից նորա ի ժամանակի անդ առաջնորդութեան այնր վանաց Համազասպայ, որ ունէր յիշատակարան ի սկիզբն պատմութիւն յայս օրինակ. «Այս պատմութիւնն իմաստասիրական ո՛չ գոլով ի սուրբ մենաստանիս ի վանս Յովհաննու ես տէր Համազասպս բազում փափագանաւք ի խնդիր էի՝ զի յետ իմ մնասցէ ինձ ընծայ ընդ մեծամեծս ի սուրբս այս սիրովն կաթողիկէի: Արդ աղաչէմ զձեզ մանկունք

սուրբ առաքաստի հայցել ի Քրիստոսէ թողութիւն յանցանաց մերոց և ինձ եղկելի գրչիս»:

Սոյն վերոյիշատակեալդ Համազասպ եկաց առաջնորդ սոյն վանաց յամի Տեառն 1279, և էր ի Տոհմէ Մամիկոնեանց այր ահարկու և փառացի ըստ ուսուցանելոյ արձանագրութեան այսր վանաց՝ որ ի Զաքարիա սարկաւազէ միաբանէ նոյն վանացն Յովհաննու¹:

Արդ նոյն առաջի գաղափարի պատմութեանց գոլով կարի մեծադիր և դժուարընթերց օրինակեցի ես ինքնին զայն ի սոյն յայս ի պարապումն ինձ ի հարկաւոր դէպս. և յաւելի ևս ի վախճանին զցանկ մտացն բովանդակ ըստ այբուբենական կարգի: Յամի Տեառն 1829, ի սուրբ էջմիածին. – Յովհաննէս արեղայ Գէորգեան Շահխաթունեանց Շահրիարցի»:

Այս օրինակը միանգամայն համաձայն է Փարիզի հրատարակութեան հետ. այնպէս որ, թերևս Կ. Վ. Շահնազարեանցը այս օրինակից լինի ընդօրինակած: Զեռագրի վերջում կայ յատուկ անուանց ցանկ:

Ինչպէս նկատեցինք Մովսիսի Կաղանկատուացոյ Աղուանից Պատմութեան երկու տպագրութիւններն էլ առաջին խմբի պատկանող ձեռագրերից են եղել: Այնպէս որ, 1289 թուականի Մայր օրինակից, որքան յայտնի է, առաջին անգամ ընդօրինակել է Ղունկիանոս Դպիրը Յակոբ Շամախեցի կաթողիկոսի հրամանով 1761 թուին, իսկ նրանից յետոյ Հայր Շահխաթունեանը՝ 1829 թուականին: Սրանք երկուսն էլ առանձին-առանձին ընդօրինակել են 1289 թուականի ամենահին օրինակից:

Տպագրութիւններից Փարիզեանը հրատարակուած է երջանկայիշատակ Կ. Վ. Շահնազարեանցի աշխատասիրութեամբ: Որ է

¹ Չարարեայ սարկաւազի պատմագրութիւն, 1870, ի Վաղարշապատ, հատոր III, էրես 30, «Ժ թուին ԶԻԸ=1279. եղևի Հայր Համազասպ: Այս Համազասպ բազում արդիւնս արար, եւ բազմացոյց զգրեանս աստուածային, որ եւ բազումքք կան դեռ ես: Սա էր յաւուրս որդոց իշխանին Քրդոյ, եւ վարէր զառաջնորդութիւնն մարմնաւոր իշխանութեամբ. եւ էր ինքն յազգէ Մամիկոնէից, այր փառասէղ եւ սհարկու տեսողացն: Չայս ուսաք ի բազում գրոց իշխատակարանաց եւ յարձանաց ի բազում տեղիս» Ծան. յօրուածագրի. Ժ. Տասներորդ առաջնորդ վանացն Յովհաննու:

այսպէս՝ Թ. 1^ա. «Շար Հայ պատմագրաց: Մովսէս Կաղանկայտուացի Պատմիչ Աղվանից: Հատոր Ա: 1860 Փարիզ Ռ-ՅԹ»: Թ. 2^ա. «Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ ի լոյս ընծայեաց Հանդերձ ծանօթութեամբք. Կ. Վ. Շահնազարեան՝ միաբան սրբոյ էջմիածնի և անդամ Խորհրդարանի Լազարեանց ճեմարանին, որ ի Մոսկվայ: Ի գործատան Կ. Վ. Շահնազարեան»: Հարուստ ծանօթութեամբ 1-86 երես: Ծանօթութեան 85 երեսում՝ «Տպագրութիւն մատենիս եղև չորից օրինակաց Համեմատութեամբ յորոց զառաջինն բազում զգուշութեամբ գաղափարեալ էի ես ինձէն ի սուրբ էջմիածին ի մտի ունելով միշտ զտպագրութիւն այնորիկ ի պատեհ ժամու: Զերկրորդն, նոյնպէս օրինակեալ ի սուրբ էջմիածին, ընծայեաց ինձ ազգասիրաբար Մեծապատիւ գիտնական Մկրտիչ աղայն Մուճեան, բարեկամն իմ. զերրորդն գրեալ ի Դաւրէժ յայլ իմն ձեռագրոյ ետ ինձ Համեմատութեան աղագաւ արգոյ բարեկամն իմ Գրիգոր Էֆէնտին Մարկոսեան, և զչորրորդն գաղափարեալ ի Կոստանդնուպօլիս, ետ ինձ պատուարժան Գալուստ աղայն տէր Պօղոսեան: Որոց ամենեցուն յիշատակն օրհնութեամբ և գովութեամբ եղիցի ի ժողովս գրասիրաց: Զսրտառուջ ողբն Դաւթակայ քերթողի արարեալ ի մահն Զիւանչիբի, պակասեալ ըստ կիսոյն յերկրորդ և ի չորրորդ օրինակս մեր, անթերի ունէին առաջին և երրորդ օրինակքն: Արդ յետ մանրակրկիտ Համեմատութեան օրինակաց մերոց, եւ կարգելոյ յառաջաբան և ծանօթութիւնս կարևոր ի բացատրութիւն և յուղղութիւն վրիպակաց ընծայեմ ահա ի լոյս զհռչակաւոր և հազուագիւտ մատեանս զայս ի 1200 ամաց հետէ, թողեալ ի խաւարի. ի փառս ամենօրհնեալ սրբոյն կուսին և յօգուտ ուսումնասէր Հայ մանկտւոյն ոչ այլ ինչ խնդրելով ձգանցս փոխարէն, բայց եթէ զմասն աղօթից արժանաւորաց ի կազդոյր վշտակիր անձինս, զի որպէս սկսայ, նոյնպէս և կատարեցից զձեռնարկն իմ: 1 Յունվարի 1860. Պարիս: Կ. Վ. Շահնազարեանց»:

Ինչպէս ընթերցողը կտեսնէ, հանգուցեալ Շահնազարեանը ունեցել է չորս օրինակ աղուանից պատմութեան. երկուսը էջմիածնում ընդօրինակուած (արդեօ՞ք 1289, 1761, թէ՞ 1829 թուա-

կանները ձեռագրերից) երկուսից մինը՝ Դաւրէժում, միւսը Պօլսում ընդօրինակուած և ոչ մինի էլ ընդօրինակութեանց թուականը յայտնի չէ: Արդեօք դիտմամբ, թէ՞ մոռացմամբ օրինակների թուականները զանցառութեան է տուած, թէ՛ այսպէս և թէ՛ այնպէս՝ այսքանը միայն պարզօրէն յայտնի է, որ Շահնազարեան հրատարակութեան բոլոր օրինակները առաջին խմբի օրինակներ են. այն զանազանութեամբ միայն, որ Դաւթակ քերթողի ողբը՝ ի մահն Ջիւանշիրի քաջ իշխանի, երկու օրինակում ամբողջ և անթերի պահուած են եղել, քանի որ հիմնական օրինակներում կիսատ են: Իսկ եթէ ողբի կէս մասը հարազատ է թէ ոչ, այս մասին ուրիշ անգամ:

Փարիզեան տպագրութիւնը հատորեալ է: Պատմութեան 1 և 2 հատորները՝ մի գրքի մէջ, իսկ 3 և Թովմա Մեծոբեցոյ պատմութիւնը՝ միւս հատորի մէջ: Փոքրադիր ծաւալով՝ 18X12 սմ: Իւրաքանչիւր երես 25 տողից 8 սմ երկարութեամբ: 1 հատորը 432 երեսից բաղկացած՝ ծանօթութեանց հետ ի միասին, իսկ 2-ը՝ 118 երեսից, Թովմա Մեծոբեցին էլ՝ 134 երեսից:

Մոսկվայի տպագրութիւնը՝ Թ. 1^ա. «Պատմութիւն Աղուանից Աշխարհի»: Թ. 2^ա. «Մովսիսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, ծախիւք ներքին Խորհրդականի սենեկապետի եւ ասպետի Խաչատրոյ Յովակիմեան Լազարեվի: Մոսկվա. ի տպարանի Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, 1860»:

Թ. 3^ա.

«Ի յիշատակ հանգուցեալ հոգաբարձու Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց ներգործական Պետական Խորհրդականի սենեկապետի եւ ասպետի Յովհաննու Յովակիմեան Լազարեվի»:

Թ. 4^ա. «Ազդ. յերկուց անթուական օրինակաց արարաք գյառաջիկայ տպագիրս՝ մեծաւ զգուշութեամբ բաղդատեալ և մաքրեալ զայնս ի գրչացն վրիպակաց: Եւ որովհետեւ զառաջինն ելանէ ի լոյս «Պատմութիւնս Աղուանից աշխարհի» ի Մովսիսէ Կաղանկատուացոյ արարեալ, սմին իրի քաջայոյս եմք, զի որ յու-

սուսման Պատմութեան դեգերեն՝ հաշտ աչօք հայել ունին յայս մեր նուէր ի սեղան հայ մատենագրութեան: Ի բազմադարեան աւերակաց այսպէս ահա ամբարձեալ զիւր գլուխ՝ արձանանայ առաջի մեր ազգ մի ողջոյն, այսինքն է Աղուանիցն, զորոյ զտարեգիր մինչ ցայսօր ժամանակի ի հատուկտոր յիշատակութիւնս մերոց մատենագրաց սովորէաք նշմարել և եթ: Մ. Էմին. Ի ճեմարանն Լազարեանց: Ի 10-ն Մարտի 1860 ամի»:

Մոսկվայի տպագրութիւնը երեք հատորը՝ մի գրքի մէջ՝ 286 երեսից բաղկացած: 23x15 սմ մեծութեամբ իւրաքանչիւր երես՝ 31 տողից՝ 10 սմ երկարութեամբ:

Թէև հանգուցեալ էմինը «յերկուց անթուական օրինակաց» է գրում իւր հրատարակութեան ազգում, բայց համեմատութիւնից յայտնի է, որ երկու օրինակն էլ համաձայն են Էջմիածնայ օրինակի հետ և պատկանում են նոյն խմբին:

Այսպէս, ուրեմն, Էջմիածնայ երեք օրինակները, Փարիզեան հրատարակութեան չորս օրինակները և Մոսկվայի երկու օրինակները պատկանում են մի խմբի, այն է՝ միանգամայն նման են Էջմիածնայ հիմնական 1289 թուականի օրինակին: Որովհետև Էջմիածնայ հիմնական օրինակը մի քանի տեղերում քերուածքներ և եղծուածքներ ունի, և քանի որ յիշեալ եղծուածքները կրկնել են վերոյիշեալ բոլոր օրինակների ընդօրինակողները, որոնցից էլ՝ տպագրուած հրատարակութիւնները, ուստի պարզ է, որ բոլորի համար էլ հիմք է ծառայել Էջմիածնայ (հնում՝ Յովհաննու վանաց) հին օրինակն:

Մովսիսի Կաղանկայտուացւոյ Աղուանից պատմութեան օտարալեզու թարգմանութեանց մասին ուրիշ անգամ:

(Երկրորդ խումբ)*

№ 632

ՌՃԺԳ=1664

ԱճՈՒՄ՝ Պատմութիւն Աղուանից: ՆԻԻԹ՝ Թղթեայ: ԿԱԶՄ՝ ստուարաթղթի երեսը լաթածածք, մէջքը՝ կաշեպատ: ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ խնամքով պահուած, անթերի՝ վերջից 263 Բ. եւ 264 թուղթը: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17x14 սմ: ԹՈՒՂԹ՝ 264: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն 5x13 սմ: ԳԻՐ՝ բոլորագիր: ՏՈՂՔ՝ 23 իւրաքանչիւր սիւնակում: ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ մինչեւ 22 թուղթը՝ կարմիր թանաքով, իսկ շարունակութիւնը՝ սեւ: Սկզբնատառք՝ կարմիր երկաթագրով: ՍՍՍՈՂ՝ Տէր Բարսեղ արքեպիսկոպոսն, առաջնորդ Ամարասայ վանից: ՏԵՂԻ՝ Ամարասու եւ Հիրհերու սբ. Գրիգորիսի վանորայք: ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԺԳ=1664: ՀՐԱՄԱՆԱԲ՝ Պետրոս կաթողիկոսին Աղուանից:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Թ. 1^ա.

Այս երեսին կպցրած է մի մագաղաթեայ բոլորագիր տախտակ օրացոյց, որի նկարագիրն է՝ 11, 10 1/2, 9 1/2, 8 1/2 եւ 7 սմ տրամագիծ ունեցող հինգ համակենդրոն շրջանագծեր հազցրած իրար եւ երկոտասան շառաւիղներով համահասար բաժանած 12 հաւասար մասերի: Առաջին մեծ շրջանակում գրուած են հռովմէական ամիսների անուններ զոգիակոսի (կենդանակերպի) աստեղատանց 12 նշաններով: Երկրորդ շրջանակում գրուած են կենդանակերպերի անունները, զօր.՝ կոյս, կշիռ, կարիճ եւն: Երրորդում՝ ամիսների երրայական անուններ՝ Ադար, Նիսան եւն: Չորրորդում՝ հայոց այբուբենը երկու կարգ, աջ ու ձախ, իւրաքանչիւր հատուածում՝ վեց գիր, ուստի եւ իւրաքանչիւր կիսաշրջանում՝ բոլոր 36 տառերը: Հինգերորդում՝ աստղաբաշխական նշանագրեր, իւրաքանչիւր հատուածում՝ երեք գիր: Սոյն մագաղաթի եւ նրա վրայի շրջանակի կենդրոնից կպած եւ աստառի հետ միաց-

* ԱՐԱՐԱՏ, 1895, էջ 388-390:

րած են և երկու փոքրագիր շրջանաձև մագաղաթեայ կտորներ, որից մեծագոյն կտորը ունի 6 1/2 սմ տրամագիծ, որի վերայ 5 սմ տրամագիծ ունեցող մի շրջանակ կայ՝ 30 համահասար բաժանումներով, որոնց մէջ էլ արաբական-թրքական թուանշաններ 1-30: Այս շրջանակի մէջ էլ 4 սմ տրամագծով, կարմիր ներկած մի դատարկ շրջանակ կայ, որի կէս տրամագծի մեծութեամբ մի նոր լուսնաձև շրջանակ՝ 11 աստղանիշերով (աստղալից երկինք): Իսկ փոքրագոյն մագաղաթիկը 5 սմ տրամագիծ ունի և նոյն կենդրոնից կարած է. այս երրորդ մագաղաթէ շրջանակի մէջ կտրուած է 2 սմ տրամագծով մի շրջանակ, որ ծածկում է երկրորդ շրջանակի վրայի աստեղազարդ շրջանակը: Իսկ շրջանակի եզրի հակադիր կողմից կտրված է մի փոքր, որով տակի շրջանակի ամսաթիւն երևում է: Սոյն երկու կտոր մագաղաթները, մեծի հետ համակենդրոն լինելով, միջնավայրում միացած են իրար հետ թելով: Երկուքն էլ ունին ցուցականշներ, մինի երկարութիւնը՝ 2 սմ, միւսին՝ 1: Փոքրինը՝ կիսով չափ կտրուած: Միջնակ մագաղաթի ականջը ցուցամատի պէս պտտում է՝ ամիսների և կենդանակերպերի երկոտասան անունները ցոյց տալով, իսկ փոքրիկինը՝ միայն ամսաթուերի համարները: Սոյն տախտակ օրացոյցի միւս երեսին գրուած է սովորական նոր բոլորագրով և նոր (?) սև թանաքով՝ «թվ. ՌՃԺԱ յիշատակ է Պետրոս կաթողիկոսին Աղուանից»: Այս երեսի վրայ կան նաև մի քանի կիսաջնջուած հայերէն և ռուսերէն ստորագրութիւններ:

Թ. 1^բ.

Սոյն երեսին գրուած են շարական երգողաց անունները:

«Թուականք՝ Քր. և Հայոց:

		Քրիստ.	Հայոց
Ա.	Իսահակ Հայրապետն	ՆԺԹ	«
Բ.	Մեսրոբ Վարդապետն	ՆԿԸ	«
Գ.	Յոհան Մանդակունին	ՆՁԵ	«
Դ.	Մօսէս Խորենացին և Քերթօղ	ՆՂԳ	«
Ե.	Անանիա Շիրակացին	ՇԾԴ	Ա
Զ.	Կոմիտաս յԱրագածոտնէ	ՈԻԹ	ՀԶ
Է.	Գրիգոր Մագիստրոսն	ՈԼԳ	ՆԶ
Ը.	Սահակ Հայրապետ Չորոփորեցի	ՈՁԱ	ՃԻԸ
Թ.	Յոհան Օձնեցին	ՉԺԸ	ՃԿԵ
Ժ.	Ստեփաննոս Սիւնեցի	«	«

ԺԱ.	Պետրոս Գետադարձն	ՌժԸ	ՆԿԵ
ԺԲ.	Ներսէս Կլայեցին	ՌժԿԹ	ՌԺԶ
ԺԳ.	Ներսէս Լամբրոնացին	«	«
ԺԴ.	Վարդան Վարդապետն	«	«
ԺԵ.	Գրիգոր Վկայասէր փոքրն	ՌժՂԸ	ՌԽԵ
ԺԶ.	Յակոբ Կլայեցին	ՌՄԸ	ԶԺԷ
ԺԷ.	Յօհաննէս Պլուզն	ՌՅ	ԶԽԷ

Սրանք են երգեցողք շարականացն համօրէն, որոց մաղթանօք Տէր Քրիստոս Աստուած մեզ ողորմեսցի. ամէն»:

Թ. 2^ա.

«(Յ)անկ և նախադրութիւն սակս պատմութեան աղուանից»:

Թ. 4^ա.

«Այս առաջին ցանկ պատմագրոյս, թուով Լ. և ցուցումն կարգի սորա, գոր դիւրագիւտ լինի ընթերցողաց զորս և կամիցին խնդրել կարգաւ գիտ և զաշխատող սորա յիշեա՛»:

Թ. 66^բ.

«Կատարեցան գիրք յառաջին պատմութեանցս աղուանից: Երկրորդ պատմութեան արևելեացս աղուանից նահանգիս»:

Թ. 195^բ.

«Կատարեցաւ շարած երկրորդ միջակ պատմութեան աղուանից»: «Երրորդ ցանցք պատմութեան աղուանից»:

Առաջին խմբի Մայր օրինակը վերջանում է «ԻԳ. անուանք հայրապետաց աղուանից, ամք և գործք նոցին», իսկ

Երկրորդ խմբի օրինակը ավելացնում է և

Թ. 196^բ.

«ԻՆ վասն կոտորածին, որ ի կողմանս Խաչենոյ, և վասն բարեպաշտ իշխանին Զալալին: ԻԶ վասն եկեղեցոյն զոր շինեաց մեծ իշխանն Զալալ դօլա Հասանն: ԻԷ վասն մահուան բարեպաշտ իշխանին Զալալ դօլա Հասանոյն:

ԻԸ վասն մահուան իշխանին Շահնշահի, և որդւոյ Նորին Զաքարէին»:

Թ. 241.

«Պատմութիւն յաղագս սրբոյ խաչին, որ հացունեացն կոչի: Եւ թէ որպէս դարձաւ ի պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ: Եւ յայնժամ մասն ինչ ընկալեալ տիկնոջն Սիւնեաց»:

Թ. 259^ա.

«Արդ՝ աղաչեմ զամենեսեան. հարք և եղբարք և սրբամաքոր և սուրբ հայրապետք, որ բնակեալդ էք ի դուռն Ամարասա. որք կարդայք և կամ արիւնակէք՝ պաղատանօք սրտի յերեսս անկեալ առ ոտս ձեր յիշման արժանի արարէք զիս զբազմամեղ գրիչս և գծօղ սորա զանարժան և զղարիպացեալ սուտանուն ապաշխարող և զծնողսն իմ ըստ մարմնոյ և զեղբարքն իմ հարագատք և զամենայն ազգայինսն իմ, և զայնոսիկ ոյք յանձնեցին յիշատակել յաղօթս, և տէր Աստուած յիշողացդ և յիշելոցս առ հասարակ ողորմեսցի ի միւս անգամ գալստեանն. ամէն: Ո՛վ եղբարք, ես չունիմ յիշման տեղիք, բայց թէ սակաւ մի յիշման արժան առնէք, վարձս ի Քրիստոսէ առնուցուք և զԱստուած ողորմին ընդ հայր մեղային կցորդեալ ասէ՝ հայրն Աստուած զնա անտես չառնէ. Ամէն»:

Յիշատակարանիս մեկանը և գրիչը փոքր-ինչ տարբերուում է ձեռագիր գրչութիւնից, որ և խոստովանուում է յիշատակագիր գրողը յիշատակարանի վերջում:

Թ. 259^բ.

Մեծ յիշատակարանը՝ «Փառք եղակամ տէրութեան և եռորոշ անձնաւորութեան, հօր անսկզբան, որդւոյ անեղրի. և հոգւոյն սրբոյ անհատ բղխողի այժմ և անգրաւ յաիւտենիւ. ամէն:

Շնորհօք ամենագորին Աստուծոյ եղեւ կատարումն այսմ՝ լուսարդ և ներբողունակ մատենիս ի շրջաբերութեան թուականիս Հայագնի ի. Ռ. ի. Ծ. ի. Ժ. և յ. Գ. ամին: Ի հայրապետութեան աշխարհիս աղուանից տեառն Պետրոսի երջանկափառ կաթողիկոսի վերադիտողի մեծի աթոռոյն Գանձասարայ. զի այս խոհմարան հայրապետս աշակերտ էր սրբափայլ և ուղիփաճիմ մեծ ըրբունա-

պետին Ղուկասու. վասն զի այս երիցս երանեալ կաթուղիկոս լուսաւորեաց զխաւարեալ և զնսեմացեալ բոլոր տունս Աղուանից, զոր ի բազում ամանակաց կայր խախտեալ և խանգարեալ ի կարգաց և ի կրօնից վանորայք և յամենայն եկեղեցիք: Յորոց մի էր և մեծ աթոռս Ամարաս զի ժամանակաց յոլովից կայր աւեր և անբնակ ի մարդկանէ, զի արք ոմանք խէնէչք և անխոհեմք փեռեկտեալ և խրամատեալ էին զթեմ և զվիճակ սորին և արարեալ իւրեանց բնակութիւնս յայլ և այլ վայրս ըստ անձնիւր կամաց: Իսկ այս խոհեմաբան կաթուղիկոս Պետրոս եկեալ ժողովեաց ի մի զթեմ և զվիճակ երկրիս Հաբանդ կոչեցեալ, զոր այժմ ասի Վարանդա, և կացոյց զառաջնորդ զհարազատ և զմիջածին զաշակերտն իւր զպարոն տէր Բարսեղն որ է ստացօղ տառիս. և սա նորոգեաց զԱմարաս պարսպօք և բազմածախ սենեկօք և տամբք ի փառս արարչին և ընտրելոյն իւրոյ սրբոյն Գրիգորի. ամէն: Տինա կայր և հովարան ի հնոց մեծի աթոռոյս, հուպ ի գեղջն Հերհէր կոչեցեալ որ կոչիւր սուրբ Աստուածածնի վանք, նա ևս էր անբնակացեալ, այլ և անդ գնացեալ մեծ հայրապետն հիմնարկէ գեկեղեցի և յանձնէ աշակերտին իւրոյ զվերոյգրեալ Բարսեղ պարոն տէրին, զի շինեսցէ, զորև կատարեաց իսկ, կամարակապ ձևով գեղեցկանկար դրամբք ըստ ձեռնտուութեան ժամանակիս, որ վերածայնի սուրբ Գրիգորիս, որ և անդ զարդարեաց պարսպօք և խցերօք կամօք և օժանդակութեամբ վերոյ ասացեալ հոգևոր հօրն իւրոյ: Դարձեալ ետ գրել յոլով գրեանս յորոց մինն է և զայս պատմագիրք, զոր ի վաղուց հետէ սպառեալ էր ի տանէս Աղուանից և գտեալ եղև ի ձեռն լուսաւոր հոգի Ղուկաս վարդապետին, զոր ետ վերստին գրել և օրինակել վերոյգրեալ հայրապետս. իսկ սորա տեսեալ բազում փափականօք գրել հրամայեաց և ետ վախճը երկակի աթոռոցս սուրբ Ամարասս և Նորաշէն սուրբ Գրիգորիսի վանուցն. ասելով՝ եթէ ոք հանել ջանայցէ ի դրանէ երկուց Աթոռոցս կամ կտրեսցէ գլխատակարանս, հանցի գայնպիսին ի դրախտէն կենաց և կտրեսցի ընդ մէջ և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցի. ամէն:

Արդ, ո՛վ դասք լոյս երամից, յորժամ հանդիպիք սմա կարդալով կամ գաղափարելով, յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զառաջնորդ

սուրբ ուխտեացս կորովամիտ և հանճարապատում գտէր Բարսեղ արհի եպիսկոպոսն, որ ստացող եղև զայս ներբողունակ մատենիս, որ է սեպհական յերկրէս Հաբանդու, ի գեղջէն Կիշի կոչեցեալ ընդ սմին և միաբանք տեղոյս, զմարտիրոս, զալէքսան և զեղիա պարոն տեարքն, որք փոխեցան ի Քրիստոս մերում ժամանակիս, այլ և որք կան նարդեանս ի պաշտօն ուխտեացս. զովանէս պարոն տէրս, գտէր գրիգորս, գտէր մկրտիչս և գտէր ոսկանս և զայլ աշխատաւորս յիշել պարտիք ի Քրիստոս. ամէն:

Դարձեալ յիշեցէք կրկին անգամ զբարսեղ պարոն տէրն, և զարեան առու մերձաւորսն զփոխեցեալսն ի Քրիստոս զմարտիրոս պարոն տէրն, զովանէս պարոն տէրն, որ մականուամբ շէկ կոչիւր, այլ և ծնողսն իւր զհայրն իւր աղան և զմայրն իւր գուլաղըն և հարազատ եղբարքն զբաղտասարն և զմարտիրոսն, նա և եղբօր որդիքն իւր զգասպարն. և զմագրուվանն, որ մանուկ տիօք փոխեցաւ ի Քրիստոս: Այլ և քորքն իւր զփերին, զխանումն, զհիւրին, զմերէսան և զթամամն, և զայլ ամենայն ընտանիսն զկենդանիս և զհանգուցեալսն միահաղոյն յիշեցէք ի Քրիստոս միով հայր մեղայիւ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս յոյսն ամենեցուն. ամէն: Հայր...: Ընդ որոց և զիս զսիմոն լոկ անուամբն բանի սպասաւորս յիշել ժտիմ, որ զսակաւ յիշատակարանս ծրեցի նաև թողութիւն շնորհել խոշորութեան գրոյս վասն զի յանպատշաճ ժամու և ի վերայ ծնկաց իմոց մեկանեցաւ»:

Թ. 262^ա.

Այլ գրչով՝ անուանք հայրապետաց աղուանից «տէր Մարկոս այրն Աստուծոյ ԽԴ», հասցրած մինչև ի:

Թ. 263^բ.

«Տէր իսրայէլ մեծկունէից որ այժմ վարէ զժողովուրդս ԹՄԺԲ»:

(Երկրորդ խումբ)^{*}

№ 1721

Անթուակյան.

ԱՆՈՒՆ՝ «Յաղագս պատմութեան երկրիս Աղուանից»։ ՆԻԹ՝
թղթեայ։ ԿԱԶՄ՝ տախտակեայ՝ կաշեպատ, ներսից՝ լաթածածք։
ՅԱՆԳԱՄԱՆՔ՝ վերջից երեք տետր գլխի վերեւի ծայրերից այրուած
է լուսանցքներից։ ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ 3բ. երես, 264բ, 280բ, 281, 282։
ՍԵԾՈՒԹԻՒՆ՝ 17x11 սմ։ ԹՈՒՂԹ՝ 288։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին. 7x12 սմ։
ԳԻՐ՝ նօտրագիր։ ՏՈՂՔ՝ 21-22։ Վերնագիրք՝ մինչեւ ի թղթ. 265՝
կարմիր թանաքով, մնացեալ՝ սեւ։ Սկզբնատառք՝ կարմիր երկա-
թագիր, իսկ թուղթ՝ 4ա, 50բ, 51բ, 56ա, 57բ, 65բ, 66ա, 71բ, 89ա,
90ա, 90բ, 92բ, 95բ, 96ա, 107ա, 114բ, 129բ, 133ա, 135ա, 144բ,
171բ, 181բ, 183բ, 188ա, 189բ, 192ա, 198բ, 209բ, 210ա, 211ա,
213ա, 215բ, 224բ, 227բ, 229բ, 235ա, 236բ, 238ա, 238բ, 239ա,
239բ, 240բ, 244ա, 245ա, 246ա, 251ա, 255բ, 256ա, 258բ, 259բ,
261ա՝ խոշոր ծաղկագիր գլխագիր-գլխատառեր զանազան ձեւի
եւ մեծութեան։

Թուղթ՝ 64ա, 70ա, 73ա, 76ա, 80բ, 85ա, 97բ, 127բ, 139ա, 143ա,
147ա, 148ա, 150ա, 152ա, 155բ, 160բ, 169ա, 170բ, 177բ, 186ա,
217ա, 221ա, 232բ՝ թռնչնագրեր զանազան ձեւի եւ մեծութեան։

Իսկ թուղթ՝ 101բ, 166ա, 207բ ձկնագիր են։ ԽՈՐԱՆԱԶԱՐԴՔ՝
թուղթք 4ա, 80բ, 232ա՝ իւրաքանչիւր գրքի սկզբում։ Լուսանցա-
զարդեր եւ ծաղկազարդեր են թուղթք 4ա, 50բ, 51բ, 56ա, 57բ,
64ա, 65բ, 66ա, 70ա, 71բ, 73ա, 80բ, 85ա, 89ա, 90ա, 92բ, 95բ,
96ա, 97բ, 107ա, 111բ, 114բ, 127բ, 129բ, 133ա, 135ա, 143ա, 144բ,
147ա, 155բ, 160բ, 166ա, 169ա, 170բ, 171բ, 177բ, 181բ, 183բ,
186ա, 188ա, 189բ, 192ա, 198բ, 207բ, 209բ, 210ա, 211ա, 213ա,
215բ, 217ա, 221ա, 224բ, 232ա, 235ա, 236բ, 238ա, 239ա, 240բ,
244ա, 245ա, 246ա, 251ա, 252բ, 253բ, 255բ, 256ա, 258բ, 259բ,

* ԱՐԱՐԱՏ, 1895, էջ 424-426:

261ա՝ զանազան մեծութեամբ ծաղկազարդեր: Թռչնազարդեր՝ թուղթք՝ 76ա, 171բ: Կաթուղիկէազարդք թուղթք՝ 147բ, 148ա, 227բ, 229բ: Արեգակնազարդք՝ թուղթք 73ա, 101բ, 139բ: ՍՍԱՑՈՂ՝ անյայտ: ՏԵՂԻ՝ անյայտ: ԳՐԻՉ՝ Յովհաննէս Պիտակ՝ սպասաւոր Յիսուսի: ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: ՊԱՏԿԵՐՔ՝ թ. 150ա. Զուանչիւր իշխան ծնկաչոք աղօթում է, 152ա՝ նոյն իշխանը՝ աթոռի վրայ նստած, թագը գլխին, գայիսոնը ձեռքին: Երկու նկարածները մէջ էլ՝ սեւ մօրուսով, արքայաւայել ծիրանին հագած. աղօթելու ժամանակ թագը վերցրած, ծնկաչոք եւ ձեռնամած:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱ ԳՐՈՒԹԻՒՆՔ

Թ. 1^ա

«Յաղագս պատմութեան երկրիս Աղուանից»:

Յանկ առաջի գլխոյն:

Թ. 2^ա

Սոյն երեսում ցանկի գլխացոյց թուատառերը ժէ-ից սկսած սխալուած է, փոխանակ ժԸ-ի՝ ժէ:

Թ. 4^ա

Նախերգան սակս պատմութեան Աղուանից:

Թ. 13^բ

Սոյն երեսում տողերի մէջ գրուած է շղագրով. «Սուտ է այսքանս զոր ղնգնաձեցաք. ոչ թէ ի հարկէ սուտ է և յետոյ ներմուծեալ ի սնապարծից յօգուտ անձանց, զի ի յայլս պատմութիւնս ոչ գոյ բնաւ: Թուի թէ յԱնանիայ կաթուղիկոսէն յետոյ այսպէս արարին աղուանից սեւագլուխքն»:

Թէ ո՞վ է եղել սոյն շղագրով գրողը և թէ ինչու՞ համար է գրած, այս մասին մանրամասն կը բացատրուի, երբ Աղուանից պատմութեան երկու խմբերի տարբեր և հակասական կտորները առաջիկայ համարում լոյս կը տեսնեն:

Թ. 78^ա

Կատարեցան գիրք առաջին պատմութեանս Աղուանից. երկրորդ պատմութիւն Արևելեացս Աղուանից նահանգիս:

Թ. 80^ա

Կատարեցան երկրորդ ցանցք պատմութեանս Աղուանից, յորում բազում և ազգի ազգի զրուցատրութիւնք գտանին:

Թ. 160^ա

«գՅօհաննէս պիտակ սպասաւոր Յիսուսի յիշեալ աղաչեմ». գրիչը և մելանը նոյն է, ինչ որ ձեռագրինը՝ գրչագրինը:

Թ. 230^բ

Շարած՝ երկրորդ միջակ պատմութեան Աղուանից: Երրորդ ցանցք պատմութեան Աղուանից:

Թ. 243^ա

Լուսանցքում շղագրով աւելացրած է. «և յետոյ ի սրբոյն Գրիգորէ և ապա ի սուղ ժամանակս», իսկ սրա փոխարէն գրչագրից սոյն երեսում մի տող ջնջած է ամբողջովին:

Թ. 265^ա

Սոյն երեսից սկսած և՛ թուղթը, և՛ գրչութիւնը փոքր-ինչ տարբերում է: Այս տարբերութիւնը աւելի ևս նշմարելի է նրանով, որ այս երեսից մինչև ի վերջի 288 երեսը շարունակ մի-մի սանտիմետր լայնութեամբ տողած է լուսանցքի համար երկու կողմից էլ:

Թ. 275^բ

Սոյն երեսում վերջին երկու տողի շղագիր գրչութիւնը «Բ. ապա սուրբն Գրիգորիս թոռն Մեծին Գրիգորի Լուսաւորչին Հայոց. այս . . . ցեն»:

Թ. 276^ա

Սոյն երեսում էլ Ը. կաթողիկոս Գրիգորիսին ջնջած և վերևը

տողամէջի պարապ տեղում գրած «Ղուփաղիս այս ի ժամանակս բարեպաշտին Վաչականին են. տե՛ս ի պատմութիւնդ»:

Թ. 280

Սոյն երեսում նօտրագրով գրած է «Հբ. տէր Մելիքսեթ արաշեցի հայրե ... սուր գեղ բնակեալ մերձ ի Գանձասար»: Նոյն գրչով. «Հէ տէր Սիմէօն Չարաբերդոյ, ՌձԻԴ Խոտրաշինացի: ՀԸ Տէր Երեմիայ Ճալալեցի ՌձԻԴ հակառակութիւն լեալ զԵրեմիայն օրհնեցին անձամբ առեալ զկաթողիկոսութիւն. միատեղ վարեն չարչարանօք. ՀԹ. Տէր Ներսէս Մեծգունէից Խոտրաշինացի ՌձԾԵ: Ձ. Տէր Եսայի Քուլատակեցի ՌձԾԾ: ՁԱ. Տէր Իսրայէլ Խոտրաշինացի Մեծգունէից: ՌՄԺԲ»:

Այս տողից յետոյ յիշածս շղագրով գրածն է. «Սուտ է զայս զի վեց ամաւ յառաջ Եսայի է օծեցեալ քան զՆերսէս», ընդգծած Խոտրաշինացի բառերը սոյն գրչին են պատկանում:

Թ. 283^ա

«Պատմութիւն վասն Մահմետին» սոյն գլուխը նման է Գ. գրքի առաջին գլխի հետ:

Թ. 285^բ

«Որ յետ մահմադա եղեն ամիր մոմնէ»: Նման Գ. գրքի Բ. գլխին:

Թ. 286^բ

«Ապրստամբութիւնն հայոց և մահմետին գալն հայս. և առումն Սևանայ. և մահն մահմետին»: Սոյն գլուխն էլ նման է Գ. հատորիս ԺԶ. գլխին, ինչպէս երևում է Մահմետի վերաբերեալ գլուխները առանձնապէս արտագրել են կրկին և ձեռագրի վերջին կպցրել:

Թ. 289

Սոյն թուղթը կտրուած է ձեռագրից և Աղուանից պատմութեան հետ ոչ մի կապ չունի. միայն թուղթը, գրչութիւնը պատմութեանս հետ նոյն է. բովանդակութիւնն որ է այսպէս՝ «

Ս Ե Մ	Ք Ա Մ	Ա Բ Ե Թ
Արփաքսաթ	Քուչթ	Փամիր
Կայնան	Մերտրախ	Թիրաս
Սաղա	Նեփրովթ	Թորգոմ
Եբեր	Բաբ	Հայկն
Փաղէկ	Արբել	Արմայիս
Ռազաւ	Անիբիս	Արմանեկ
Սերուգ	Քաղա	Ամասիա
Նաքովր	Արբեղինոս	Գեղամ
Թարա	Նինուլաս	Հարմայ
Աբրահամ		Արամ

Կամսիաս քաղթէացին. շինեաց զսպահան և հրամանաւ նորին սկսաւ ոսկեհալուծիւն և արծաթահալուծիւն: Եւ թագաւորն Սամիրոս սկսաւ ղնել չափ և կշիռ. և հնարեցաւ, զգոյն ներկուածոյ. և զնկարս ճարտարաց. և դրամս. և զդահեկանս. անուամբ կնքոյ իւրոյ. և կաշէգործութիւն. ղնել զպատկերս ի կտաւուց: Եւ ասեն թէ. Գ. աչք ունէր. և եղջիւր մի ի ճակատին հսկայ ձև էր Սամիրոս:

Ադամա մինչև ի ծնունդն Քրիստոսի: Են ամք. Բ. Շ. Ի. և ի Քրիստոսէ մինչև ի սուրբն Գրիգոր. ՅԵ. և ի սրբոյն Գրիգորէ մինչև ցհայ. թուականն. ՄԻԸ. և ի Քրիստոսէ մինչև ի Մահմէտ, ՈւԼԸ: Յետ ջրհեղեղին եղև Նոյի որդի մի Մանիտոն անուն. և դուստր մի Աստղիկ անուն: Եւ բաժանեաց աշխարհս որդւոց իւրոց: զԱսիա ետ Սեմա. զԼիբիա ետ Քամայ: զՐոբիա ետ Աբեթի: Մանիտոնի ետ մասն ինչ յարեմտից. և մասն մի յարեելից: Հարաւոյ կողմն դստերն Հապաշստան:

Ուստի դշխոյն հարաւոյ որ եկն լսել զիմաստութիւն Սողոմոնին սա էր անուն Ասիա Եփեսոսէ: Այս է աշխարհս .Գ. բաժին. Ասիա. Լիբիա. Րոբիա. Ասիամէջ յերկրի. Լիբիա. Հապաշք. և Հնդիկք. Րոբիա Ֆուանգք. յարեմուտէ:

Աղէքսանդրէ Մահկեղնացոց, մինչև ի Քրիստոսի Ծնունդն: Յ. Լ. Դ. Ամէն»:

ԵՐԿՈՒ ՎԱԽԵՐԱԳՐԵՐ
Տ. ԽԱՉԻԿ ՎԱՐԳԱՊԵՏԻ
ՁԵՌԱԳԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻՑ*

Մօտ երկու տարի է, որ Մայր Աթոռոյ Տպարանին է յանձնուած տպագրութեան համար իմ (1878–1898) հաւաքած ձեռագրերի ժողովածուների եւ հնութեանց Յուցակը՝ աշխատութեամբ պ. Յ. Յ. Թօփճեանի, եւ շուտով լոյս կտեսնի:

Հարեւանցի յիշեմ միայն, որ ցարդ յաջողել է ինձ ձեռք բերել մի պատկառելի հաւաքածու հետեւեալ նիւթերի վերաբերեալ:

ա. Նախապատմական եւ պատմական հնութեանց մնացորդներ, որոնց թիւը հասնում է երկու հազարի (2000):

բ. Հայերէն, թուրքերէն, պարսկերէն եւ արաբերէն ձեռագիրներ, վեց հարիւր հատոր (600):

գ. Ռուսերէն, հայերէն, տաճկերէն, պարսկերէն եւ արաբերէն՝ հրովարտական, կոնդակներ եւ կալուածագրեր (բնագիր եւ պատճէն), մօտ չորս հազար:

Տպագրութեան համար պատրաստուում է.

Ա. Նիւթեր Աղուանից պատմութեան

ա. Հրովարտական Քրիստոնեայ եւ Մահմետական գահակալների յանուն Աղուանից:

բ. Կոնդակներ եւ թղթեր Աղուանից կաթողիկոսների եւ մետրապոլիտների:

գ. Նամականիք Աղուանից մէլիքների եւ իշխանների:

դ. Կալուածագիրք Աղուանից վանօրէից ելն:

Բ. Նիւթեր Հայոց պատմութեան

ա. Հրովարտական քրիստոնեայ եւ մահմետական գահակալների յանուն Հայոց եկեղեցականաց:

* ԱՐԱՐԱՏ, 1900, յունիս, էջ 317-320:

բ. Կոնդակներ եւ գրութիւններ Հայոց կաթողիկոսների եւ բարձրաստիճան հոգեւորականների:

գ. Գրութիւնք Հայազգի իշխանաց եւլն:

դ. Կալուածագիրք Հայոց վանօրէից եւլն:

Օտարալեզու վաւերագրերի բնագիրը եւ թարգմանութիւնը ի միասին կհրատարակուին:

Բոլոր վաւերագրերը կհրատարակուին նոյնութեամբ միայն Համառօտ նկարագրութեամբ եւ ծանօթութիւններով: Իբրեւ նմուշ «Արարատի» արգոյ ընթերցողներին տալիս ենք մեր ժողովածու թղթերի Գ. պահպանակի թիւ Ա եւ Բ վաւերագրերը¹:

Խ. Ծ. Վ. Դ.

¹ Անցեալ դեկտեմբերի համարում «Թարգմանութիւն Արարատի կամ Շարաֆնամայի» մասին գրել էինք, որ հայ թարգմանութեան հետ կիրատարակենք եւ պարսկերէն բնագիրը: Բայց պ. Յ. Մանանդեանից իմացանք, որ այդ պատմութեան թէ՛ պարսկերէն եւ թէ՛ ֆրանսերէն թարգմանութիւնը արդէն հրատարակուած է Ս. Պետերբուրգի գիտութեան ճեմարանի կողմից՝ աշխատութեամբ Վելիամինով Չեռնովի (Велиаинович Черновъ) 1860/62 թուականին:

Ա.

ժողովածու. Գ. Թիւ. 1. Անուն. *Ձեռագագիր կամ ստորագրութիւն*: Նիւթ՝ *թղթեայ (սպիտակ)*: Հանգամանք՝ *ծալուածքը կտրտուած*: Մեծութիւն՝ *19x24 սմ*: Տողք՝ *լրիւ 22, թերի՝ 10*: Գիր՝ *նօտր*: Սկզբնատառք՝ *գլխագիր*: Գրիչ՝ *Աբրահամ վարդապետ (եպս.)*: Տուող՝ *Աղուանից Սիմէոն կաթողիկոս*: Ստացող՝ *Յակոբ Հայոց եւ Երեմիա Աղուանից կաթողիկոսներ*: Ժամանակ՝ *ՌՃԻԶ. (1126-1677)*: Տեղի՝ *Սուրբ Էջմիածին*: ? Կնիք՝ *կարմրաներկ՝ Սիմէոն կաթողիկոսի, սեւաներկ՝ Հայոց Աբրահամ, Զաքարիա, Անդրէաս, Պօղոս, Թադէոս, Գալուստ, Պետրոս, Յօհան, Մկրտիչ, Սարգիս եւ միւս Զաքարիա արհիեպիսկոպոսաց Ս. Էջմիածնի*: Տեղեկութիւնք. *վաւերագրիս պատճէնը յայտնի չէ երբ է գրուած*: *Թերթի պարապ կէսի միւս երեսի գրութիւնն է՝ «Սիմէոն Աղուանից կաթողիկոսի ձե-*

ուացազրի սաւատն է որ Յակոբ Հայոց եւ Երեմիայ Աղուանից կաթողիկոսացն է տուել»: Բովանդակութիւնն է այսպէս՝

է~,,

է
Ս:մէօն
կթ~ղկոս
ՌՄԺԲ.

Որոյ գասլն առ իս ունելով
գաւատս գայս կնքեցի.

Առաջի Ա՛յ եւ ա՛մ ս՛բց ն՛ր, ես նու՛սստ Սիմէօն կթ՛ղկոս | Աղուանից՝ գայս գիրս այսու պատճառ՛աւ գրեցի, | որ իմ մէջ, եւ Երեմիայ կթլ ղկոսին մէջ, թէ որքան աղմուկ եւ խռով է ի էր անկած մինչեւ հիմա՛, ոչ լինի միստմիռջէ գրել զէրայ ամենեկոն յայտնի է,, որոյ սակս բազում եւ ազգի ազգի խօսք եւ մանսարներ շատ է եղած յաղագս մերոյ կթլ ղկուէ եւ ս՛բյ Աթ՛ոյն | գանձասարայ,, Զայս թողլթս այսու պայման՛աւ տո՛ւի մեր սիրելի | եղբայր Երեմիայ կթլ ղկսին, յորժամ զիմ անուան կթլ ղկուէ | ռաղամն, ի թագաւ յորէն թամամել՝ առնում ի ձեռս իմ Յակոբ | հոգեւոր տիրի ձեռօքն եւ հրաման՛աւն, գայս վերոյ գրե՛լ սանատներս տամ ի ձեռն Երեմիայ կթլ ղկսին, եւ գայս խորհուրդս | որ ը Երեմիայ կթլ ղկսին խօսեցաք սակս ս՛բյ Աթ՛ոյն գանձասարայ | հաստատուե՛ն կրկնակի ,,յայնժամ հրաման՛աւ վերոյ գրեալ վեհին | կրկին ուխտիւք եւ դաշամբք հաստատեցից,, զէրա՛ ես նմա թողլթ | եմ տո՛ւեալ թէ զոր ինչ առնեմ առանց հրամանի քո չառնեմ, որքան կենդանի իցես,, իսկ եթէ մինչեւ իմ հայոց երկիր գնալն | նմա կամ վաղճանի պատահի կամ յօտար երկիրս որ ոչ լինի ձեռնա|հաս, ես գայս վերոյ գրեալսս կատարեմ առանց պատճառի,,: | Այլ եւ գայս հաստատաբար գրեմ Սիմէօն կթլ ղկոս, որ ամենեկին իմ մարմնաւ որ ազգականացն կթլ ղկոսուէ անունն չլինի, | որ թէ իմ ազգէն սեւազլուխ այլ յառաջ գայ որ ես յայս | կթլ ղկոսուէ յաստիճանս չհր՛աւիրեմ,, որ

Թէ՛ զայս գրեցելոցս | զառնամ այլ իմն մտածեմ, զատապարտիմ
յԱ՛յ, | եւ յա՛մ ս՛բց ն՛ր,, գրեցաւ ի Ռ՛

Ճ՛ԻԶ Թուին. յօգոստոսի

Ի՛Ն,, իմով ճեռամբս

Ս իմէօն կը՛ շէս Աղո՛անից :

Մեք ս՛բյ եւ մեծի աթ՛ ոյս | էջմիածնի միաբան Արք|եպս՛ ունքս,
գբուն հեղինակն այսմ սաւատիս | տեսեալ կնքեցաք :

Քի. ծ՛ ու արբահամ վարդե՛ պ զսաւար. շ՛ բոն թղթոյն ճամբմարեալ կնքեցի :

Քի. ծ՛ ու զ՛ քր վ՛ ըդ ՌճՂԸ, Գա՛վարեա ե՛ պ սաւաջն ըդ Ի՛շխիլիսայի :

քի. ծ՛ ու ա՛ նդ վ՛ ըդ, 1194 աթոռակալ Անդրեաս ե՛ պ :

Քի. ծ՛ ու պօղոս վ՛ ըդ. ժամօրհնօղ Պօղօս ե՛ պ :

Թ՛ դ վ՛ ըդ, Թապեոս ե՛ պ . :

զլստ վ՛ ըդ, Գալոսս ե՛ պ . :

Պարս վ՛ ըդ, 1201 Պեդրոս ե՛ պ . :

Յոհան վ՛ ըդ, Յօհան ե՛ պ . :

Միկրտիչ վ՛ ըդ. 1210 Տեղապահ Մկրտիչ ե՛ պ . :

սարգիս վ՛ ըդ. Սարգիս ե՛ պ . :

քի ծ՛ ու Զաքարիա վ՛ ըդ. ՌՄԴ Գա՛վարեա ե՛ պ . :

Տեղի կնքոյ. Ս իմէօն կը՛ շէս Աղո՛անից :

Տեղի կնքոյ. Պեդրոս ե՛ պ :

Տեղի կնքոյ. Աւերես ե՛ պ :

Բ.

ժողովածու. Գ. Թիւ. 2. Անուն՝ Թուղթ զաշնադրութեան: Սիւք՝
Թղթեայ (սպիտակ): Գանգամանք՝ խնամքով պահուած, լուսանցք-
ները՝ կարկատած: Մեծութիւն՝ 32x60 սմ: Տողք՝ 28: Գիր՝ խոշոր
նօտրագիր: Սկզբնատառք՝ գլխագիր: Գրիչ՝ Յովանէս: Տուող՝ Հոգե-
ւոր եւ մարմնաւոր համայնք Աղուանից: Ստացող՝ Աղուանից Ե-

րեմիա կաթողիկոս: Ժամանակ՝ Ռճին (1140-1691): Տեղի՝ Արցախի նահանգում: Կճիք՝ Աղուանից չորեքտասան եպիսկոպոսաց, երկու վարդապետաց, երկոտասան քահանայից, հինգ մելիքաց, եօթը տանուտէրաց, քսան իշխանաց, վաճառականաց, վարպետաց եւլն: Տեղեկութիւնք. վաւերագիրս գրուած է երկու թերթի վերայ, որոնք կպցրած են իրար: Ներքեւի լուսանցքի պարապ տեղից կտրուած է: Կնիքներից տասներկուսը պարսկերէն են փորագրուած, երկուսը՝ կէսը՝ հայերէն, կէսը՝ թուրքերէն: Բովանդակութիւնն է այսպէս.

Է~

Յոռսովն անմահին Հօր, Եւ կամաւն ամենակալին Որդոյ: Եւ տունն տոռութեամբ հոգւոյն սրբոյ: Առաջի ամենասուրբ Երրորդութեան, եւ համայն սրբոց եւ հրեշտակաց նորին: Մեք բոլոր երկրիս աղո՞ւանից: Առաջնորդք, Վարդապետք, Քահանայք, Մելիքք, Երեսփոխք, տանուտէ՛րք, Վաճառականք, եւ հողագործք, եւ առհասարակ մեծ եւ փոքր ժողովուրդք, որք եմք սեփական թեմ եւ վիճակ հայրապետական աթոռոյն ս՛բյն Գրիգորի ս՛բ Գանձասարայ: Որոյ սակս գրեցաք այս թողղթ դաշնադրութեամբ, եւ նամակ ուխտի եւ միաբանովթ՛ե այսպէս. քանզի որ մերումս ժամանակի երկու կթ՛ղկսք եղեն հակառակ միմեանց եւ աւերեցին զաթոռն մեր ս՛բ Գանձասար, եւ մեք երբեմն ն՛ր կողմն լինելով եւ երբեմն ն՛ր, ոչ գիտելով թէ ով ՚ի նոցանէ բարեկամ իցէ աթոռոյն մերոյ, եւ այժմ իմացաք ճշմարտութե՛ք որ Երեմիա կթ՛ղկսն զոր ինչ ժողովումէ վ՛սն աթոռոյն է, եւ զոր ինչ Սիմոնն հաւաքումէ իւր հօր տունն է մսղում եւ այլ տեղ կորուսանում, մանաւանդ մինչեւ ցայսօր խաբեաց զմեզ ասելով կերթամ Գանձասար եւ ո՛չ գնաց ու՛խտազանց լինելով, եւ այժմ ա՛մ տեղիս պարսաւէ զաթոռն մեր եւ արհամարհէ՛ զսրբութիսն ն՛ր: Վասնորոյ գրեցաք պայման եւ սահման եւ հաստատեցաք կնքով եւ մօհրով, այսուհետեւ մեր հայրապետն Երեմիա՛ կթ՛ղկսն է, այլ Սիմոնին հետ բան չունիմք, զկնի այսորիկ ով ոք զՍիմոնն ուզէ եւ

կլթ ղկսի տեղ ղնէ՝ թէ վր ղպտ, թէ ե պս, թէ քահանայ եւ թէ աշխարհական սեւերես լինի եւ պարտական առաջի ա՛յ, եւ ս ք Գանձասարայ աթոռոյն եւ ս ք աջոյն Գրիգորիսի, եւ ով զՍիմոնն չի ընդունէ, ա՛հեալ լիցի յա՛յ եւ ա՛մ սրբոց ն՛ր տամք եւ տեղօք եւ զարմօք եւ զաւակօք, եւ յամ էիւք եւ գայիւք. Ամէն: Այսուհետեւ միախօսք եւ միակամք կանգնեմք, երբ Երեմիա՛ կլթղկան գայ մեր մէջն իբր մեր հյպ տ եւ կլթ ղկս սիրով ընդունեմք եւ մեծարեմք, եւ զիւր կլթ ղկսական իրաւունքն տամք, իսկ եթէ Սիմոնն գայ թակեմք ջողապ առնեմք եւ դուրս անեմք մեր մէջէն ուր կամի գնայ, այլ եւ միաբանութ ք կանգնիմք եւ որչափ արծաթեղէն ոսկեղէն զառպաֆ եւ այլ զարդ եկեղեցական զոր կորուսեալ է ծախեալ ապրանս աթոռոյն մերոյ Գանձասարայ, զա՛մ մի ըստ միողէ պահանջեմք Սիմոնէն եւ վրէժխնդիր լինեմք վ՛ւս

մեր աթոռոյն, եւ այս թողլթ հաստատուն լիցի եւ մնասցէ.

կամօքն Ա՛ծյ գրեցաւ ի թ՛վն, ո՛ճխ, փետրվար ամսոյ ի տասն:

Յի. քի ծո. Պետր. եպս. Եւ- ես պեպրոս վրդպոս յա՛մ յօժարութե եւ կամօ՛վ ընկալայ եւ զապուլարի կն՛վեալ ճաստարտեցի ա՛վ»:

յի. քի ծո. Գրիգ. ե պս թ. ՌՉԼԳ: Եւ Գրեգոր է պսկս առաճնորդ մեթ արանից իմով ժողովրդեամբ ճասանեալ կն՛վեցա՛վ:

քի. ծո. Մելքիսէթ եպսկպս. թ. ՌՃԼԴ. Եւ մեկնեալ ի յա՛մ պս պնէցի:

քի. ծո. Դաւիթ ե պս թ. ՌՃԼ. Ինչ ամենաբնից յառեթ է պս իս զպուլէ:

քի. ծո. Պարսեղ եպսկ. թ. ՌՃԺ. Եւ Բարսեղ է պս փառոյ ի առջնորդ շամփոս իմ թեւ մով ճաճեալ կն՛վեցի:

թաթս եպկս թվ ՌՃԼ. Եւ թաթոս է պս կն՛վեցի:

Քի ծո Մխիթար ե պս ճասանեմքանիս:

Յի. Քի. ծո. Օվնս ե պս թվ. ՌՃԻ. Եւ ովան է պսկս ճասանեալ կն՛վեցի:

Յի. Քի. ծո. Պետր ե պսկս. Ինչ պեպրոս եպիս զապուլէ:

Յի. Քի. ծո. Բարսեղ է պս կս.:

քի. ծո. Յովհանէս ե պս թ ՌՃԺ:

քի ծ ոյ Յովսէփ վրդպտ. Մկրտիչ է պս Խաչէնոս ճասանեմքանիս:

քի ծո. Դաւիթ ե պս կի. Ինչ դասեթ եպս պս Սեփրապակոս զապուլէ:

Քի ծո Յովսէփ Ե պս կս ՌձԼ.

Քի. ծո. Յովսէփ վաղպեա ՌձԻԷ. Յովսէփ վ ըրդ պր պ շրօնեա Խաչինո անապատին
Հասանիմ քանին :

Քի. ծո. Ազարիա վր դպ. թ. ՌձԼ. Ես սպարեա վ ըրդ պր Գրեկա վնեց կնվ ցի :

Քի. ծո մարկոս վրտպեա:

* Տէր Բարսէղ աղոսղ շ Ծարա երկրի զպ ո շարարի* :

Քի. ծո. Տր. Անանիա. թ. ՌձԼ,Զ. Ինչ որ եր անանիայիս զապո-ւէ :

Քի ծո ւ ը մովսես թ. ՌձԺ. Ինչ որ ը մովսէսիս զապո-ւէ :

Տ ը դալուստ. որ եր Գալուստ :

Քի. ծո. տր Գ լստ թ. Ռձ. որ եր Գալուստ :

Քի.ծո տր ոհան թ ՌձԻ Գ. որ եր յոհան վղվե հաճեալ կնվեցի :

Քի ծո ւ ը նազարէթ . թվ ՌձԼ Գ. որ եր նազարէթ վղվե հաճեալ կնվեցի :

Քի ծո. ւ ը մկրտիչ թ. ՌձԼ Գ. որ եր մկրտիչ վղվե հաճեալ կնվեցի :

Քի ծո տր մարտիրոս. որ եր մարտիրոս հաճեալ կնվեցի :

* որ եր Ասպարեա Ա իշանցի :

Քի ծո ւ ը Մխիթար. Ինչ որ եր Մխիթարիս զապո-ւէ :

Դերատրի որդ ովանէս. Ինչ որ եր յովանէսիս զապո-ւէ :

որ ը Եղեա Թօրան Գեղէ :

* Ես մելիվ Թօրան պարտո զապո-ւարի ե- մարեցի :

Եղգ. Մ . Մելիվ երկարս հաճեալ կնվեցի :

* մելիվ անիճան շացաբերթո- իմ նահանգով զապո-ւեմ :

* Ես մելիվ Փ իրո-մս Գրեցի իմ երկրիս վոջեղո զապո-ւո-թե-ննովն :

Քի ծո. մել. միրզա. Ես մելիվ մերզախան Շամկո-տ- երկրի զապո-ւեմ ասմ քանին :

Քի ծո յովսէփ. որ ան-որ եր Յովսէփ :

Քի ծո յակոբ. ես վարհապոցի որ ան-որ եր յակոբս զապո-ւարի :

Քի. ծո. քմալ Բ կթ. ՌձԼ,Թ. Ես քմալ պէկ տանուտէր Գետաշինու զպ լ արի :

* Ինչ Գառնկերո- որն - որ եր ուրի զպ -ւա :

* վոջխա իսախան Ա իշանայ :

* Ես որ ան-որ եր Հաննապար զպ -ւարարի :

* Աստղանիշերը պարսկերէն կնիքների համար են, ստորագրութիւնները կնիք-ների գրից տարբերելու համար նստրագրով են յառաջ բերած:

քի ծն. բհար. Պճար ճե-խայ ղապո-լ :

քի. ծն. Պրխուար թ. ՌձԼԵ. Խ,Ջ յ Պ արիո-դար :

քի. ծն. յոսէի. Ես մղորեան էրեոփոխան յովուէփս Հաճեալ կնճեցի :

քի ծն. յովուէի. Գանջեցի :

քի ծն. Սարգիս թ. ՌձԼԵ. Գանջեցի Սարգիս :

* Ս Է Պ անչասարայ շ յ Ս արո-խանիս ղպ յ-լարի :

քի. ծն. Էմիր. Կալլափ Լճիր :

քի ծն. Աղասի. Լ ղասի բէկ :

* Պ Է Կ ր ո . ի ն Յ Պ Է Կ ր ո ս ի ս ղ ա պ ո - Լ Է :

քի ծն. ոհանէս ՌձԼԳ.

* ի ն Յ մ ար Կ ի ր ո ս ի ո ր Կ ի Ե պ ար ի ս ղ պ յ - Լ Է :

քի ծն. Պկնզր. Պեկնազար :

* Պ ո ղ յ լ Է :

քի. ծն. Կերդու ՌձԱ. ի ն Յ ի ո ջ ա ղ ա ղ ար ի ո ր Կ ի փ ի ր ա լ Ե ա մ ի ս ղ ա պ ո - Լ Է :

Յի Քի ծն. եաւրի թվ. ՌձԼԸ. ի ն Յ Ֆ ար մ ան ի ո ր Կ ի Ե ա - ր ի ս ղ ա պ ո - Լ Է :

Քի ծն. եակար. ի ն Յ Ե Կ Գ ար ի ղ ա պ ո - Լ Է :

քի ծն. պապու. Ես ո - ո ր Կ յ Պ ա պ ո - մ Լ ա շ պ ո - Լ ա ղ Կ ի ղ պ յ - Լ ար ի :

քի ծն. յվ. թվ. ՌձԼԹ. ի ն Յ յ ո ղ ա ն Ե ս շ ր շ ս ղ ա պ ո - Լ Է :

* ի ն Յ Ս ար Գ ս ի ո ր Կ ի Ե ա - ր ի ս ղ ա պ ո - Լ Է :

քի ծն. Խաչու ՌձԻ. Ես Կ ի ր Կ յ ո - Լ ա շ պ ո - մ ի Լ ա շ պ ո - Լ ա ղ Կ ի ղ ա պ ո - Լ ար ի :

քի ծն. գրիգոր. Ես Պ Է Կ ր ա թ Ե կ յ ի Պ Ե ի Գ ր ի Գ ր ի ո ր Կ ի Թ ա մ ր ա ղ ս ղ պ յ - Լ ար ի :

մարտիրոսի որդի Խաչատ ր . Ես Պ Է Կ թ Ե կ յ ի Լ ա շ պ ո - ր ո ղ ա պ ո - Լ ար ի :

աւոռու. ի ն Յ ա Կ ո - ս ղ ա պ ո - Լ Է :

Նազար. ՌձԱ. Ես ի ո ջ ա Ն յ ա ղ ար ս ղ պ յ - Լ ար ի :

*

քի ծն. Ղալապկ ՌձԼԹ. Ո ս կ ան ա պ ա Կ յ ի ղ ա լ ա պ կ ի ս ղ ա պ ո - Լ Է :

Ես ար թ ա պ յ ի Կ ան ո - ր Ե թ Թ ա ճ ի ր ո ի մ ճ ա ճ ա ն յ ի - ճ ղ ա պ ո - Լ Ե մ ա յ ս մ Թ ա ն ի ս :



ԱՐՅԱԽ*

ԵՐԿԱՍԻՐԵՅ ՍԱԿԱՐ ԵՊ. ԲԱՐԵՈՒԴԱՐԵԱՆՅ

Բագու, 1895 թ.

«Արցախը» գերապատիւ երկասիրողի մինչ ցարդ լոյս տեսած աշխատասիրութեանց պսակը կարելի է համարել. նա հարուստ է վիճակագրական, պատմական, աշխարհագրական եւ ազգագրական տեղեկութիւններով: «Արցախի» մանրամասն քննութիւնը թողնելով ուրիշ ժամանակի՝ առ այժմ մի փոքրիկ դիտողութիւն կկամենայինք անել: Երես 25. «Ի գաւառն, որ ընկած է Պազկանց գաւառի, Երասխ եւ Հակարի գետերի, Դիզափայտ եւ Քերս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ, ստացած է Բերդաձոր, Բերդաձոր բելուկան, Ղալաղչլաղի ձոր, Ղալաղարասի անունները, այժմ համարուում է Ջաբրայէլի գաւառ»: Նոյնը եւ երես 399–401:

Այս պատմական գաւառը որոշելու համար գերապատիւ հեղինակը մատնացոյց է անում Խորենացոյ մատենագրութեան եր. 609, Մովսէս Կաղանկատուացոյ եր. 264 եւ Գտչայ վանից արձանագրութեան վրայ, բայց մոռացել է վկայութեան կոչել այս մասին եւ «Սիսական»՝ եր. 270:

«Արցախի» հեղինակը հետեւել է Հ. Ալիշանին՝ Ղալաղարասին Բերդաձոր անուանելով:

«Սիսականի» եւ «Արցախի» հեղինակները, Ղալաղարասին Բերդաձոր մկրտելով, հաւատացած են, որ հին Արցախի Բերդաձոր գաւառի տեղը գտել, որոշել են: Գերապատիւ հեղինակ հայրերին միամտացնելու համար այժմ մատնացոյց անենք Արցախի հին Բերդաձոր գաւառի տեղը, որ գտնուում է Ջալանչիք գաւառի Վաղահաս գիւղի մօտ եւ ոչ թէ Ջանգեագուր կամ Ջաբրայէլ գաւառներում: «Արցախ» եր. 193–195. «Վաղահաս գիւղիս շրջակայքում. Հին Վաղահաս գիւղն գտնուում է նորի հարաւային

* ԱՐԱՐԱՏ, 1896, էջ 80-81:

կողմում, որ ունի ընդարձակ գիւղատեղի, կիսաւեր մեծ եկեղեցի, եւ ճոխ հանգստարան եւ մի քարեայ բարձր խաչ, որի երկարութիւնն աւելի է 3 մետրից: Կարմիր վանք, որ բարձր է փոքր-ինչ աւերակիցս, եւ որ փոքր եկեղեցի է առանց կաթողիկէի, բայց իւր մօտ կայ հանգստարան»: Ամէն մի ընթերցող, սոյն նկարագիրը կարգալով, կարող է եզրակացնել, որ «Արցախի» հեղինակն անշուշտ այցելել է եւ իր իսկ աչքով տեսել է նկարագրած քարեայ բարձր խաչը՝ 3 մետր բարձրութեամբ, Կարմիր վանքը՝ առանց կաթողիկէի եւ այլն:

Եթէ «Արցախի» հեղինակը Ստրաբոնի նման տեսածը իբրեւ տեսած նկարագրէր, լսածը՝ լսած, այն ժամանակ այսպիսի սխալները մէջ չէր ընկնի՝ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանի նման:

Որպէս մի առձեռն ապացոյց առաջ ենք բերում յիշեալ Վաղահասի էրկան (երկար կամ բարձր) խաչի նկարագիրը. բարձրութիւն՝ 4 արշ. 5 վերջ., լայնութիւն՝ մի արշ. 4 վերջ., թանձրութիւն՝ 3 վերջ.: Կրաքարից եւ հիւնալի քանդակներով խաչքար է: Վերեւի կողմը՝ կաթողիկէաձեւ, ներքեւինը՝ սեպաձեւ:

Խաչարձանիս արձանագրութիւնն է 11 տող միջակ երկաթագիր, որն է այսպէս՝

«Թիւն ՈԿԵ (665=1216) Ես Սակո որդի Վախտանգա կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգո իմո եւ ետու զԹշեկրա այգին իւր հողով եւ վատապանաւ եւ եզնանստին երկիրն ի սուրբ Գրիգոր Բերդաձորա եւ զբախերին մատաղիսն, եւ զճաքեցանց երկիրն եւ Ա. ջաղաց ի ժամատուն բե հոգո փրկութիւն ամուսնո իմո ի հայրապետութեանն տէր Յոհաննիսի ով գայս խափանէ եւ Բերդաձորա սահման կամ ի վիճակն ձեռն արկանէ կամ զրկէ ՅԺԸ (318) հայրապետացն նզոված եղիցի ամէն»:

Սույն արձանագրութիւնից հասկանալի է, որ Բերդաձորայ սուրբ Գրիգոր ուխտը՝ վանքը, հեռու չէ խաչարձանից, ուրեմն խաչարձանի շրջակայքում պիտի որոնենք արձանագրութեան յիշատակուած վայրերը: Բերդաձորայ սուրբ Գրիգորայ ուխտ կամ Կարմիր վանքը գտնուում է Խոխիկայ բերդի (թերեւս Խոխանաբերդ) հանդէպ, հին Վաղահասից բարձր դէպ արեւմուտք, Լաբան կոչուած ձորում, հին Վաղահասից 10 վերստ հեռավորութեամբ:

Վանքը նման է մի փոքրիկ օրօրոցաձեւ եկեղեցու, ունի թաղակապ գաւիթ, եկեղեցու կամ վանքի երկարութիւնը՝ մէջէմէջ 8 արշ. 10 վերշ., լայնութիւնը՝ 4 արշ. 12 վերշ., ունի երկու դուռն՝ մին՝ հարաւից, միւսը՝ արեւմտքից, մի լուսամուտը՝ արեւելքից, սեղանում՝ 2 խորհրդարան, գաւթի մեծութիւնը. երկարութիւնը՝ 3 սաժէն, լայնութիւնը՝ 4 արշ. 10 վերշ., հիւսիսային պատում՝ երկու խորան, որմերը կամարակապ թաղերի վրայ է կանգնած: Որմերի հաստութիւնը՝ 15 վերշ., հարաւային կողմում՝ մի փոքրիկ մատուռ: Վանքի շուրջը աւերակ կացարանների փլատակներով ծածկուած է:

Վանքի արտաքին արձանագրութիւններն են.

Հիւսիսային պատի դրսի գիւրն է՝ 15 տող արձանագրութիւն միջակ երկաթագիր. արձանաքարի մեծութիւնը՝ 12x18 վերշոկ: Որ է այսպէս. «ՈՂԸ (678=1229) թվ. ես Տիրածայրս Ապարանից բարեպաշտ Արքային Ջալալին իմ ընչիւք գնեցի գ Գոխին երկիրն եւ ետու ի սուրբ ուխտս Բերդաձորայ եւ սպասաւորք սորա ետուն ի տարին Գ աւր պատարագք ուխտան Աստուածածնին մինչի գալուստ Տեառն անխափան կատարել վասն փրկութեան հոգոյ իմոյ արդ որ գժամ խափանէ իմ յանցանացն տէր է առաջի Քրիստոսի»: Սոյն վանքի մնացած արձանագրութիւնները թողնելով ուրիշ առիթի՝ յոյս ունենք, որ տակաւին պատեհութիւն կունենանք «Արցախի» բովանդակութեանը դառնալու:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խաչիկ Ծ. ՎՐԴ. Դադյանի հայագիտական – ժողովրդագիտական գործունեությունը..... 7

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

Առան երկիր կամ աշխարհ25

Համառոտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի29

I. Ջալանչիրի վանքերը..... 29

II. Շուշու գաւառի վանքերը36

III. Ջաբրայիլի վանքերը37

Ցուցակ Արցախի թեմի վանքերի եւ նրանց կալուածների39

Համառոտ նկարագիր Շաւարշան-Արտազ գաւառի Ս. Թադէոս

Առաքելոյ վանքի..... 40

Արձանագրութիւնք հին տաճարի 45

Արձանագրութիւնք նոր տաճարի 50

[Նամակ «Արարատ»-ի խմբագրութեանը] 55

Մայր Աթոռի «Արարատ» ամսագրի խմբագրութեան 59

1907 թ. հնագիտական պեղումներ

I. Արմաւիր (Թափաղիբի) 61

II. Արտաշատ (Վաղարշապատ) 62

III. Դուին (Թօփրագ գալա)..... 65

IV. Գառնի (Բաշ-Գառնի) 70

ԲԱՆԱՅԻԲՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Տղայ Դաւթի եւ աղջիկ Խանդուբի հեքիաթը 75

Թարղխուլ աքրադ կամ Շարաֆ նամա, Քրդերի պատմութիւն
կամ Փառաց մատեան..... 103

Չայն ու իւր հարեւան ազգերը
Քրդի հաշիւը 111
Թուրքի հաշիւը 113

Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգերից..... 115

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ – ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Նիւթեր ուսումնասիրութեան Աղուանից պատմութեան 125

Համեմատական տախտակ

Պատմութիւն Աղուանից Մ. Կաղանկատուացոյ եւ
Գիրք թղթոց Անանիայի կաթուղիկոսի 133
Մովսէս Կաղանկատուացոյ Աղուանից պատմութեան Մայր Աթոռի
մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները
Առաջին խումբ..... 158
Առաջին խումբ..... 167
Երկրորդ խումբ 178
Երկրորդ խումբ 184
Տեղեկութիւնք եւ յիշատակագրութիւնք..... 185

Երկու վաւերագրեր Տ. Խաչիկ Վարդապետի ձեռագիրների
ժողովածուից 189

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Արցախ. երկասիրեց Մակար եպս. Բարխուդարեանց..... 199

«ԱՐԱՐԱՏ»-Ի ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
Ա

ԽԱԶԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՏԵԱՆ
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Համակարգչային աշխատանքները՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչական բաժնի

Կետադրությունը արդի արևելահայերենի կանոններին
համապատասխանեցրեց և սրբագրեց
Սիրանուշ Բուլաթյանը

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ
ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ – 2007

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ